

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԴԻԱՆԱ ՀՈՎԻԿԻ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԼՐԱԳՐՈՂԻ  
ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝

հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Ս.Ռ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2017

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
ԳԼՈՒԽ 1_ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ .....	14
1.1 Արտակարգ իրավիճակ հասկացությունը և առանձնահատկությունները .....	14
1.2 Լրագրողների գործունեությունը արտակարգ իրավիճակի պայմաններում (իրավական կողմ) .....	20
1.3 Ռազմական հակամարտությունների, ահաբեկչական գործողությունների և արտակարգ իրավիճակների գոտում լրագրողների գործունեության սոցիալ-հոգեբանական բնութագիրը (արտասահմանյան և տեղական փորձ) .....	35
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ_ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԼՐԱԳՐՈՂԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ .....	66
2.1 Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի հոգեբանական պատրաստվածության աստիճանի որոշման հետազոտության կազմակերպումն ու մեթոդիկան .....	66
2.2 Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության հետազոտության արդյունքները.....	72
2.3 Հետազոտության արդյունքների սոցիալ-հոգեբանական վերլուծությունը (հավաստող գիտափորձ) .....	84



ԳԼՈՒԽ 3. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆԸ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ .....	87
3.1 Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածության ապահովման ուղիները .....	87
3.2 «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» ծրագիրը (ձևավորող գիտափորձ).....	151
3.3 Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության ռեթեսթավորման արդյունքները (ստուգիչ գիտափորձ) .....	167
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....	174
ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	177
ՀԱՎԵԼՎԱԾ	

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Աղետները, պատերազմները, արտակարգ իրավիճակները հասարակության պատմությանն ուղեկցող անխուսափելի երևույթներ են: Դրանք իրենց ծագումով, հաճախականությամբ և բնույթով տարատեսակ են և կարող են կործանարար հետևանքներ ունենալ ցանկացած հասարակարգի համար: Արտակարգ իրավիճակները ոչ միայն խաթարում են հասարակության բնականոն զարգացումը, այլև կարող են խորը հետք թողնել հասարակության առանձին շերտերի, տարիքային բոլոր խմբերի և խմբավորումների, անհատների վրա՝ վտանգելով նրանց ֆիզիկական և հոգեկան առողջությունը: Այս իմաստով շատ կարևոր է արտակարգ իրավիճակներում հասարակության հետ անմիջական կապ ունեցող մասնագետների հոգեբանական պատրաստվածությունը: «Արտակարգ իրավիճակ՝ որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնաձին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման»[5]:

Արտակարգ իրավիճակների հետևանքների վերացում հասկացությունը ՀՀ օրենքը մեկնաբանում է որպես արտակարգ իրավիճակներում փրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքների կատարում՝ մարդկանց կյանքի ու գործունեության բնականոն պայմաններ ապահովելու համար: Արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման հարցում պակաս կարևոր չէ ԶԼՄ-ների դերն ու գործունեությունը, քանի որ դրանք կարող են հսկայական վերականգնողական կամ հակառակ նշանակությունն ունենալ լայն զանգվածների համար:

Արտակարգ իրավիճակները, որպես գիտական վերլուծության օբյեկտ, սկսել են դիտարկել 20-րդ դարի կեսերին:

2003 թվականին ընդունված «Զանգվածային լրավության մասին» ՀՀ օրենքում զանգվածային լրատվություն հասկացությունը սահմանված է հետևյալ կերպ.

1. զանգվածային լրատվություն՝ անսահմանափակ թվով անձանց համար հասանելի տեղեկատվության տարածում, որի հիմնական նպատակն է ապահովել մարդու սահմանադրական իրավունքը՝ ազատորեն, անկախ պետական սահմաններից՝ փնտրելու, ստանալու և տարածելու տեղեկություններ ու գաղափարներ: Լրատվությունն իրականացվում է զանգվածային լրատվության միջոցի տարածմամբ,

2. զանգվածային լրատվության միջոց (այսուհետ՝ լրատվության միջոց)՝ լրատվություն իրականացնելու միջոց, որը բաժանորդագրությամբ կամ առանց դրա, վճարովի կամ անվճար հիմունքներով տարածվում է՝ մշտական անվանում, հերթական համար և ամսաթիվ ունեցող պարբերական թողարկումներով՝ նյութական կրիչի վրա, որոնց միևնույն բովանդակությամբ օրինակների քանակը պակաս չէ հարյուրից.

- հեռուստառադիոհաղորդմամբ,

- հանրային հեռահաղորդակցության ցանցով (ցանցային լրատվության միջոց)՝ որպես որոշակի հասցե ունեցող, անսահմանափակ թվով անձանց համար հասանելի և լրատվություն ներառող տեղեկատվական պաշար՝ անկախ թարմացման պարբերականությունից, պահման ժամանակի տևողությունից և այլ չափանիշներից:

ԶԼՄ-ները և լրագրողական գործունեությունը սոցիալական կառավարման կարևորագույն գործոնի դեր են կատարում հատապես արտակարգ իրավիճակներում, մեծ ազդեցություն են ունենում ժամանակակից անհատի վրա, ինչը և պայմանավորում է ԶԼՄ-ների փոխհատուցող ռեսուրսների իմացության և հասկացման կարևորությունը: «Փոխհատուցող» ռեսուրսների տակ հասկացվում է արտակարգ իրավիճակի պայմաններում հայտնված մարդկանց հոգեկան, մասնավորապես՝ հուզական և ֆիզիկական վիճակի վրա դրական ազդեցություն գործելու ԶԼՄ-ների հատկությունը:

Շնորհիվ ԶԼՄ-ների՝ ցանկացած արտակարգ իրավիճակ կամ տարերային աղետ ձեռք է բերում տեղեկատվական-հաղորդակցական ռեզոնանս, ինչը կարող է կամ խորացնել հետևանքների աղետալիությունը, կամ օգնել զերծ մնալ դեպրեսիայից,

ապատիայից: Այսինքն, իրականացնում է սոցիալական ոլորտի յուրատեսակ հոգեթերապիա:

Այսօր արտակարգ իրավիճակների մասին տեղեկատվությունը, որպես կանոն, գերակայում է այլ իրադարձությունների լուսաբանման նկատմամբ: Այդպիսի բնույթի տեղեկատվության գերակայությունը ձևավորում է զանգվածային գիտակցության հարմարման էֆեկտ աղետների, դրանց անխուսափելիության նկատմամբ: Այդ ամենի արդյունքում հասարակության մոտ արտակարգ իրավիճակներում չի գործում անվտանգ վարքի համարժեք ընկալումը:

Այսպիսով, ակնհայտ է այն հակասությունը, որն առկա է զանգվածային գիտակցության վրա ազդող սթրեսաժին գործոնների աճի և ՋԼՄ-ների փոխհատուցողական ազդեցության նվազման միջև: Արտակարգ իրավիճակի իրական մակարդակի և տեղեկատվական դաշտում դրա լուսաբանման բնույթի միջև հավասարակշիռ հարաբերակցության բացակայությունը հանգեցնում է նրան, որ մարդիկ հայտնվում են կրկնակի հոգեբանական ճնշման տակ՝ անմիջական տվյալ իրավիճակի և լրատվամիջոցներում դրա լուսաբանման:

ՋԼՄ-ներն, ըստ էության հանդիսանալով հասարակության սոցիալական կարգավորիչ, չեն նպաստում արտակարգ իրավիճակում հասարակության սոցիալ-հոգեբանական կայունությանը և չեն իրականացնում իրենց առաջնային խնդիրներից մեկը՝ զանգվածային գիտակցության հոգեշտկում: Մարդն արտաքին միջավայրում անընդհատ ստիպված է հարմարվել այդ միջավայրի առաջադրած պայմաններին: Հաճախ միջավայրն ու բնությունը մարդու համար ստեղծում են այնպիսի արտակարգ իրավիճակներ, որոնք մարդը միայնակ ի վիճակի չէ հաղթահարել: Հետազոտման է ենթակա լրագրողների հոգեբանական վիճակը բուն արտակարգ իրավիճակում և դեպքի վայրից լուրը հաղորդելիս: Գաղտնիք չէ, որ ինչ հոգեվիճակում լրագրողը հայտնեց լուրը, կրկնապատիկ ազդեցիկ է լինում էկրանի առջև նստած հեռուստադիտողների համար, և լրագրողն իր վարքագծով կարող է կամ խուճապ առաջացնել՝ դրանից բխող բացասական հետևանքներով, կամ հանգստության, ապահովության զգացում սփռել: Սա բավականին բարդ իրավիճակ է, երբ լրագրողը մի կողմից պետք է ճշմարիտ տեղեկատվություն հաղորդի, միևնույն ժամանակ

կարողանալով կառավարել իր զգացմունքները, հույզերը՝ չառաջացնի խուճապ [Տես՝ հավելված 5]: Այսօրվա հրամայականն է՝ գիտականորեն հիմնավորելու արտակարգ իրավիճակներում տեղեկատվությունը լուսաբանող լրագրողի հոգեբանական պատրաստվածության անհրաժեշտությունը, քանի որ 1988 թվականից հետո պաշտոնապես հաստատվել է, որ Հայաստանը սթրեսաձին գոտի է, իսկ 25-ամյա պատմություն ունեցող հանրապետության համար վերոնշյալ խոշոր աղետները բավարար հիմք են տալիս այդ պնդման համար: Հետևաբար, լրագրողները հոգեբանորեն մշտապես պետք է պատրաստ լինեն աշխատել արտակարգ իրավիճակներում: Իսկ դրա համար անհրաժեշտ է ունենալ բավարար հոգեբանական պատրաստվածություն՝ նախ, տեղեկատվություն հաղորդելիս հասարակության մեջ խուճապ չառաջացնելու նկատառումով, ապա նաև սեփական անձը չվնասելու համար, քանի որ, որպես կանոն, արտակարգ իրավիճակներ լուսաբանելուց հետո լրագրողները ընկնում են երկարատև ընկճախտի մեջ [Տես՝ հավելված 2]:

Մեր հասարակության մեջ ոչ բավարար ուշադրություն է հատկացված արտակարգ իրավիճակներում ՁԼՄ-ների գործունեության դերին ու նշանակությանը: Լրագրության վերաբերյալ գրականության մեջ այն առկա է այլ խնդիրների և ուղղությունների համատեքստում, որտեղ շեշտը դրվում է տեղեկատվության մատուցման էթիկական կողմի վրա, հոգեբանության, որտեղ փորձում են պարզել տեղեկատվական ազդեցության չափը բնակչության հոգեկան վիճակի վրա: Բայց կոնկրետ լրագրողի վրա թողած հոգեբանական ազդեցության, և նրա միջոցով հանրությանը հաղորդած հոգեբանական ազդեցության հիմնախնդիրը մանրամասնորեն ուսումնասիրված չէ: Բացի այդ, ոչ բավարար հետազոտության են ենթարկվել տեղեկատվության որակական և քանակական չափորոշիչները, դրա սոցիալ-հոգեբանական և քաղաքական ուղղվածությունը, այսինքն՝ արտակարգ իրավիճակի պայմաններում տեղեկատվության կառավարման յուրահատկությունը:

Տվյալ ուսումնասիրության **արդիականությունը** հիմնավորվում է.

Սոցիալական նշանակությամբ, քանի որ լրագրողների կողմից արտակարգ իրավիճակներում աշխատելու և իրադարձությունների լուսաբանման արհեստավարժության ու բարոյական ուղղվածությունն անմիջականորեն ազդում է

հասարակության սոցիալ-հոգեբանական մթնոլորտի լարվածության, նրանց առողջության և դրական աշխարհընկալման վրա:

Հոգեբանական պատրաստվածությունը շատ կարևոր է նախ լրագրողների առողջության և ներդաշնակ հոգեկան վիճակի պահպանման համար, քանի որ երբեմն ողբերգական իրավիճակներում աշխատելիս նրանք ունենում են հոգեբանական աջակցության կարիք:

Ընտրված թեման կարևորվում է նաև լրագրություն մասնագիտությամբ կրթական ծրագրերում կոմպետենտային մոտեցման ներդրման տեսանկյունից:

Հիշյալ հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ էլ պայմանավորված է մեր կողմից ատենախոսության թեմայի ընտրությունը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է** արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի հոգեբանական պատրաստվածության մակարդակի հետազոտումը և բարձրացման ուղիների, ձևերի և միջոցների համակարգի մշակումը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏՆ Է** արտակարգ իրավիճակներում ներառված սուբյեկտների հոգեբանական պատրաստվածության գործընթացը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ Է** արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի հոգեբանական պատրաստության համակարգը:

Հետազոտության վարկածից և նպատակից բխում են հետևյալ **խնդիրները**.

1. ուսումնասիրել և համեմատել արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների հոգեբանական պատրաստության գործընթացներն ու մեխանիզմները արտերկրում և ՀՀ-ում,

2. ուսումնասիրել լրագրողների վրա թողնված հոգեբանական ազդեցությունն արտակարգ իրավիճակների պայմաններում,

3. բացահայտել արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների հոգեբանական պատրաստվածության և բնակչության վրա նրանց կողմից լուսաբանվող տեղեկատվության հոգեբանական ազդեցության կապը(մեր կողմից ուսումնասիրված ընտրազանգվածի օրինակով),

4.բացահայտել տպագիր, էլեկտրոնային լրատվության միջոցներում և հեռուստատեսությունում աշխատող լրագրողների աշխատանքներում առաջացող հոգեբանական խնդիրները և առանձնահատկությունները,

5.կազմել արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների հոգեբանական պատրաստության դասընթացի ծրագիր:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾՆ Է.** արտակարգ իրավիճակներում աշխատող և տեղեկատվություն հաղորդող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածության անհրաժեշտ մակարդակի ապահովումը հնարավոր է արտակարգ իրավիճակների պայմաններում աշխատող և լուսաբանող լրագրողների վրա հոգեբանական ազդեցության, նրանց հոգեբանական պատրաստվածության և նրանց կողմից հասարակությանը տրվող տեղեկատվության ազդեցությունը կառավարելի դարձնելու պայմաններում, ինչը լրագրողների աշխատանքներում առաջացող սոցիալ-հոգեբանական խնդիրները կդարձնի կառավարելի, իսկ սոցիալ-հոգեբանական գիտելիքների իմացությունը կապահովի աշխատանքի համակարգվածությունը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ:** Հետազոտության մեթոդաբանական հիմք են ծառայել փիլիսոփայության, սոցիալական հոգեբանության հիմնարար տեսական ուսումնասիրությունները, սոցիալական հոգեբանության մեթոդական համակարգը, օրինաչափությունները, հոգեկանի ուսումնասիրման և համակարգային մոտեցման սկզբունքները և կառուցվածքահամակարգային ու գործառության պատկերացումները, ինչպես նաև Զ. Ֆրեյդի, Կ. Յունգի, Կ.Հորնիի տեսությունները և սոցիոլոգներ Մ. Հոլսթեյն-Բեկի, Կ. Բոուլդինգի հայեցակարգային մոտեցումները, արտակարգ իրավիճակներում անձի սոցիալ-հոգեբանական հարմարման վերաբերյալ Մ. Մկրտումյանի և Յու.Ա.Ալեքսանդրովսկու հայեցակարգային դրույթները, ինչպես նաև միջազգային ճանաչում ունեցող բազմամյա փորձառությամբ լրագրող Մարկ Բրեյնի՝ հետազոտական աշխատանքների հոգեբանական վերլուծությունները, արտակարգ և զանգվածային լրատվության միջոցներին վերաբերող իրավական նորմատիվային փաստաթղթերը, միջազգային պրակտիկայում գործող լրագրողական վարքագծային նորմերը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԸ**

Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային որակները, դրանց արտահայտվածությունը և հոգեբանական պատրաստվածության աստիճանը որոշելու և համեմատական վերլուծություն կատարելու համար օգտագործել ենք.

- տեսական հետազոտության մեթոդներ՝ հիմնախնդրի վերաբերյալ կուտակված համաշխարհային փորձի համեմատություն,
- փորձարարական մեթոդներ՝ հարցաթերթ, հարցազրույց, թեստ, փորձագիտական գնահատում, գործունեության արդյունքների համեմատական վերլուծություն:

Հետազոտության ընթացքում կիրառվել են Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան» (16-PF), «Ինքնագնահատման ախտորոշման Չ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի մեթոդիկան», Ա.Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան», Թեյլորի «Տագնապախոտվության չափման» մեթոդիկան:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:** Առաջին անգամ մեր իրականությունում լրագրության ոլորտում նորովի է բացահայտվել արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածության հիմնախնդիրը: Արտակարգ իրավիճակներում սուր արտահայտված տագնապայնությունը, ագրեսիվ վարքի դրսևորումները, նյարդային լարվածությունը, հնարավոր կոնֆլիկտները և հուզական անկայությունը բացասաբար են անդրադառնում կոնկրետ իրավիճակում լրագրողի կողմից տեղեկատվության ստացման, մշակման և մատուցման գործընթացների վրա, դրանով թուլացնելով 'լրագրող-հասարակություն' կապը, որը հնարավոր է բարձրացնել ի հաշիվ լրագրողի սոցիալ-հոգեբանական պատրաստվածության:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Հետազոտության տեսական նշանակությունը պայմանավորված է սոցիալական և արտակարգ իրավիճակների հոգեբանության տեսական զարգացմամբ: Մեր իրականության մեջ



առաջին անգամ հետազոտական աշխատանքի տվյալների հիման վրա բացահայտվել և գիտականորեն հիմնավորվել են արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների հոգեբանական պատրաստվածության անհրաժեշտությունը, հրատապությունը, առանձնահատկությունները, սկզբունքները, մեթոդները, տեղեկատվության որակական և քանակական չափորոշիչները, դրա սոցիալ-հոգեբանական ուղղվածությունը: Արտակարգ իրավիճակի պայմաններում տեղեկատվության կառավարման յուրահատկությունը, բացահայտումն ու վերլուծումն անհրաժեշտ է դարձնել ուսումնական նյութ և ծառայեցնել լրագրություն մասնագիտությամբ սովորող ուսանողների համար: Այն պատրաստի վերլուծություն է սոցիալական և արտակարգ իրավիճակների հոգեբանության և լրագրողների պատրաստման գործընթացի զարգացման հիմնախնդիրներով զբաղվող հետազոտական աշխատանքների համար:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Մեր

հետազոտությունն ունի ոչ միայն տեսական, այլ նաև գործնական նշանակություն՝ հետազոտող հոգեբանների, լրագրողների, ոլորտի դասախոսների համար: Հետազոտությունների արդյունքում կազմած «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» դասընթացի ծրագիրը կնպաստի բուհերի կամ միջին մասնագիտական հաստատությունների լրագրություն մասնագիտությամբ շրջանավարտ և արդեն լրագրողական գործունեություն իրականացնող լրագրող-մասնագետների հոգեբանական պատրաստվածության ապահովմանն ու առկա մակարդակի զարգացմանը, արտակարգ իրավիճակներում լրագրողական աշխատանքի մեթոդաբանության փոփոխությանը, սթրեսակայունության մակարդակի բարձրացմանը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ:** Հետազոտությունը կատարվել է 2011-2016թթ. ժամանակահատվածում և ներառում է տրամաբանորեն կապակցված հետևյալ երեք փուլերը.

1.Պրորբլեմային-որոնողական փուլ (2011-2013 թթ.): Այս փուլի հիմնական նպատակը եղել է հետազոտության սկզբնական չափանիշների, գիտական ապարատի հստակեցումը՝ նպատակի, խնդիրների ձևակերպում, տեղայնացում, տեսական և

փորձարարական նյութի և հետազոտության մեթոդների նկատմամբ մեթոդաբանական մոտեցումների հիմնավորում, հիմնախնդրին վերաբերող գրականության ուսումնասիրություն: Արդյունքը հետազոտության հիմնախնդրի, նրա հիմնական ուղղությունների որոշարկումն էր, հիմնական հասկացությունների համակարգի կառուցումը, վարկածի ձևակերպումը:

2. Համակարգման փուլ (2013-2015 թթ.): Ուսումնասիրվել, բացահայտվել և վերլուծվել են արտակարգ իրավիճակներում լրագրողական գործունեության հիմնական ուղղությունները, հոգեբանական կողմերը, հոգեբանական պատրաստության անհրաժեշտ մակարդակները, տեղեկատվության լուսաբանման հոգեբանական ազդեցության ձևերը, միջոցներն ու մեխանիզմները: Այս փուլում մշակվել և տեսականորեն համակարգվել են արտակարգ իրավիճակներում լրագրողների աշխատանքի հոգեբանական առանձնահատկությունները, հոգեբանական պատրաստության հիմնական ուղղությունները և իրականացվել են հետազոտական-փորձարարական աշխատանքները:

Հետազոտական-փորձարարական աշխատանքները կազմակերպվել են հետևյալ հիմնական փուլերով՝ հավաստող, ստուգողական և ձևավորող: Հետազոտությանը մասնակցել 127 մարդ:

1. Արդյունքների ընդհանրացման փուլ (2015-2016 թ): Այս փուլում համակարգվել, ընդհանրացվել և գնահատվել են հետազոտության արդյունքները, ստուգվել են առաջադրված դրույթները: Արդյունքները ընդհանրացվել են գիտական հրապարակումներում, գիտական զեկուցումների տեսքով ներկայացվել գիտաժողովներում, ամբիոնային սեմինարներում, ավարտական տեսքի է բերվել ատենախոսության գիտական ձևակերպումը, մշակվել է «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» դասընթացի ծրագիրը:

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆԸ:**

Կատարված հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովված են հոգեբանական հետազոտությունների ժամանակակից մեթոդաբանական սկզբունքներով, հետազոտության առարկային,

նպատակին և խնդիրներին համապատասխան կիրառված փոխադարձաբար իրար լրացնող մեթոդներով: Հետազոտության հիմնական արդյունքների փորձարկումն ու ներդրումը կատարվել է երկրորդ և երրորդ փուլերում:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել և քննարկվել են Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Ջարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի նիստերին, որտեղ արժանացել են դրական գնահատականի, ինչպես նաև հանրապետական ու միջազգային գիտաժողովներում:

### **ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ:**

1.Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների հոգեբանական պատրաստվածության հիմնախնդիրն, իր տեսական վերլուծություններով և մեթոդաբանական հիմնավորումներով, պահանջում է որոշակիություն հասարակությանը արտակարգ իրավիճակներում տրված տեղեկատվության տեսանկյունով և այդ առումով իր բնորոշ առանձնահատկություններով տարբերվում է այլ իրավիճակներում հաղորդող տեղեկատվության ազդեցության դրսևորումներից:

2.Արտակարգ իրավիճակներում աշխատող և տեղեկատվություն ապահովող լրագրողներն ունեն հոգեբանական յուրատիպ դրսևորումներ, որոնք պայմանավորված են տվյալ արտակարգ իրավիճակի պայմաններում հասարակությանը հաղորդվող ու ներկայացվող տեղեկատվության բնույթից և լրագրողի՝ որպես սուբյեկտի, անձնային գործոններից:

3.Արտակարգ իրավիճակներում աշխատող և տեղեկատվություն ապահովող լրագրողների և հասարակության միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունները բնորոշվում են յուրատիպ հոգեբանական առանձնահատկություններով: Լինելով խոցելի՝ ենթարկվում են երկկողմանի ազդեցության (ուղղահայաց և հորիզոնական) ձևավորելով երկբնույթ փոխազդեցություն: Ինչի արդյունքում լրագրողները ցուցաբերում են ագրեսիվություն, տագնապայնություն՝ շփվողականության բարձր աստիճանով, արտահայտչականության որոշակի ցուցանիշով, ինքնավերահսկողության սուբյեկտիվ ընկալման բարձր աստիճանով, ոչ համարժեք ինքնագնահատականով, ինչի արդյունքում շատ հաճախ խաթարում և խեղաթյուրում են տեղեկատվությունը:

4.Խմբավորելով անձնային գործոններն ինտելեկտուալ, հուզական առանձնահատկությունների, հաղորդակցական և միջանձնային փոխազդեցությունների առանձնահատկությունների՝ կարելի է փաստել, որ հուզական բաղադրիչների դրսևորման առկայությամբ, արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության և նրանց կողմից հասարակությանը տրվող տեղեկատվության միջև կա փոխազդեցություն:

5.Հատուկ մշակված և կազմակերպված «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» ծրագրի ուսուցողական պարապմունքները հետապնդում են երկու նպատակ.

ա) իրենց համակարգվածությամբ նպաստում են արտակարգ իրավիճակներում աշխատող և տեղեկատվություն ապահովող լրագրողների հոգեբանական պատրաստվածությանը, որը ենթադրում է դրական հուզական վերաբերմունք հասարակության հետ համագործակցության, հարմարվողականության, փոխզիջման, փոխադարձ ընդունելի վարքի ռազմավարության նկատմամբ,

բ) ապահովում են արտակարգ իրավիճակներում աշխատող և տեղեկատվություն տրամադրող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածության մակարդակը:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ:** Աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, 18 աղյուսակից, 6 գծապատկերից, օգտագործած գրականության ցանկից, հավելվածներից: Ընդհանուր ծավալը կազմում է 185 համակարգչային էջ:

ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

1.1 Արտակարգ իրավիճակ հասկացությունը և առանձնահատկությունները

Հասարակությունը զերծ չէ տարաբնույթ աղետներից, արտակարգ իրավիճակներից, որոնք անկանխատեսելի են, անվերահսկելի, չկառավարվող: Արտակարգ իրավիճակը իրավիճակ է կոնկրետ տարածքում, որը ստեղծվել է բնական և տեխնածին աղետների և այլ տարաբնույթ վտանգավոր երևույթների արդյունքում, որը բերում է մարդկային կորուստների, մարդկանց և շրջակա միջավայրի վնասների, սոցիալական վարքային դրսևորումների փոփոխությունների ինչպես անհատական, այնպես էլ խմբային մակարդակում: Խմբային մակարդակում դրսևորվող բացասական հետևանքներն իրենց ազդեցությունն են ունենում թե հասարակական սոցիալ-հոգեբանական երևույթների, և թե ամբողջի վրա, ինչն անմիջականորեն ազդում է այդ պայմաններում մասնագիտական գործունեություն իրականացնող անհատների և խմբերի վրա: Նման իրավիճակները խաթարում են անհատների և բնակչության ինչպես կենսագործունեության, այնպես էլ մասնագիտական գործունեության բնականոն ընթացքը՝ ներգործելով հոգեկանի վրա: Ռուսաստանի Դաշնության՝ «Բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների դասակարգման մասին» Կառավարության որոշման համաձայն (N 304, 21 մայիսի, 2007թ.) արտակարգ իրավիճակները դասակարգվում են կախված հետևանքների և արտակարգ իրավիճակի գոտու բնութագրերից: ՀՀ-ում «արտակարգ իրավիճակներն, ըստ մասշտաբների, դասակարգվում են տեղական, համայնքային, մարզային, հանրապետական և անդրսահմանային նշանակության արտակարգ իրավիճակների՝ ըստ դրանց հետևանքով զոհված և տուժած՝ առողջական վնասվածքներ և նյութական խոշոր վնասներ կրած, ինչպես նաև երկար ժամանակով կենսագործունեությունը խախտված մարդկանց թվաքանակի, պատճառված նյութական վնասի չափի, արտակարգ իրավիճակի խոցող գործոնների տարածման գոտիների սահմանների»:

«Արտակարգ իրավիճակներն ըստ ծագման աղբյուրների դասակարգվում են տեխնաժին, բնական, էկոլոգիական և սոցիոժին բնույթների»[113]:

Արտակարգ իրավիճակի աղբյուրը «վտանգավոր բնական երևույթ կամ անտրոպոգեն, տեխնաժին (տեխնոգեն) պատահար է, մարդկանց, կենդանիների և բույսերի լայնորեն տարածված հիվանդություն, ինչպես նաև հարձակման ժամանակակից միջոց, որի հետևանքով ծագել է, կամ կարող է ծագել արտակարգ իրավիճակ»[114]:

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցների շարքում առանձնանում է բնակչության բարոյահոգեբանական պատրաստությունը, որը «բնակչության մեջ այնպիսի արտակարգ իրավիճակների աղբյուրներ առաջանալու նկատմամբ հոգեբանական կայունության ձևավորման գործընթաց է, որոնք մարդու կյանքի ու առողջության համար վտանգավոր են և կազմալուծող ազդեցություն են գործում նրա հոգեկանի, ինչպես նաև գոյությունը պահպանելու և արտակարգ իրավիճակներում ակտիվ գործողությունների դիմելու հոգեբանական պատրաստվածության վրա»[114]:

Մեր համոզմամբ, այստեղ կարևորվում է բնակչությանը արտակարգ իրավիճակի աղբյուրի, նրա հնարավոր զարգացումների մասին ճիշտ, հավաստի իրազեկումը, ինչի համար պատասխանատու են նաև զանգվածային լրատվամիջոցներն ու անհատ լրագրողները:

Անձը ամբողջ կյանքում հարմարվում է սոցիալական միջավայրին: Ըստ Սեչենևի՝ օրգանիզմի գոյությունն առանց արտաքին միջավայրի անհնար է, քանզի մարդը միջավայրի հետ գտնվում է փոխներգործության մեջ՝ որպես անատոմիաֆիզիոլոգիական և հոգեկան գործառույթների ամբողջություն: Արտաքին աշխարհի հետ փոխներգործության ժամանակ անձն անընդհատ ունենում է անվտանգության, հարմարման, հուսալիության խնդիրներ: Արտակարգ իրավիճակներն ունեն ճգնաժամային բնույթ, դրանք վտանգավոր գործոնների ամբողջություն են և անձի առջև մեծ պահանջներ են դնում՝ դրանց հարմարման նպատակով: Այդ իրավիճակները վտանգ են ներկայացնում ինչպես անձի ֆիզիկական, այնպես էլ հոգեկան առողջության համար: Արտակարգ իրավիճակը կարող է

հանկարծակի առաջանալ և բնական, և արհեստաձին աղետների արդյունքում: Նման իրավիճակների տարբերակման չափանիշներ կարող են լինել հանկարծակիությունը, զարգացման արագությունը, հետևանքների անկանխատեսելիությունը, անսպասելիությունը:

Արտակարգ պայմանները բնութագրվում են տեղեկատվական կառուցվածքի փոփոխությամբ, սոցիալ-հոգեբանական սահմանափակումներով և վտանգի առկայությամբ, անձը հայտնվում է հոգեձին գործոնների ազդեցության տակ, որոնք անբավարար պատրաստվածության պայմաններում բերում են հոգեկան պոռթկումների: Արտակարգ իրավիճակները հոգեբանական տեսանկյունից բնութագրվում են որպես անձի հոգեկանի վրա ազդող ուժեղ գործոններ: Այդ գործոնները կարող են լինել ինչպես ուժգին, այնպես էլ ինտենսիվ, ինչը բնութագրվում է անսպասելիության, մեծամասշտաբության տարբեր աստիճաններով ու կարող է դառնալ սթրեսի և սուբյեկտիվ, և օբյեկտիվ պատճառ: Արտակարգ իրավիճակները փոխում են գործունեության հոգեբանական կողմը՝ ներկայացնելով անձի հարմարման նոր պահանջներ: Յու.Ա.Ալեքսանդրովսկին գտնում էր, որ ցանկացած համակարգի կենտրոնական օղակը մարդու գործունեության արդյունքն է, որը սահմանվում է որպես համակարգ ձևավորող գործոն, ընդ որում՝ հարմարվողականությունը արդյունք է, որը սերտորեն կապված է «ֆունկցիոնալ վիճակ» հասկացության հետ[23]: Շնորհիվ կարգավորիչ մեխանիզմների՝ աշխատանքների այդ կապն արտացոլում է գործունեության արդյունավետության աստիճանը, ինչը պայմանավորված է արտակարգ գործոններով և անձի որակական հատկանիշներով: Ցանկացած «ֆունկցիոնալ վիճակի» կառուցվածքում կենտրոնական օղակը նյարդահոգեբանական կայունությունն է, ինչը դիտարկվում է որպես հոգեկան գործընթացների և ակտիվության փոխազդեցության արդյունք: Անձի ակտիվությունը ղեկավարող և ապահովող վիճակը որոշվում է հոգեկան հատկություններով, առաջին հերթին հոգեկանի կառուցվածքային ամբողջականությամբ, որում առկա են միաժամանակ խիստ ամրակայված սոցիումի հարաբերականորեն անկախ ծրագրեր կամ վարքի մոդելներ[23]:

Արտակարգ իրավիճակներում շատ կարևոր է նաև անձի անվտանգության ապահովումը: Անգամ ամենապատրաստ մարդը կարող է պոտենցիալ տուժող համարվել: Անվտանգությունը մեկնաբանվում է որպես տուժողների և սպառնալիքների «մարդ-շրջակա միջավայր» համակարգի հատկանիշ: Գործունեության յուրաքանչյուր ձև անձին ներկայացնում է որոշակի պահանջներ, որոնք ենթադրում են մասնագիտական կարևոր որակներ, որոնք էլ նպաստում են անձի անվտանգ գործունեությանը: Քանզի, հուսալի գործունեությունը առաջին հերթին պայմանավորված է նրա ֆիզիոլոգիական առանձնահատկություններով: Արտակարգ պայմանները բնութագրվում են փոփոխված աֆերենտացիայով, փոփոխված ինֆորմացիոն կառուցվածքով, սոցիալ-հոգեբանական սահմանափակումներով և ռիսկի գործոնի առկայությամբ: Արտակարգ իրավիճակներում անձի ընդհանուր առողջությունը, նրա գործունեության արդյունավետությունը, հոգեկանի հուսալիությունը սերտորեն կապված են այն հանգամանքի հետ, թե ինչքանով է անձը ճիշտ գնահատում փոփոխված պայմանները և ինչն է կարևորում իր համար, ինչպես է գնահատում և տիրապետում հոգեկարգավորման հնարքներին և ինչպես է վերահսկում հիշյալ փոփոխությունները[13]:

Ինքնակարգավորման կարևորագույն նպատակը չհարմարվածության վիճակի փոխհատուցումն է: Այստեղ կարևորվում է անձի հոգեկան գործունեության ապահովումը բարձր մակարդակով, որը հնարավորություն է տալիս ոչ միայն դիմագրավել տարբեր բնական և սոցիալական անբարենպաստ ազդակներին, այլև ակտիվորեն ներազդել «զլխավոր նպատակի իրականացումն ապահովող գործունեության» ճիշտ ընտրություն կատարելու վրա[13] [23]:

Արտակարգ պայմաններում հոգեկարգավորման ընթացքում կիրառվում է խոսքային մեթոդների համալիր, ինչը միտված է հոգեկանի դրսևորման այս կամ այն վիճակի կարգավորմանը, մասնավորապես՝ խոսքային հրահանգների, ինքնահրահանգների և հրամանների միջոցով: Հոգեկարգավորման ժամանակ ինքնաներշնչման հիմքում ընկած են խոսքը, մտածողությունը և ուշադրությունը[13]:

Ժամանակակից հոգեվերլուծական տեսության ներկայացուցիչներից Կ.Հորնիի տեսության մեջ կենտրոնականը «հիմնային տազնապ» է, սակայն ի տարբերություն Զ.



Ֆրեյդի, Կ. Յունգի՝ նա գտնում էր, որ ներքին տազնապներն ի սկզբանե հատուկ են մարդուն: Նա ելնում է այն հանգամանքից, որ «ներողներն առաջ են գալիս անձնային գործոնների պատճառով, ինչն ավելի ճիշտ հասկացվում է, որ ներողներն ընդհանրացվում են մարդկային հարաբերությունների հավասարակշռության խախտումից»[104]:

Հիմնային տազնապի զգացման ազդեցության տակ մարդը մշակում է վարքի ռազմավարություններ, որոնք աստիճանաբար ամրապնդվում են, դառնում անձին բնորոշ բնավորություն: Սկզբնական շրջանում Կ. Հորնին առանձնացրել է 10 նման պահանջմունք, և դրանք անվանել է ներոտիկ՝ հիմնախնդրի լուծման նման իռացիոնալության հետևանքով. դրանցից են իշխանության պահանջմունքը, շահագործման, վարկանիշի և այլ պահանջմունքներ[104]: Այդպես են առաջանում անձի երեք հիմնական միտումները՝ «ձգտումը դեպի մարդիկ», «շարժում մարդկանց դեմ», «փախուստը մարդկանցից»: Այս հիմնային կողմնորոշումները բնորոշ են ցանկացած մարդու, քանի որ, ըստ Կ. Հորնի, դրանք ամենևին չեն բացառում միմյանց: Սակայն ներոտիկ անձնավորությունը, ով ունի բարձր հիմնային տազնապայնություն, հետևում է այս միտումներից որևէ մեկին որպես գերակայող՝ արտամղելով կամ բացառելով մնացած երկուսը: Ասվածից հետևում է, որ մենք պետք է տազնապը դիտարկենք որպես «մարդկանց հակառակ շարժման» ներանձնային միտման դրսևորում, որը կարող է շատ, թե քիչ արտահայտվել՝ կախված անձի ներոտիկության աստիճանից: Տազնապը, ինչը ծնում է ներանձնային կոն, հոգեվերլուծական տեսության կենտրոնական հասկացություններից է: Հոգեվերլուծական հայեցակարգում մարդն ունի կոնֆլիկտային էություն: Կոնֆլիկտը մարդու համար ոչ թե պատահական, այլ բնորոշ վիճակ է: Զ. Ֆրոյդն ընդգծում էր. «Մենք հոգեկանի մասնատումը չենք բացատրում հոգեկան ոլորտի բնածին անբավարար սինթեզով, այլ այդ մասնատումը բացատրում ենք դինամիկայով՝ որպես հոգեկան հակամետ ուժերի կոնֆլիկտ.մասնատման մեջ մենք տեսնում ենք հոգեկան երկու խմբավորումների՝ միմյանց նկատմամբ ակտիվ ձգտման արդյունքը»[120]: Զ. Ֆրեյդը ուշադրությունը կենտրոնացրել էր ներանձնային կոնֆլիկտի վրա և նրա տեսությունն օգնում է հասկանալու ցանկացած ներանձնային կոնֆլիկտի

հոգեբանական հիմքը, որը հավաստում են նաև հոգեվերլուծական հայեցակարգերի ժամանակակից մշակումները:

1.Բիհեյվիորիստական ուղղության հետազոտությունները հավաստում են, որ ներքին ներանձնային կոնֆլիկտի մասին կարելի է խոսել միայն այն ժամանակ, երբ կան հակազդման այլընտրանքային տարբերակներ: Օրինակ, Կ. Բոուլդինգը պնդում է, որ երկու կամ ավելի միավորների փոխազդեցության գործընթացում առաջ է գալիս լարվածություն, շարժում դեպի ընդհանուր վարքային դաշտ և դրանից դուրս: Փոխազդեցությունը կարգավորում են երկու նախադրյալներ՝ առաջին՝ կոնֆլիկտային, որը գոյություն ունի ընդհանուր վարքային դաշտում նպատակների անզիջողականության, անհամատեղելիության դեպքում, և երկրորդ՝ զիջողականության ու համագործակցության[109]: Շատ հետազոտողներ մատնանշում և առանձնացնում են ևս երկու ասպեկտ՝ դիտարկելով ներքին կոնֆլիկտը որպես գործընթաց, որը հիմնված է հոգեբանական անտոգոնիզմի յուրատիպ ձևի վրա և ընթանում է սուբյեկտների իրական փոխազդեցության մեջ: Արտակարգ իրավիճակին դիմակայելու և աշխատելու ցանկացած գործընթաց հարկ է զարգացնել ինչպես անհատական, այնպես էլ հասարակական մակարդակով: Սթրեսի ապրման հոգեբանական տեսանկյունները և դրանց հետևանքների գիտական եզրահանգումները հնարավոր են միայն այն դեպքում, երբ դիտարկվում է անհատի գործունեությունն արտակարգ պայմաններում:

Անձնային մակարդակով դիմակայման նվազեցման ընդհանուր սկզբունքներն են՝

- ինֆորմացիայի հոսքի ղեկավարման կարողություն,
- որոշումներ ընդունելու և դրա հետևանքները հաշվի առնելու ընդունակություն,
- իրավիճակն իմաստավորելու ունակություն,
- հասարակությանը տեղեկատվություն փոխանցելու կարողություն,
- առաջնայինը երկրորդայինից տարբերելու և փոխանցելու ունակություն,
- ուժերը և հնարավորությունները հաշվի առնելու կարողություն:

## 1.2 Լրագրողների գործունեությունը արտակարգ իրավիճակի պայմաններում

(իրավական կողմ)

Հայաստանի Հանրապետությունում լրագրողների աշխատանքն արտակարգ իրավիճակներում կանոնակարգող օրենսդրական խնդիրը դեռևս պատշաճ ուշադրության չի արժանացել: Եվ չնայած մեր հանրապետությունում իրականացվեց պատմության մեջ նախադեպը չունեցող ահաբեկչական գործողություն (1999 թ.-ի հոկտեմբերի 27-ին, Ազգային ժողովի շենքում), սակայն այն չնպաստեց ՀՀ-ում ԶԼՄ գործունեությունը կարգավորող օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուն: Ըստ Ն.Մ. Նալբանդյանի, 2005 թվականին միայն օրենսդիրն անդրադարձավ այս խնդրին: ՌԴ ահաբեկչական գործողությունները լուսաբանող լրագրողն իր աշխատանքի ընթացքում առաջին հերթին առաջնորդվում է ՌԴ Սահմանադրությամբ, «ԶԼՄ-ի մասին» և «Ահաբեկչության դեմ պայքարի» դաշնային օրենքներով: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր լրագրող պետք է առաջնորդվի իր խղճով ու պատվով (բնականաբար, եթե իր արարքը չի հակասում օրենքին), քանի որ աշխարհում և ոչ մի փաստաթուղթ չի կարող ներառել հնարավոր բոլոր իրադրությունների ներկայնակը: Արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու լրագրողի հատկության ձևավորմանը նպաստում են մասնագիտական բազմաթիվ կանոնագրեր[121]:

Այսպես, Ռուսաստանի Դաշնության հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը, երաշխավորում է զանգվածային լրատվամիջոցների ազատությունը. «Գրաքննությունն արգելված է»[115] [10]:

Սրան զուգահեռ, մեր իրականության մեջ լրագրողները պաշտպանված չեն և միշտ չէ, որ գործում են նորմատիվային ակտերը:

ՌԴ «Ահաբեկչության դեմ պայքարի» մասին օրենքում նշված է, թե ինչ է կարելի անել հասարակությանը տեղեկատվություն տրամադրելու և հակաահաբեկչական գործողություններ ծավալելու համար: Այդ նույն օրենքով ՌԴ-ում հակաահաբեկչական գործողությունները սահմանվում են որպես «Հատուկ միջոցառումներ, որոնք ուղղված են ահաբեկչական գործողությունը կանխելու, ֆիզիկական անձանց անվտանգությունն

ապահովելու, ահաբեկիչներին վնասագերծելու, ինչպես նաև ահաբեկչական գործողության ժամանակ վնասները նվազագույնի հասցնելու համար»[103] [121]:

Մեր իրականության մեջ «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» օրենքում «հակաահաբեկչական գործողություն» եզրույթն ունի այլ ձևակերպում. «Հակաահաբեկչական գործողություն՝ ահաբեկչական գործողության բացահայտմանը, կանխմանը, ինչպես նաև պետության շահերի և ֆիզիկական անձանց անվտանգության ապահովմանը, ահաբեկիչների վնասագերծմանը և ահաբեկչական գործողությունների հետևանքների նվազեցմանն ուղղված հատուկ միջոցառումներ»: «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» (ՀՀ օրենք, 22 մարտի 2005 թ., հոդված 5, կետ 5) [121]:

Ըստ ՌԴ հեռուստառադիոհեռարձակման խարտիայի, լրագրողները համաձայն են այն մտքին, որ «մասնագիտական պարտքի կատարումը կախված է ոչ միայն հեռուստառադիոհեռարձակումները կարգավորող օրենսդրական դաշտի կատարելությունից, իշխանական կառույցներից ու հասարակությունից, այլ նաև լրագրողական էթիկայի նորմերից: Այս նորմերը թելադրում, «պահանջում» են ինքնասահմանափակում, վերահաստատում են նյութի հրապարակայնացման թույլատրելի սահմանը և մերժում այն, ինչը կարող է վնաս հասցնել մարդու առողջական, բարոյական, ֆիզիկական ու հոգեբանական վիճակին»[60, էջ 195]:

2002 թ. հոկտեմբերի 23-26-ի «Նորդ Օստի» դեպքերից հետո ահաբեկչական գործողությունների լուսաբանման վերաբերյալ ՌԴ օրենսդրական դաշտի կարգավորման փորձեր արվեցին. մասնավորապես, առաջարկվեց փոփոխություն մտցնել «ԶԼՄ-ի մասին» օրենքում, ինչը սահմանափակում էր զանգվածային լրատվամիջոցների ազատությունը և փաստացի գրաքննություն սահմանում լրագրողի աշխատանքի նկատմամբ՝ հակաահաբեկչական գործողությունների լուսաբանման ընթացքում:

Իշխանությունների նախաձեռնությանն ի պատասխան, ՌԴ «ԶԼՄ արդյունաբերական կոմիտեն» առաջարկեց «Հակաահաբեկչական համաձայնագիր», որով կարգավորվելու էին ԶԼՄ վարքականոնները ահաբեկչական և հակաահաբեկչական գործողությունների ժամանակ: Այն հավանության արժանացավ

«Հեռարձակողների ազգային ասոցիացիայի» կողմից, և բոլոր հեռուստառադիոհեռարձակողներին առաջարկվեց կամավոր միանալ դրան: Այս փաստաթուղթը ստորագրեցին խոշորագույն հեռուստաընկերությունների ղեկավարները: Հաշվի առնելով լրագրողի աշխատանքում փաստաթղթի կարևորությունը՝ այն ներկայացնում ենք ամբողջությամբ:

## ՀԱԿԱԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԶԼՄ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԵՎ ՀԱԿԱԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ընդունել է Արդյունաբերական կոմիտեն

08 ապրիլի, 2003 թ.

Հասարակությանը հավաստի տեղեկատվություն հաղորդելու նպատակով, ԶԼՄ-ներն իրավունք ունեն և պարտավոր են նպաստել ահաբեկչության խնդրին առնչվող թեմաների բաց քննարկմանը, հասարակությանը տեղեկացնել հակաահաբեկչական գործողությունների ընթացքի մասին, վարել հետաքննություն, մարդկանց տեղեկատվություն հաղորդել իրական խնդիրների և կոնֆլիկտների մասին: Համոզված ենք, որ ահաբեկչության վտանգը չպետք է օգտագործվի որպես առիթ կամ միջոց՝ սահմանափակելու բազմակարծության իրավունքն ու զանգվածային լրատվամիջոցների գործունեության շրջանակը: Սրանով հանդերձ, գիտակցելով ահաբեկչության հետ կապված վտանգի աստիճանը, ինչպես նաև այդպիսի իրավիճակներում տեղեկատվական աշխատանքի պատասխանատվությունը՝ անհրաժեշտ ենք համարում կամավոր ընդունել ԶԼՄ վարքականոնները սահմանող հետևյալ բանաձևը և պարտավորվում ենք աշխատանքի ընթացքում առաջնորդվել դրանով:

1. ԶԼՄ աշխատակիցները պարտավոր են գիտակցել, որ ահաբեկչական և հակաահաբեկչական գործողությունների ժամանակահատվածում մարդկանց փրկության և կյանքի իրավունքն առաջնային է՝ մյուս բոլոր իրավունքների և ազատությունների համեմատությամբ:

2. Այն դեպքում, երբ լրագրողը տեղեկատվություն է ստանում նախապատրաստվող ահաբեկչական գործողության կամ այն սկսելու մասին, ապա, մինչ այդ տեղեկատվության հրապարակումը, լրագրողը պարտավոր է այդ մասին հայտնել ՋԼՄ ղեկավարությանը:

3. Լրագրողը պարտավոր է իր մոտ ունենալ և առաջին իսկ պահանջով ներկայացնել խմբագրության հավաստագիրը կամ այլ փաստաթուղթ, որ կհաստատեն նրա անձն ու մասնագիտությունը:

4. ՋԼՄ ղեկավարությունը պարտավոր է օպերատիվ շտաբին կամ պաշտոնական օրգաններին անհապաղ ներկայացնել իրեն հայտնի տեղեկատվությունը, որը կարող է նպաստել կամ օգտագործվել մարդկանց կյանքը փրկելու գործին:

5. Քանի որ ահաբեկիչները ՋԼՄ-ներն հաճախ օգտագործում են իրենց դիրքորոշումներն ու պահանջները հրապարակային դարձնելու համար, ՋԼՄ աշխատակիցները չպետք է՝

- ահաբեկիչներից հարցազրույց վերցնեն նրանց նախաձեռնությամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ մասին պահանջով կամ խնդրանքով դիմում է օպերատիվ շտաբը,

- ահաբեկիչներին հնարավորություն ընձեռեն դուրս գալ ուղիղ եթեր՝ առանց օպերատիվ շտաբի հետ նախնական խորհրդակցության,

- ինքնակամ իրենց վրա վերցնեն միջնորդի առաքելությունը (բացառությամբ այն դեպքերի, երբ դա թույլատրել կամ նախաձեռնել է օպերատիվ շտաբը). Եթե ՋԼՄ ներկայացուցիչը հայտնվել է բանակցություն վարողների կազմում, պետք է ձեռնպահ մնա սեփական հրապարակումներից՝ մինչև ճգնաժամի վերացումը,

- վերցնեն զենք կամ կրեն զինվորական կամ այլ համազգեստ՝ գիտակցելով, որ զենք կրող ՋԼՄ աշխատակիցը դադարում է այդպիսին լինելուց,

- ահաբեկիչներին, պատանդներին կամ ահաբեկչության մեջ ներքաշված այլ անձանց խնդրեն կամ առաջարկեն կատարել ինչ-ինչ գործողություններ՝ ավելի լավ լուսանկարչական կամ տեսողական կադր ստանալու նպատակով,

- վիրավորեն և նվաստացնեն ահաբեկիչներին, որոնց ձեռքում է գտնվում պատանդների կյանքը:

Լրագրողները պարտավոր են՝

- հիշել, որ ահաբեկիչները կարող են օգտագործել ուղիղ ռադիո և հեռուստատեսություն՝ այլ վայրեր պայմանական ազդանշաններ ուղարկելու համար,

- խուսափել, ավելի ճիշտ, զերծ մնալ մարդկանց կյանքը փրկող պրոֆեսիոնալների գործողությունների մանրամասն նկարագրությունից,

- հանդես բերել ուշադրություն և նրբանկատություն ահաբեկչությանը զոհ դարձածների հարազատների զգացմունքների նկատմամբ, ցուցաբերել առավել և հատուկ նրբազգացություն իրադարձության վկա-մասնակիցների՝ որպես տեղեկատվության աղբյուրի նկատմամբ,

- իրադարձության մասնակիցներին և վայրը ցուցադրելիս խուսափել ավելորդ նատուրալիզմից, հարգալից վերաբերվել սեփական լսարանի բարոյական, ազգային և կրոնական զգացմունքներին,

- իրադարձությունը նկարագրելիս զգուշությամբ կիրառել այս կամ այն տերմինը. չի կարելի, թեկուզ և չգիտակցված, «պարել» ահաբեկիչների «դուդուկի տակ», որոնք հորինում են իրենց հարմար, ձեռնտու անվանումներ կամ տերմիններ,

- գիտակցել, որ ահաբեկիչների մոտ գտնվողները նաև այդ իրավիճակի պատանդն են և որոշակի պահերի գործիք են դառնում հասարակական կարծիքի վրա ազդելու համար,

- խուսափել պատանդների բարեկամներին ու ընկերներին և պոտենցիալ զոհերին, առանց նրանց համաձայնության, նույնականացնելուց:

Ահաբեկչական և հակաահաբեկչական գործողությունները լուսաբանելիս անհրաժեշտ է՝

- հիշել հասարակությանը տեղեկացնելու պարտականության մասին՝ հետևելով ոչ միայն հաղորդման բովանդակությանը, այլև խոսքի տոնայնությանը,

- հիշել, որ այն, ինչ հայտնում է ՋԼՄ-ն, մատչելի ու հասանելի է բոլորին, այդ թվում և նրանց, ովքեր միտումնավոր ստեղծել են այդ ճգնաժամային իրավիճակը,

- հաշվի առնել այն հանգամանքը, որ համաշխարհային հասարակայնությունը հերքում է ահաբեկչության կապը որևէ կոնկրետ կրոնի, ռասայի կամ ազգության հետ,

- հիշել, որ հաղորդված տեղեկատվությունը չպետք է պարունակի այնպիսի տարրեր, որոնք կարող են նպաստել ահաբեկիչների դիրքերի ամրապնդմանը, օրինակ, ելույթով սատարել նրանց պահանջների կատարմանը և այլն: Դա կարող է տարածվել միայն մարդկանց կյանքին վտանգ սպառնացող իրավիճակների և ոչ թե քաղաքական, տնտեսական կամ էլ սոցիալական պայքարի իրադարձությունների վրա, որոնք տեղավորվում են Սահմանադրության շրջանակներում»[116]:

ԶԼՄ-ներն կարող են իրենց լսարանին հայտնել, որ օպերատիվ շտաբի հրահանգով տեղեկատվության մի մասը արգելված է հակաահաբեկչական գործողությունների կազմակերպման և անցկացման ժամանակահատվածի համար՝ մարդկանց կյանքի անվտանգությունն ապահովելու նպատակով:

Ստորագրելով համաձայնագիրը՝ լրագրողները համաձայնության եկան «արտակարգ իրավիճակներում տեղեկատվական սահմանափակումների վերաբերյալ»: Սրա հետ մեկտեղ, «Հասարակությանը տեղեկատվությամբ ապահովելու նպատակով, ԶԼՄ-ներն իրավունք ունեն և պարտավոր են նպաստել ահաբեկչության խնդրի բաց քննարկմանը, հասարակությանը տեղեկացնել հակաահաբեկչական գործողության ընթացքի մասին, վարել հետաքննություն, ժողովրդին հայտնել իրական խնդիրների ու կոնֆլիկտների մասին»[116]:

Այնուամենայնիվ, այս կամ այն տեղեկատվությունը հաղորդելու վերաբերյալ որոշում կայացնելու և գնահատական տալու իրավունքը վերապահված է հակաահաբեկչական գործողությունն իրականացնող շտաբին:

Լրագրողի մասնագիտական վարքականոններն ու կոդեքսները և, առաջին հերթին, Հակաահաբեկչական համաձայնագիրը ՌԴ-ում հնարավորություն տվեցին խուսափելու լրագրողների ազատությունը սահմանափակող օրենքների ընդունումից, քանի որ դրանք կարող էին ժուռնալիստիկայի անկախությունը խափանող նաև ուրիշ սահմանափակումների վտանգավոր նախադեպ դառնալ: Ինչպես տեսնում ենք, ահաբեկչական գործողությունների լուսաբանման ժամանակ լրագրողների վարքականոնները կարգավորող նորմատիվ-օրենսդրական փաստաթղթերը



ամբողջապես չեն կարող վարվելակարգի ենթարկել նրանց աշխատանքը: Այս պատճառով, ահաբեկչական գործողության լուսաբանման ընթացքում շատ բան կախված է հենց լրագրողից: Նա պետք է խիստ զգոն լինի, քանի որ ահաբեկչական գործողությունների ժամանակ իր թույլ տված նույնիսկ փոքր սխալը կարող է մարդկային զոհերի պատճառ դառնալ:

Արտակարգ իրավիճակը լուսաբանող լրագրողը ուղղակի պետք է հետևի մասնագիտական օրենքներին և բարոյական նորմերի կատարմանը: Շատ հաճախ լրագրողները գործում են հույզերով: Դրանց վառ օրինակներն են 1999թ. հոկտեմբերի 27-ը, 2006 թ. մայիսի 3-ին «Արմավիա» ընկերության՝ Երևան-Սոչի չվերթն իրականացնող Ա-320 ինքնաթիռի վթարի դեպքը: Հիշյալ լուսաբանումները հուզական էին և որոշ դեպքերում ուշացած, ինչը հայ լրագրողների անփորձության արդյունքն էր [Տես՝ հավելված 4,5]:

Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության դեմ պայքարի իրավական հիմքերն են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական, քրեական դատավարության և քաղաքացիական օրենսգրքերը, այլ օրենքներն ու նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը: Մինչ 2005թ. Հայաստանի Հանրապետությունը չունեի ահաբեկչության վերաբերյալ միասնական օրենք: Միայն 2005 թ. ապրիլի 19-ին է ընդունվել և կիրառության մեջ դրվել «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը, որն ահաբեկչության դեմ պայքարը համարում է նպատակաուղղված գործողություններ հետևյալ հարցերում՝ ա) ահաբեկչության գործունեության նախազգուշացում, բացահայտում, կանխում և դրա հետևանքների նվազեցում, բ) ահաբեկչությունից անձի, հասարակության և պետության պաշտպանություն, գ) ահաբեկչական գործունեությանը նպաստող պատճառների ու պայմանների բացահայտում և վերացում[121]:

Ըստ գործող օրենքի, ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքացիներն ու կազմակերպությունները (անկախ կազմակերպական-իրավական և սեփականության ձևից) պարտավոր են աջակցել ահաբեկչության դեմ պայքարն իրականացնող մարմիններին՝ իրենց պարտականությունները կատարելիս: Սա նշանակում է, որ լրագրողը չի կարող

տեսախցիկով պատվել գրավված շենքի շուրջը և այլն: Հակաահաբեկչական գործողության իրականացման գոտուց դուրս «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը չի գործում:

Ինչպես մեզ մոտ, այնպես էլ աշխարհի շատ երկրներում լրագրողը «խանգարիչ տարր» է դիտվում նման իրավիճակներում: Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անվտանգության խնդիրները սկսեցին լուծում ստանալ միայն 1990-ականի վերջերին՝ «Ձայնի պաշտպանության» հիմնադրամում: Համաձայնելով նրա ղեկավար Պավել Չեխուտովի մտքին, թե՛ պարտադիր է իջեցնել լրագրողների կյանքին և առողջությանը սպառնացող վտանգի ռիսկը (վտանգի նախազգուշացում), հարկավոր է առաջին օգնություն ցույց տալ նրանց և մյուսներին, հոգեբանորեն պատրաստ լինել արտակարգ իրավիճակներում աշխատելու համար[42, էջ 81-82]: Լրագրողների որակավորման բարձրացման համար առաջարկվում է ուսումնասիրել թեմաներ՝ անվտանգ աշխատանքի մեթոդները, ժամանակակից շփման տեխնոլոգիաները, հոգեկան պաշտպանության և հոգեբանական ազդեցության միջոցները, իրավական աստիճանի բարձրացումն արտակարգ իրավիճակներում: Դասընթացները վարում են բարձր որակավորում ունեցող մասնագետները՝ «Ալֆա» ջոկատի, Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատողները, փորձառու լրագրողները և այլք, որպեսզի այս խնդրում մասնագիտացող լրագրողները կարողանան օպերատիվ և ճիշտ կազմակերպել իրենց աշխատանքն արտակարգ իրավիճակներում[42, էջ 88-92]: Լրագրողների մեծամասնությունը համոզված է, որ պետությունն իրավունք չունի սահմանափակել ԶԼՄ-ի գործունեությունը՝ թեկուզև «պայքար ահաբեկչության դեմ» պատճառաբանությամբ[42, էջ 104]: Համամարդկային արժեքներին հավատարիմ լինելը, անձնական փորձը և պրոֆեսիոնալ մտածողությունը հաճախ ամենալավ և միակ ճիշտ կանոններն են այս գործում:

Ներկայացնենք լրագրողների գործունեության իրավական կողմը նաև ռազմական հակամարտությունները լուսաբանելու ժամանակ:

1. Եթե հայտարարված չէ ռազմական կամ արտակարգ դրություն, ապա լրագրողի իրավունքների և պարտականությունների ծավալը չի փոփոխվում, որևէ հատուկ սահմանափակումներ չեն կիրառվում: Այդ թվում լրագրողներն իրավունք ունեն

այցելել ռազմական հակամարտության տարածք, փնտրել, ստանալ և տարածել դրա մասին տեղեկատվություն, պետական ատյաններ ուղարկել հակամարտության հետ կապված հարցումներ, պահանջել պաշտոնյա անձանց ընդունելություն: Այսպես է սահմանվում ՌԴ «Մամուլի մասին» օրենքով՝ հ. 47 և 49[10]:

Լրագրողները, որոնց մասնագիտական պարտքն է գտնվել այնտեղ, որտեղ կա զինված հակամարտություն և անմիջապես մասնակցել այդ իրադարձությունների լուսաբանմանը, Միջազգային Մարդասիրական Օրենքով (ՄՄԻ) դիտվում են որպես քաղաքացիական բնակչություն և անձեր, որոնք հայտնվել են զինված հակամարտության գոտում:

Հակամարտության գոտում գտնվող քաղաքացիական բնակչության (այդ թվում և լրագրողների) վերաբերյալ ՄՄԻ հիմնական կանոններն են.

**1. Լրագրողի իրավական կարգավիճակը զինված հակամարտության ժամանակ**

Զինված հակամարտության գոտում վտանգավոր գործուղման մեջ գտնվող լրագրողը ՄՄԻ տեսակետից համարվում է «քաղաքացիական անձ», և նրա վրա ամբողջովին տարածվում են պաշտպանության ՄՄԻ նորմերը, նախատեսված քաղաքացիական անձանց համար:

**2. Լրագրողի կարգավիճակի հաստատումը**

Ուղևորվելով զինված հակամարտության գոտի՝ լրագրողին խորհուրդ է տրվում ստանալ ռազմական լրագրողի միջազգային օրինակի անձի նույնականացման վկայական:

ՄՄԻ-ն հատուկ կարգավիճակ է տալիս միայն այն անձանց, որոնց պարտականությունների մեջ է մտնում հակամարտության զոհերին օգնություն ցուցաբերելը. բժշկական անձնակազմին, քաղաքացիական պաշտպանության անձնակազմին և (անուղղակիորեն) Միջազգային Կարմիր Խաչի (ՄԿԽ) և Հովանավորող վեհապետությունների պատգամավորներին: Բոլոր այս անձինք հակամարտող գաղափարների հանդեպ չեզոք են, ինչը միշտ չէ, որ հաջողվում է լրագրողներին, որոնց համար դժվար է զինված հակամարտությունը լուսաբանելիս մնալ օբյեկտիվ:

Նշված կարգավիճակը ունեցող անձանց հանդեպ գործում է հատուկ իրավական ռեժիմ, և նրանք բոլորը պետք է հեշտությամբ ճանաչվեն, տարբերվեն, որպեսզի նրանց տրամադրվող պաշտպանությունը ունենա գործնական բնույթ:

Փորձագետների կարծիքով, բացի նրանից, որ թևնոցը պաշտպանության ոչ ամենաարդյունավետ միջոցն է, լրագրողների հանդեպ այն կարող է բոլորովին հակառակ արդյունքի բերել, երբ հակամարտող կողմերից մեկին դուր չգա հակամարտության լուսաբանումը ՁԼՄ-ում, ապա լրագրողը դառնում է հեշտ թիրախ: Թևնոցով լրագրողների հայտնվելը քաղաքացիական բնակչության համար նույնպես դառնում է վտանգի և սպառնալիքի առիթ, այսինքն հակառակորդը կարող է նրանց վրա հարձակվել:

### **3. Լրագրողի քաղաքացիությունը**

Պաշտպանությունը տրամադրվում է քաղաքացիական անձանց՝ անկախ նրանց քաղաքացիությունից: Չինված հակամարտության պայմաններում ցանկացած լրագրող օգտվում է պաշտպանությունից անկախ նրանից, թե նա չեզոք, թե՞ հակամարտությանը մասնակից պետության քաղաքացի է:

### **4. Ինչպիսի պաշտպանություն է տրամադրվում քաղաքացիական անձանց, այդ թվում և լրագրողներին**

Հիմնական երաշխիքներ.

ա. քաղաքացիական անձը ոչ մի դեպքում չպետք է լինի հարձակման օբյեկտ (հ.51, կ.2 Ի-ին Արձանագրության)

բ. քաղաքացիական անձինք իրավունք ունեն, որպեսզի իրենց սեփականությանը վերաբերվեն հարգանքով, եթե այն չունի ռազմական նշանակություն:

Կանխամտածված հարձակումը, որը մահվան կամ լուրջ մարմնական վնասվածքների պատճառ է դարձել, հանդիսանում է Արձանագրության լուրջ խախտում, այսինքն ռազմական հանցագործություն (հ.85, կ.3-ե, Ի-ին Արձանագրության)

### **5. Հավատարմագրումը ռազմական իշխանությունների օրոք**

Գործնականում այն մեծ նշանակություն ունի (հաշվի առնելով չեչենական հակամարտության փորձը). Առանց հավատարմագրման կարող են արգելել մտնել հակամարտության տարածք, կարող են խնդիրներ ծագել տվյալ տարածության իշխանությունների հետ և այլն:

Բայց ՄՄԻ տեսակետից՝ ռազմական թղթակիցը, որը հավատարմագրված է ռազմական իշխանությունների կողմից Ժնևյան III Կոնվենցիայի համաձայն, օգտվում է նույն պաշտպանությունից, ինչից օգտվում է չհավատարմագրված թղթակիցը: Նա, ունենալով ռազմական իշխանություններից ստացած հատուկ իրավունքներ, միևնույն է, մնում է քաղաքացիական անձի կարգավիճակում:

## **6. Ե՞րբ է լրագրողը համարվում քաղաքացիական կարգավիճակը կորցրած անձ**

ՄՄԻ համաձայն քաղաքացիական անձինք կարող են կորցնել ՄՄԻ-ի կողմից հատկացվող պաշտպանության իրավունքը.

1. եթե նրանք մուտք են գործում զինված կազմավորումներ
2. եթե զենք են ձեռքը վերցնում, նույնիսկ եթե գտնվում են տարբեր ռազմական օբյեկտների մոտակայքում:

Եթե լրագրողը գտնվում է ռազմական օբյեկտի մոտակայքում կամ ձեռքը զենք է վերցրել, ապա նա փաստորեն հրաժարվում է ՄՄԻ իրեն հասանելիք պաշտպանությունից: Այս դեպքում ՄՄԻ-ն չի կարողանա երաշխավորել նրա կյանքի անվտանգության համակ, քանի որ ռազմական օբյեկտները առաջին հերթին կարող են ենթարկվել հարձակման: Այսպիսի պարագաներում նա գործում է իր սեփական պատասխանատվության դաշտում:

## **7. Ինչպիսի՞ հակամարտությունների ժամանակ են գործածվում տվյալ կանոնները**

Ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական, բայց առաջիններին՝ ավելի շատ: Եթե լրագրողը գտնվում է վտանգավոր գործուղման մեջ ներպետական հակամարտության գոտում և զերծ է մնում ամեն տեսակի թշնամական գործողություններից, նա պետք է ստանա ոչ պակաս պաշտպանություն, որի իրավունքն ունի քաղաքացիական անձը:

## **8. Լրագրողի տեղաշարժման ազատությունը ռազմական հակամարտության գոտում**

Յուրաքանչյուր հրամանատարություն փորձում է այս առումով ստեղծել ինչ-որ սահմանափակումներ՝ կամ պարետային ժամ է մտցնում, կամ հատուկ անցաթղթեր, այս ամենը արվում է նրա համար, որ օտարը չլինի այնտեղ, որտեղ կտեսնի այն, ինչը նրան չեն ուզում ցույց տալ: Սա բերում է մի շարք բարդությունների հակամարտության գոտում աշխատող լրագրողի համար և ՄՄԻ՝ լրագրողի, որպես քաղաքացիական անձի պաշտպանման մասին դրույթների կիրառմանը: Շատ զինված խմբեր նույնպես պահանջում են լրագրողից անցնելու հավատարմագրման գործընթացը իրենց շտաբին կից: Եվ սա նույնպես արվում է լրագրողին վերահսկելու համար:

Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների գործունեության իրավական կարգավորմանն է վերաբերվում նաև Ահաբեկչության հետ պայքարի ընթացքում մամուլի ազատության մասին Ալմաթինյան հռչակագիրը:

1. Հակահաբեկչական դաշինքի մասնակից-երկրների կառավարությունները հակամարտության ընթացքում չպետք է օգտագործեն ազգային անվտանգության ապահովման փաստարկները մարդու իրավունքների նվազեցման համար, ինչպես իրենց սեփական, այնպես էլ՝ ուրիշ երկրներում:

2. Մասնավորապես, Կենտրոնական Ասիայի պետությունների կառավարությունները չպետք է օգտագործեն հակամարտության նոր իրավիճակը որպես արդարացում ռեպրեսիվ միջոցներ ձեռնարկելու ՋԼՄ ընդդիմադիր ձայնի դեմ: Փոխարենը, նրանք պետք է օգտագործեն այս իրավիճակը որպես կատալիզատոր հետագա քայլեր ձեռնարկելու համար, որ հասարակության մեջ ՋԼՄ-ի համար ստեղծվի ազատ գործունեության միջավայր:

3. ՋԼՄ-ները պետք ազատ լինեն իրենց ուղղիչ գործառույթներն իրականացնելիս իրենց երկրում՝ կապված տնտեսական, բնապահպանական և ռազմական որոշումների հետ, հատկապես հակամարտությունների ժամանակահատվածում: Ազատ հասարակական բանավեճերը հանդիսանում են որպես կենսական անհրաժեշտություն:

4. Լրատվամիջոցները պետք է ազատ լինեն իրենց հիմնական հասարակության «պաշտպանող շան» դերը կատարելիս կոռուպցիայի դեմ պայքարում, որը բոլոր երկրների համար լուրջ խոչընդոտ է ժողովրդավարության ճանապարհին: Հատկապես սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո, ՁԼՄ-ները պետք է հնարավորություն ունենան հանրությանը տեղեկացնելու ահաբեկչական խմբերի գործունեության և կոռուպցիայի միջև ֆինանսական փոխադարձ կապերի մասին:

5. Միջազգային առաջատար ՁԼՄ-ները պետք է ակտիվորեն ներգրավված լինեն տարածաշրջանում և, լինելով տեղեկատվության կարևոր աղբյուր և պրոֆեսիոնալ լրագրության օրինակ իրենց գործընկերների համար, պահպանեն այդպիսի մասնակցությունը:

6. Միջազգային դրության սրման և Կենտրոնական Ասիայում շարունակվող հակասությունների պայմաններում լրագրողները պետք է ցուցաբերեն միմյանց հանդեպ համերաշխություն և աջակցություն:

7. Հակամարտությունների լուսաբանման ժամանակ լրագրողները պետք է շարունակ ջանքեր գործադրեն օբյեկտիվ ռեպորտաժներ մանրակրկիտ խմբագրելու և դրանք մատուցելու գործում: Լրագրողական էթիկան պետք է ինչպես երբևէ պահանջված լինի հակամարտությունների ընթացքում, և լրագրողները պետք է գիտակցեն իրենց պատասխանատվությունը:

8. Միջազգային հանրությունը, պետական և ոչ կառավարական կազմակերպությունները պետք է լրացուցիչ ջանքեր գործադրեն հակամարտությունների գոտում աշխատող լրագրողների անվտանգությունը ապահովելու համար: Առաջատար ՁԼՄ-ները կարող են ապահովել անհրաժեշտ վերապատրաստում և ապահովագրություն, ստեղծել անվտանգության փուլեր: Այդ փուլերի ֆինանսական աջակցության համար կարելի է դիմել ՁԼՄ-ի հետ աշխատող և նրանց գործունեությունը ֆինանսավորող հիմնադրամներին: Հարկավոր է միջոցներ ձեռնարկել հակամարտության գոտիներում աշխատող պրոֆեսիոնալ լրագրողներին անձը հաստատող ավելի արդյունավետ փաստթղթեր ստեղծելու համար:

Պատերազմի կամ արտակարգ դրության, պետական կառավարման դժվարությունների, կամ դրա ի սպառ բացակայության պայմաններում գտնվող

տարածք լրագրողի գործուղումը թե խմբագրության, և թե լրագրողի առջև է դնում վերջինիս իրավական կարգավիճակի և նրա մասնագիտական գործունեության իրավական պաշտպանվածության խնդիրը: Այդ իսկ պատճառով իրավունքի հարցերի հետ ծանոթացումը հանդիսանում է արտակարգ լրագրության բարդ և ոչ անվտանգ խմբագրական խնդիրների նախապատրաստման և կատարման գլխավոր խնդիրներից մեկը[134]:

Լրագրողի աշխատանքում վթարների, տարերային աղետների և զանգվածային անկարգությունների վայրերում հնարավոր են սահմանափակումներ: Թե մեր, և թե այլ երկրներում օրենսդրությունն այս հարցի վերաբերյալ հստակ և միանշանակ պարզաբանում չի տալիս: Այդ իսկ պատճառով տրամաբանական կլիներ ենթադրել, որ այդ սահմանափակումները կարող են պայմանավորված լինել միայն լրագրողների և այլ անձանց անհատական անվտանգության համապատասխան պայմանների պահանջով (այսինքն, երբ պաշտոնատար անձինք գործում են ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակում): Ռուսաստանի Դաշնությունում, օրինակ, եթե լրագրողը պետք է աշխատի սահմաններից դուրս, ապա նպատակահարմար է, որ գոնե ընդհանուր գծերով ծանոթանա տեղական օրենսդրության առանձնահատկություններին, որոնք որոշ դեպքերում զգալիորեն տարբերվում են ռուսականից կամ եվրոպականից, իսկ երբեմն էլ հիմնված են, օրինակ կրոնական նորմերի վրա: Ի տարբերություն ռուսաստանյան օրենսդրության, միջազգային իրավունքը բավականին հստակ կանոնակարգում է արտակարգ իրավիճակներում, այդ թվում նաև ռազմական գործողությունների տարածաշրջաններում, լրագրողի աշխատանքի կանոնները: Առաջին այդպիսի փաստաթղթերը ի հայտ են եկել XIX դարի սկզբին: «Պատերազմի օրենքների և սովորույթների կանոնակարգի մասին» Հաագայի 13-րդ, ինչպես նաև 1929 թ. հուլիսի 27-ին ընդունված Ժնևյան կոնվենցիայի 81-րդ հոդվածում խոսվում է «թերթի թղթակիցների» մասին: Ըստ Ժնևյան կոնվենցիայի, «զինված ուժերի հետ շարժվող, սակայն անձնակազմի մեջ չմտնող անձինք, այդ թվում՝ թղթակիցներ, լրագրողներ, վաճառականներ և մատակարարներ, որոնք հայտնվել են հակառակորդի իշխանության տակ, որը նպատակահարմար է գտնում ձերբակալել նրանց, իրենց հետ որպես ռազմագերիների վերաբերվելու



իրավունք ունեն, եթե նշված անձանց մոտ առկա է տեղաշարժվող զինված ուժերի իշխանությունների օրինական թույլտվությունը»[76]:

Վտանգավոր գործուղումներում աշխատող լրագրողների պաշտպանության բարելավման հարցը բազմիցս է քննարկվել տարբեր միջազգային կազմակերպություններում, այդ թվում՝ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովում: 1977 թվականի հունիսի 8-ին ընդունվել են Ժնևյան կոնվենցիայի Լրացուցիչ արձանագրությունները: 1 արձանագրության մեջ, որը վերաբերվում է միջազգային զինված հակամարտություններին, առկա է 79-րդ հոդվածը՝ «Լրագրողների պաշտպանության միջոցառումները»[76]: Հոդվածում ասված է.

- զինված հակամարտության վտանգավոր շրջանում գտնվող լրագրողը՝ լինելով քաղաքացիական անձ, ամբողջ ծավալով օգտվում է քաղաքացիական անձանց համար միջազգային մարդասիրական իրավունքով նախատեսված պաշտպանությունից,

- զինված ուժերին կից հավատարմագրված ռազմական լրագրողները պաշտպանվում են Կոնվենցիայի 4-ա հոդվածի 4 III կետի հատուկ դրույթներով,

- արձանագրության հավելվածում ներկայացված անձը հաստատող փաստաթղթի նմուշը վկայում է, որ փաստաթղթի տերն իրոք լրագրող է:

Եթե լրագրողը ձերբակալված է սեփական երկրի իշխանությունների կողմից, ապա նրա հանդեպ կիրառվում է ներքին օրենսդրությունը: Եթե լրագրողը հակամարտության կողմ չհանդիսացող երկրի քաղաքացի է, սակայն ձերբակալված է հակամարտող երկրներից որևէ մեկի կողմից, ապա նրա նկատմամբ գործում են խաղաղ պայմանների իրավունքների նորմերը:

Հարկ է գիտակցել, որ ռուսաստանյան կամ միջազգային օրենսդրությունն ի վիճակի չեն պաշտպանել լրագրողին բացառապես բոլոր իրավիճակներում, և պատերազմական պայմաններում այն կրում է զուտ խորհրդատվական, արձանագրային բնույթ: Առաջնագծում գտնվող լրագրողը գործում է՝ վտանգելով իր սեփական անձն ինչպես ռազմական առաջադրանք կատարողը: Տարերային և տեխնաժին աղետների գոտիներում աշխատող լրագրողների փորձը ցույց է տալիս, որ նրանք շատ հեշտ կարող են դառնալ դիակապտողների և հանցավոր խմբերի զոհ: Լրագրողը զրկվում է պաշտպանության իրավունքից նաև ռազմական գործողություններում մասնակցության

դեպքում: Եթե նա տիրապետում է սեփական իրավունքներին ու պարտականություններին, ապա դա ոչ միայն հեշտացնում է ռազմական գործողությունների կամ աղետների բարդ պայմաններում նրա գտնվելը, այլ նաև բարենպաստ ֆոն է ստեղծում առաջադրանքները կատարելու համար:

*1.3 Ռազմական հակամարտությունների, ահաբեկչական գործողությունների և արտակարգ իրավիճակների գոյում լրագրողների գործունեության սոցիալ-հոգեբանական բնութագիրը (արտասահմանյան և տեղական փորձ)*

Հետխորհրդային ժամանակաշրջանում ահաբեկչական գործողությունների «բազմազանությամբ» ու բազում դրսևորումներով աչքի է ընկնում հատկապես Ռուսաստանի Դաշնությունը (Նորդ-օստ, Բեսլան, բնակելի շենքերի պայթեցումներ հենց Մոսկվայում և այլն): Թերևս այս «բազմազանության» շնորհիվ է, որ ՌԴ-ում բավական մանրակրկիտ է ուսումնասիրված ահաբեկչությունն իր բոլոր դրսևորումներով և, դրա հետ կապված, լրագրողական մեկնաբանությունների և նման իրավիճակներում լրագրողների դրսևորած վարքականոնների հնարավոր վտանգները: Ահաբեկչական գործողությունները լուսաբանող լրագրողն իր աշխատանքի ընթացքում առաջին հերթին առաջնորդվում է ՌԴ Սահմանադրությամբ, «ԶԼՄ-ների մասին» և «Ահաբեկչության դեմ պայքարի» մասին դաշնային օրենքներով: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր լրագրող պետք է առաջնորդվի առաջին հերթին իր խղճով (բնականաբար, եթե իր արարքը չի հակասում օրենքին), քանի որ աշխարհում և ոչ մի փաստաթուղթ, ոչ մի օրենք չի կարող կանխատեսել կյանքում հնարավոր բոլոր իրավիճակները: Այնուամենայնիվ, լրագրողական միավորումներն իրենց փորձի հիման վրա ստեղծում են մասնագիտական էթիկայի կանոնակարգեր, որոնք նպաստում են լրագրողի պրոֆեսիոնալ գործունեությանը:

Հիմնական, մայր օրենքը՝ Սահմանադրությունը, երաշխավորում է զանգվածային լրատվամիջոցների ազատությունը. «Գրաքննությունն արգելված է»: Սրան զուգահեռ «Սահմանադրությունը երաշխավորում է նաև յուրաքանչյուրի կյանքի անձեռնմխելիության իրավունքը», իսկ Քրեական օրենսգիրքը՝ նաև անմեղության կանխավարկածը, ինչի մասին լրագրողները երբեք չպետք է մոռանան, երբ գրում են

ահաբեկիչների գոհերի մասին, նաև մարդկանց, որոնք կասկածվում են ահաբեկչական գործողության կազմակերպման կամ իրականացման մեջ:

Արգելվում է տարածել այնպիսի լրատվություն, որը՝

1. կարող է դժվարացնել կամ բարդացնել հակաահաբեկչական գործողության կազմակերպումը՝ ստեղծելով գործողության իրականացման գոտում կամ դրանից դուրս գտնվող մարդկանց կյանքին ու առողջությանը վտանգ:

2. ծառայում է ահաբեկչության կամ ծայրահեղության քարոզչությանը կամ արդարացմանը:

3. տվյալներ է պարունակում հատուկ ջոկատների, այդ ջոկատների մասնագետների, հակաահաբեկչական գործողությունը պատրաստող օպերատիվ շտաբի անդամների, ինչպես նաև այն մարդկանց մասին, որոնք օգնում են գործողության պատրաստման ընթացքում[2]:

Լրագրողը չպետք է մոռանա, որ ահաբեկչության դեմ պայքարի սկզբունքներից են ահաբեկչական գործողության ժամանակ վտանգված անձանց պաշտպանության առաջնայնությունը և անձնական կյանքի անձեռնմխելիությունը:

Տարբեր կազմակերպությունների, ասենք ժուռնալիստների միության էթիկական վարքականոնների կողեքսը լրագրողի պարտականությունների առնչությամբ ամրագրում է.

- Հատուկ ուշադրությամբ վերաբերվել նրանց, ում հնարավոր է վնաս պատճառել ռեպորտաժի հրապարակման հետևանքով:

- Տեղեկատվություն հավաքելիս, հարցազրույցի, լուսանկարելու կամ հրապարակման ընթացքում նրբանկատ լինել հատկապես նրանց նկատմամբ, ովքեր անմիջականորեն առնչվել են ողբերգությանը կամ ցավին:

Կողեքսում կա շատ կարևոր մի կետ. «Նորությունների փնտրտուքը դեռևս հիմք չէ ամենաթողության (ամեն ինչ անելու իրավունք չի տալիս)» [60]:

Բուս հեղինակ Ս. Մուրատովը խորհուրդ է տալիս ռեպորտաժի ընթացքում հիմնվել փաստերի, ոչ թե հույզերի վրա, երբեք չստանձնել դատավորի կամ պաշտպանի դեր, հատկապես կողմերից մեկի համար, ազգաբնակչության շրջանում նոր հուզումների մասին տեղեկացնելիս ոչ մի դեպքում չհայտնել հասցեներ և

տարածքներ, որտեղ հնարավոր է նոր անկարգությունների առաջացումը, իրավիճակի փոփոխության պարագայում անհրաժեշտ է խորհրդակցել հեռուստաընկերության ղեկավարության և իրավապահ մարմինների հետ, ենթարկվել պետական իշխանության ներկայացուցիչների հրահանգներին՝ այդ մասին տեղյակ պահելով սեփական ղեկավարությանը[71, էջ 193]: Ս. Մուրատովը նշում է, որ ծայրահեղականությունը, անհանդուրժողականությունը, կոյր վրիժառությունը էկրանային ծայնի իրավունք չունեն[71, էջ 195]:

Այս հանգամանքը պետք է առավելապես նկատի առնել, երբ հարցազրույց է վերցվում հենց ահաբեկիչներից, նման շփումը նախապես համաձայնեցվում է ինչպես հեռուստաընկերության ղեկավարության, այնպես էլ իրավապաշտպան մարմինների և հակաահաբեկչական գործողությունը կազմակերպող ու իրականացնող գլխավոր օպերատիվ շտաբի ղեկավարության հետ: Նմանատիպ հարցազրույցներից պետք է խուսափել ուղիղ եթերում, որը զրուցակցի հանկարծակի պոռթկումներից զերծ լինելու երաշխիք տալ չի կարող:

Ծայրահեղ զգուշությամբ է պահանջում հարցազրույցը պատանդների և նրանց առևանգողների հետ, որոնց հրապարակավ ներկայացնելը կարող է հանգեցնել ավելի ծանր հետևանքների:

Տեսախցիկի առջև նոր ահաբեկչական գործողությունների վերաբերյալ կատարված խոստովանությունների մասին անմիջապես պետք է տեղեկացնել հեռուստաընկերության ղեկավարությանը և անվտանգության աշխատակիցներին, որոնց որոշումով էլ այդ տեղեկատվությունը կհրապարակվի կամ ոչ:

Նման արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողը, իսկապես, պետք է գտնվի հոգեբանական կայուն վիճակում, սթափ գիտացի այն պատասխանատվությունը, որը կրում է: Բնականաբար, շատ ծանր և բարդ է այն գործը, որը կատարում է լրագրողը: Նրա ճիշտ կողմնորոշվելու, այս կամ այն դեպքը ճիշտ ու հանգիստ, հավասարակշռված տեղեկացնելու շնորհիվ միայն հասարակությունը կարող է առանց խուճապի ստանալ հավաստի տեղեկատվություն, ինչը շատ կարևոր է:

Արտակարգ իրավիճակը լուսաբանող լրագրողն ուղղակի պետք է հետևի մասնագիտական օրենքների և, որ ամենակարևորն է, բարոյական նորմերի պահանջներին: Այնինչ, լրագրողները հաճախ գործում են հույզերով [Տես՝ հավելված 3,6,10]:

Հակասահաբեկչական գործողության մասին ՁԼՄ-ների աշխատակիցներին տեղեկատվություն տրամադրելու սահմանափակումը վերահսկում է «Օպերատիվ շտաբը», որը ստեղծվում է ահաբեկչությունից հետո նախագահի հրամանով: «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում ամրագրված է՝ արգելվում է հակասահաբեկչական գործողության մասին այնպիսի տեղեկատվության տարածումը, որը բացահայտում է հակասահաբեկչական գործողության իրականացման՝ հատուկ տեխնիկական եղանակներն ու գործելակերպը, կարող է խոչընդոտել հակասահաբեկչական գործողության իրականացմանը և վտանգ ստեղծել քաղաքացիների կյանքին և առողջությանը, տվյալներ է պարունակում հակասահաբեկչական գործողությանը մասնակից պետական մարմինների, հատուկ ծառայությունների՝ ահաբեկչության դեմ պայքարի, դրանց մասնագիտացված ստորաբաժանումների աշխատակիցների, ինչպես նաև այդ գործողության իրականացմանն աջակցություն ցուցաբերած անձանց մասին[2]:

21-րդ դարը կարող ենք համարել «արտակարգ իրավիճակների» դարաշրջան: Այսօր արտակարգ իրավիճակների մասին տեղեկությունը, որպես կանոն, իշխում է առօրյա կյանքի մնացած իրադարձությունների լուսաբանման վրա, ինչն արտահայտվում է տեղեկատվական տարածության մեջ իրենց մասին տեղեկության ծավալի աճով: Այս տեսակի տեղեկության ավելորդ առկայությունը ձևավորում է աղետների հանդեպ զանգվածային գիտակցության սովորություն, նրանց անխուսափելիության զգացում, որը հանգեցնում է մարդկանց պասիվ, հեռու մնալու վարքագծի, նույնիսկ այնպիսի արտակարգ իրավիճակներում, ինչպիսիք են հրդեհը, ջրհեղեղը և այլն: Արդյունքում՝ հասարակության մեջ բացակայում է արտակարգ իրավիճակներում անվտանգ վարքագծի բավարար ընդունումը:

21-րդ դարը հենց սկզբից առատ էր արտակարգ իրավիճակներով. 2001 թ. Սեպտեմբերի 11՝ ահաբեկչություն ԱՄՆ-ում, 2004թ. Սեպտեմբերի 1՝ ահաբեկչություն

Բեսլանում, 2011թ. Երկրաշարժը Ճապոնիայում, վերրջին շրջանի քաղաքական իրադարձությունները Մերձավոր Արևելքում, Հետխորհրդային մի քանի երկրներում: Եվ ահա հենց այս պայմաններում հեշտ չէ աշխատել և լուսաբանել նորություններ թե՛ կետերից: «Էքստրենալ» լրագրությունը կարող ենք համարել լրագրության առանձին և շատ բարդ մի ուղղություն, որտեղ ինֆորմացիայի հավաքագրումը, վերլուծությունը և հրապարակումը կատարվում է արտակարգ իրավիճակներում՝ մարտական գոտիներում, էթնո-կրոնական զինված հակամարտությունների ընթացքում, բնական և տեխնաձին աղետների ժամանակ: Այս պարագայում լրագրողի աշխատանքը դժվարանում է, քանի որ մի կողմից նա պետք է կատարի իր մասնագիտական պարտականությունները, իսկ մյուս կողմից՝ ռիսկի է դիմում և վտանգում սեփական կյանքը:

Արտակարգ իրավիճակներում տարրական հարցազրույց անելն էլ պահանջում է այլ հմտություններ, զգոնություն, հավասարակշռություն: Այսինքն, բացի բարոյական, էթիկական կանոններից, հարցազրույցի ընթացքում պետք է պահպանել ևս մի քանի լրացուցիչ կանոններ, երբ գործ ունես տուժած մարդկանց հետ: Միայն մի փոքր նրբանկատ և ուշադիր լինելու շնորհիվ կարելի է խուսափել սխալներից [Տես հավելված 3]: Պետք է ցուցաբերել հոգատարություն և հարգանք, ստեղծել անկեղծ շփում: Անհրաժեշտ է անկեղծ, խորհին ցավակցություն և ապրումակցում նման մարդկանց հանդեպ, այլ ոչ թե ձևական հարաբերություն՝ անհրաժեշտությունից ելնելով: Այդպիսի պահերին մարդը գտնվում է շոկային իրավիճակում և չպետք է մոռանալ, որ նա կարող է ոչ միայն չհիշել դեպքերի իսկությունը, այլ նաև մոռանալ, որ հարցազրույց է տվել, ինչը կարող է հետագայում խնդիրների հանգեցնել: Այս ամենից խուսափելու համար պետք է գործել հմտորեն: Հարցերը տալու ընթացքում պետք է շատ ուշադիր և նրբանկատ լինել, խուսափել ավելորդ բառերից, բառեր, որոնք կարող են շոկային վիճակում գտնվող մարդուն ավելի վատ վիճակի հասցնել: Անհրաժեշտ է կարողանալ պահպանել հանգստություն և ինքնավստահություն: Շատ կարևոր է ժամանակին կարողանալ դադարեցնել հարցազրույցը, եթե դրանից դիմացինի վիճակը վատթարանում է:

Մարդիկ, ովքեր մասնագիտությունից ելնելով մշտապես շփվում են դժբախտություն, կարուստ, ցավ ապրած մարդկանց հետ, վաղ, թե ուշ կարող են ունենալ հոգեբանական խնդիրներ, որոնք կազդեն ոչ միայն հուզական վիճակի վրա, այլ նաև մասնագիտական կյանքի: Նրանց թվում են նաև լրագրողները: Չկա որևէ հստակ միջոց, եղանակ, որին տիրապետելով լրագրողը կարող է խուսափել այս ամենից: Պարզապես, պետք է կարողանալ արտակարգ իրավիճակներին նայել սթափ, գիտակցված, հիշելով, որ դա աշխատանք է: Այն ուսումնական հաստատությունները, որոնցում պատրաստվում են նման մասնագետներ, պետք է շատ նրբանկատ լինեն այս հարցի շուրջ: Ուսումնառության ընթացքում պետք է, ոչ միայն շեշտը դնել մասնագիտական առարկաների վրա, այլ նաև հոգեբանության, հոգեբանական և ֆիզիկական պատրաստվածության դասընթացների և այլն: Ցանկալի է հաճախակի կազմակերպել թրեյնինգ ծրագրեր, որոնք ինչ -որ չափով կնպաստեն հետագա մասնագիտական աշխատանքին ավելի պատրաստված լինելուն: Պետք չէ ուսանողներին ծանոթացնել մասնագիտության միայն դրական կողմերին, և խուսափել բացասական կողմերի մասին խոսելուց: Այս ամենը թույլ են տալիս հանգել մի եզրակացության, որ լրագրությունը արտակարգ իրավիճակներում՝ մի առանձին ճյուղ է, որը պահանջում է հատուկ գիտելիքներ, հմտություններ, հատուկ մեթոդների ընտրություն՝ տվյալների հավաքման համար, դրանց մշակման, վերլուծության և ռիսկը նվազագույնի հասցնելու ունակություն, որը կծագի, երբ աշխատում է վտանգավոր գոտիներում:

Լրագրող և հոգեթերապևտ Մարկ Բրեյնի հոդվածները կարելի է համարել «այբուբեն» լրագրության և հոգեբանական տրավմաների մասին: Նա ունի շատ հետաքրքիր մասնագիտական կենսագրություն: 1973-2003 թթ. Մարկը եղել է թղթակից Մոսկվայի «Ռոյթերս» և Արևմտյան Բեռլինի գործակալություններում, ապա աշխատել է Արևմտյան Բեռլինի, Վիեննայի, Պեկինի, Լոնդոնի Բի-բի-սի հեռուստաընկերության կորպորացիայում: 90-ականների սկզբում նրա մոտ առաջանում է միջին տարիքի ճգնաժամ տարբեր պատճառներով, որոնց թվում նաև հենց այդ 30 տարվա լրագրողական աշխատանքի ընթացքում կուտակված հուզական էմոցիաների: Դրա հետևանքով Մարկը որոշում է ազատ ժամանակ ուսումնասիրել

հոգեթերապիա: 2000թ-ին նա ավարտում է Լոնդոնի համալսարաններից մեկի խորհրդատվություն և հոգեթերապիա բաժինը, որտեղ ստանում է մագիստրոսի աստիճան, գրելով «Օտարերկրյա թղթակցի անձնական փորձը» վերնագրով ատենախոսություն: 2002-2008թթ. Մարկ Բրեյնը եղել է «Լրագրողական տրավմաների վերարտադրողական կենտրոնի» եվրոպական գրասենյակի տնօրենը: Նա մեծապես նպաստել է այս շրջանի լրագրողների կրթության և վերապատրաստման գործին, անցկացրել է թրեյնինգներ «Լրագրությունը և հոգեբանական տրավմաները» թեմայով Բի-բի-սի-ում, որտեղ մեծ ուշադրություն են դարձնում այս խնդրին, ինչպես նաև թրեյնինգներ տարբեր մեդիաընկերություններում: Այսպիսով, Մարկ Բրեյնից մի փոքրիկ հղում՝ «Ինչպես հաղթահարել հոգեբանական տրավմաները» թեմայի շուրջ [121]:

Շատ հաճախ լրագրողները ականատես են լինում այնպիսի տեսարանների, որոնց սովորական մարդիկ հանդիպում են ոչ միշտ: Նրանք լսարանի ականջն ու աչքն են կարծես, և այն ամենը, ինչ նրանք ստիպված են լինում տեսնել և լսել, հաճախ իրենց հետքն է թողում նրանց գիտակցության մեջ: Նա լրագրողներին կոչ է անում չմոռանալ այն, որ իրենք կենդանի էակներ են և հենց դա է այս մասնագիտության հիմքերից մեկը: Լրագրողի մասնագիտությունը դեռ չի նշանակում, որ նրանք պաշտպանված են զրահով, որը կօգնի պաշտպանվել այն իրադարձությունների ազդեցություններից, որոնք նրանք լուսաբանում են: Ամենից առաջ պետք է արդար լինեք ինքներդ ձեզ հետ, ձեր աշխատանքի հարցում, և ընդունեք նրա հետ կապված վտանգները, դժվարությունները և ձեր հնարավորությունների սահմանափակումները: Մի փակվեք ինքներդ ձեր մեջ, խոսեք ձեր վախերի մասին ձեր գործընկերների հետ, այն մասին, որ վախենում եք կորցնել ձեր ինքնավստահությունը: Սա միշտ օգնում է: Բացառված չէ, որ դուք աշխատանքի ընթացքում տեսնեք մահ, դրամատիկ իրադարձություններ և մարդկային տառապանք: Այսպիսի իրավիճակներում վարել ռեպորտաժ՝ հեշտ բան չէ: Հեշտ չի լինելու ինչպես մասնագիտական տեսանկյունից, այնպես և հուզական առումով», -խորհուրդ է տալիս Մարկ Բրեյնը և շարունակում. ինչպե՞ս հաղթահարել սա: Միշտ պետք է հիշել այն մասին, որ արտակարգ իրավիճակում լրագրողը իր մասնագիտական գործը պետք է կատարի. ինքը լրագրող է, ոչ թե փրկարար: Իսկ



լրագրողի խնդիրը իրադարձությունը ներկայացնելն ու մեկնաբանելն է: Երբեմն դա հեշտ չի լինում, և շատ դեպքերում լրագրողները կանգնում են բարդ երկրնտրանքի առջև՝ շարունակել աշխատել, թե՛ անցնել մարդկանց օգնելուն: Որպես կանոն մարդիկ էմոցիոնալ են, լրագրողները ևս: Սակայն լրագրողը պարտավոր է պատրաստ լինել ցանկացած իրավիճակում ինքնատիրապետման[Տես՝ հավելված 9]: Հոգեբան մասնագետները խորհուրդ են տալիս տեսածի մասին խոսել գործընկերների հետ, «ներս չզցել», այդպես անխուսափելի դեպրեսիայից ավելի շուտ հնարավոր կլինի դուրս գալ, խուսափել հոգեբանական տրավմաներից[Հայկական օրինակները արտակարգ իրավիճակներում աշխատած լրագրողների կյանքից՝ կարդալ հավելվածներում]:

Հոգեբանական տրավմա, ախտանշանները.

Հոգեբանական տրավման կարելի է համեմատել հոգու ցավի հետ, դրանք ունեն նույն ախտանիշերը: Այն կարելի է բաժանել 3 կատեգորիայի.

Ներխուժում- անձին չեն լքում մտահոգիչ մտքերը և հիշողությունները, այն մասին, ինչ տեսել է, մղձավանջներ է ունենում:

Խուսափում՝ անձը խուսափում է ինչ-որ տեղերից, քանի որ իրեն թվում է, որ այնտեղ կարող են պատահել վատ բաներ: Անձի մոտ առաջանում է իմունիտետ ուրիշի ցավի, տառապանքի հանդեպ:

Գրգռվածություն՝ արագանում է սրտի աշխատանքը, առանց պատճառի քրտինք է առաջանում, անձը դժվարանում է կենտրոնանալ, քանի որ գլխում մշտապես նույն մտքերն են:

Եթե անձը փորձում է փախչել դիպուկահարից, ապա նման ախտանշանը շատ բնական է. եթե մարդն արթնանում է գիշերվա կեսին և սառը քրտինք կա ճակատին, ուրեմն մարդը դեռ գտնվում է ապրումների մեջ:

Ինչպես տեխնիկային, այնպես էլ մարդու մարմնին անհրաժեշտ է հատուկ խնամք: Այդ իմաստով Մարկ Բրեյնը խորհուրդ է տալիս՝

- հետևել քնին,
- սնվել ճիշտ և կանոնավոր,
- կրճատել կոֆֆեինի և ոգելից խմիչքների օգտագործումը,
- այցելել մարզասրահներ,

- ժամանակ առ ժամանակ դուրս գալ մաքուր օդի,
- կիսվել անհանգստություններով:

«Եթե դուք փորձեք քննարկել այն, ինչ ստիպված եք եղել ապրել՝ վերականգնվելու գործընթացը ավելի արագ կընթանա, և կկրճատվի հավանականությունը, որ այդ ամենը կազդի ձեր հոգեկանի վրա: Դա գիտական փաստ է, և բազմիցս ապացուցել եմ անձնական փորձովս», -ասում է Մարկ Բրեյնը[119]: Ըստ Բրեյնի, այսօր լրատվական գործակալությունները հոգեբանական տրավմաներին ավելի մեծ ուշադրություն են դարձնում, քան նախկինում, սակայն, որպես կանոն, այն, ինչ նրանք են անում՝ բավարար չէ: «Եթե դուք ձեր լրագրողին ուղարկում եք բարձր ռիսկային գոտի, ասենք ատոմակայան, ածուխի հանքավայր կամ արտադրամաս, դուք անշուշտ ապահովում եք նրանց անվտանգությունը: Սակայն դրանով դուք միայն հոգ եք տանում նրանց ֆիզիկական ապահովության մասին: Իսկ ինչպե՞ս հաղթահարել հուզական էմոցիաները:

Հոգեբանական տրավման մասնագիտական վտանգ է, որը սպառնում է լրագրողներին, որոնք դառնում են ուրիշների ողբերգությունների ականատեսները: Լրագրողները կշարունակեն մահանալ թեժ կետերում և տառապել հոգեբանական խնդիրներով: Ցավոք սրտի, դա մեր մասնագիտության մի մասն է», - ասում է Մարկ Բրեյնը: Լրագրողի մասնագիտությունը կարելի է համարել ծառայություն, այդ իսկ պատճառով լրագրողական կազմակերպությունները իրավաբանական պատասխանատվություն են կրում իրենց աշխատողների համար,-կարծում է Մարկ Բրեյնը[119]:

Եվ այսպես, լրագրողները ապահովագրված չեն դեպրեսիաներից:

Դեպրեսիայի առաջացման պատճառներից մեկը հանդիսանում է նյարդա-հոգեկան կարողությունների սպառումը երկարատև սթրեսների կամ հոգեբանական վնասվածքների պատճառով[70]:

Դեպրեսիան անձին հատուկ աֆեկտիվ իրավիճակ է, որը բնութագրվում է բացասական հույզերով, ինչպես նաև տեղի է ունենում կոգնիտիվ և վարքային ոլորտներում մոտիվացիայի փոխակերպում: Դեպրեսիվ իրավիճակներում անձը ունենում է ցավոտ, հիվանդագին տանջանքներ, ինչպիսիք են կարոտը, տխրությունը,

հուսահատությունը, անհանգստությունը, մեղքի զգացումը, անօգնականությունը կյանքի դժվարությունների հանդեպ: Դեպրեսիվ իրավիճակներում, որպես կանոն դիտարկվում է ցածր ինքնագնահատական, թերահավատություն, վստահության անկում որևէ մեկի հանդեպ, նախաձեռնության բացակայություն, հոգնածություն, նվազում է ակտիվությունը և այլն: Այս մեթոդը թույլ է տալիս տարբերակել դեպրեսիայի վեց մակարդակներ՝ անտարբերություն (ապատիա), մշտական ցածր տրամադրություն (գիպոտիմիա), հուզմունք, անհանգստություն և վախ (դիսֆորիա):

Դեպրեսիվ իրավիճակների որակական հատկությունները

1. Ապատիա՝ անտարբերության վիճակ, բացարձակ անտարբերություն՝ թե ինչ է կատարվում շրջապատում, անտարբերություն սեփական անձի հանդեպ թե ներկա պահին, թե անցյալին, և թե ապագային:

2. Գիպոտիմիա (տրամադրության անկում), աֆեկտիվ ընկճվածություն վշտալի տեսքով, տխրություն կորստի համար, հուսահատություն կյանքի հանդեպ, թուլացում:

3. Դիսֆորիա («դժվար եմ տանում», կրում եմ վատը, չարը), մոայլ տրամադրություն, զայրույթ, թշնամանք, դժգոհություն, անբարյացկամ վերաբերմունք ուրիշների հանդեպ, ագրեսիա, կատաղություն:

4. Հուզմունք, շփոթմունք՝ անկարողության զգացում, անօգնականություն, ամենապարզ իրավիճակները հասկանալու և իր հոգեկան վիճակը փոփոխելու անկարողություն:

5. Անհանգստություն՝ անձի համար անորոշ, անհասկանալի աճող վախի զգացում, աղետների և ողբերգական իրավիճակների կանխազգացում:

6. Վախ, վախի զգացում, որը կրում է բոլոր իրավիճակներում, որը տարածվում է նաև շրջապատի հանդեպ: Վախը կարող է կախված լինել իրավիճակից, օբյեկտից, կյանքի հանդեպ վտանգից:

Դեպրեսիվ վիճակը առաջանում է, որպես կանոն, եթե կա սթրեսի կամ հետվնասվածքային ռեակցիա:

Հոգեբանական տրավման անխուսափելի է լրագրողների կյանքում:

«Մենք կապրենք մարդկանց հետ հանգիստ, կարծելով, թե նրանք շատ ուժեղ են, սակայն այդպես էլ չիմանալով իրականությունը, քանզի մարդու ներքին ուժը կարող

է բացահայտվել միայն ծայրահեղ իրավիճակներում, առավելապես պատերազմում», ահա այս կարծիքին էր ժան-Պոլ Սարտրը՝ իր «Անշիրիմ մեռելները» պիեսը հեղինակելիս:

Անդրադառնանք պատերազմական իրավիճակներում աշխատող լրագրողների հոգեբանությանը: Պատերազմները և դրանց հետևանքները մարդկանց մոտ առաջացնում են խորը հուզական լարվածություն: Որոշ դեպքերում կարող է խանգարվել մարդկանց մտածողության բնականոն ընթացքը, թուլանալ կամ առհասարակ վերանալ վերահսկողությունը սեփական անձի հանդեպ, որն էլ հանգեցնում է անկանխատեսելի հետևանքների: Սակայն շատ բան կախված է նաև օրգանիզմի անհատական առանձնահատկություններից, աշխատանքային պայմաններից, դաստիարակությունից, ընթացող երևույթների մասին ունեցած տեղեկացվածությունից ու վտանգի աստիճանը գիտակցելուց: Օրինակ՝ ոմանց մոտ այն կարող է ուղեկցվել առողջական վիճակի վատթարացմամբ, հոգեբանական ու ֆիզիոլոգիական սթրեսային երևույթներով, մյուսների մոտ՝ ներքին կենսական ռեսուրսների մոբիլիզացիայով: Հոգեբանորեն չնախապատրաստված անձանց մոտ վախի զգացողություն և վտանգավոր վայրից հեռանալու ցանկություն է առաջանում, մյուսների մոտ՝ հոգեբանական շոկ, որն ուղեկցվում է մկանների թմրածությամբ: Այդ պահին խանգարվում է մտածողության բնականոն ընթացքը, թուլանում կամ առհասարակ վերանում է գիտակցության վերահսկողությունը՝ զգացմունքների ու կամքի հանդեպ: Նյարդային պրոցեսները՝ գրգռումն ու արգելակումը, տարբեր կերպ են դրսևորվում. օրինակ՝ ոմանց մոտ լայնանում են բիբերը, խանգարվում է շնչառությունը, արագանում է սրտի աշխատանքը, առաջանում են պերիֆերիկ արյունատար անոթների կծկումներ, սառը քրտինք, մկանները թուլանում են, փոխվում է ձայնի տոնայնությունը, երբեմն էլ մարդիկ կորցնում են խոսելու ունակությունը: Անսպասելի վախի պատճառով հայտնի են նաև մահվան դեպքեր՝ սրտամկանային համակարգի աշխատանքի խանգարման արդյունքում: Այդպիսի իրավիճակը բավականին տևական է լինում՝ մի քանի ժամից մինչև մի քանի օր տևողությամբ: Նման վարքի հիմքում ընկած են այնպիսի պատճառներ, ինչպիսիք են՝ վտանգի առաջացման անսպասելիությունը, վթարի կամ աղետի ընթացքի ու հետևանքների

անորոշությունը, այդ իրավիճակում չկողմնորոշվելը, բնության աղետների հետ պայքարելու հմտության բացակայությունը և թույլ բարոյահոգեբանական պատրաստվածությունը:

Առաջին հերթին պետք է հաշվի առնել, որ ծանր հոգեբանական վնասվածք ստացած մարդը շատ ավելի արագ է վերականգնում հոգեկան հավասարակշռությունը, եթե ներգրավվում է որևէ ֆիզիկական աշխատանքի մեջ, ընդ որում՝ ոչ թե միայնակ, այլ խմբակային:

Երկրորդ՝ մարդկանց վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու համար անհրաժեշտ է արտակարգ իրավիճակներում գործելու մշտական հատուկ պատրաստվածություն՝ հոգեբանական դիմացկունություն և կամքի ուժ մշակելու համար:

Երրորդ՝ կարևոր նշանակություն ունի աշխատակազմին, կազմակերպության բոլոր անդամներին նախապատրաստելը, հոգեբանական ծանրաբեռնվածության, դիմացկունության, տոկունության, ինքնատիրապետման զարգացման, դրված խնդիրներին հասնելու փոխօգնության, փոխաջակցման կարողությունը: Օբյեկտիվորեն հանգստացնում է նաև հավաստի աղբյուրից ստացած ցանկացած տեսակի տեղեկատվությունը: Մարդիկ կառավարության կամ հմուտ մասնագետների կողմից հավաստի տեղեկատվության կարիք ունեն: Հաճախ ավելի հանգիստ ու վստահ են իրենց զգում նրանք, ովքեր գտնվում են ավելի մոտ տեղեկատվության աղբյուրին, թեկուզ այն այդքան էլ հուսադրող չէ:

Այս ամենը վերաբերում է նաև հենց լրագրողներին: Ղարաբաղյան պատերազմի ռազմական գործողությունները դեպքի վայրից լուսաբանած մի քանի լրագրողներ իրենց նոթերում անդրադարձել են նրան, թե ինչ են զգացել, ինչպիսին է եղել պատերազմը դրսում և հենց իրենց ներսում, ինչպիսին է եղել ներքին հոգեկան պատերազմը: Լրագրողներ, որոնք եղել են ոչ հայազգի, և ոչ էլ ադրբեջանցի, ուղղակի կատարել են իրենց մասնագիտական պարտքը պատերազմական գոտում՝ որպես մեկնաբան: Լսելով պատերազմի մասին, բայց չլինելով իրադարձությունների կենտրոնում, երբեք ոչ մի լրագրող չի պատկերացնի ու չի մտածի, թե ինչպիսին է այն իրականում, նախքան այնտեղ ուղևորվելը չի մտածի, որ գուցե դա իր վերջին

ուղևորությունն է, որ ինքն ունի մի շարք հատկանիշներ, գծեր, որոնք դեռ երբեք չի բացահայտել: Չհաշված այս հանգամանքները, լրագրողը պարտավոր է չկորցնել իրեն և մնալ սառնասիրտ: Պատերազմական գործողությունների կիզակետում գտնվող լրագրողի համար շատ բան կախված է առաջին հերթին խառնվածքից, սեռից, տարիքից, մասնագիտական փորձից, լրագրողի տեսակից՝ էթիկ թե լոգիկ[Տես՝ հանրահայտ լրագրող Դարյա Ասլամովայի պատմությունը հավելված 1]:

Նմանատիպ արտակարգ իրավիճակներում, մարդու մոտ առաջնային պլան է մղվում ապրելու բնագղը, ամեն գնով ապրելու, շատ հաճախ լրագրողները չդիմանալով տանջանքներին, կամ պատերազմը իսկապես մարմնի վրա զգալով, թողնում են տարածքը և հեռանում, շատերը կորցնելով իրենց և վախենալով սեփական կյանքի համար, կարող են անել դավաճանական քայլեր: Լրագրողները հայտնվում են արտակարգ իրավիճակներում, քանզի դա իրենց մասնագիտությունն է՝ մեկնաբանել իրադարձությունը ու տեղեկացնել մարդկանց, իսկ գուցե նրանք ուղղակի փնտրում են արկածներ: Պատերազմի ընթացքում անընդհատ անհրաժեշտ է լինում տուժածների հետ շփվել, մասնագիտությունից ելնելով պարզ է, որ թղթակցին անհրաժեշտ են վառ կերպարներ, հիշվող պատմություններ, բայց չի կարելի սեփական վարկանիշը կառուցել ուրիշի դժբախտության հաշվին: Այստեղ պետք է աշխատի լրագրողի էթիկան: Արյունալի տեսարաններ ցուցադրելը չի խրախուսվում, դրանք կարող են տեսնել հենց տուժածի հարազատները և հայտնվել ծանր հոգեվիճակում: Լրագրողական էթիկայի նորմերով անթույլատրելի է մահացածին ցուցադրելը: Պատերազմական լրագրողի համար ուժեղ սթրեսածին կարող է լինել մշտական լարվածությունը, որը ուղեկցվում է վախով, թե հնարավոր է չհասցնես անհրաժեշտ կադրը նկարել, և դա էլ չի կրկնվի: Մշտական ուշադրությունը լավ է, բայց հոգեբանական առումով շատ ծանր է դիմանալ այդ լարվածությանը. լրագրողը կարող է կորցնել սեփական ինքնակառավարումը: Պատերազմական դաշտում աշխատանքը կրկնակի անգամ ծանր է, մյուս կողմից աշխատանքը եռում է, նյութ գրեթե միշտ կա, և երբ հետաքրքիր աշխատանք է ստացվում, հավելյալ ներքին ստիմուլ՝ խթան, և բավականություն են ստանում հենց գործընթացից: Աշխատանքով տարվածությունը

ինչ-որ տեղ փոքրացնում է սթրեսի առկայությունը և վերջնարդյունքին հասնելու ձգտումը օգնում հնարավորինս հեշտորեն հաղթահարել սթրեսը:

Արտակարգ իրավիճակներում հատկապես կարևոր է լրագրողների առաջ քաշած հարցադրումները, որոնք պետք է տեղին լինեն, երբ ուղղվում են տուժածների հարազատներին[Տես՝ հավելված 3]: Կոնֆլիկտի գոտում գտնվող լրագրողները, ովքեր կատարել են տարբեր նկարահանումներ, պետք է իմանան, որ հնարավոր է իրենց կադրերը եթեր չհեռարձակվեն, քանի որ լուրերը նայում են նաև երեխաները, որոնց վրա բացասական հուզական ազդեցություն կունենան արյունալի տեսարանները, այսինքն, մեծ դժվարությունների, զրկանքների գնով ձեռք բերված տեղեկատվությունը հնարավոր է նաև ամբողջությամբ չցուցադրվի: Բայց պատմության համար անհրաժեշտություն է փաստագրական այն նյութը, որը սերունդներին պատմելու է տվյալ իրադարձության մասին: «Պատերազմը ավելի սարսափելի է, քան մենք պատկերացնում ենք, քան տեսնում ենք հեռուստատեսությաններից»,-իր հուշերում գրել է Ռուսական ՆՏՎ հեռուստաընկերության թղթակից Ռուսնալ Գուսարովը[124]:

Եվ իրոք, արժե՞ արդյոք ամբողջ նկարահանած տեսանյութը ցուցադրել լայն հասարակությանը հեռուստատեսությամբ: Կան տեսարաններ, որ հատուկ ծառայությունների համար են, այլ ոչ մասսայական ցուցադրության: Հեռուստատեսությունը չպետք է գիշերային մղձավանջների պատճառ լինի, այն ընդամենը ինֆորմացնելու և առկա իրավիճակը ներկայացնելու միջոց է: Երբեմն տպավորություն է ստեղծվում, որ կառավարության խնդիրն է բնակչությանը հեռուստատեսության միջոցով սարսափի մեջ պահելը: Այս դեպքում լրագրողը ընդամենը միջոց է ծառայում այլևայլ նպատակների համար: Այս ամենը ևս բացասական ազդեցություն է ունենում լրագրողի հոգեբանության վրա: Նրա ստեղծագործական փնտրտուքները մարում են երբեմն այսպիսի երևույթների պատճառով: Ռազմական թղթակից Անտոն Ստեպանենկոն Հարավային Օսեթիայից վերադառնալուց հետո հետևյալ միտքն է արտահայտել՝ «Ցխենվալը մահվան հոտի հետ է ասոցացվում, օպերատորի ողջ տեսածն ու տեղում նկարահանածը երբեք չպետք է հանդիսատեսը տեսնի»[24]:

Պատերազմական գոտուց վերադառնալուց հետո լրագրողին թվում էր, թե ինքը քիչ բան է արել, ավելի շատ բան կարող էր անել, ավելի շատ մարդկանց հետ՝ հարցազրույցներ, սակայն իրական ռազմական գործողությունների ժամանակ լրագրողի վրա հատկապես ազդում է սեփական կյանքի անվտանգության խնդիրը: Վախի պատճառով շատ լրագրողներ հենց իրենք էլ դառնում են տուժածներ՝ կրելով հոգեբանական սթրեսներ[Տես՝ հայկական դեպքերը հավելված 7,4]:

Ի դեպ, լրագրությունը ամենավտանգավոր մասնագիտությունների առաջին տասնյակում է: Ըստ վիճակագրության, 1992 թվականից մինչև 2012 թվականը աշխարհում զոհվել է 1017 լրագրող՝ մասնագիտական գործունեության իրականացման արդյունքում: Միայն 2013 թվականի առաջին կիսամյակում զոհվել է 48 լրագրող: Ընդ որում, մեծ տոկոս են կազմում ոչ այնքան պատերազմական գործողությունների ժամանակ զոհված լրագրողները, լուսանկարիչներն ու օպերատորները, որքան քաղաքացիական բախումների, քաղաքական ընդվզումների ժամանակ: Հիմնականում թիրախ հանդիսանում են օպերատորները և լուսանկարիչները, որոնք արձանագրում են անմիջապես դեպքերի մանրամասները: Անվտանգության նպատակով տեսախցիկների կարմիր լույսի վրա, որը վկայում է, որ խցիկը միացված է, շատ դեպքերում օպերատորներն անգամ փակցնում են մուգ «լեկոպլաստիկ», որպեսզի աննկատ լինեն: Սակայն դա էլ երբեմն չի օգնում:

Մի երևույթ, որ բոլորովին նոր է: Եթե նախկինում, բոլոր ժամանակներում լուսանկարիչներ, օպերատորներ, ավելի հազվադեպ լրագրողներ են զոհվել ռազմական գործողություններում, կամ արտակարգ իրավիճակներ լուսաբանելիս, ապա Մարիա Էլիզաբեթ Մասիաս Կաստրոյի սպանությունը սառը ցնցուղ էր գրող լրագրողների համար: Նրա դին գտել էին գլխատված: Նա էլեկտրոնային լրատվամիջոցի՝ կայքի լրագրող էր: Սա բացառիկ դեպք է, որ կայքի լրագրողի են սպանում կոնկրետ իր մասնագիտական գործունեության, կարծիք արտահայտելու համար: Այսինքն, այստեղ կադրերում չերևալու, չլուսանկարվելու խնդիր չի եղել, այլ ուղղակի նյութի բովանդակության հետ անհամաձայնության արտահայտություն:

Թեժ գծերից ռեպորտաժները վկայությունն են այն բանի, որ մարդն ի վիճակի է նույնիսկ արտակարգ իրավիճակներում փայլուն աշխատելու: Մյուս կողմից այն բանի



գիտակցումը, որ սեփական աշխատանքով, նյութով կամ ռեպրոտաժով կարող ես օգնել մարդկանց, հույս տալ, քաղաքական գործիչներին ստիպել այլ մեթոդներով գործել, վստահություն է տալիս, որ հանուն բարի գործի է արվում աշխատանքը պատերազմական արտակարգ իրավիճակներում:

Ռուս սթրինգեր Յուրի Ռոմանովը իր գրքում գրում է. «Ես նկարահանում եմ պատերազմը»: «Երբ մահացածների թիվը կադրերում հասնում է կրիտիկական նիշի, լրագրողը կարծես դադարում է ընկալել տառապանքները... Հենց այդ պատճառով էլ կադրերը տեխնիկապես կատարյալ են ստացվում»: Պատերազմի դաշտում աշխատելու ընթացքում, լրագրողը միշտ պետք է գիտակցի, թե ովքեր են նայում իր ռեպրոտաժը, հնարավորինս պահպանի էթիկան, որոշ չափով նաև ցենզուրա: Օրինակ, եթե ուսումնասիրենք Հարավային Օսեթիայի և Վրաստանի միջև պատերազմը, կտեսնենք, որ յուրաքանչյուր լրագրող փորձում է յուրովի մեկնաբանել իրադարձությունը: Սա հղի է շատ լուրջ վտանգներով և լրագրողները պարտավոր են պատասխանատվության զգացումով առաջնորդվել հատկապես պատերազմների, էթնիկ բախումների ժամանակ[124]:

«Գոյություն ունի լրագրողի որոշակի էթիկա»,-իր բլոգում գրում է Եվգենի Պոդդուբնին, որը այդ բոլոր օգոստոսյան օրերին գտնվում էր ռազմական գործողությունների կիզակետում, «այնտեղից մենք պետք է մահացած մարդկանց «գլուխները» ուղարկեինք Մոսկվա: Բայց քաղաքում, բնականաբար, այդ ամենը ցույց էին տալիս համապատասխան ժամերին: Մոսկվայում սկսվեցին հուղարկավորությունները, բայց պայմանավորվեցինք, որ արարողությունները չենք նկարահանելու: Մարդկանց համար առանց այդ ամենի էլ սարսափելի էր»[124]:

Կարևոր է անձի վարքի առանձնահատկությունների ուսումնասիրումը արտակարգ իրավիճակներում: ԶԼՄ-ներն այսօր իրական սոցիալ-քաղաքական գործոն են՝ ակտիվորեն ազդող հասարակության, տնտեսության, քաղաքականության, հանրային ճաշակի, էսթետիկայի վրա, որն ի վերջո ձևավորում է աշխարհընկալում: Եվ այդքանով շատ կարևոր է ԶԼՄ-ների գործունեությունը՝ առողջ հասարակություն ունենալու հարցում: Թեև կա նաև տարածված մոտեցում. ինչպիսին հասարակությունն է, այնպիսին էլ՝ մամուլը: Մամուլը հասարակության հայելին է:

Վերադառնանք արտակարգ, ճգնաժամային իրավիճակներում լրագրողի գործունեության առանձնահատկություններին: Ճգնաժամային իրավիճակները հենց այդպես են կոչվում այն պատճառով, որ սոցիալական կառավարման սովորական, առօրյա ձևերը դադարում են աշխատել, կամ այնքան են կորցնում արդյունավետությունը, որ անհնար է դառնում մասշտաբային պրոցեսների կառավարումը, որտեղ ներգրավված են մարդկանց մեծ խմբեր:

Շատ կարևոր է արագ վերահսկողության տակ առնել և պահպանել մարդկանց վարքը ինչպես անմիջականորեն ճգնաժամի կենտրոնում հայտնված տարածքների, այնպես էլ ամբողջ երկրի և անգամ միջազգային մասշտաբների: Այսինքն, արտակարգ իրավիճակի դեպքում պետությունը պետք է օպերատիվ կերպով ներգրավվի ինֆորմացիայի տարածման ուղիների արագ ձևավորման գործընթացին և այնպես անի, որ տարածվող ինֆորմացիան նպաստի մարդկանց առավել օպտիմալ վարքի դրսևորմանը:

Որպես լսարան բնակչությունը բաժանվում է երեք մեծ խմբերի.

1. Այն տարածքների բնակչությունը, որոնք անմիջականորեն գտնվում է արտակարգ իրավիճակի մեջ:

2. Երկրի բնակչության մյուս հատվածը:

3. Միջազգային հանրությունը, ինչպես նաև պետությունների ղեկավարները և կառավարությունները:

Լրագրողները ձգտում են բավարարել լսարանի պահանջը և արտակարգ իրավիճակներում ցուցաբերում են պատրաստակամություն՝ լուսաբանելու և տարածելու գրեթե ցանկացած տեղեկություն արտակարգ իրավիճակի մասին: Այլ կերպ ասած, զգալիորեն նվազում է լրագրողների, խմբագիրների քննադատական մոտեցումն իրենց տարածած ինֆորմացիայի նկատմամբ: Հասարակական կարծիքը չի ձևավորվում հենց այնպես: Զանգվածային գիտակցության համար կարևոր է այն ինֆորմացիան, որը կրկնվում է տարբեր մեկնաբանների՝ փորձագետների և լրագրողների կողմից, տարբեր լրատվամիջոցներով: Ընդ որում, կարող են կրկնվել միայն շատ պարզ ինֆորմացիոն հաղորդագրությունները՝ պարզ ձևակերպումներով:

Զանգվածային լրատվամիջոցները, ձևավորելով որոշակի հասարակական կարծիք, ազդեցություն ունենալով գիտակցության և վարքի վրա, փոխում են և տվյալ մարդուն՝ նրա մենտալիտետը, արժեքային կողմնորոշումները և այլն: Սակայն, եթե հասարակության նորմալ գործունեության պայմաններում դրա համար անհրաժեշտ է համեմատաբար երկար ժամանակահատված, ապա արտակարգ իրավիճակի պայմաններում վարքի փոփոխությունները տեղի են ունենում թույլտեսակի, լրատվության ազդեցությունը մարդկանց հոգեկան աշխարհի վրա հասնում է իր գագաթնակետին:

Արտակարգ իրավիճակի պայմաններում բնակչության վարքը առաջին հերթին պայմանավորվում է բնականորեն առաջացող վախի զգացումով: Դրա հաղթահարման ընթացքում իրականացվում է երեք հիմնական ստրատեգիա.

1.ինքնօգնություն և փոխօգնություն

2.հարմարում, ֆատալիզմ

3.քայքայիչ խուճապ:

Արտակարգ իրավիճակներում կառուցողական վարքը մեծ մասամբ կախված է էքստրեմալ պայմաններում գործելու մարդկանց պատրաստվածությունից: Զանգվածների հոգեբանության առանձնահատկություններից է նրա ներշնչողականությունը, ապրումների և համոզմունքների վարակիչ լինելը: Այս առանձնահատկությունները որոշում են լրագրողների աշխատանքի յուրատիպությունը արտակարգ իրավիճակի պայմաններում:

Ճգնաժամային իրավիճակում անհրաժեշտ է նախօրոք ներմուծել վարքի որոշակի կարգավորիչներ: Կենսաբանական պահանջները կարող են արգելակվել առավել ուժեղ սոցիալական նորմերով: Աղետների հոգեբուժության փորձը վկայում է այն մասին, որ հոգեկան շեղումների առաջացման մեջ առաջատար դերը պատկանում է ոչ թե հենց արտակարգ իրավիճակին, այլ նրան, թե ինչքանով է մարդը որպես անձնավորություն ընկալում, վերապրում և մեկնաբանում տվյալ իրադարձությունը: Ցանկացած իրավիճակ որպես բազմագործոն երևույթ կարող է դառնալ արտակարգ, եթե այն ընկալվում, վերապրվում և մեկնաբանվում է որպես անձնային-կարևոր գործոն, իսկ ապրումը իր հաճախականությամբ և տևողությամբ կարող է գերազանցել

տվյալ անձնավորության անհատական փոխհատուցող հնարավորությունները: Վերլուծելով անկայունությունների ազդեցությունը, մասնագետներն առաջ են քաշել այնպիսի հասկացություն, ինչպիսին է տոտալ բացասական հոգեբանական ազդեցությունը, որը տարածվում է ամբողջ բնակչության վրա, ներառյալ երեխաների: Տեղեկատվական ճնշման ազդեցությունը դառնում է անհատի բազմաթիվ անսպասելի ազդեցությունների ցուցիչ: Հաշվի առնելով այդ ամենը, առաջ է գալիս ՋԼՄ-ների գործունեության շտկման խնդիր՝ ուղղված հատկապես արտակարգ իրավիճակներում նրանց գործառնությանը, և անհատական հնարավորությունների բարձրացմանը: Առանձնացվում են մի շարք չափանիշներ արտակարգ իրավիճակներում լրագրողական գործունեության համար.

1.ՋԼՄ-ները և լրագրողները արտակարգ իրավիճակում աշխատելիս պետք է խստորեն հետևեն ՋԼՄ-ների գործունեությանը վերաբերող գործող օրենսդրությանը:

2.Խուսափել մանրամասնություններից և մարդկանց փրկությամբ զբաղված մասնագետների գործողությունների վերաբերյալ մեկնաբանություններից:

3.Հիշել, որ լրագրողը պարտավոր է ինֆորմացնել հասարակությանը, այլ ոչ թե խուճապ տարածել:

4.Հետևել ինչպես ասվածի իմաստին, այնպես էլ ոճին, տոնին և այլն:

Անձի՝ որպես սուբյեկտի, ձևավորման գործում մեծ նշանակություն ունեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են ուղղվածությունը, ընդունակությունները, բնավորությունն ու ինքնատիրապետումը:

Ուղղվածություն - Ուղղվածությունը ցույց է տալիս մարդու ձգտումը կյանքի երևույթների նկատմամբ, այն, թե ինչ նպատակներ է նա դնում իր առջև: Ուղղվածության առանձին տարրերն արտահայտվում են արժեքների և համոզմունքների, մոտիվների և իդեալների, պահանջմունքների աստիճանակարգի և դրանց բավարարման ձևով: Լրագրողի համար անգնահատելի որակներ են աշխատասիրությունն ու նպատակասլացությունը: Ուղղվածությունը ձևավորվում է սոցիալական միջավայրում, որտեղ մեծացել է մարդը: Պատահում է այնպես, որ ժամանակի ընթացքում՝ տարիքի հետ զուգահեռ ուղղվածությունը փոխվում է՝ մի շարք հանգամանքներով պայմանավորված:

Ընդունակություններ- անհատական հոգեբանական հատկություններ, որոնք ապահովում են գործունեության հաջող ընթացքը: Առանձնացվում է ընդհանուր և հատուկ ընդունակություններ: Ընդունակությունները փոխկապակցված են: Մարդիկ տարբերվում են ոչ միայն ընդհանուր գծերով, այլև հատուկ ընդունակությունների համադրմամբ: Օրինակ, լավ երաժիշտը կարող է վատ մաթեմատիկոս լինել և հակառակը: Յուրաքանչյուր լրագրողական մասնագիտացում պահանջում է որոշակի որակների ամբողջություն:

Բնավորություն - բարոյական և կամային որակների ամբողջություն: Բարոյական հատկություններին են վերաբերում մարդկանց հանդեպ վերաբերմունքի դիպուկությունը, հասարակական պարտավորությունների նկատմամբ պատասխանատվության զգացումը, համեստությունը: Կամային որակները իրենց մեջ ներառում են հաստատունություն, ինքնատիրապետում, կամք և այլն: Պրոֆեսիոնալ լրագրողը պետք է օժտված լինի կամային և բարոյական որակներով, հասարակական ակտիվություն ցուցաբերի, կամք ունենա, որպեսզի հասնի որոշակի արդյունքների՝ ստանա անհրաժեշտ տեղեկատվությունը: Մարդը, որ հակահասարակական նորմերով է առաջնորդվում՝ չի ընդունում սոցիալական նորմերը և իր բոլոր կամային ջանքերն ուղղում է իր սեփական նպատակների բավարարմանը: Լրագրողի համար իր բազմաթիվ որակներից առավել կարևոր ու հիմնականն է ազնվությունը և կարգապահությունը, մյուս որակները իրադրային կարող են լինել:

Ինքնատիրապետում-ինքնակառավարման, ինքնակարգավորման ամբողջություն է՝ սեփական անձի գիտակցմամբ պայմանավորված: Ինքնատիրապետումը շատ կարևոր որակ է հատկապես զանգվածային լրատվություն տարածող լրագրողի համար, քանի որ նա միշտ պետք է ճիշտ գնահատի ստեղծված իրավիճակը, խուճապի չմատնվի՝ դրանով վատ օրինակ ծառայելով հանրության համար: Ինքնատիրապետումը կարևոր է հարցազրույցի ժամանակ. մարդիկ տարբեր են, երբեմն էլ կամակոր: Լրագրողները, որոնք ունեն ինքնատիրապետման բարձր մակարդակ, իրականում լավ հեռուստահաղորդավարներ, մեկնաբաններ կարող են լինել, քանի որ շատ կարևոր է ոչ միայն հանգստություն պահպանելը, այլև մյուսներին հանգստացնելը[Տես՝ հավելված 4]:

Լրագրողի մասնագիտությունն այսօր մեծ դեր ունի հանրության քաղաքական, տնտեսական, մշակութային աշխարհայացքի ձևավորման, կողմնորոշման, որոշումների կայացման հարցում:

Լրագրողի մասնագիտական արդյունավետ գործունեության հաջողության գրավականն են այն որակները, որ նա կրում է.

#### **Ընդունակություններ՝**

- Մարդկանց հետ շփվելու և համագործակցելու հմտություններ
- Զրուցակցին լսելու և չընդհատելու ունակություն
- Հարցերը արագ ու կիրթ տալու վերբալ ունակություններ
- Իմացական գործընթացներից հիշողության բարձր մակարդակ
- Իրավիճակներում արագ կողմնորոշվելու, ադեկվատ որոշումներ կայացնելու ունակություն
- Ստեղծագործական մտածողություն
- Ինֆորմացիան մատչելի և հասկանալի ներկայացնելու կարողություն
- Հոգեբանական և ֆիզիկական հանդուրժողականության բարձր մակարդակ(աշխատանք արտակարգ իրավիճակների պայմաններում)

#### **Անձնային որակներ, հետաքրքրություններ, հակումներ՝**

- Օբյեկտիվություն
- Էրուդիցիա
- Ինքնավերահսկում և հավասարակշռվածություն
- Համբերատարություն, մարդկանց լսելու և հասկանալու կարողություն
- Հարգանք և հետաքրքրասիրություն
- Ինքնաճանաչման ձգտում, ինքնազարգացում
- Ինքնատիպություն, հնարամտություն
- Նրբանկատություն
- Բարեկրթություն

#### **Մասնագիտական գործունեության արդյունավետությանը խոչնդոտում են հետևյալ որակները՝**

- Ռիզիկոսություն

- Հաղորդակցման վարպետության բացակայություն
- Փակվածություն
- Սուբյեկտիվիզմ
- Ինֆորմացիան սխալ ընկալելու, աղավաղելու, ենթատեքստից կտրելու սովորություն

Շատ կարևոր է խուսափել աուտոագրեսիվ վարքի դրսևորումներից: Աուտոագրեսիվ վարքի պատճառականության շղթայում նշվում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են տարատեսակ հոգեբանական և սոցիալական խնդիրներն ընտանիքում, շրջապատում առաջացող միջանձնային կոնֆլիկտները, ինքնադրսևորման և ինքնաիրացման համարժեք հնարավորությունների բացակայությունը, անձի տարբեր հոգեախտաբանական խաթարումները, իսկ որպես երկրորդական, սակայն նույնպես կարևոր պատճառներ կարող են հանդես գալ սոցիալական անկայունությունը, աշխատանքի բացակայությունը, ցածր նյութական ապահովվածությունը, սակավ սոցիալական շփումները, իսկ լրագրողը ապահովագրված չէ նման երևույթներից: Անձնավորությանը շրջապատող միջավայրը, իրադրությունը, որում նա գտնվում է, չնայած բավական միջնորդավորված, այնուամենայնիվ ազդում է մարդու սթրեսակայունության շեմի վրա: Այսպես օրինակ՝ կենսակերպի կտրուկ փոփոխությունը՝ սոցիալական կառույցների անհրաժեշտ աջակցության բացակայության պայմաններում, կորստի ապրումը՝ նրան ուղեկցող ինտենսիվ հոգեբանական ցավով, կայուն բարոյական չափանիշների բացակայությունը՝ հասարակության մեջ ագրեսիայի ընդհանուր մակարդակի բարձրացման պայմաններում, գոյատևելը՝ անընդհատ սոցիալական անորոշության, խրոնիկական սթրեսի պայմաններում և այլ պատճառներ գրեթե միշտ հանգեցնում են հոգեֆիզիկական ծանրաբեռնվածության: Համապատասխանաբար հյուծվում են մարդու պաշտպանական մեխանիզմները և մարդու մոտ ձևավորվում է չհարմարվողականություն[18, էջ 15]:

Եթե այդ հոգեվիճակում մարդը հայտնվում է շատ կոնկրետ հոգետրավմատիկ գործոնի ազդեցության տակ, նրա մոտ սկսում են գործել պաշտպանական - հարմարվողական վարքի ձևերը, որոնցից մեկն էլ հանդիսանում է աուտոագրեսիվ

ակտիվությունը[78, էջ 22-24]: Սուիցիդոլոգիական պրակտիկայում շատ հաճախ աուտոագրեսիվ վարքը բնութագրվում է իբրև ինքնապահպանման բնազդի ախտաբանական տարատեսակ: Այն դեպքում, երբ բախվում են մարդու անգիտակցական հակումներն և նրա իդեալական Ես-պատկերը, վերջինս պահպանվում է՝ անձի չբավարարված իրական Ես-ի և կենսաբանական օրգանիզմի կործանման հաշվին: Մարմնական բնազդների համար սա դրսևորվում է ինքնապահպանման բնազդի դեզադապտիվ ձևերում, ինչը համապատասխանաբար բերում է պաշտպանական վարքի բնազդների խաթարման՝ ուժերի տնտեսում, քնի-արթնության կարգավորում, խաթարվում են դերային բնազդները. ծնողական, տարածքային, սեռային, հիերարխիկ, ալտրոիստական, որոնք անմիջականորեն դրսևորվում են վարքի խաթարումներում[33, էջ 40-53]: Գ.Յ. Պիլյագինան նշում է, որ աուտոագրեսիայի ծագումը միանշանակ պայմանավորվածություն չունի: Նրա առաջացման համար անհրաժեշտ է առնվազն երեք բաղադրիչների առկայություն: Առաջին բաղադրիչը գործունեության սուբյեկտն է՝ ճնշված ագրեսիայով, անհատական պահանջմունքների ֆրուստրացիայով և դրանով պայմանավորված ներանձնային կոնֆլիկտով: Երկրորդ բաղադրիչը այն իրադրությունն է, որում իրականացվում են վարքի պաշտպանական բաղադրիչները՝ պայմանավորված վերոնշյալ ներանձնային կոնֆլիկտով: Ամենից հաճախ իրադրությունը դառնում է հոգետրավմատիկ, քանի որ ներառում է նշանակալի օբյեկտ, որի օգնությամբ, կամ որին օգտագործելով սուբյեկտը փորձում է լուծել իր ներանձնային աններդաշնակությունը: Երրորդ բաղադրիչ է հանդիսանում հետադարձ բացասական կապը՝ օբյեկտի և իրադրության նկատմամբ չիրականացած սպասումը, որն ուժեղացնում է սուբյեկտի լարվածությունը, ագրեսիան և ներանձնային կոնֆլիկտը լուծելու պահանջմունքը: Երբ մարդու մոտ սկսում է գործել այս համակարգը, նա բախվում է էքզիստենցիալ ճգնաժամի հետ, որի հետևանքով էլ իրենց հերթին ի հայտ են գալիս վարքի իմպուլսիվ, խառը ձևերը, մասնավորապես աուտոագրեսիվ ակտիվությունը: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում աուտոագրեսիվ ակտի իրականացման պահը: Այս ոլորտի հետազոտությունները ցույց են տալիս, որ աուտոագրեսիայի այնպիսի ներքին ձևերը, ինչպիսին են օրինակ անտիվիտալ



ապրումները, սուիցիդալ մտայնություններն ու մտքերը, շատ հաճախ են հանդիպում որպես սթրեսային իրադրության հակազդում: Նման պայմաններում ոմանք իրականացնում են ինքնասպանություն, սուիցիդալ փորձ, վտանգավոր այլ գործողություններ, իսկ մյուսները՝ ոչ: Ինչպե՞ս է սկսում գործել աուտոագրեսիվ ակտիվության իրականացման մեխանիզմը: Այս առիթով առավել տարածված է երկու տեսակետ.

1. Հոգետրավմատիկ իրադրության առկայության պայմաններում աուտոագրեսիվ գործողություններն իրականացվում են իմպուլսիվորեն: Այս դեպքում պատճառահետևանքային շղթան զարգանում է հետևյալ կերպ: Հոգետրավմատիկ իրադրության զարգացումը պահանջմունքների ֆրուստրացիայի և վարքի պաշտպանական ձևերի ճնշման հետևանքով սուբյեկտի համար հաճախ դառնում է անսպասելի: Աուտոագրեսիվ վարքի գաղափարը այստեղ ծագում է պատահականորեն, «փայլատակման, ինսայթի» տեսքով: Ինքնասպանությունը դիտվում է որպես ձևավորված իրադրությունից դուրս գալու միակ ելք: Աուտոագրեսիվ գործողությունների պատճառ նման վիճակում հանդիսանում է պատահական ներանձնային անկումը՝ սպասումների անսպասելի կործանում, սովորական աշխարհի պատկերի խաթարում, որոնք սուբյեկտի կողմից ընկալվում են որպես ակնհայտ անարդարություն:

2. Աուտոագրեսիվ վարքի իրականացման դրդապատճառը ձևավորվում է տևականորեն պահպանվող նշանակալի հոգետրավմատիկ իրադրության կամ հաճախակի տրավմաների ժամանակ՝ ադապտացիոն մեխանիզմների թուլացման հետևանքով: Այս տարբերակում սուիցիդալ մտքերը կարող են բավական երկար ժամանակ գոյություն ունենալ սուբյեկտի մոտ: Նման պայմաններում աուտոագրեսիայի առիթ կարող է դառնալ նույնիսկ աննշան դեպքը: Այս տարբերակի ժամանակ հնարավոր են տևականորեն պահպանվող կամ զարգացող հոգեախտաբանական խաթարումներ, ավելի հաճախ նյարդային բնույթի, ինչպես սուբկլինիկական, այնպես էլ մանիֆեստային: Մասնավորապես, կարող են դրսևորվել հարմարվողականության խաթարումներ, հետտրավմատիկ սթրեսային խանգարումներ, անձնային խանգարման ֆազային դեկոմպենսացիաներ, սոմատիզացված խանգարումներ և այլն: Սուիցիդալ

գործողությունները կրում են իրական բնույթ, առկա է մահանալու գիտակցվող ծագումը: Որոշ սուիցիդոլոգներ սուիցիդալ ակտիվության ծագումը կապում են մոտիվացիոն ինվերսիայի հետ: Եթե սովորական պայմաններում վարքի կոգնիտիվ և հուզական բաղադրիչների միջև ներդաշնակ միասնություն գոյություն ունի, այսինքն կյանքի պաշտպանությունը ուղեկցվում է դրական հույզերով, իսկ կյանքին վտանգը՝ բացասականներով, ապա վարքի սուիցիդալ ուղղվածության ժամանակ կատարվում է դրանց վերափոփոխում: Ավելի դրական հույզերով սկսում են երանգավորվել անհատի կյանքի ընդհատման մտքերը, իսկ կյանքի ապահովման միտքը նեգատիվ երանգավորում է ստանում: Կյանքից հեռանալը սուբյեկտին ներկայանում է որպես որևէ տանջող հիմնախնդրի լուծում, երկու չարիքներից փոգրագույնի ընտրություն, իսկ երբեմն՝ որպես բարիք և ինքնահաստատման միջոց: Այցելուների հարցումներից կարելի է եզրակացնել, որ ինչ-որ պահից սկսած սուիցիդի մասին միտքը սկսում է նրանց ներքին հանգստություն բերել, թուլացնում է տագնապը, հանգստացնող գործառույթ է կատարում: Այսպիսի մտքերը կարող են դառնալ սովորական և նույնիսկ գրավիչ: Սուբյեկտի գիտակցության մեջ դոմինանտող տեղ զբաղեցնելով՝ նրանք կարող են ձևավորել վարքի սովորական ոճ՝ սուիցիդոմանիա: Մարդը տրվում է սեփական խնդիրն այնպիսի ճանապարհով լուծելու պատրանքին, ինչպիսին սուիցիդն է: Ընդ որում, վարքի արտաքին դրսևորումը նույնն է մնում՝ վատից դեպի լավը: Միայն այն տարբերությամբ, որ սուիցիդենտի համար լավը ոչ թե կյանքի պահպանումն է, այլ նրա կասեցումը: Նշված դրդապատճառներն անհրաժեշտ, սակայն բավարար պայման չեն սուիցիդալ մտադրության իրականացման համար, քանի որ սուիցիդի ծագման իրականացման խոչընդոտ է հանդիսանում ինքնապահպանման հզոր բնազդը և մարդու հոգեբանական պաշտպանության ամբողջ համակարգը: Նման բնական պաշտպանության թուլացման պայման են հանդիսանում ուժեղ հուզական ցնցումները, որոնք սովորաբար հանգեցնում են հետաֆեկտային դատարկության վիճակի, հոգեկան անզգայացումը՝ բացասական ապրումների կուտակման հետևանքով, վախի զգացման թուլացումը՝ ալկոհոլի կամ թմրանյութերի օգտագործման հետևանքով և այլ պատճառներ: Հենց նման պահերին սուիցիդալ մտադրությունների իրականացման ճանապարհը բացվում է, և նրանք իրականացվում են[33, էջ 48] [26, էջ 108-109]:

Ընդհանրապես, դեստրուկտիվության բնույթի վերաբերյալ տեսակետները հիմնականում կենտրոնացած են դետերմինանտների խնդրի վրա: Հարկ է նշել, որ տարբեր հեղինակների կողմից առաջարկվող պատճառները շատ տարբեր են, երբեմն էլ նույնիսկ հակասական: Այսպես օրինակ, չինական փիլիսոփա Մէն-Ցզին ենթադրում էր, որ մարդը «ի սկզբանե բարի է», իսկ Սէն-Ցզին նույնքան անկեղծորեն վստահ էր, որ «մարդը չար բնույթ ունի»[125]: Ոմանք պնդում են, որ այդ չարությունը դրված է կործանիչ բնական բնագոյների մեջ, մյուսները, ինչպես Ֆրոմմը, եզրակացնում են, որ դեստրուկտիվությունը մարդու ձեռքբերովի դրական որակ է, որը ծնվում է, «երբ մարդը հրաժարվում է ինքն իրենից, իր յուրօրինակությունից», այսինքն սա մարդու ընտրության, նրա ակտիվության արդյունք է: Աուտոդեստրուկտիվության հիմնախնդրի փորձարարական ուսումնասիրման արդյունքները հետաքրքիր տվյալներ են պարունակում նմանատիպ վարք դրսևորած անձանց «ֆիզիկական ես-ի» պատկերացումների վերաբերյալ: Ռ. Մանլիի, Ռ.Տոնկինի, Կ. Համմոնդի հետազոտությունները այս հարցի շուրջ բացահայտում են, որ աուտոագրեսիվ ակտիվության փորձ ունեցող այցելուներին բնորոշ են մարմնի պատկերի խաթարման կոնկրետ դրսևորումներ. մասնավորապես՝ ցածր ինքնագնահատական, անբավարարվածություն սեփական արտաքին տեսքով, դեպրեսիվ գծեր, մարմնի պատկերի աղավաղում: Նրանց մոտ առկա է սեփական մարմնի աղավաղված պատկեր, իրական և իդեալական մարմնի պատկերի մասին պատկերացումների միջև անհամաձայնություն, հակասություն ես պատկերի և մարմնի պատկերի միջև[126]:

Հետազոտությունների մի այլ ոլորտ վկայում է, որ աուտոագրեսիվ ակտիվությունը ուղիղ համեմատական է սեփական բացասական ապրումները արտահայտելու անկարողության հետ: Այս տեսանկյունից նույնիսկ պատճառահետևանքային փոխազդեցությունների յուրահատուկ շղթա կազմելու փորձ է արվում. այսպես՝ հուզական ոլորտի խաթարումները կապված են դեպրեսիվ խանգարման լուրջ ձևերի հետ, որն ընդհանուր առմամբ բերում է ինքնակործանման [126]:

Ուշագրավ են այն աշխատանքները, որոնք ուսումնասիրում են նեգատիվ հոյզերի գործոնը՝ որպես աուտոդեստրուկտիվ վարքի առաջնային կառույց: Խոսքը

մեղավորության և ամոթի հույզերի նեգատիվ ապրումների մասին է, որոնք բավական խորն ու տրավմատիկ են, քանի որ ենթադրում են սեփական Ես-ի բացասական գնահատում, սպառնում են մարդու հեղինակությանն ու ինքնասիրությանը: Դրա հետ կապված մարդիկ հաճախ չարություն ու թշնամանք են զգում: Այստեղ արդեն, կախված անձնավորության ադապտացիոն մեխանիզմների անհատական ոճերից, առաջացած բացասական հույզերն ուղղվում են կամ դեպի սեփական Ես-ը, կամ էլ դեպի շրջապատը[126]:

Աուտոագրեսիվ ակտիվությունը ի սկզբանե եղել է հոգեբույժների ուսումնասիրության օբյեկտ: Նրանց և հոգեբանների հետազոտությունների արդյունքների համադրման շնորհիվ հնարավոր եղավ առանձնացնել ուսումնասիրվող ֆենոմենի հոգեբանա-հոգեբուժական գործոնները.

- պահանջմունքների բարձրացված լարվածություն, ձգտում հուզական մտերմության, հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ձևավորման ցածր կարողություն, ֆրուստրացիան թուլացնելու անկարողություն
- իմպուլսիվություն, հուզական անկայունություն, բարձր ներշնչվողականություն անզիջողականություն և կենսափորձի բացակայություն մեղքի զգացման և ցածր ինքնագնահատականի առկայություն
- կոնֆլիկտների ժամանակ գերակտիվ հուզական ֆոն, արժեքային

կողմնորոշումների վերակառուցման դժվարություններ

Ա.Ա.Ռեանը, հետազոտելով ագրեսիվության առանձնահատկությունները դեռահասների մոտ, առաջարկում է ներմուծել «անձի աուտոագրեսիվ պատտերն» հասկացությունը (Ռեան, 1997թ.): Աուտոագրեսիան իրենից ներկայացնում է ոչ թե մեկուսացված անձնային հատկություն, կոնկրետ առանձնահատկություն, այլ հանդիսանում է բարդ անձնային կոմպլեքս, որը գործում և դրսևորվում է տարբեր մակարդակներում: Անձի աուտոագրեսիվ պատտերնի կառուցվածքում հեղինակը առանձնացնում է 4 ենթակառուցվածք.

1. Բնութագրական-աուտոագրեսիայի մակարդակը հաջողությամբ համահարաբերակցվում են բնավորության որոշ գծերի և առանձնահատկությունների

հետ, ինչպես ինտրովերսիա, պեդանտություն, ցուցադրականություն, նաև դեպրեսիվության և նյարդայնության հետ:

2. Ինքնագնահատականի ենթակառուցվածք - բնորոշում է աուտոագրեսիայի կախվածությունը ինքնագնահատականից: Ինչքան ցածր է սեփական կոգնիտիվ ունակությունների, մարմնի, ինքնուրույնության, վարքում և գործողություններում ինքնավարության կարողությունների ինքնագնահատումը, այնքան բարձր է աուտոագրեսիվ ակտիվությունը:

3. Ինտերակտիվ ենթակառուցվածք - բացահայտում է անձի աուտոագրեսիայի կապը հաջող սոցիալական ադապտացիայի ունակության կամ անկարողության, միջանձնային փոխգործունեության հաջողության կամ անհաջողության հետ: Աուտոագրեսիայի մակարդակը բացասաբար է հարաբերակցվում շփվողականության, և դրական՝ ամոթխածության հետ:

4. Սոցիալական ընկալման ենթակառուցվածք - աուտոագրեսիայի առկայությունը կապվում է այլ մարդկանց ընկալման յուրահատկությունների հետ, սակայն այն ոչ թե ուղիղ համեմատական է մյուս մարդկանց բացասական ընկալման հետ, այլ ավելի շուտ հակառակը՝ նշանակալի ուրիշների դրական ընկալման հետ: Մենք ենթադրում ենք, որ վերջին հանգամանքը բացասական ազդեցություն է թողնում սեփական անձի դրական ընկալման վրա:

Դեռահասների շրջանում կատարված հետազոտությունները վկայում են սուփցիդալ վարքի հավանականության և բնավորության շեշտվածության որոշ տիպերի միջև կապվածության մասին: Աուտոագրեսիվ վարքի հավանականությունը բարձր է բնավորության շեշտվածության հետևյալ տիպերի մոտ.

- Ցիկլոիդ տիպ: Սուփցիդալ գործողությունները հիմնականում կատարվում են սուբդեպրեսիվ փուլում: Սուփցիդի տանում է հրապարակայնորեն հասցված վիրավորանքը, ստորացումը, անհաջողությունների շղթան, ինչը դեռահասին բերում է իր անպետքության, անլիարժեքության զգացման:
- Հուզական-լաբիլ տիպ: Սուփցիդալ գործողություններն իրականացվում են ինտրապունիտիվ տիպի սուր աֆեկտիվ ռեակցիաների ժամանակ: Սուփցիդալ

վարքը աֆեկտիվ է, որոշման ընդունումը և նրա իրագործումը շատ արագ են կատարվում, որպես կանոն նույն օրը:

- Հիստերոիդ տիպ: Նրանց բնորոշ են ցուցադրական և ցուցադրական-շանտաժային սուիցիդալ փորձերը: Վ. Պ. Սամոխվալովը նկարագրում է աուտոագրեսիվ ակտիվության դինամիկան, որը ներառում է առնվազն երկու փուլ՝ ինիցիալային և դեստրուկտիվ: Փուլերից յուրաքանչյուրին մի կողմից համապատասխանում է ոչ վերբալ վարքի կոնկրետ տեսակներ, մյուս կողմից՝ որոշակի վերբալ դրսևորումներ:

### **1.Ինիցիալային փուլ**

Վարքի տարրական միավորները.

- Միմիկա. տեսողական կոնտակտից խուսափում, հայացք պատուհանից դուրս կամ ձեռքերի ուսումնասիրում, այտերի և շրթունքների ուռեցում, բերանի եզրերի իջեցում, հոնքերը «թախծոտ են» կամ կուտակված, հոնքերի ներքին եզրը բարձրացված է, ճակատի վրա հորիզոնական կնճիռներ, աչքի խնձորակները խամրած են, տրանզիտորային տարրեր են առկա. արցունքներ, լացի միմիկա: Ընդհանրացված բնութագիրը՝ դեպրեսիայի, տառապանքի, ենթարկման միմիկա:

- Դիրքեր. նստած դիրքերում - գլուխն իջած է, ձեռքերը հետ են տարված, ուսերը նեղացած են, ոտքերը խաչվում են՝ որպես փակվելու նշան: Կանգնած՝ հակվածություն դեպի ծնկների ծալում և գլխի հետագա իջեցում: Ընդհանուր բնութագիրը՝ ենթարկման դիրքեր:

- Ժեստեր. հնազանդության ժեստեր՝ ձեռքը սեղմված է կրծքին կիսախոնարհումով և գլխի իջեցումով, պախի փակում ձեռքերով, թաքնված տազնապի ժեստեր՝ ձեռքը տրորում է պարանոցը, պարանոցը ձգվում է:

- Խոսքի ոչ վերբալ բաղադրիչներ. ձայնը ցածր է, տեմբրը թույլ. խոսքային շփման ընթացքում դադարների տևականությունը մեծանում է, որպես ինֆորմացիան և նպատակները թաքցնելու միտում, ձայնավորները երկարացնելու միտում, խոսքային սխալների թվի մեծացում, խոսքային ստերեոտիպերի աստիճանական աճ ամբողջ կոնտակտի ընթացքում:

- Վարքի պարզ բարդություններ: Անհատական տարածության մեծացման ձգտում, կոնտակտի ընթացքում կողմնորոշում ֆոտոտաքսիզմի տեսքով՝ խոսելու ընթացքում շրջվում է՝ ուղղվելով լույսի աղբյուրին, դրսևորվում են ինքնաբարելավման (աուտոգրոմինգ) աուտոագրեսիվ ձևեր՝ օնիխոֆագիա և տրիխոտիլոմանիա:

- Վարքի բարդ բարդություններ. քունը խանգարվում է, քայլվածքը դանդաղ է՝ հնազանդության դիրքերի պահպանումով, մարմնի և հագուստի մաքրության պահպանման վարքի ապակառուցում, փնտրողական և հետազոտական վարքի վերացում, դեռահասների մոտ՝ իմիտատիվ վարքի իրականացում՝ «Վերթերի ախտանիշի» զարգացման ռիսկով, սննդային վարքում՝ անորեքսիա, ընտանեկան-դերային ֆունկցիաների խաթարում, հրաժարում սեռական կոնտակտներից և խաղային ակտիվությունից: Խոսքային մակարդակում աուտոագրեսիայի ձևավորման ինիցիալային մակարդակին համապատասխանում է մենախոսական խոսքի տեսակը:

## **2.Դեստրուկտիվ փուլ**

Միմիկայի, դիրքերի, ժեստերի տարրական միավորներում, վարքի բարդ ու պարզ բարդություններում ենթարկման և հնազանդության նշանները արտամղվում են շրջապատողների հետ ցանկացած տիպի կոնտակտներից խուսափելու արտահայտված, կայուն, գերակայող նշանների կողմից՝ տեսողականից մինչև մարմնական: Հետազոտական վարքը հանգում է այնպիսի տարածության և միջոցների փնտրմանը, որոնք հարմար են աուտոագրեսիվ նպատակների իրականացման համար, աուտոդեստրուկտիվ գործողությունները (մեխանիկական, ֆիզիկական, քիմիական ինքնավնասումներ) կարող են բազմաթիվ լինել, ընդ որում հանդիսանալով կամ ինքնանպատակ, կամ նախապատրաստական սուիցիդից առաջ՝ ինքնասպանություն: Խոսքային մակարդակում դեստրուկտիվ փուլին համապատասխանում է մուտիզմը: Այս ախտանշանները, ուսումնասիրվելով էթոլոգիական ախտորոշման տեսանկյունից, հնարավորություն են տալիս առանձնացնել աուտոագրեսիայի օբյեկտիվ նշանները «այժմ և այստեղ» սկզբունքով և կանխատեսել նման վարքը: [94, էջ 286]

Այսպիսով, կարելի է փաստել, որ աուտոագրեսիվ ակտիվությունը կարող է պատճառաբանվել կենսաբանական, հոգեբանական և սոցիալական գործոններով: Այն հիմնականում հանդես է գալիս որպես ներանձնային կոնֆլիկտի հաղթահարման

մեխանիզմ: Գրեթե բոլոր հետազոտողները գտնում են, որ այն կրում է նպատակահարմար,ադապտացիոն, պաշտպանական վարքի բնույթ: Աուտոագրեսիան սերտորեն կապված է սոցիալական բնագրների ոչ համարժեք իրացման հետ, այն ինքնապահպանման բնագրի աղավաղված դրսևորում է հանդիսանում: Աուտոագրեսիվ գործողության կատարման համար անհրաժեշտ է առնվազն երեք բաղադրիչների առկայություն՝ գործունեության սուբյեկտ, իրադրություն և չիրականացած սոցիալական սպասում: Աուտագրեսիվ գործողություններ դրսևորվում են երկու դեպքում՝ երբ մարդու մոտ այդ միտքը ծագում է իմպուլսիվորեն և իրականացվում շատ արագ, և երբ մարդը գտնվելով տևական հոգետրավմատիկ ազդեցությունների ներքո, աստիճանաբար հարմարվում է ինքնավնասման կամ ինքնառչնչացման մտքի հետ: Աուտոագրեսիան կորեյացիոն կապի մեջ է գտնվում մարդու մի շարք հոգեկան որակների հետ, դրանք են ցածր ինքնագնահատականը, ինտրովերսիան, պեդանտությունը, դեպրեսիվությունը, ամոթխածությունը, սոցիալական ադապտացիայի անկարողությունը, մեղքի և ամոթի զգացումը, նյարդայնությունը, հուզական անկայունությունը, սեփական բացասական հույզերն արտահայտելու անկարողությունը: Այսպիսով, աուտոագրեսիաների առաջացումը պայմանավորված է օբլիգատ (պարտադիր) և ֆակուլտատիվ (լրացուցիչ, բայց ոչ պարտադիր) գործոններով: Նրա գործընթացին և իրականացմանը մասնակցում են ժառանգական նախատրամադրվածությունը, անձի բնավորության շեշտվածությունը, անոմալ (պսիխոպաթիկ) զարգացումը, անձը հյուծող (ասթենիզացնող) մի շարք իրադարձություններ: Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի պատրաստվածության հոգեբանական յուրատիպությունը բնորոշվում է վերջինիս բովանդակության առանձնահատկություններով, որոնք կախված են լրագրողական գործունեություն ծավալող սուբյեկտների անձնային առանձնահատկություններից, վարքային դրսևորումներից, գործունեության նպատակից, գործառնական պարտականությունների բաշխվածության առանձնահատկություններից, գործունեության կոորդինացումից, որոնք ենթական են փորձարարական հատուկ ուսումնասիրման:



ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԼՐԱԳՐՈՂԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի հոգեբանական  
պատրաստվածության աստիճանի որոշման հետազոտության կազմակերպումն ու  
մեթոդիկան

Փորձարարական հետազոտությունն անց է կացվել ՀՀ տարբեր սահմանամերձ տարածաշրջաններում և Լեռնային Ղարաբաղի տարածքում արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողիների հետ, ովքեր գործունեություն են ծավալել կամ մասնակից են եղել կոնկրետ իրավիճակների: Հետազոտությունն անց է կացվել երկու փուլով: Առաջինն անց է կացվել որոշելու համար արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային որակները: Երկրորդ փուլում, ախտորոշման ընթացքում, հստակեցրել ենք որակների արտահայտվածության և հոգեբանական պատրաստվածության աստիճանները, համեմատական վերլուծությունը: Հետազոտության մեթոդների ընտրությունը կատարվել է փորձարարական հոգեբանության հիմնարար սկզբունքներին համապատասխան:

Հետազոտության խնդիրը համակողմանիորեն ուսումնասիրելու համար հիմք ենք ընդունել մի քանի սկզբունքներ, որոնք պահպանվել են հետազոտության ընթացքում.

- ա) կիրառված մեթոդները, առաջադրանքները չեն ազդել լրագրողների արժանապատվության վրա,
- բ) պահպանվել է փոխադարձ հարգանք,
- գ) մեթոդները տեղեկատվության առումով վերալրացվել են
- դ) բոլոր փորձարկվողների հետ աշխատանքն իրականացվել է նույն մեթոդներով և մեթոդիկաներով, որը հնարավորություն է տվել տարբեր մակարդակներում միմյանց հետ համեմատել նույնատիպ տվյալներ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան» (16-PF), «Ինքնագնահատման ախտորոշման Չ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի մեթոդիկան», Ա.Բասսի և Ա. Դարկի «Ազրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան», Թեյլորի «Տագնապախոտվության չափման» մեթոդիկան:

Հետազոտության մեջ ներգրավվել են արտակարգ իրավիճակներում աշխատող 127 լրագրող և ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ շրջանների ազգաբնակչության 104 ներկայացուցիչ:

Նախապես խնդիր է դրվել ուսումնասիրել, թե այս թվաքանակը բավական է արդյոք ընդհանուր եզրակացությունների հանգելու համար, թե՞ ոչ: Դրա համար օգտվել ենք վիճակագրության մեջ հայտնի ընտրանքի ծավալի որոշման և կրկնակի ընտրանքի համար նախատեսված համապատասխան բանաձևերից, որպեսզի ապացուցենք՝ ընտրանքը բավարարում է վիճակագրության պահանջներին: Բացի դրանից, թեստային համակարգը կիրառվել է մի քանի անգամ, որպեսզի որոշենք հնարավոր շեղումների հավանականությունը և փորձարկվողների պատասխանների հուսալիությունը: Ընդհանուր առմամբ պարզվել է, որ բոլոր թեստերի պատասխաններում կան որոշակի տարբերություններ, սակայն միջինացված տվյալները էական տարբերություններ չեն արձանագրել:

Հետազոտության համար կազմված թեստային մարտկոցը նախատեսվել է արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի հոգեբանական պատրաստության վրա ազդող մի շարք գործոնների բացահայտման համար, որոնց մանրամասն կանդրադառնանք համապատասխան թեստերի նկարագրության և արդյունքների վերլուծության ընթացքում:

Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների բացահայտման համար կիրառվել է Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան» (16-PF): Հարցարանը բաղկացած է 105 հարցից, որոնք դասակարգվում են հետևյալ գործոնների: Այդ գործոնները ներկայացված են հակադարձ բևեռներով՝

MD-Ինքնագնահատականի ադեկվատություն

- A - Պարփակվածություն-շփվողականություն
- B - Ինտելեկտ
- C - Հուզական կայունություն-անկայունություն
- E - Զիջողականություն-գերակշռություն
- F - Զսպվածություն-արտահայտչականություն
- G - Անպատասխանատվություն-նորմատիվություն
- H - Վախկոտություն-խիզախություն
- I - Չորություն-զգայունություն
- L - Դյուրահավատություն-զգուշավորություն
- M - Գործնականություն-զարգացած երևակայություն
- N - Ուղղամտություն-դիվանագիտություն
- O - Ինքնավստահություն-տագնապայնություն
- Q1 - Կոնսերվատիզմ-ռադիկալիզմ
- Q2 - Զիջողականություն-անզիջողականություն
- Q3 - Ցածր ինքնահսկողություն-բարձր ինքնահսկողություն
- Q4 - Թուլացվածություն-լարվածություն

Գիտական վարկածի համաձայն ենթադրվել է, որ այս գործոնները պետք է, որ որոշակիորեն կապված լինեն նաև ագրեսիայի թողած դրսևորումների հետ, ուստի նույն հետազոտվող խմբերում կիրառել ենք Ա. Բասսի և Ա.Դարկի ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան: Այս մեթոդիկան թույլ տվեց ընդլայնել մեր պատկերացումները ֆիզիկական ագրեսիայի, անուղղակի ագրեսիայի, նեգատիվիզմի, նյարդայնության, կասկածամտության, վիրավորանքի, մեղքի զգացման վերաբերյալ:

Ա. Բասսի և Ա. Դարկի առաջարկած հարցարանը բացահայտում է ագրեսիվության ցուցանիշները և ձևերը:

1. Ֆիզիկական ագրեսիա՝ այլ մարդկանց նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրում:

2. Խոսքային (վերբայ) ագրեսիա՝ այլ մարդկանց նկատմամբ ունեցած բացասական զգացմունքների արտահայտում բառերի (վեճ, բղավոցներ, ճիչեր, սպառնալիքներ, անեծքներ, հայհոյանք) միջոցով:

3. Անուղղակի ագրեսիա՝ անուղղակի ճանապարհով այլ անձանց հասցեին ուղղված բամբասանքներ, «կծող» կատակներ և զայրույթի անորոշ, անկանոն բռնկումներ:

4. Նեգատիվիզմ՝ ուղղված հեղինակությունների և ղեկավարության դեմ. դրսևորվում է վարքի ընդդիմադիր ձևով, որը պասիվ կամ ոչ գործուն հակադրությունից կարող է վերածվել ակտիվ կամ գործուն գործողությունների՝ ընդդեմ սահմանված պահանջների, կարգի ու օրենքների:

5. Նյարդայնություն (դժգոհություն)՝ մարդու՝ շուտ գրգռվելու, նույնիսկ բռնկվելու հակվածություն, կտրուկ և կոպիտ վարվելու պատրաստականության առկայություն:

6. Կասկածամտություն՝ մարդկանց նկատմամբ անվստահություն և զգույշ վերաբերմունք դրսևորելու հակում, որը բխում է այն համոզմունքից, որ շրջապատի մարդիկ մտադիր են վնաս պատճառել իրեն:

7. Վիրավորանք՝ զայրույթով, անբավարարվածության զգացումով, դժգոհությամբ պայմանավորված նախանձի և ատելության արտահայտում:

8. Ինքնաագրեսիա կամ մեղքի զգացում՝ իր և շրջապատի նկատմամբ հատուկ վերաբերմունք և գործողություններ, որոնք բխում են այն համոզմունքից, որ ինքը վատ մարդ է, վատ է վարվում, վնաս է տալիս, չար է և անխիղճ:

Անցկացման կարգը և ուսումնասիրվող խմբերի թվաքանակը եղել է նույնը:

Տեսական վերլուծությունները վկայում են, որ ինֆորմացիայի ընկալման և փոխանցման գործընթացում կարևոր դեր են խաղում անհատի բնավորության գծերը, նրա հիմնային բնութագրիչները, անհատական հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները, որոնք դրսևորվում են խառնվածքի, ինքնահաստատման, խոսքի ու գործի արձագանքման առանձնահատկություններով, մեծ ազդեցություն են ունենում նաև անձնային և ռեակտիվ տագնապայնությունը, որոնք աշխարհի, մարդկանց նկատմամբ անձի հիմնային վստահության դրսևորումներն են: Այս գործոնների առկայությունը բացահայտելու համար կիրառվել է Չ.Դ.Սպիրերգերի և Յու. Լ. Խանինի մեթոդիկան:

Թեյլորի «Տագնապախոտվության չափման» մեթոդիկայի հարցարանը բաղկացած է 50 պնդումներից: Կիրառվել է ՀՀ սահմանամերձ՝ ա) Տավուշ-Նոյեմբերյան-Իջևան-Բերդ, բ) Վայոց Ձոր- Խաչիկ, գ)Սյունիք-Սիսիան և ԼՂՀ ա)Մարտակերտ-Մատաղիս, բ) Քարվաճառ տարածաշրջանների ազգաբնակչության սոցիալ-հարմարման և հոգեկան վիճակների ախտորոշման համար: Մասնակցել են 104 մարդ, որից 64 իգական և 40 արական սեռի ներկայացուցիչներ: Տես աղյուսակներ 1,2,3,4,5:

Աղյուսակ 1

Ընդհանուր թիվը	Սեռ	Տարիք	Բարձր մակարդակ 25-40 միավոր	Բարձր միտումով միջինի մակարդակ 15-25 միավոր	Ցածր միտումով միջինի մակարդակ 5-15 միավոր	Ցածր մակարդակ 0-5 միավոր
21		18-37	4	10	4	3
12	իգ.		2	6	2	2
9	ար.		2	4	2	1

Թեյլորի «Տագնապախոտվության չափման» մեթոդիկա, ՀՀ սահմանամերձ տարածաշրջան՝ Տավուշ-Նոյեմբերյան-Իջևան-Բերդ

Աղյուսակ 2

Ընդհանուր թիվը	Սեռ	Տարիք	Բարձր մակարդակ 25-40 միավոր	Բարձր միտումով միջինի մակարդակ 15-25 միավոր	Ցածր միտումով միջինի մակարդակ 5-15 միավոր	Ցածր մակարդակ 0-5 միավոր
25		18-37	5	12	6	2
17	իգ.		4	7	4	2
8	ար.		1	5	2	-

Թեյլորի «Տագնապախոտվության չափման» մեթոդիկա, ՀՀ սահմանամերձ տարածաշրջան՝ Վայոց Ձոր- Խաչիկ

Աղյուսակ 3

Ընդհանուր թիվը	Սեռ	Տարիք	Բարձր մակարդակ 25-40 միավոր	Բարձր միտումով միջինի մակարդակ 15-25 միավոր	Ցածր միտումով միջինի մակարդակ 5-15 միավոր	Ցածր մակարդակ 0-5 միավոր
19		18-37	3	9	5	2

12	հգ.		2	6	3	1
7	ար		1	3	2	1

Թեյլորի «Տագնապախոտվության չափման» մեթոդիկա՝ ՀՀ սահմանամերձ տարածաշրջան՝ Սյունիք-Սիսիան

Աղյուսակ 4

Ընդհանուր թիվը	Սեռ	Տարիք	Բարձր մակարդակ 25-40 միավոր	Բարձր միտումով միջինի մակարդակ 15-25 միավոր	Ցածր միտումով միջինի մակարդակ 5-15 միավոր	Ցածր մակարդակ 0-5 միավոր
18		18-37	3	8	4	3
13	հգ.		3	5	3	2
5	ար		-	3	1	1

Թեյլորի «Տագնապախոտվության չափման» մեթոդիկա՝ ԼՂՀ Մարտակերպ-Մարտադիս

Աղյուսակ 5

Ընդհանուր թիվը	Սեռ	Տարիք	Բարձր մակարդակ 25-40 միավոր	Բարձր միտումով միջինի մակարդակ 15-25 միավոր	Ցածր միտումով միջինի մակարդակ 5-15 միավոր	Ցածր մակարդակ 0-5 միավոր
21		18-37	3	13	4	1
10	հգ.		1	6	2	1
11	ար		2	7	2	-

Թեյլորի «Տագնապախոտվության չափման» մեթոդիկա՝ ԼՂՀ Քարվաճառ

Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդիկաների արդյունքները ներկայացված են հաջորդ ենթագլխում:

**2.2 Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության հետազոտության արդյունքները**

Այս ենթագլխում կներկայացնենք արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության հետազոտության արդյունքները:

Ինչպես նշել ենք նախորդ ենթագլխում, հետազոտության ընթացքում կիրառվել են Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան» (16-PF), «Ինքնագնահատման ախտորոշման Չ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի մեթոդիկան», Ա.Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան», Թեյլորի «Տագնապախոտվության չափման» մեթոդիկայի հարցարանը: Հետազոտության ընթացքում հաշվի ենք առել սուբյեկտի աշխատանքային փորձառությունը և տարիքը, չնայած այստեղ ևս կանգ ենք առել աշխատանքային միջին տարիք և փորձառություն հասկացությունների վրա: Ա. Բասսի և Ա.Դարկի ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկայի կիրառման ժամանակ առանձնացրել ենք պայմանական 5 խմբեր, որոնք աշխատել են արտակարգ իրավիճակներում, դրանք են. ընդդիմադիր մամուլ, իշխանամետ մամուլ, հեռուստատեսություն և օն լայն լրատվամիջոցներ, թերթ և հետաքննող լրագրողներ: Վերջին խմբում՝ նաև տեղաբնակ լրագրողներ. օրինակ՝ աղետի, կամ պատերազմական գոտու: Գաղտնիության սկզբունքը պահելու համար հետազոտության ընթացքում խմբերը պայմանական անվանվել են A, B, C, D, E :

Ռ.Քեթթելի մեթոդիկայի կիրառման ընթացքում նախ պարզել ենք տվյալ խմբում առկա գործոնների արտահայտվածությունը, այնուհետև կազմել ենք յուրաքանչյուր գործոնի միջինացված տվյալը՝ նկատի ունենալով, որ այդ գործոններն ի հայտ են գալիս փոխազդեցության արդյունքում: Այնուհետև համեմատել ենք երևույթի կամ իրադարձության արդյունքում ձևավորած առանձին խմբերի միջինացված տվյալները տալու նպատակով:

Ստորև ներկայացնում ենք Ռ.Քեթթելի մեթոդիկայի կիրառման արդյունքների միջինացված տվյալները (տես՝ աղյուսակ 6)

Խմբեր	Խմբի անդամների միջին աշխատանքային փորձառություն	MD	A	B	C	E	F	G	H	I	L	M	N	O	Q1	Q2	Q3	Q4	
I խումբ	20.2	46.8	15.2	19.2	4.8	11.2	10.8	12.8	17.2	15.6	14	8.4	15.2	11.6	11.2	13.2	11.2	18.4	9.6
II խումբ	19.6	46.0	16.4	18.4	6.8	12.8	10.4	12.4	15.2	14.4	16	7.2	13.6	9.6	14.2	15.2	10.4	18.4	10.4
III խումբ	26.4	45.6	17.2	16	5.2	14	9.2	13	16	12.4	18.4	8.0	14.6	11.6	15.2	12.4	12.8	13.6	11.6
IV խումբ	24.8	48.8	17.2	19.2	7.2	12.4	22.6	9.6	12.8	14.8	14	8.0	12.8	9.6	12.6	13.8	10.8	16.8	12
V խումբ	24.8	46.0	18.2	16.8	7.2	17.2	12.8	11.6	15.6	20.8	12.8	4.8	14.4	15.2	13.6	12.8	9.2	19.6	10
<b>Բոլոր խմբերի միջինացված ցուցանիշներ</b>	115.8	233.2	84.2	89.6	31.2	67.6	65.4	97.6	76.8	77.2	75.2	36.4	69.6	57.6	66	66.4	54.4	86.4	53.6
	23.16	46.64	39.76	17.92	6.24	13.52	13.08	19.52	15.36	15.44	15.04	7.28	13.92	11.52	13.2	13.28	10.88	17.28	10.72



Ներկայացված աղյուսակից պարզ է դառնում, որ համեմատաբար բարձր է A- շփվողականությունը, որը հասնում է 17.92%-ի: Ավելի բարձր ցուցանիշներ են գրանցվել F- արտահայտչականություն սանդղակով՝ 19.52%, բարձր է նաև O - ինքնավերահսկողությունը՝ 13.2%: Արդյունքներն ամփոփենք՝ հիմք ընդունելով թեստային համակարգում տեղ գտած գործոնները՝ առավելագույն արտահայտվածության չափով: Բացի B՝ ինտելեկտի գործոնից, որի առավելագույն արժեքը, ըստ թեստի, 8 է և MD-ից՝ ինքնագնահատականի համարժեքություն, որի գործոնը 14 է, մնացած 15 գործոնների առավելագույն արժեքը 12-ն է: Դրանից բխում է, որ միևնույն ցուցանիշների հավասարության դեպքում պետք է ստուգվի, թե տվյալ քանակական արտահայտությունը ինչպես է հարաբերակցվում տվյալ գործոնի դրսևորման առավելագույն չափի հետ:

Ռ. Քեթթելի թեստը վերակազմավորվում է 3 բլոկների, այսինքն՝ չափում է նաև հետևյալ անհատական առանձնահատկությունները, որոնք էլ իրենց հերթին միավորվում են համապատասխան համակարգերում:

1. Ինտելեկտուալ առանձնահատկություններ՝ B, M, Q1
2. Հուզական առանձնահատկություններ՝ C, G, I, O, Q3, Q4
3. Հաղորդակցական և միջանձնային փոխազդեցությունների առանձնահատկություններ՝ A, H, F, E, Q2, N, L (աղյուսակ 7):

Աղյուսակ 7

Ինտելեկտուալ առանձնահատկություն	51.6%
Հուզական առանձնահատկություն	75.12%
Հաղորդակցական և միջանձնային փոխազդեցությունների առանձնահատկություններ	59.68%

- Ռ. Քեթթելի թեստը վերակազմավորվում է 3 բլոկների  
 Խմբավորելով անձնային գործոնները ըստ՝
- ա ) Ինտելեկտուալ առանձնահատկությունների,
  - բ ) Հուզական առանձնահատկությունների,

գ) Հաղորդակցական և միջանձնային փոխազդեցությունների առանձնահատկությունների, երևում է, որ ամենաբարձր ցուցանիշն արտահայտվում է հուզական բաղադրիչների դրսևորման առկայությամբ, որոնք գերակա դեր են կատարել արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության գործընթացում, ինչը փորձարարական ճանապարհով գրանցվել է որպես բարձր արտահայտվածություն՝ 75.12%:

Հետագա վերլուծություններից պարզվում է, որ անձնային վերը նշված գործոններն էական դեր են կատարում Ա. Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա»-ի միջինացված ագրեսիայի դրսևորման ցուցանիշների արտահայտվածության տվյալների հետ՝ մասնավորապես խոսքային ագրեսիայի՝ 45%, մեղքի զգացման՝ 66.6%, նյարդայնության՝ 48.4%, անձնային տազնապայնության՝ 13.2%, ինքնազնահատականի տատանվող մինչև 39.76%-ից, ինչը պարզորոշ կերպով երևում է աղյուսակ 8-ում: Այս բարձր ցուցանիշները նույնպես բարդացնում են արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության հարմարման խնդիրները:

Այսպիսով, միջինացված տվյալները արձանագրելիս նկատի ենք ունեցել տվյալ գործոնի արտահայտչականությունը՝ ըստ նրա չափման առավելագույն միավորների /B-8, A-Q4 – 12, MD-14/ (տես աղյուսակ 8):

Ռ.Քեթթելի անձնային հարցարանի ցուցանիշների արտահայտվածությունը ավելի պարզորոշ դարձնելու համար նախընտրել ենք տվյալները ներկայացնել նաև գծապատկերի տեսքով (տես՝ գծապատկեր 1):

Ցուցանիշների արտահայտվածության աստիճան	N	Գործոններ	Տոկոսային արտահայտվածություն	Գործոնների անվանումներ
ա) Թույլ արտահայտված գործոններ	1.	L	7.28%	դյուրահավատություն
	2.	Q4	10.72%	թուլացվածություն
	3.	Q2	10.88%	զիջողականություն
բ) Միջին արտահայտվածության գործոններ	4.	N	11.52%	ուղղամտություն
	5.	E	13.08%	գերակշռություն
	6.	Q1	13.28%	ռադիկալիզմ
	7.	O	13.2%	տագնապայնություն
	8.	C	13.52%	հուզական անկայունություն
	9.	M	13.92%	զարգացած երևակայություն
	10.	I	15.04%	զգայունակություն
	11.	G	15.36%	նորմատիվություն
	12.	H	15.44%	խիզախություն
գ) Ընդգծված արտահայտվածության գործոններ	13.	Q3	17.28%	բարձր ինքնահսկողություն
	14.	A	17.92%	շփվողականություն
	15.	F	19.52%	արտահայտչականություն
	16.	B	6.24%	Ինտելեկտ
	17.	MD	39.76%	ինքնագնահատականի աղեկվատություն

Ռ.Քեթթեյի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկա»-ի (16-PF) միջինացված տվյալներ (%)

Աղյուսակից և գծապատկերից երևում է, որ անձնային թեստի արդյունքները հետևյալն են՝ նվազագույնը 7.28%՝ L դյուրահավատությունը, և F առավելագույնը՝ 19.52% արտահայտչականությունը: Այս գործոնների նմանատիպ տատանումը կամ տեղաշարժն ավելի հարմար է ցույց տալ որոշակի միջակայքում՝ բաժանելով այն 3 մասի.

ա. Թույլ արտահայտվածությամբ գործոններ՝ 7.28% – 10.88%. դրա մեջ մտնում են զիջողականությունը, թուլացվածությունը, դյուրահավատությունը :

բ. Միջին արտահայտվածության գործոններ՝ 11.52% – 15.44%, որի մեջ մտնում են հետևյալ գործոնները՝ H-խիզախություն՝ 15.44%, G՝ նորմատիվություն՝ 15.36%, I՝ զգայունություն՝ 15.04%, M՝ զարգացած երևակայություն՝ 13.92%, C՝ հուզական անկայունություն՝ 13.52%, O՝ տազնապայնություն՝ 13.2%, Q1՝ ռադիկալիզմ՝ 13.28%, E՝ զերակշռություն՝ 13.08%, N՝ ուղղամտություն՝ 11.52%:

գ. Ընդգծված կամ բարձր արտահայտվածության գործոնների ցուցանիշներ տատանվում են 17.28% - 19.52%, դրանք են՝ F՝ արտահայտչականությունը՝ 19.52%, A՝ շփվողականությունը՝ 17.92% , Q3՝, բարձր ինքահսկողությունը՝ 17.28%:

Մեր կողմից ներկայացված աղյուսակում և գծապատկերում արտահայտված են նաև ինտելեկտի (B՝ 6.24%) և ինքնագնահատականի համարժեքության (MD՝ 39.76%) ցուցանիշները:

Ինչպես նշել ենք 2.1 ենթագլխում, արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության, ինչպես նաև տեղեկատվությունը լուսաբանող լրագրողների վրա հոգեբանական ազդեցության ու նրանց կողմից հասարակությանը տրվող ինֆորմացիայի փոխազդեցության գործընթացում մեծ նշանակություն ունեն թե՛ լրագրողների, և թե՛ հասարակության կողմից ցուցաբերվող ագրեսիայի դրսևորումները: Այդ դրսևորումների բացահայտման համար նախընտրելի ենք համարել օգտագործել Ա. Բասսի և Ա.Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան»: Այս մեթոդը նույնպես կիրառվել է արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածության և արտահայտված ագրեսիաների տիպերի բացահայտման գործընթացում: Գրանցված արդյունքների հիման վրա նույնպես կազմվել է միջինացված տվյալների աղյուսակ (տես աղյուսակ 9 ):

Մեթոդիկայի կիրառման առաջին փուլում կատարվել են առանձին խմբային ուսումնասիրություններ: Երկրորդ փուլում համեմատվել են տարբեր խմբերի միջինացված արդյունքներն ըստ 8 ցուցանիշների: Երրորդ փուլում որոշվել է ագրեսիայի ցուցանիշների համահարաբերակցության կապը՝ նպատակ ունենալով պարզելու բացահայտ կապի նշանակալիության չափը:

Ստորև բերվում է խմբերի արդյունքները՝ ըստ 8 ցուցանիշների, որոնք հետազայում միջինացվել են և համեմատվել մյուս խմբերի միջինացված ցուցանիշների հետ:

Աղյուսակ 9

	Ֆիզիկական ագրեսիա	խոսքային ագրեսիա	Անուղղակի ագրեսիա	Նեգատիվիզմ	Նյարդայ նություն	Կասկածա- մտություն	Վիրավո րանք	Մեղքի զգացում
<b>A</b>	48	60	40	32	46	48	40	68
<b>B</b>	40	58	48	30	46	40	26	60
<b>C</b>	48	68	50	38	26	26	32	70
<b>D</b>	60	92	48	38	50	52	34	64
<b>E</b>	52	76	46	38	52	46	44	68
<b>Միջինացված տվյալներ տոկոսներով</b>	45	68	39.6	35.2	48.4	42	35.2	66.6

Ա. Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա»-ի միջինացված տվյալներ (%)

Ինչպես և Ռ.Քեթթելի անձնային հարցարանի տվյալների ներկայացման պարագայում, այնպես էլ Ա. Բասսի և Ա.Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա»-ի տվյալները տարանջատել ենք՝ ըստ արտահայտվածության երեք աստիճանների (տես՝ աղյուսակ 10):

Ինչպես երևում է աղյուսակի 8 ցուցանիշների համեմատությունից, խոսքային ագրեսիայի ցուցանիշը տատանվում է 66.6%- 68%-ի միջև, այսինքն ուսումնասիրվող խմբերում բավականին ուժեղ է արտահայտված մեղքի զգացումը և խոսքային ագրեսիան, որոնք արտահայտվում են բարձր տվյալներով:

Ցուցանիշների արտահայտվածության աստիճան		Գործոններ	Տոկոսային արտահայտվածություն
<b>ա) Թույլ արտահայտված գործոններ</b>	1	Նեգատիվիզմ	35.2%
	2	Վիրավորվածություն	35.2%
	3	Անուղղակի ագրեսիա	39.6%
	4	Կասկածամտություն	42%
<b>բ) Միջին արտահայտվածության գործոններ</b>	5	Ֆիզիկական ագրեսիա	45%
	6	Նյարդայնություն	48.4%
<b>գ) Ընդգծված արտահայտվածության գործոններ</b>	7	Մեղքի զգացում	66.6%
	8	Խոսքային ագրեսիա	68%

Ա. Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա»-ի միջինացված տվյալներ (%) ըստ արտահայտվածության աստիճանի


Թույլ արտահայտված (35.2%-42%) գործոններն են նեգատիվիզմը, վիրավորվածությունը, անուղղակի ագրեսիան և կասկածամտությունը:

Միջին արտահայտվածության գործոնների ցուցանիշները տատանվում են 45%-: 48.4%: Այդ գործոններն են նյարդայնությունն ու ֆիզիկական ագրեսիան:

Բարձր արտահայտված կամ ընդգծված գործոններն են խոսքային ագրեսիան՝ 68% և մեղքի զգացումը՝ 66.6%:

Առավել վառ գործոնների արտահայտվածությունը երևում է գծապատկերից (տես՝ գծապատկեր 1)

Գծապատկեր 1



Ա.Բասսի և Ա. Դարկի «Ազրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա»-ի միջինացված տվյալներ (%)

Արտակարգ իրավիճակներում տեղեկատվությունը լուսաբանող լրագրողների սոցիալ-հոգեբանական ազդեցության ու նրանց կողմից հասարակությանը տրվող ինֆորմացիայի փոխազդեցության գործընթացում անձի տազնապայնության ազդեցությունը պարզելու համար կիրառված Չ.Դ.Սպիրերգերի և Յու. Լ. Խանինի՝ ինքնագնահատականի բացահայտման մեթոդիկայի արդյունքները ներկայացված են աղյուսակ 11-ում և գծապատկեր 2-ում:

Աղյուսակ 11

	Ռեակտիվ տազնապայնություն	Անձնային տազնապայնություն
<b>A</b>	60	88
<b>B</b>	72	92
<b>C</b>	76	86
<b>D</b>	82	80
<b>E</b>	76	88
<b>Միջինացված տվյալները (%)</b>	73.2	86.8

«Ինքնագնահատման ախտորոշման Չ.Դ.Սպիրերգերի և Յու. Լ. Խանինի մեթոդիկա»-ի միջինացված ցուցանիշներ (%)


Թեյլորի «Տազնապատկանության չափման մեթոդիկան» բաղկացած է 50 հարցապնդումից և պետք է պատասխանել «այո» կամ «ոչ»: Հիշյալ թեստն ընտրել ենք՝ չափելու համար հետազոտվողներից յուրաքանչյուրի տազնապայնության մակարդակը: Եթե հետազոտվողը հավաքում է 0-5 միավոր, ապա տազնապայնության մակարդակը ցածր է, եթե 5-15 միավոր՝ առկա է ցածր միտումով միջին մակարդակ, 15-25 միավոր՝ բարձր միտումով միջին մակարդակ, 25-40 միավոր՝ բարձր մակարդակ, 40-50 միավոր՝ խիստ բարձր մակարդակ: Կեղծ պատասխաններից զերծ մնալու համար նախընտրել ենք զուգահեռաբար անցկացնել Նորակիճեի կողմից ստեղծված «Տազնապատկանության սանդղակ» հարցաթերթիկը: Այն բաղկացած է 60 հարցապնդումից և պետք է պատասխանել «այո» կամ «ոչ»: Թեյլորի «Տազնապատկանության չափման մեթոդիկայի» թեստի արդյունքները արտահայտված են աղյուսակ 12-ում և գծապատկեր 3-ում:

Աղյուսակ 12

Միավորներ	Մասնակիցների քանակը	
0-5 միավոր ցածր մակարդակ	11	11,4%
5-15 միավոր ցածր միտումով միջին մակարդակ	23	23,92%
15-25 միավոր՝ բարձր միտումով միջին մակարդակ	52	54,08%
25-40 միավոր՝ բարձր մակարդակ	18	18,72%
40-50 միավոր՝ խիստ բարձր մակարդակ	0	0
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>104</b>	


Թեյլորի «Տազնապատկանության չափման մեթոդիկայի» թեստի արդյունքները

Գծապատկեր 2.





Գծապատկեր 3.



Արտակարգ իրավիճակներում տեղեկատվությունը լուսաբանող լրագրողների անձի տազնապայտության ազդեցությունը պարզելու համար կիրառված Չ.Դ.Սպիրերգերի և Յու. Լ. Խանինի՝ ինքնազնահատականի բացահայտման մեթոդիկայի արդյունքները ներկայացված են աղյուսակ 11-ում և գծապատկեր 2-ում:

Չ.Դ.Սպիրերգերի և Յու. Լ. Խանինի՝ «Ինքնազնահատման ախտորոշման մեթոդիկա»-ի կիրառման արդյունքները չեն տարբերակվել ըստ ցուցանիշների թույլ, միջին և բարձր արտահայտվածության, քանի որ աղյուսակ 13-ում և գծապատկեր 2-ում դրանք հստակ երևում են:

	Ռ.Քեթթելի 'Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան' (16-PF)		Ա.Բասսի և Ա.Դարկի 'Ազրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա'		Ինքնագնահատման ախտորոշ- ման Չ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի մեթոդիկա		Թեյլորի 'Տագնապախոտվության չափման մեթոդիկա'	
Ա. ցածր արտահայտվածություն	L ոյուրահավ.	7.28 %	Նեգատիվ.	35.2%	0	11(անհատ) 11,4%	0-5 միավոր ցածր մակարդակ	
	Q4 թուլացված	10.72 %	Վիրավորվ.	35.2%				
	Q2 զիջողակ.	10.8 8%	Անուղղակի ազրեսիա	39.6%				
			Կասկած.	42%				
Բ. միջին արտահայտվածություն	N ուղղամտությ.	11.52 %	Ֆիզիկական ազրեսիա	45%	նեակտիվ տագնապայնություն	36.6%	5-15 միավոր ցածր միտումով միջին մակարդակ	
	E գերակշռությ.	13.0 8%						
	Q1 ռադիկալիզմ	13.2 8%						
	O տագնապայն.	13.2 %						
	C հուզական անկայուն.	13.52 %	Նյարդայնու թյուն	48.4%			23(անհատ ) 23,92%	
	M զարգացող երևակայությ.	13.9 2%						
	M զարգացող երևակայությ.	15.0 4%						
	G նորմատիվ.	15.3 6%						
	H խիզախությ.	15.44 %						
Գ. բարձր արտահայտվածությ	Q3 բարձր ինքնավերա հսկող.	17.28 %	Խոսքային ազրեսիա	66.6%	մեծային տագնապայնություն	43.4%	18(անհատ ) 18,72%	25-40 միավոր' բարձր մակարդակ
	A շփվողակ.	17.92 %	Մեղքի զգացում	68%			0	40-50 միավոր' խիստ բարձր մակարդակ
	F արտահայտչ.	19.5 2%						
	B ինտելեկտ	6.24 %						
	MD ինքնագնահ.	39.7 6%						

Հեղափոխության ընթացքում կիրառված մեթոդիկաների միջինացված փոխանցված ընդհանրացված պատկեր (%)

### 2.3 Հետազոտության արդյունքների սոցիալ-հոգեբանական վերլուծությունը

(հավասարող գիտափորձ)

Հետազոտության վերլուծության փուլում մենք առավել մանրամասն կանգ կառնենք այն առանձնահատկությունների մեկնաբանման վրա, որոնք մեր հետազոտության տեսանկյունից կարևորություն են ներկայացնում:

Առաջին փուլում ուսումնասիրվել են կիրառված մեթոդիկայով ստացված տվյալները՝ ըստ համապատասխան գործոնների, չափորոշիչների, հատկանիշների: Քանի որ տվյալ մեթոդիկայի սահմաններում ուսումնասիրվող հատկանիշները շատ են, ուստի փորձել ենք հետազոտության տվյալները որոշակիորեն խմբավորել՝ կազմելով թույլ արտահայտված, միջին արտահայտված և ընդգծված կամ բարձր արտահայտված ցուցանիշների խմբեր:

Նախորդ ենթագլխում մենք ներկայացրել ենք բոլոր մեթոդիկաների արդյունքներն ու ցուցանիշները՝ ըստ արտահայտվածության տարբեր աստիճանների: Այժմ փորձենք ընդհանրացնել այդ արդյունքները և ներկայացնել դրանք մեկ աղյուսակով [Տես՝ աղյուսակ 14]:

Բացի դրանից, քանի որ հետազոտական խմբերը տարբեր են եղել, հետևաբար անհրաժեշտ ենք համարել կազմել միջինացված տվյալներ արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների հոգեբանական առանձնահատկությունների մասին պատկերացումներ կազմելու համար: Ակնհայտորեն պարզ է, որ անիմաստ է որոշ հատկանիշների համար կազմել միջինացված տվյալ: Դրանով հանդերձ՝ այդ գործոնները ներքնապես կապված են միմյանց հետ ոչ միայն այն պատճառով, որ դրանք ուղղված են անձի ուսումնասիրմանը, այլև պատկերացում են տալիս անձի առանձին անհատական առանձնահատկությունների, վարքային դրսևորումների մասին: Հիմք ընդունելով այս դատողությունը՝ փորձել ենք կապ հաստատել երեք խումբ տվյալների միջև, որոնք արձանագրվել են նախորդ ենթագլխում:

Աղուսյակից երևում է, որ կիրառված մեթոդիկաների ստացված տվյալները բաժանել ենք երեք խմբերի՝ ըստ արտահայտվածության աստիճանի (ցածր, միջին,

ընդգծված): Վերոհիշյալ համեմատությունը և խմբավորումը հնարավորություն տվեց մեզ կապ հաստատելու թույլ, միջին և ընդգծված արդյունքների միջև և մոտավոր պատկերացում ստանալու առանձին խումբ ցուցանիշների միջև:

Մենք առանձնացրել ենք այն հիմնական գործոններն ու հատկանիշները, որոնք առավել բարձր են և, ըստ վարկածի, արտակարգ իրավիճակներում աշխատող և տեղեկատվություն հաղորդող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածության անհրաժեշտ մակարդակն ապահովելու համար նպատակահարմար ենք համարում հետագայում մեր կողմից մշակվող շտկողական աշխատանքներում արտահայտված գործոնները նվազեցնել, իսկ մյուս գործոնները որոնք թույլ են արտահայտված, սակայն բնութագրում են լրագրողներին՝ բարձրացնել:

Վերլուծության արդյունքում, երբ համադրում ենք միջինացված արդյունքները գալիս ենք հետևյալ եզրահանգումների .

ա) Ռ.Քեթթելի Q2 «գիշողականության», L «ոյուրահավատություն», Q4 «թուլացվածություն» թույլ արտահայտվածությանը գործոնները համարժեք են է Ա. Բասսի և Ա. Դարկի «վիրավորվածության», «նեգատիվիզմի», «անուղղակի ագրեսիայի», «կասկածամտության», Թեյլորի «Տագնապախոռվության չափման մեթոդիկայի» 0-5 միավոր ցածր մակարդակ ունեցողների ցուցանիշների հետ:

բ) Ռ.Քեթթելի անձնային N «ուղղամտություն». E «գերակշռություն», Q1 «ռադիկալիզմ», O «տագնապայնություն», C «հուզական անկայունություն», M «զարգացած երևակայություն», I «զգայունություն», G «նորմատիվություն», H «խիզախություն» գործոնների միջին արտահայտվածության ցուցանիշներն ընդհանրացված են Ա.Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկայի» «ֆիզիկական ագրեսիայի», «նյարդայնության», Չ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի «Ինքնագնահատման ախտորոշման մեթոդիկայի» «ռեակտիվ տագնապայնության», Թեյլորի «Տագնապախոռվության չափման» մեթոդիկայի ցածր միտումով միջին մակարդակից (5-15 միավոր) մինչև բարձր միտումով միջին մակարդակ (15-25 միավոր) արդյունքների հետ:

գ) Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկայի» անձնային Q3 «ցածր ինքնահսկողություն», A «շփվողականություն», F «արտահայտչականություն» գործոնների բարձր արտահայտվածությունը ցուցանիշները ընդհանրացված են Ա.Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկայի» «խոսքային ագրեսիայի», «մեղքի զգացման», Չ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի «Ինքնագնահատման ախտորոշման մեթոդիկայի» «անձնային տագնապայնության», Թեյլորի «Տագնապախոտվության չափման» մեթոդիկայի բարձր մակարդակի (25-40 միավոր) արդյունքների հետ:



ԳԼՈՒԽ 3. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆԸ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ

ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

3.1 Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-

հոգեբանական պատրաստվածության ապահովման ուղիները

Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածության ապահովումը ենթադրում է փոփոխություն առաջին հերթին մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակության մեջ. Պետք է առանձնացնել հատուկ և կամընտրական դասընթացներ, որոնց հիմնական նպատակը կլինի ապագա լրագրողներին սոցիալ-հոգեբանական գիտելիքների հաղորդումը, արտակարգ իրավիճակներում աշխատելիս անհրաժեշտ ինքնակարգավորման, ինքնակառավարման, ռիսկերի նվազեցման հմտությունների ձևավորումը: Այդ նպատակով մեր տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքների հիման վրա ստեղծել ենք «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» ծրագիրը:

Արտակարգ իրավիճակներում թրժված ռուս լրագրող Արտյոմ Պոտյոմկինի կարծիքով՝ իրական լրագրությունը սկսվում է այնտեղ, որտեղ ինչ-որ բան է տեղի ունենում: Լրագրողի խնդիրն է պատմել դրա մասին հեռուստադիտողներին, ընթերցողներին, ունկնդիրներին: «Վերլուծությունն ու կանխատեսումները՝ դա մեր մասնագիտությունը չէ: Մենք պետք է լինենք մաքսիմալ օբյեկտիվ և հաղորդենք տեղեկատվությունը, որը կա իրականում: Այդ իսկ պատճառով մեր միտքը պետք է միշտ պարզ լինի, նյարդերը՝ հանգիստ, իսկ գլուխն՝ իր տեղում»[124]:

Ոչ մեկին հետաքրքիր չէ կադրում դողացող կամ հուզմունքից բառեր շփոթող լրագրողը: Մյուս կողմից, հեռուստադիտողները սիրում են, որ կադրում լրագրողի «մոռվը ջարդեն»: Վարկանիշն իսկույն բարձրանում է: Իսկ իրեն՝ «տեղեկատվության հաղորդողին» վնասվածքները (Աստված մի արասցե՛մահը), մեղմ ասած, օգուտ չեն»[124]:

Լրագրող Վլադիմիր Մեզենցևի մասին ֆիլմում կա այսպիսի մի տեսարան. այն ժամանակվա խորհրդային հեռուստատեսության ռազմական թղթակցին՝ գլխավոր հերոսին, հարցնում են. «Ձեզ մոտ զենք կա՞»: Պատասխանի փոխարեն լրագրողը գրպանից հանում է ատրճանակը և ցուցադրում տեսախցիկի առաջ: «Բայց ես ունեմ շատ ավելի վտանգավոր զենք», - հավելում է նա և մյուս գրպանից հանում գրիչը: «Այս զենքով ես կարող եմ ազդել միլիոնավոր մարդկանց վրա»: Ու դա, անկասկած ճիշտ է: Չէ՞ որ մեր աշխատանքի նպատակն է՝ ոչ թե բավարարել անհավասարակշիռ մարդկանց ցանկությունը՝ տեսնել հեռուստացույցով մարդկանց տառապանքների և մահվան տեսարաններ, այլ ցուցադրել պատերազմի սարսափներն ու անիմաստությունը, որպեսզի մարդիկ մտածեն՝ ինչ են անում: Մենք պետք է ցույց տանք, թե ով է մեղավոր մարդկային զոհերի և դժբախտությունների համար: Սա է լրագրության էությունն ու խնդիրը»[128]:

Հաճախ երիտասարդ լրագրողներն ամբողջությամբ խորանում են աշխատանքի մեջ և սենսացիոն ու բացառիկ կադրերի համար «կորցնում են գլուխը»: Հասարակ մի օրինակ. լրագրողն ու օպերատորը ռազմական գործողությունների գոտում տեղափոխվում են Ա կետից Բ կետ, և հանկարծ հայտվում են կրակոցների տակ: Պատահական գնդակով օպերատորը սպանվում է: Այդ ժամանակ մարտը թեժանում է: Ի՞նչ պետք է անի լրագրողը: Արցո՞ւնք թափի սպանված ընկերոջ դիակի վրա, փախչի՞, թե՞ տեսախցիկը վերցնի ու սկսի նկարահանել: Եթե իրավիճակին նայենք պրոֆեսիոնալիզմի տեսանկյունից, ապա՝ նկարահանի, եթե սովորական մարդու տեսանկյունից՝ ապա փախչի, իսկ արդյունքում կարող է ստացվել այնպես, որ թղթակիցն ընդհանրապես ոչինչ չի կարող ձեռնարկել, նա կմտնի մի անկյուն և, ավելի շուտ, ինքն էլ կզոհվի: Իհարկե, ամեն մարդ մտածում է իր մասին: Հենց դրա համար էլ ամեն պատահական մարդու պատերազմի լուսաբանման չեն ուղարկում: Ռազմական լրագրողը միշտ մարդկային վշտի ականատեսն է, ու դրանից փախչել հնարավոր չէ: Նա պարտավոր է շփվել տուժածների և նրանց հարազատների հետ, տեղեկատվություն հայթայթել զինվորականներից, փոխանցել այն խմբագրությանը ու նաև հետևել անձնական անվտանգությանը: Մեր ժամանակներում պատերազմներն ու աղետներն

առաջանում են անսպասելի և վերջանում նույնպես արագ, այդ պատճառով «իրադարձությունների դժոխքում» կարող է հայտնվել բոլորովին անպատրաստ մարդը: Բայց աշխատանքը, միևնույն է, պետք է կատարել: Ու այստեղ կարևոր է հիշել, որ, լինելով հեռուստատեսության աշխատող, ամբողջ նկարահանող խմբի համար պատասխանատու է թղթակիցը: Չի կարելի օպերատորին ուղարկել առաջնագիծ ու նստել թիկունքում: Դուք պետք է միշտ միասին լինեք: Չի կարելի ոչ մեկին կրակահերթի տակ դնել, որպեսզի քեզ էլ չդնեն, այդ ժամանակ նյութն ավելի հաջող կստացվի: Թղթակիցը խմբի ղեկավարն է, սակայն մարդկանց հետ չարժե հրամաններով խոսել: Վառ օրինակ. Բեսլանի ահաբեկչության ժամանակ հեռուստաալիքներից մեկի թղթակիցը վարում էր ուղիղ հեռարձակումը, դպրոցի շենքի ֆոնին աթոռի վրա նստած հենց գրոհի ժամանակ: Պատկերն, իհարկե, բարձր կարգի էր: HTB-ի աշխատակիցները «կապի էին դուրս գալիս» հարևան տան անկյունից: Այնտեղ անհամեմատելի ապահով էր: Սակայն թղթակցուհու ռիսկը արադարացված չէր: Թեկուզև նրա համար, որ անձամբ ինքը ոչնչով ռիսկի չէր գնում: Օպերատորի օգնականը նրա թիկունքը ծածկել էր զրահաբաճկոնով, իսկ ինքը մնում էր գնդակների համար խոցելի: Թեժ կետերում լրագրողը պետք է միշտ մտածի սեփական և նկարահանող խմբի անվտանգության մասին: Ու դրա հետ մեկտեղ ձգտի, որպեսզի ռեպորտաժը հաջողված լինի: Այստեղ նա ստիպված է լինում լուրջ հետևել ինքն իրեն՝ ոչ մի դեպքում ազատություն չտալ զգացմունքներին, միշտ մի քիչ հեռու լինել, ուշադրությունը կենտրոնացնել փաստերի վրա[128]:

«Հիշում եմ, երբ ես դեռ նոր էի սկսել աշխատել նորություններում, զգացմունքների հետ կապված մեծ խնդիրներ ունեի: Խմբագրությունում գիշերային հերթապահության ժամանակ նկարահանումները հիմնականում կապված են կրիմինալի և արտակարգ պատահարների հետ: Հիշում եմ իմ առաջին գիշերային գործուղումը. մոտոցիկլետը աննախադեպ արագությամբ բախվել է կանգառին: Չորս դիակ, ասֆալտի վրա թափված ուղեղներ, կտրված ոտք... Հիմա եմ ես հանգիստ գրում դրա մասին, իսկ այն ժամանակ սիրտս խառնում էր ու դողում էի: Տասնհինգ րոպե ես ուշքի չէի գալիս: Օպերատորս ծիծաղում էր վրաս, ասում էր, որ ես կանաչ եմ ու փորձ ձեռք բերելուն պես այդ ամենը կանցնի: Իրոք, երկրորդ անգամ ես



արդեն ինքս ինձ տիրապետում էի, իսկ տասներորդ անգամ արդեն հանգիստ կարող էի նայել դիակներին և հարցուփորձ անել իրավապահներին, թե երբ է վրա հասել մահը: Ի դեպ, նման իրավիճակներին հումորով ու փիլիսոփայաբան վերաբերելը ոչ թե ցինիզմ է, այլ, ինչ-որ տեղ, սթրեսի դեմ մասնագիտական նշաձող»[128]:

Զինվորական լրագրողի համար մեծագույն սթրես է մշտական լարվածությունը, որը առաջանում է վախից, որ նա չի հասցնի նկարահանել անհրաժեշտ կադրը, ու այն այլևս հնարավոր չի լինի կրկնել: Մշտական ուշադրությունը, իհարկե, լավ է, սակայն ինչ-որ պահի հոգեկանը կարող է չդիմանալ, և լրագրողի նյարդերը տեղի տան. նա կկորցնի սեփական ուժերի հանդեպ վստահությունը և հետևաբար նաև իրավիճակի վրա վերահսկողությունը: «Մենք քայլում էինք փողոցով, մեզ մոտեցավ բացարձակ հանգիստ մի տղամարդ, բռնեց մեր ձեռքերն ու ասաց՝ «Գնացինք»: Մենք լուռ գնացինք: Նա տարավ մեզ տուն, մտքեց սենյակ, շարտեց վերմակը, որի տակ նրա կինն ու դուստրը, գլխատված, վառված էին: Նա հարցրեց. «Հիմա ես ինչպե՞ս ապրեմ», - պատմում է «ՏՎ Յենտր» հեռուստաալիքի ռազմական թղթակից Եվգենի Պոդդոբնին, որը աշխատում էր վրաց-հարավօսական հակամարտության գոտում: Հարց է ծագում՝ իսկ ինչպե՞ս ապրի լրագրողն այն ամենից հետո, ինչ նա տեսել և վերապրել է պատերազմում[129]:

Պատերազմի ժամանակ մեկ աշխատանքային օրը կարելի է «քաղաքացիական» երկուսի (երեքի, չորսի) տեղ հաշվել: Մյուս կողմից, աշխատանքը եռում է, սկսում է արտադրվել ադրենալինը, և թղթակիցը կարող է աշխատել առանց հոգնելու ավելի երկար, քան եթե նա նկարահաներ կտավների ցուցահանդեսը: Գրեթե բոլոր լրագրողները սիրում են իրենց աշխատանքը, և երբ հանդիպում են հետաքրքիր թեմայի, լրացուցիչ ներքին խթան են ստանում, իսկ զուտ գործընթացից՝ հաճույք:

«Երբ սեպտեմբերին, Պերմում գիշերը ինքնաթիռ էր ընկել, ես հերթապահ թղթակից էի: Ինձնից, օպերատորից և վարորդից բացի՝ բազայում ոչ ոք չկար: Գիշերվա ժամը չորսն էր, երբ նորությունների ժապավենի վրա հայտնվեցին ողբերգության մասին առաջին հաղորդագրությունները: Ես զանգեցի խմբագրին,

արթնացրի նրան և հրահանգեցի՝ գնալ Շերեմետևո, որտեղից մի քանի ժամ առաջ ուղևորվեց ինքնաթիռը: Այնտեղ մենք «հարձակվեցինք» ավիաընկերության ղեկավարության վրա, որին պատկանում էր չարաբաստիկ չվերթը: Ոչ ոք չէր ուզում մեզ հետ խոսել, եթերին մնացել էր ընդամենը մի քանի բոպե, երբ ինձ հաջողվեց ստանալ զոհվածների թվի և վթարի մասին որոշ մանրամասներ: Ես գրեթե ամբողջ օրը բերանս հաց չդրեցի, երկու օրից ավելի չքնեցի, սակայն հոգնածություն չզգացի: Անհնարին է փոխանցել այն զգացումը, որի հետ ես արթնացա հաջորդ առավոտյան: Երջանկությանս չափ չկար: Իմ հեռուստաընկերությունն առաջինն էր տեղեկատվություն արձակել եթեր: Եվ դրանում կար իմ վաստակը: Ես հասկացա, որ հենց այդպիսի պահերի համար եմ աշխատում»[129]:

«Նույն օրը ես ականատես եղա հետևյալին: Բոլորն ուզում էին նկարահանել զոհվածների հարազատներին, որոնք այդ ժամանակ գալիս էին օդանավակայանում ստեղծված շտաբը: Սակայն անվտանգության աշխատակիցները մոտ չէին թողնում ոչ մեկին: Ինչ խորամանկությունների ասես չդիմեցին իմ գործընկերները, որպեսզի հասնեն իրենց նպատակին և տան ամենաանհեթեթ հարցը.«Ի՞նչ եք զգում»: Սեփական աչքերով եմ տեսել, թե ինչպես են անվտանգությունն ապահովող անձինք ֆոտոլրագրողներից մեկին գոտկատեղից բռնած դուրս շարտել: Այն ժամանակ ես նրանց կողմն էի: Միշտ կարելի է բովանդակության մեջ բավարարվել առանց ավելորդ արցունքների և սքավոր հարազատների աչքերի: Հեռուստադիտողն առանց այդ էլ հասկանում է, թե ինչքան ծանր է նրանց համար: Պետք չէ ավելի ուռճացնել: Դա անմարդկային է, ոչ արդարացված և կարող է միայն վնաս հասցնել զոհվածների հարազատներին»[124]:

Աշխատելով պատերազմի գոտում, լրագրողին անհրաժեշտ է հիշել նրանց, ովքեր դիտում են իրեն: Միշտ պետք է առկա լինի ինչ-որ ինքնագրաքննություն: Վրաստանի և Հարավային Օսիայի միջև վերջին պատերազմը ցույց տվեց, թե ով ինչով է գրավում դիտորդին: Իր բլոգում Եվգենի Պոդդուբնին, որը բոլոր այն օգոստոսյան օրերին գտնվել է հակամարտության գոտում, գրում է. «Կա հատուկ, լրագրողական էթիկա, սակայն եթեր թողել կտրված գլուխներով մարդկանց... Մենք դա հաղորդում էինք Մոսկվա, սակայն նրանք, բնականաբար ցույց չէին տալիս այն

ժամերին, երբ կարող էին տեսնել երեխաները, անհավասարակշիռ հոգեկերտվածքով մարդիկ, որոնց համար դա դժվար կլիներ նայել... Քաղաքում սկսեցին թաղումները, և մենք պայմանավորվեցինք, որ չենք նկարահանի արարողությունները: Մարդկանց համար առանց այդ էլ շատ ծանր էր»[124]:

ԿԻՄ-ից նրա գործընկեր Ռուսլան Գուսարովը շարունակում է թեման. Պատերազմն ավելի սարսափելի է, քան մենք պատկերացնում ենք, քան տեսնում ենք հեռուստատեսությաններից»: Իրոք, մի՞թե արժե ցուցադրել ամեն ինչ: Միշտ կարելի է գործն անել առանց «փոքր արյան»: Պարզ է, որ կտրված գլխից սարսափելի բան չկա: Սակայն այդ պատկերը ոչ թե հեռուստատեսությանների համար է, այլ մասնագետների: Հեռուստատեսությունը չպետք է վախեցնի և գիշերային սարսափների պատճառ դառնա, այլ պետք է տեղեկացնի լսարանին և հող տա մտորումների համար: Սակայն, ինչքան մարդ, այնքան կարծիք[124]: Գոյություն ունի «ալիքի քաղաքականություն» հասկացությունն ու տեղեկատվական պատերազմները: Հաճախ պետությունն ինքն է ստիպում հեռուստատեսությանը ահաբեկել բնակչությանը: Այդ դեպքում լրագրողը գործիք է դառնում իշխանությունների ու ղեկավարների ձեռքում՝ նրանց շահադիտական նպատակներին հասնելու համար: Այդ ամենը նույնպես բացասաբար է անդրադառնում թղթակցի հոգեբանական վիճակի վրա: Նրա ստեղծագործ հնարքներն ու խիղճը արմատախիլ են անում և ուղղորդում նրանց աշխատանքը իրենց անհրաժեշտ ուղղությամբ:

«Ասում են, Հարավային Օսիայում աշխատող Առաջին ալիքի խմբին հանձնարարել էին՝ գտնել և նկարահանել երեխաների դիակներ: Ու լրագրողներն այն կատարում էին այնպիսի եռանդով, որ գրեթե իրենք էին պատրաստ սպանել: Այդ ամենի հետևում կանգնած էին որոշ քաղաքական նպատակներ: Վերադառնալով Մոսկվա, թղթակցից Անտոն Ստեպանենկոն հաղորդում էր. «Գիտեք, ես բացարձակապես անկեղծ ցավում եմ, որ հեռուստատեսությունն, առաջինը, խնայում է հեռուստադիտողին, ցույց չի տալիս այն ամենն, ինչը տեղում տեսնում և նկարահանում է օպերատորը: Եվ երկրորդ. հեռուստատեսության միևնույնը նրանում է, որ այն չի փոխանցում հույսը: Ինձ համար Յիսինվալը ասոցացվում է նեխած

դիակների հոտի հետ: Դա մահվան հոտն է, նեխած դիակների հոտը, որն ամենուր է: Հինգերորդ օրը (իսկ հիմա ամառ է) այդ դիակների հոտը զգացվում է ամբողջ քաղաքում: Փչում է քամին, թե չի փչում, միևնույն է, այն մնում է: Ամբողջ Ցխինվալով մեկ՝ դիակների հոտն է: Սա քաղաքացիական բնակչության շրջանում զոհերի թվի մասին խոսակցությունների վերաբերյալ: 50 հոգի Ցխինվալի չափ քաղաքում, դա կներեք ցինիզմի համար, ինչպես կարող է լինել: Ամբողջ քաղաքում դիակների հոտն է»[130]:

Հաճախ, վերադառնալով գործուղումից, սթափ և կողքից գնահատելով, լրագրողին թվում է, որ նա ինչ-որ բանում թերացել է, չի օգտագործել ամբողջ ժապավենը, քիչ տեղեր է այցելել, քիչ մարդկանց հետ է շփվել: Իսկ, աշխատելով հակամարտության գոտում, թվում էր, որ անում ես ամեն հնարավորը, և նույնիսկ ավելի շատ: Սակայն չի կարելի մոռանալ. պատերազմում թղթակցի վրա ազդում է սեփական կյանքի համար վախը: Երբ քո հյուրանոցի տարածքը ոմբակոծվում և հրետակոծվում է, երբ պատահական գնդակները պտտվում են ամբողջ քաղաքում, չես ցանկանա ավելորդ անգամ դուրս գալ փողոց: Ու ամեն անգամ նա պետք է իր խղճի հետ գործարքի գնա. ես չեմ գնա ու չեմ նկարահանի դա, քանի որ ինձ կարող են սպանել, իսկ ես ուզում եմ ապրել»[130]:

Վախի պատճառով շատ լրագրողներ անձամբ են հայտնվում զոհերի կամ տուժածների շարքում: Նրանք այլևս չեն մտածում նկարահանումների մասին, միայն թե տուն վերադառնան: Այդպես է եղել, օրինակ, ուկրաինական «Ինտեր» հեռուստաալիքի լրագրող Ռուսլան Յարմոլյուկի դեպքում. «Առանց զրահաբաճկոնի և սաղավարտների պառկած ենք հատակին: Գլուխներս հնարավոր չէ բարձրացնել: Ամենուր փամփուշտներ ու բեկորներ են: Թրթուրների աղմուկը մոտենում է: Վրացական զրահամեքենան մտավ զորամաս: Ուղիղ նշանառությամբ խփում է շենքերին: Կողքիս պառկած են ևս երեք լրագրող ու օպերատորը: Բոլորը առանց պայմանավորվելու միացրել են հեռախոսները և ուղարկել մեկական հաղորդագրություն: Ես գրեցի կնոջս. «Վալյա, կդաստիարակես մեր դստերը»: Ու նորից՝ գետնին: Այդ գնդակոծությունը ես երբեք չեմ մոռանա, ինձ թվում է, ռուսաստանցի գործընկերներս նույնպես»[130]:

Ինչպե՞ս հաղթահարել այս ամենը: Առաջինը, միշտ պետք է հիշել, որ լրագրողը պատահական մարդ չէ պատերազմում, նա ունի իր դերը, որը պետք է խաղա: Քանի դեռ դու պատերազմում ես, դու չես մտածում, որ քո հյուրանոցային համարը շատ անհարմար է, որ չկա տաք ջուր, նորմալ սնունդ և վերջանում է ծխախոտոյ: Ավելի շուտ դու կմտածես, որ վերջանում է ժապավենը և տեսախցիկի մարտկոցների լիցքավորումը: Քո բոլոր մտքերն ուղղված են նյութի պատրաստմանը, ինչն իր հերթին օգնում է դիմադրել սթրեսին: Պատմելով հեռուստադիտողներին իրադարձության մասին, դու ինքդ հերթական անգամ վերապրում և, հետևաբար, գիտակցում ես տեղի ունեցածը: Դու ինչ-որ առումով բարձրանում ես զոհերից, պատերազմի վշտերից ու սարսափներից: Հենց դրանում է կայանում լրագրողի աշխատանքի առավելությունը: «Թեժ կետերից» լրագրողի օբյեկտիվ և հավասարակշռված ռեպորտաժները լավ գրավական են դառնում, որ նա կկարողանա հաղթահարել հոգեբանական գերլարվածությունը[130]:

Մյուս կողմից, գիտակցելով, որ սեփական խոսքով դու կարող ես օգնել մարդկանց, նրանց հույս ներշնչել, ստիպել քաղաքական գործիչներին գործել այլ մեթոդներով, քեզ վստահեցնում է, որ քո գործողությունները բարի նպատակներ ունեն: Չի կարելի մարդուն մենակ թողնել, այլապես նա սկսում է փորփրել սեփական մտքերը, հիշողությունները և պարփակվում է իր մեջ: Պետք է հնարավորություն տալ զգացմունքների ելքին: Աշխատելով խմբի հետ, կարելի է պրոֆիլակտիկ նպատակով վիճել գործընկերների հետ, բաց թողնել գոլորշին, հետո խոսել ավելի հանգիստ, նույնիսկ, մի քիչ հոխորտալ, թե ինչքան դժվար է քեզ համար: Իսկ հետո նոր ուժերով ճանապարհվել առաջնագիծ:

Այժմ անդրադառնանք նաև հանրահավաքներ լուսաբանող լրագրողների աշխատանքի որոշակի առանձնահատկություններին: Դրանք պայմանավորված են ամբոխի մեջ անձի վարքագծի յուրահատկություններով: Արտակարգ իրավիճակներում, բնածին և արհեստածին աղետների գոտում աշխատող, հանրահավաքներ լուսաբանող լրագրողները պետք է քաջատեղյակ լինեն ամբոխի՝ որպես սոցիալական խմբի մասին, հաշվի առնեն նրա առանձնահատկությունները:

Սոցիալական հոգեբանության մեջ ընդունված է բնութագրել ամբոխը որպես յուրահատուկ կենսաբանական օրգանիզմ, որը գործում է իրեն բնորոշ օրինաչափություններով և միշտ չէ, որ դրանք համընկնում են այն կազմող անձաց, անհատների շահերին: Ավելին, այդ օրինաչափություններն ու դրսևորումները շատ հաճախ վտանգում են նաև անձի կյանքը:

Ամբոխին բնորոշ հոգեբանական հատկություններն են

- Գիտակցական գործոնի անկում ու հուզականի աճը, խուճապի արագընթաց աճ:
- Ներշնչվողականության կտրուկ աճ և ինքնուրույն մտածելու ունակության նվազում:
- Բազմությունը ընդունակ է ինչպես սարսափելի դաժանության, այնպես էլ ինքնազոհության, այդ թվում նաև անմիջապես առաջնորդի նկատմամբ:
- Բազմությունը, հասնելով որևէ բանի, շատ արագ հոգնում է: Խմբերի բաժանված մարդիկ արագ ուշքի են գալիս և փոխում են և վարքագիծը և տեղի ունեցածի գնահատականը:
- Փողոցային (հատկապես՝ սոցիալ-քաղաքական) ամբոխի պայմաններում, անչափ մեծ տեղ են զբաղեցնում այնպիսի գործողություններ, երևույթներ, ինպիսիք են, ցուցափեղկին նետված առաջին քարն ու առաջին թափված արյունը: Այսպիսի քայլերի արդյունքում, ամբոխը հանդես է գալիս վտանգի արմատապես այլ աստիճանում, որտեղ բազմության յուրաքանչյուր անդամ, հավաքական անպատասխանատվության ներքո, վերածվում է պոտենցիալ իրավախախտի: Այստեղ դրսևորվում է պատասխանատվության «դիֆուզիա», հոգեբանական վարակ: Անձը կորցնում է կարծես իր դեմքը, գործում է ինչպես մյուսները: Հարկավոր է անմիջապես լքել նմանատիպ բազմությունը, չփորձել նկարահանումներ կատարել, հարցազրույցներ վերցնել, մեջքով շրջվել դեպի ամբոխը:
- Ամբոխին անհրաժեշտ է առաջնորդ կամ ատելության առարկա, որոնց նա հաճույքով կհնազանդվի կամ կահաբեկի:

- Շատ հաճախ, ամբոխն ավելի վտանգավոր բնույթ է ստանում, քան որոշ բնական աղետներ, վթարներ: Հանրահավաքների ժամանակ մարդկանց մեծ բազմությունը, որպես կանոն, կապված է լինում սոցիալապես նշանակալից իրադարձության հետ, նրանք ունեն ընդհանուր նպատակ, նմանատիպ հույզեր: Հանրահավաքների լուսաբանումը լրագրողների, ՋԼՄ-ների համար կարևոր են, քանի որ դրանք երկրի, պետության, ժողովրդի հասարակական, քաղաքական կյանքում կարևոր իրադարձությունների, խնդիրների շուրջ են կազմակերպվում: Հանրահավաքները լուսաբանող լրագրողները պետք է ոչ միայն իմանան ամբոխի բնութագիրը, այլ նաև ամբոխի գոյության պայմաններում հնարավոր սոցիալ-հոգեբանական երևույթները, օրինակ՝ խուճապը, այդ իրավիճակում աշխատանքը շարունակելու, մասնագիտական պարտականությունները կատարելու, միևնույն ժամանակ, իր անձի անվտանգությունը ապահովելու կանոնները, վարքի ձևերը: Ամբոխի խուճապահար փախուստը նմանվում է տարերային աղետի, ավերում է իր ճանապարհին ամեն ինչ, ոտնակոխ է անում: Ուստի լրագրողներին անհրաժեշտ է գնահատել և ընտրել՝ ռեպորտաժը, թե՛ կյանքը: Իհարկե, դա փիլիսոփայական հարցադրում չէ, այլ իրական մտավախություն, քանի որ ռեպորտաժը վարելու ժամանակ լրագրողը կենտրոնանում է հաղորդման նյութի վրա և կարող է չընկալել մոտեցող վտանգը, հայտնվել ամբոխի կենտրոնում: Սակայն գիտակցելով այդ վտանգը՝ միևնույնն է, պետք է կատարել մասնագիտական աշխատանքը, պարտականությունները:

Խուճապի դեպքում ամբոխին բնորոշ հատկանիշներն են.

ա. Խուճապի դեպքում փախուստը մշտապես նպատակ ունի հեռացնելու անձին իրական վտանգից, ապահովելու նրա անվտանգությունը:

բ. Խուճապի պայմաններում փախուստի ուղղությունը պատահական չի լինում, մարդիկ հակված են ընտրելու կա՛մ արդեն ծանոթ ճանապարհ, կա՛մ այն ուղղությունը, որով փախչում են մյուսները: Այստեղ ևս գործում է հոգեբանական վարակի երևույթը:

գ.Խուճապի դեպքում դրսևորվող փախուստը վտանգում է յուրաքանչյուր անհատի, քանի որ միմյանց համար նրանք վերածվում են վտանգի աղբյուրի:

դ.Խուճապի մատնված մարդը միշտ համոզված է, որ իրադրությունը չափազանց վտանգավոր է, կարող է իրեն փրկելու, պաշտպանելու համար կատարել ամենատարբեր գործողություններ, հանցագործություններ, նույնիսկ վնասել այլ մարդկանց: Դա կարող է տևել այնքան, մինչև որ անձը համոզվի, որ վտանգավոր իրավիճակից դուրս է եկել:

ե.Խուճապի դեպքում մարդը դժվարությամբ է կողմնորոշվում, թեև նրա գիտակցական վերահսկողությունը թույլ է, թեև նրա գործողություններում որոշակի տրամաբանություն լինում է: Անձն այս դեպքում չի փնտրում այլընտրանքային լուծումներ, չի կանխատեսում իր որոշման, գործողությունների հնարավոր հետևանքները, իրադրությունը չափազանց վտանգավոր գնահատելով՝ թեև ոչ ադեկվատ, կարող է դիմել չարդարացված ռիսկի՝ ավելի վտանգելով իրեն:

Այժմ ներկայացնենք խորհուրդներ ամբոխի մեջ աշխատող լրագրողներին [27]

- Նախ, կարևոր է լուսաբանելիս նախապես ուսումնասիրել իրավիճակը, տարածքը, կանխատեսել հնարավոր զարգացումները և որոշել, թե որտեղից է ճիշտ, անվտանգ հաղորդում վարելը, նկարահանումներ կատարելը: Կարևոր է դա անել նախքան խմբային հուզական վիճակի լարումը, թեժացումը: Իսկ այդ դեպքում ընդհանրապես չպետք է փորձել մտնել թեժացած ամբոխի մեջ, պետք է մնալ եզրերում,
- նպատակահարմար է տեսանկարահանել ոչ թե ամբոխի ներսում, այլ նրանից դուրս, որևէ բարձունքի վրայից, հետևել, որպեսզի չլինի մարտկոցների անտեղի վատնում,
- նույնիսկ ամբոխի կազմում հայտնվելու դեպքում չպետք է կորցնել վերահսկողությունը, պետք է նայել չորս կողմը, գնահատել իրավիճակը, ընտրել ամբոխից դուրս գալու ամենաանվտանգ ուղին,
- նշված կանոններին հետևելը ավելի է դժվարանում հեռուստալրագրողների, տեսախցիկներով տեսանկարահանող օպերատորների աշխատանքի դեպքում: Այս դեպքում պետք է հաշվի առնել ոչ միայն նախատեսվող նյութի



անհրաժեշտությունն ու կարևորությունը, այլ նաև սեփական անձի անվտանգությունը: Նախապես պետք է պլանավորել ոչ միայն իր փախուստի ուղիները, այլև տեղ նախատեսել, ուր հնարավոր լինի տեղափոխել նաև տեսախցիկը, եռոտանի ձողերը, այսինքն՝ անվնաս դուրս բերել ռեպորտաժի պատրաստման համար օգտագործվող տեխնիկան,

- խուճապի առաջացման ընթացքում պետք է պահպանել հանգստությունն ու իրավիճակը սթափ գնահատելու ունակությունը, չենթարկվել հոգեբանական վարակին, մեխանիկորեն չկրկնել շրջապատող մարդկանց վտանգավոր արարքները,
- փորձել իրավիճակին տալ իմացական գնահատական, հույզերն ու զգացմունքները չդարձնել որպես շարժիչ ուժ, գիտակցել, որ ամբոխում ընդգրկված մարդկանց հիմնական մասն առաջնորդվում է հույզերով, ինչը հանգեցրել է այդ իրավիճակին,
- արտակարգ իրավիճակներում, ռազմական գործողությունների շրջանում աշխատող լրագրողները պետք է իմանան հոգեբանական վարակի, ամբոխի կազմում հույզերի դրսևորման մեխանիզմները, որպեսզի չտրվեն հնչող կոչերին, չմիանան ամբոխի գործողություններին, կարողանան վերահսկել իրենց,
- խորհուրդ է տրվում նաև չհակառակվել, հատկապես խոսքային արտահայտությամբ չներկայացնել սեփական կարծիքը, մտորումները, քանի որ ամբոխի գործողությունները կարող են ուղղվել հենց իրենց,
- կարևոր է ամբոխի մեջ որպես լրագրող տարբերվելը, ինչ-որ ձևով ընդգծել, որ լրագրող ես: Դա չի նշանակում միայն ունենալ բեջ, որտեղ գրված կլինի այդ մասին, այլ նաև հատուկ, տարբերվող հագուստ, ինչը գունային առումով անմիջապես աչքի է ընկնում: Ինչպես յուրաքանչյուր մարդ ամբոխի կազմում, այնպես էլ լրագրողը երաշխավորված չէ բռնությունների, ֆիզիկական ներգործության ենթարկվելու հավանականությունից: Օրինակ՝ կարող են դառնալ ինչպես ամբոխի կողմից կիրառվող վայրագությունների զոհ, այնպես էլ ոստիկանության գործողությունների: Վերոնշյալ հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է գոնե երկացող մի տեղ փակցնել PRESS գրառումը,

- լրագրողը կարող է դառնալ ոչ միայն ամբոխի, այլ հենց ոստիկանության գործողությունների զոհ, եթե սխալ ընտրի իր տեղը, դիրքը ամբոխի մեջ, եթե չտարբերվի նրանից: Պետք է նախապես ուսումնասիրել նաև ոստիկանության, հատուկ ստորաբաժանումների գործողությունների հնարավոր ուղղությունները, կանխատեսել նրանց մարտավարությունը,
- լրագրողները չպետք է շփոթեն իրենց պարտականությունները, մասնագիտական դերը, կարգավիճակը: Պետք է գիտակցեն, որ իրենք պրոֆեսիոնալ աշխատանք են կատարում, այլ ոչ թե որպես քաղաքացի են մասնակցում հանրահավաքին,
- լրագրողները նման իրավիճակներում պետք է օգտագործեն օբյեկտիվ հինքնադիտման մեթոդը, այսինքն՝ դիտեն իրենց վարքը ինչպես այդ կանեին ուրիշները, կարծես կողքից, գնահատեն այն, վերլուծեն, արդյոք հուզականությունը չէ այդ վարքագծի պատճառը: Առավել ևս, չպետք է թույլ տալ, որ հույզերը բերեն հիստերիայի,
- ամեն կերպ պետք է փորձել չտրվել հույզերին, տիրապետել մարմնին, մտքերին, փորձել շնչառական վարժություններով հանգստանալ, շեղել ուշադրությունը ամբոխից, արտաբերվող կոչերից: Փորձեք զրուցել ինքներդ ձեզ հետ, հարցեր տվեք ձեզ, սառը ջրով երեսը թրջեք,
- կարելի է դերային խաղերի մեթոդով փորձել դուրս գալ ամբոխից, օրինակ, ձևացնել, թե ուշագնաց եք լինում, սրտխառնոց, ճնշման տատանում, բարձրացում ունեք,
- կարևոր է նաև ձեռքի տակ եղած տեխնիկական միջոցների անվտանգ դուրսբերումը, իսկ եթե դա չի ստացվում, բնականաբար, կարևորը սեփական անձի անվտանգությունն է,
- եթե ձեզ հետ կան հարազատ մարդիկ, առավել ևս պետք է պահպանել հավասարակշռվածություն, տիրապետել սեփական գիտակցությանը, որպեսզի օգնել նաև նրանց, դուրս բերել նրանց ամբոխի միջից, թույլ չտալ, որպեսզի նրանք ևս տրվեն հոգեբանական վարակին, ընկնեն ամբոխի ազդեցության տակ,

- կարևոր և օգտակար կլինի ամբոխի մեջ նկատել մարդկանց, ովքեր ձեզ նման են մտածում, դեռ չեն տրվել հիստերիային, տագնապային տրամադրությանը և կարող են սթափվել ձեր կոչից: Հակառակ դեպքում գիտակցական վերահսկողություն ունեցող այդ մարդիկ ևս կարող են տրվել ամբոխի հուզականության ալիքին, կորցնեն իրենց վարքի վերահսկողությունը,
- պետք է գիտակցել, որ բնական և տեխնաժին աղետները երբեմն ավելի քիչ զոհերի, տուժողների պատճառ է դառնում, քան դրանց հետևանքով առաջացած խուճապը, հուզական հակազդումների արդյունքում դրսևորվող վարքագիծը, խառնաշփոթը, միմյանց հրելը, վնասելը, խելակորույս այս կամ այն կողմ վազելը, փախչելը:

Նման իրավիճակներից խուսափելու համար լրագրողներին խորհուրդ է տրվում հետևել մի շարք կանոնների [27]

- շատ կարևոր է նույնիսկ մեծ հետաքրքրասիրության դեպքում չկանգնել, չմոտենալ տարբեր վտանգավոր իրադարձությունների կետերին,
- անհրաժեշտ է խուսափել խմբերով հավաքվելուց, չկուտակվել մի վայրում,
- անհրաժեշտ է անմիջապես դուրս գալ ամբոխի միջից, գտնել անվտանգ մի տեղ, թեև չպետք է հակառակ հոսանքին փախչել, հնարավոր է հանդիպեք ագրեսիվ դրսևորումների, բռնությունների, առավել ևս, չի կարելի հակառակվել շարժմանը,
- խորհուրդ չի տրվում նաև ձեռք տալ, վերցնել անձանոթ, կասկածելի առարկաներ,
- խորհուրդ է տրվում ընտրողական վարք դրսևորել՝ կախված ամբոխի ձևից, նրանում ընդգրկված անձանց թվաքանակից: Պետք է հաշվի առնել, որ դեկորատիվ ճաղավանդակները, ջրատար խողովակները, ցուցանակները, առանձին կանգնած լուսամփոփների սյուները, կրպակները, ծառերը, վանդակապատերը կարող են կոնկրետ իրավիճակում մահացու վտանգավոր լինել,
- նման իրավիճակներում աշխատող լրագրողներին անհրաժեշտ են այնպիսի որակներ, ինչպիսիք են դիտողունակությունը, զարգացած ուշադրությունը,

ընտրողականությունը, ինչը կօգնի նրանց տեսնել, նկատել շրջապատում ամեն ինչ, գնահատել հնարավոր վտանգները: Օրինակ՝ չի կարելի մոտենալ այն մարդկանց, ովքեր ձեռքներին ունեն մեծ պայուսակներ, ուսապարկեր, կասկածելիորեն այս ու այն կողմ են գնում,

- լրագրողներին անհրաժեշտ է նաև հետևել իրենց արտաքին ֆիզիկական տեսքին, կառուցվածքին, չպետք է հենվեն ոտքերի մատների վրա, ձգվեն, կանգնած կամ քայլելիս ձեռքերը գրպանները չպետք է դնեն,
- պետք է հնարավորություն ստեղծել ամբոխից դուրս գալու, փախչելու, փրկվելու համար: Այստեղ հնարավորություն ասելով հասկանում ենք, որ անհրաժեշտ է ազատվել մեծ իրերից, ուսապարկերից, կանանց՝ բարձր կրունկներով կոշիկներից, շարՖերից, երկար ականջօղերից, վզնոցներից: Անհրաժեշտ է նաև հանել տեսախցիկների կամ լուսանկարչական սարքերի վրա ամրացված գոտիները կամ դրանք փաթաթել ձեռքին, մարմնի վրա,
- խորհուրդ է տրվում ոչ մի դեպքում չկքանստել, փորձել ընկած ինչ-որ բան գետնից վերցնել, այլապես հրմշտոցի արդյունքում հնարավոր է վայր ընկնել, վնասվել,
- ընկնելու դեպքում չպետք է հենվել ձեռքերի վրա, անմիջապես պետք է ոտքի կանգնել: Չստացվելու դեպքում պետք է պաշտպանել գլուխը նախաբազուկներով, իսկ ձեռքերի ափերով փակել ծոծրակը, կծկվել, փորձել հնարավորինս քիչ հարվածներ ընդունել:

Բնական և տեխնաժին արտակարգ իրավիճակներ կարող են առաջանալ հանկարծակի, անսպասելի, այնպիսի վայրում, որտեղ ընդհանրապես մարդն այդ մասին չի մտածում՝ հանդիսությունների, հանգստի, աշխատանքի վայրում: Իսկ լրագրողի համար այս բոլոր վայրերը, պայմանները կարող են դառնալ աշխատավայր, նույնիսկ արտակարգ պատահարի, իրավիճակի պայմանները: Նման դեպքերում լինում են պայթյուններ, փլուզումներ, ավերածություններ, ուժեղ ձայներ, անձի կամ խմբի կողմից ագրեսիվ գործողություններ, բռնություններ, կրակոցներ, վտանգ ենթադրող կոչեր և այլն, անձն արգելակվում է, չի կողմնորոշվում ինչ անել, սկսում է այս կամ այն կողմ փախչել, հատկապես խմբի

հետևից՝ հրելով, նույնիսկ վնասելով դիմացիներին: Այս իրավիճակում սեփական վարքի գիտակցական վերահսկողության մակարդակը թուլանում է:

Լրագրողներին խորհուրդ է տրվում[27].

- ցանկացած փակ տարածք մտնելիս դիտարկել, թե ինչպես կարելի է այդտեղից դուրս գալ, նույնիսկ պետք է նախատեսել մի քանի տարբերակներ: Հոգեբանական այսպիսի օրինաչափություն կա. վտանգի դեպքում մարդկանց մեծ մասը փորձում է փախչել ներս եկած ճանապարհով: Այս պարագայում խառնաշփոթ, քաշքշուկ է ստեղծվում, մարդիկ հրմշտոցով գնում են դեպի ընդհանուր ելքը, իսկ վթարային ելքերը բավականին ազատ են մնում: Այդ ելքերն անհրաժեշտ է նախապես ուսումնասիրել,
- հոգեբանական վարակի մեխանիզմը գործում է հատկապես փակ, խիտ տարածություններում առաջացող խուճապի ժամանակ: Դրա արդյունքում էլ ելքին մոտենալիս մարդկանց խմբում հրմշտոցն ավելի ագրեսիվ է դառնում, ճնշումը մեծանում է: Անհրաժեշտ է ելքի մոտ ավելի ուշադիր լինել,
- կարևոր է դիտողունակության որակի առկայությունը, որպեսզի մինչև հրմշտոցի ու ամբոխի խուճապահար հոսքը արդեն իսկ կարողանաք լքել տարածքը,
- այստեղ տեղին է տեխնիկական մանրուք թվացող մեկ խորհուրդ ևս. ամբոխի առջևից փախչելու դեպքում անհրաժեշտ է բացել դռան երկրորդ փեղկը, քանի որ հրմշտոցի դեպքում դա կարող է այլևս հնարավոր չլինել,
- միայն հրդեհի դեպքում է, որ անհրաժեշտ է արագորեն դուրս գալ տարածքից, իսկ մնացած դեպքերում կարելի է սպասել մինչև մարդկանց հոժ բազմությունը դուրս գա, քանի որ դեպքերի մեծ մասում իրական վտանգը ավելի քիչ հավանական է, քան խուճապը,
- պետք է շատ զգույշ լինել նաև պատերի, դռների, պատուհանների վրա հնարավոր մեխերից, ամրակներից, կոտրված ապակիներից, բաց վարդակներից, հոսանքալարերից, որոնք կարող են վնասել մարդուն հրմշտոցի ժամանակ,

Խորհուրդ է տրվում քայլել մարդկանց ուսերի վրա կանգնելով, քանի որ այդտեղ ամենաանվտանգն է: Ճիշտ է, զուտ մարդասիրության, բարոյականության տեսանկյունից դա վատ է, բայց լրագրողի անվտանգության, նրա փրկվելու տեսանկյունից դա արդարացվում է: Նշված տարբերակը ենթադրում է ամբոխի մի մասից բարձրանալ թե կանգնած, թե սողալով անցնել մարդկանց շարքերով, հասնել ելքին: Նկարագրված երևույթը արդյունավետ կարող է գործել երեխաների պարագայում: Նշենք նաև, որ երեխաներին պետք է թույլ տալ մասնակցելու այդ գործարքներին: Ցածրահասակ լինելու պատճառով երեխային ամբոխի կազմում ընդգրկելը խիստ վտանգավոր է, քանի որ նա կարող է տրորվել ամբոխի կազմում, ինչը ևս ապացուցում է, որ երեխային անհրաժեշտ է պահել գլխավերևում: Պետք է խուսափել պատերից, ապակիներից, միջնապատերից, ցանցերից և այլն: Անգլիայի Շեֆֆիլդի մարզադաշտի ողբերգությունը ցույց տվեց, որ զոհվածների մեծ մասին ամբոխը ճզմել էր արգելակային ցանցերից[131]:

Ներկայացնենք ռազմական հակամարտության գոտում աշխատող լրագրողներին հնարավոր վտանգներից խուսափելու համար անհրաժեշտ խորհուրդներ[124]՝

1.Վտանգավոր է քայլել խոտերի և հողի վրայով, քանի որ հնարավոր է տեղանքը ականապատված լինի, խորհուրդ է տրվում քայլել ասֆալտով:

2.Ասֆալտ չլինելու դեպքում խորհուրդ է տրվում քայլել տանկի կամ այլ մեծ մեքենայի թողած անվահետքերով: Այստեղ կարևոր է ընդհատված, հողով քողարկված անվահետքերի վրայով չքայլել:

3.Խորհուրդ չի տրվում մուտք գործել այնպիսի շինություններ, որտեղ մարդ չկա, կասկածելի լուրջություն է:

4.Խորհուրդ չի տրվում ձեռք տալ անձանոթ իրերի, շրջել որևէ իր, բացել տուփեր, արկղեր:

5.Որևէ շենքի բնակարանի պատուհանից նկարահանելիս, լուսանկարելիս պետք է զգույշ լինել, պատուհաններից անընդհատ չնայել, կանգնել պատերի տակ կամ ավելի անվտանգ լինելու համար հեռու գտնվել պատուհաններից:

6.Երբեք չի կարելի տեսա և ֆոտոխցիկներին զուգահեռ զենք վերցնել, որովհետև զինված հակամարտության կողմերը կարող են անձին չընդունել որպես լրագրող:

7.Խորհուրդ է տրվում միայնակ չգործել ռազմական հակամարտության գոտում, աշխատել երկու կամ երեք հոգով, որպեսզի մեկը նկարահանի, մյուսը դիտի տեղանքը, շրջապատը, գնահատի հնարավոր ռիսկերը, մոտեցող վտանգները:

8.Լրագրողները պետք է իմանան, որ ռազմական հակամարտությունների գոտում հակամարտող կողմերի ներկայացուցիչները կարող են սպանել մարդկանց նույնիսկ անձնական շահից ելնելով, օրինակ՝ նրա տեսախցիկին, հագուստին, դրամական միջոցներին, զարդերին տիրանալու համար: Դրանից խուսափելու համար խորհուրդ է տրվում ուշադրություն չգրավելու համար չհագնել բոլորովին նոր, բարձրորակ հագուստ, կոշիկներ, չօգտագործել նոր սերնդի տեսախցիկ, ֆոտոխցիկ: Կարևոր է նաև, որ լրագրողը չկրի զարդեր, հատկապես՝ թանկարժեք:

9.Խորհուրդ է տրվում մուտք ընկնելիս անպայման մտածել օթևանի մասին, չգիշերել դրսում, անպայման գտնվել զինվորականների, ոստիկանների կողմից վերահսկվող տարածքներում, շրջել տեղանքը լավ իմացող ուղեկցողի հետ, լսել ուժային կառույցների ներկայացուցիչների հրահանգները:

10.Զինված հակամարտությունների գոտում աշխատող լրագրողները կարող են ձեռք բերել հակամարտող կողմերի, նրանցից մեկի զինուժի, սպառազինության քանակի, տեսակի, նախատեսվող մարտական գործողությունների ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն և՛ իրականությանը համապատասխանող, և՛ ոչ: Ուստի խորհուրդ է տրվում չհետաքրքրվել, առավել ևս չտարածել նմանատիպ տեղեկատվություն: Քանի որ լրագրողների կողմից լուսաբանվող ցանկացած հանրային միջոցառում, հատկապես բողոքի զանգվածային ակցիա (հանրահավաք, երթ, ցույց) հանդիսանում է ծայրահեղ վտանգավոր գոտի, հատկապես կարևոր է, որ լրագրողը հիշի իր մասնագիտական իրավունքների և պարտականությունների մասին: Դա ոչ միայն կնվազեցնի մասնագիտական ռիսկերը և կօգնի լրագրողին կողմնորոշվել բարդ իրադրություններում, այլև կօգնի խուսափել իր հանդեպ ցուցաբերվող ագրեսիայից և բռնությունից:

Առաջարկ- խորհուրդներ լրագրողներին.

1. «Լրագրողը իրավունք ունի այցելելու զանգվածային անկարգությունների և քաղաքացիների զանգվածային կուտակումների հատուկ պաշտպանվող տարածքներ» (հ. 47, մաս 1, կ.7, «ԶԼՄ մասին» ՌԴ Օրենքի): ՀՀ օրենքում էլկա համանման կետ, բայց նույնաբովանդակ փոփոխություն դեռ 2009 թվականին խորհրդարանականներն առաջարկել էին, որը սակայն չընդունվեց [122]:

2. Հանրահավաքի այցելության և այն մամուլում լուսաբանման համար ոչ մի հավատարմագիր կամ նախապես համաձայնեցնում տեղական ինքնակառավարման և իշխանության մարմինների, ոստիկանության կամ կազմակերպիչների հետ չի պահանջվում:

3. Լրագրողը իրավունք ունի «գրառումներ անել, այդ թվում և ձայնա-տեսա սարքավորումների և կինո-ֆոտոնկարահանումների միջոցով» (հ. 47, մաս 1, կ.6 ՌԴ «ԶԼՄ մասին» Օրենքի)[132]:

4. Լրագրողը իրավունք ունի լուսանկարելու և նկարահանելու հանրահավաքի մասնակիցներին, ոստիկանության այն աշխատակիցներին, որոնք իրականացնում են հասարակական կարգի պաշտպանությունը: Լուսա և տեսանկարահանման բուն գործընթացը մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտում չէ, ոչ էլ գաղտնիության կամ պատկերելու իրավունքի խախտում, ոչ էլ պատկերված մարդու անձնական տվյալների հրապարակում: Հնարավոր խախտում կարող է հանդիսանալ քաղաքացու կերպարը առանց իր համաձայնության տարածելը, եթե խոսքը գնում է խոշոր պլանի (դիմանկարի) մասին[123] [133]:

Նման համաձայնությունը չի պահանջվում, եթե.

ա) պատկերի օգտագործումը իրականացվում է պետական, հասարակական կամ այլ հանրային շահերի համար

բ) քաղաքացու պատկերը ստացված է այն նկարահանումների ժամանակ, որոնք անց են կացվել ազատ այցելության համար բաց վայրերում կամ հասարակական միջոցառումներում (ժողովներում, սպորտային մրցումներում և նման միջոցառումներում):



5. Քաղաքացու պահանջով լրագրողը պետք է դադարեցնի մասնավոր անձի նկարահանումը, հակամարտության թեժացումից և ագրեսիայի դրսևորումից խուսափելու համար, ինչը կարող է ի վերջո բերել համապատասխան միջոցների օգտագործմանը ինչպես հանրահավաքի մասնակցի հանդեպ, այնպես էլ լրագրողի:

6. Հիմնվելով այն բանի վրա, որ խմբագրության վկայական ունեցող և խմբագրության առաջադրանքները կատարող լրագրողները լիարժեք իրավունք ունեն լուսաբանելու զանգվածային միջոցառումները անկախ նրանից, թե դրանք «համաձայնեցված են», թե ոչ իշխանության լիազոր մարմինների հետ, լրագրողի մասնագիտական պարտքը կատարելուն խոչընդոտելը հանդիսանում է խախտում:

7. Լրագրողը ի սկզբանե պետք է որոշի, թե ինչ կարգավիճակով է գնում հանրահավաքի՝ որպես քաղաքացի՝, թե՞ որպես լրագրող՝ այն լուսաբանելու: Սա կարևոր է, քանի որ այն, ինչ կարելի է լրագրողին, ոչ միշտ է կարելի մասնակցին: (Օրինակ, լրագրողը իրավունք ունի լուսաբանելու իշխանությունների կողմից չարտոնված հանրահավաքը և նրա մասնակիցների գործողությունները, որոնք դուրս են գալիս զանգվածային միջոցառման արտոնված ձևաչափի շրջանակներից):

8. Զանգվածային ակցիայի կատարման վայրում աշխատող լրագրողը ցանկալի է, որ ունենա PRESS տարբերանշանը, լինի դա բաճկոնի վրա, կամ բեյջի, ինչը ավելի լավ կնշի նրա նույնականացումը և կարգավիճակը: Այն հարցը, թե անձի նույնականացումը կօգնի, թե՞ ոչ, խմբագրության հանձնարարությունը կատարելուն , լրագրողը կարող է որոշել ինքնուրույն:

9. Լրագրողը պարտավոր է «մասնագիտական գործունեությունը իրականացնելու ժամանակ առաջին իսկ պահանջի դեպքում ներկայացնել խմբագրական վկայականը, կամ լրագրողի անձը և լիազորությունները հաստատող այլ փաստաթուղթ»[122]: Անձը հաստատող փաստաթուղթ է հանդիսանում անձնագիրը (ավելի լավ է ունենալ դրա վավերացված պատճենը, ինչը արգելված չէ և համապատասխանում է անձնագրում նշված պարտավորությանը): Լրագրողի ձեռքին խմբագրության վկայականի բացակայության դեպքում, պետք է լինի խմբագրի ստորագրությամբ, ԶԼՄ խմբագրության կնիքով գրավոր խմբագրական հանձնարարությունը՝ լրագրողի լիազորությունները հավաստելու համար:

10. Ինչպես լրագրողին, այնպես էլ մասնակիցներին հրապարակային միջոցառումների անցկացման ժամանակ իրավապահ մարմինների հետ բախումներից խուսափելու համար հարկավոր է «պահպանել հասարակական կարգը և հրապարակային միջոցառման անցկացման կանոնակարգը»: (հ.6, մաս 3, կ.2 «Ժողովների, հանրահավաքների, ցույցերի, երթերի և պիկետների մասին» ՌԴ ԴՕ):

Արտակարգ իրավիճակներում լրագրողի աշխատանքն ունի որոշակի առանձնահատկություններ: Սկզբունքորեն, արտակարգ իրադրության մեջ աշխատող լրագրողների առջև դրված խնդիրները շատ քիչ են տարբերվում սովորական խմբագրական առաջադրանքներից: Դա թերթի կամ ամսագրի սյունակում հրապարակելու համար տեղեկատվության հավաքագրումն ու պատրաստումն է, փոխանցումը հեռուստատեղի: Սակայն, ինքը՝ ռազմական գործողությունների, տարերային կամ տեխնաժին աղետի, լրագրողի կյանքի և առողջության համար վտանգի առկայության իրավիճակը աշխատանքի համար բոլորովին այլ ֆոն է ստեղծում: Ֆոն, որը բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով:

Թվարկենք դրանցից մի քանիսը.

Առաջին: Արտակարգ իրավիճակի ռեժիմի հետ կապված զգալիորեն դժվարանում է անհրաժեշտ տեղեկություն ստանալու հնարավորությունը: Հակամարտող կողմերից և ոչ մեկը շահագոգոված չէ, որպեսզի ՁԼՄ-ներն օբյեկտիվ տեղեկություն ստանան հակամարտության պատճառների, բնույթի և նպատակների մասին: Եթե խոսքը վերաբերում է տարերային կամ տեխնաժին աղետին, ապա իշխանությունները սովորաբար ձգտում են նվազեցնել տեղի ունեցածի մասշտաբները, որեսզի նվազեցնեն իրենց ենթադրվող պատասխանատվությունը, խմբային հուզումները: Հատկանշական է այդ առումով Չեչնիայի Հանրապետությունում «սահմանադրական կարգի վերականգնման» անվան տակ մամուլում հայտնված օպերացիայի ժամանակ ստեղծված իրավիճակը: Պետական իշխանությունը ներկայացնող աղբյուրներից ստացվող տեղեկությունները նույնքան չէին համապատասխանում իրականությանը, որքան չեչենական

անջատողականների ներկայացրածը: Կատաղի մարտերն այնքան էին դժվարացրել լրագրողների աշխատանքը, որ նրանք ստիպված էին նյութի պատրաստման ժամանակ բավարարվել պատուհանից կամ խրամատից երևացող պատկերներով, մասնիկներով հավաքել նյութերը, հիմնվելով ականատեսների պատմածի, խոսակցությունների, պտտվող լուրերի, տեսածի մասին անձնական տպավորությունների վրա[124]:

Ահա թե ինչ է գրում այդ կապակցությամբ իր «Միայնակ գայլի ցատկը» գրքում Հյուսիսային Կովկասում «Կռասնայա զվեզդա» թերթի թղթակից Նիկոլայ Աստաշկինը. «1994 թ. դեկտեմբեր: Մոզդոկ: Չեչնիայում թեժ պատերազմ է ընթանում: Սակայն այն, ինչ տեղի է ունեցել այն ժամանակ զորքերի մեջ, լրագրողների համար մնացել է որպես յոթ կողպեքի հետևում գաղտնիք: Մենք անգործության էինք մատնված Մոզդոկում՝ բավարարվելով հիմնականում ապատեղեկատվությամբ և ինչ որ Աստված ուղարկի: Տարբեր աղբյուրներից մեզ լուրեր էին հասնում, որ զորքերը մեծ կորուստներ են կրում, զոհվածներին ու վիրավորներին ինքնաթիռներով և ուղղաթիռներով տեղափոխում են Վլադիկովկաս, Դոնի Ռոստով, այլ քաղաքներ, որտեղ տեղակայված են զինվորական հոսպիտալներ: Իսկ Ռուսաստանի Պաշտպանության նախարարության մամլո քարտուղար Ագապովան ժպտալով պատասխանում էր. «Ոչ, ոչ, ամեն ինչ նորմալ է»:

Երկրորդ: Ստացվող տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանության խնդիրը, կանխամտածված ապատեղեկատվության տարածող դառնալու վտանգը, որոնք հաճախ տրամադրվում են լրագրողներին հակառակորդին ապակողմնորոշելու նպատակով: Արտասահմանյան լուրջ լրատվամիջոցներում ընդունված է տեղեկատվությունը ստուգել առնվազն երկու աղբյուրների միջոցով: Վերջին ժամանակներում սեփական երկրի լրատվամիջոցները նույնպես նման մոտեցում են պահանջում: Գոյություն ունեն տեղեկատվության ստուգման բազմաթիվ մեթոդներ, և որոշակի համառության դեպքում, կարելի է ստուգել լրագրողին հաղորդած ցանկացած փաստ: Ինչպե՞ս պետք է գործի ռազմական թղթակիցը, որի ձեռքի տակ է հայտնվել ինչ-որ սենսացիոն հաղորդագրություն: Առաջին հերթին անհրաժեշտ է համեմատել

տեղեկատվությունը առկա փաստաթղթերի հետ, որոնք կարող են լույս սփռել իրավիճակի վրա: Դա կարող է լինել ցանկացած անձը հաստատող վկայական, պաշտոնական ծանուցումը, քարտեզ: Կարևոր ապացույց կարող է հանդիսանալ շահագրգռված ականատեսի վկայությունը: Եթե ժամանակը թույլ է տալիս, կարելի է դիմել արխիվային ծառայություններին: Անհրաժեշտ է սովորել համեմատել պաշտոնական տեղեկատվությունն ու այն, ինչը ներկայացնում են ոչ պաշտոնական աղբյուրները, որոնք, որպես կանոն, ունեն ինֆորմացիայի սեփական աղբյուրները և հաշվարկման մեթոդները: Հակառակ ընդունված կարծիքի, պետական կազմակերպությունների գնահատականներն ավելի ստույգ են լինում, չնայած, որ ռազմական պայմաններում ընդունված է ավելացնել հակառակորդի կորուստներն ու նվազեցնել սեփականները:

Երրորդ: Անհրաժեշտ է գնահատել սեփական հրապարակումների հնարավոր հետևանքները: «Մի վնասիր» սկզբունքը պետք է վերահսկի լրագրողի ցանկությունը՝ անհապաղ հաղորդել ընթերցողներին ու ունկնդիրներին լսածն ու տեսածը: Չափի զգացումը պետք է ներկա լինի նաև բռնության տեսարանների, ռազմական գործողությունների տարերային և տեխնաձին աղետների հետևանքների տեսարանների ցուցադրման ժամանակ: Այն առավել կարևոր է, երբ խոսվում է միջազգային և ազգամիջյան հակամարտությունների մասին, երբ եթեր թողարկված կամ թերթում հրապարակված ամեն անզգույշ բառը կարող է առաջացնել բռնությունների նոր ալիք[124]:

Ահա թե ինչ օրինակ է բերում իր տեղեկատվական տեղեկանքում «Էքստրեմալ լրագրության կենտրոնը»՝ պատմելով լրագրողների ոչ արհեստավարժ գործողությունների մասին, որոնք ներկայացնում էին «Նորդ Օստում» պատանդների իրավիճակը. «Բոլորովին ակնհայտ է, որ որոշ լրագրողներ, հեռուստահաղորդավարներ և խմբագիրներ չէին հասկանում իրավիճակի ամբողջ բարդությունն ու ուղիղ եթերի նշանակությունը «ահաբեկիչներ-պատանդներ» հարաբերություններում: Նրանց ձգտումը՝ ստանալ ցանկացած (իսկ ավելի լավ է՝ բացառիկ) տեղեկություն հաճախ գերակշռում էր ողջամտությանը: Հոկտեմբերի 24-ի գիշերը (մոտավորապես 00:40), HTB հեռուստաալիքի հաղորդավար Կիրիլ

Պոզդնյակովը ուղիղ եթերում հեռախոսով կապվել է պատանդ, «Նորդ Օստ» մյուզիքլի կոնցերտմայստեր Տատյանա Սոլնիշկինայի հետ: Հաղորդավարը խնդրել էր դաշնակահարուհուն հեռախոսը փոխանցել ահաբեկիչներից որևէ մեկին: Կինը փորձում էր բացատրել հաղորդավարին, որ ահաբեկիչների վարքագիծն անկանխատեսելի է, սակայն հաղորդավարը պնդել էր. «Դուք փորձեք, փոխանցեք»: Երբ որ ահաբեկիչը վերցրել է հեռախոսը և ասել. «Այո, ես ձեզ լսում եմ», հաղորդավարը հայտարարել է, որ կապը խափանվել է»[124]: Այդպիսի գործողությունները ոչ թե օգնում, այլ, ընդհակառակը, դժվարացնում են պատանդների ազատման խնդիրը: Ճիշտ է վարվում այն լրագրողը, որ խուսափում է այնպիսի ընդհանրացումներից, ինչպիսին, օրինակ, «բոլոր չեչնիացիները», «բանակը», «կորուստները հաշիվ չունեն», «Ոչ մեկին ոչինչ պետք չէ», «ամբողջ ոստիկանությունը կաշառք է վերցնում», «ոչ մեկ օգնության չհասավ» և այլն: Փարձառու լրագրողները գիտեն, որ հակամարտությունները մեծամասամբ ծագում են ազգամիջյան հողի վրա, սակայն ներսում ունեն ֆինանսատնտեսական բնույթ: Պետք է զերծ մնալ այն մարդկանց ուղղակի խոսքի փոխանցումից, ովքեր հակամարտության առաջացման մեղքը բարդում են ուրիշ ազգի, այլ կրոնի վրա, եթե նույնիսկ ինչ-որ պահի զգացմունքների ազդեցության տակ լրագրողին թվում է, որ դա ճիշտ է:

Չորրորդ: Լրագրողը պարտավոր է օբյեկտիվ մնալ, անկախ քաղաքական, կրոնական, հայրենասիրական և այլ համոզմունքներից, լինել անկողմնակալ և անաչառ: Յուրաքանչյուր մարդ այս կամ այն բարոյահոգեբանական վիճակի կրող է, և լրագրողներն այդ առումով բացառություն չեն: Սակայն կողմնակալությունը կարող է նախապես ոչ օբյեկտիվության պատճառ դառնալ: Լրագրողի շահերից բխող իրականությունը համարժեք չի ընդունվի ընթերցողի կամ դիտորդի կողմից, ինչքան էլ նյութը պրոֆեսիոնալ պատրաստած լինի: Հատկապես, երբ խոսք է գնում մարդկային ողբերգության հետ կապված իրավիճակների մասին: Լրագրողի անազնվությունը, անբարեխղճությունը, կողմնակալությունը կարող են արտացոլվել նաև փաստերի մեկնաբանման դեպքում: Օրինակ, եթե նա առաջ է քաշում նախապես սուտ այլընտրանք, ասենք, «կամ Դուդանը ու Չեչնիայի անկախությունը,

կամ քաղաքացիական պատերազմ՝ ամբողջ Կովկասում»: Կամ ոչ կոռեկտ ընդհանրություններ անցկացնելու դեպքում, օրինակ՝ «ռուսները կովում են կովկասցիների հետ»: Ցանկացած դեպքում, դա բացառապես անթույլատրելի է:

Հինգերորդ: Լրագրողը պետք է կարողանա աշխատել առավելագույն արագությամբ՝ որոշումներ ընդունելով և կարճ ժամանակահատվածում ստացվող տեղեկատվությունը մշակելով, օգտագործելով լրագրողական ժանրերի ամբողջական զինանոցը: Այդ ունակությունն իր մեջ ներառում է գլխավոր, առաջնային փաստերը ընտրելու հմտությունը, նրանց ճշգրիտ ու զգացմունքային հագեցած մեկնաբանումը, խնդիրների ձևակերպումն ու դրանց լուծման ուղիների պատկերացումը: Արտակարգ ռեպորտաժ, առաջնագծային ակնարկ, դաշտային հոսպիտալում արված գծագրում, երկրաշարժից տուժածների փրկություն՝ այս ամենը շատ արժեքավոր է թերթի ու հեռուստաալիքի համար, այդ իսկ պատճառով չի հանդուրժում նյութի պատրաստման և հրապարակման ուշացում:

Վեցերորդ: Լրագրողը պետք է համագործակցի ռազմական գործողությունների, տարերային և տեխնածին աղետների գոտում տեղակայված տեղեկատվական կենտրոնների, պետական և հասարակական կազմակերպությունների հետ: Շատ դեպքերում ռազմական գործողությունների, տարերային և տեխնածին աղետների գոտիներում կազմակերպվում են ժամանակավոր մամլո-կենտրոններ, որոնք կարող են օգնել լրագրողին՝ ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը, հարցազրույց վերցնել իրեն հետաքրքրող անձանցից: Այդպիսի կենտրոններ կան, օրինակ, Աբխազիայում, ռուսական զորքերի Խաղաղապահ խմբավորման կազմում միավորված կենտրոն էր գործում Չեչնիայի Հանրապետությունում հակահարբեկչական օպերացիայի ժամանակ, մամլո-կենտրոններ են գործում Մերձդնեստրում ռուսական զորքերի Խաղաղապահ խմբում, Տաջիկստանում՝ Խաղաղության պահպանման կոլեկտիվ ուժերի կազմում: Ժամանակավոր մամլո-կենտրոններ էին կազմակերպվել Ինդոնեզիայում, Նոր Օռլեանում (ԱՄՆ), Սպիտակում (Հայաստան) տարերային աղետների հետևանքների վերացման գոտիներում[Տես հավելված 9]:

Հաճախ լրագրողների մոտ առաջանում է մամլո կենտրոնին կից հավատարմագրվելու հարցը: Հավատարմագրումը հեշտացնում է լրագրողի աշխատանքը և վտանգավոր գոտում նրա համար լայն հնարավորություններ է բացում, բարձրացնում նրա աշխատանքի անվտանգությունը[124]:

Մերձվոլգյան-Ուրալի զինվորական օկրուգի մամլո-կենտրոնի պետին

Հարգելի Իվան Իվանովիչ: «Ուրալսկայա պրավդա» թերթը հոտևողականորեն իրականացնելով ուսուցիչների քաղաքացիականության և հայրենասիրության դաստիարակման դասընթացներ, պլանավորում է մոտ ժամանակներում մի շարք նյութեր տեղադրել մեր հայրենակիցների հերոսական առօրյայի մասին, որոնք իրականացնում են իրենց զինվորական պարտքը Հայրենիքից հեռու:

Խմբագրությունը կազմակերպում է սեփական թղթակցի գործուղումը Դուշամբե և խնդրում ցուցաբերել նրան օգնություն և կազմակերպչական աջակցություն կայազոր մտնելու թույլտվության հարցում, տեղավորման, տեղափոխման և այլ հնարավոր պարագաներում, որոնք կապված են նրա կողմից մասնագիտական պարտականությունների կատարման հետ: Հարգանքներով՝ թերթի գլխավոր խմբագիր Կ. Պետրով»[124]:

Լրագրողը պետք է հասկանա, որ որպես իր երկրի քաղաքացի, նա կարող է Հայրենիքի սահմաններից դուրս ապավինել իր երկիրը ներկայացնող ցանկացած մարմինների օգնությանը, վտանգի դեպքում ապաստան խնդրել ռազմակայանի տարածքում և այդ երկրի այլ հաստատությունում:

Յոթերորդ: Լրագրողը պետք է օժտված լինի գիտելիքներով, որոնք բավարար կլինեն հասկանալու համար տեղի ունեցողը, այդ թվում, հատուկ տերմինոլոգիայի գիտելիքներով: Այդպիսի գիտելիքներին է պատկանում նաև ռազմական, առողջապահական և այլ անհրաժեշտ տերմինոլոգիայի իմացությունը: Օրինակ, «ծանրոց-300», «ադրբեջանցի», «ազերի», «սահմանամերձ», «դիվերսիա», «անօրինական զինված խմբավորումներ», «մոջահեդ»: Լավ կլինի, եթե լրագրողին հետաքրքրեն տեղի բնակչության կյանքի և առօրյայի կազմակերպման հիմնական սկզբունքները, կրոնի առանձնահատկությունները, մարդկանց բարոյահոգեբանական սկզբունքները, որոնց շրջապատում նա պետք է աշխատի:

Տեղի ավանդույթների հանդեպ հարգանքը բարձրացնում է իրադարձությունների մասին օբյեկտիվ և լիարժեք տեղեկություններ ստանալու հնարավորությունը[27]:

- Վտանգավոր պայմաններում մասնագիտական գործունեություն իրականացնող լրագրողը պետք է առավելագույնս տեղեկացված լինի այն երկրի կամ տարածաշրջանի, կոնկրետ տեղանքի մասին, որտեղ ուղևորվում է, պատկերացում ունենա տնտեսական, քաղաքական-աշխարհագրական կառուցվածքի, բնակչության էթնոհոգեբանական առանձնահատկությունների, ինչպես նաև հակամարտության նախապատմության (եթե խոսքը վերաբերում է ռազմական գործողություններին) կամ վթարի նախադրյալների (եթե խոսք է գնում տեխնածին կամ տարերային աղետի) մասին:
- Քանի որ նախօրոք անհնար է գուշակել, թե կոնկրետ ինչ է սպասվում լրագրողին թերթի կամ հեռուստատեսային հաղորդման պատրաստման առաջադրանքները կատարելու ժամանակ, նա պետք է մանրակրկիտ ու բազմակողմանի պատրաստվի: Ի՞նչ մեթոդներ կարելի է օգտագործել «դաշտի» ուսումնասիրության ընթացքում: Նշենք հիմնական ուղիներն ու միջոցները.
- նախկինում նման առաջադրանքներ հաջողությամբ իրականացրած գործընկերների փորձի ուսումնասիրում,
- մասնագետների խորհուրդներով (այդ թվում՝ ԱԻՏԿՆ, Ոստիկանության, ՊՆ, ԱԳՆ, քաղաքական գործիչների և գիտնականների, հասարակական և կրոնական առաջնորդների) առաջնորդվելը,
- տեղեկատվական, մեթոդական նյութերի պարբերաբար ուսումնասիրումը,
- հակամարտության (վթարի) խնդրի վերաբերյալ տարբեր մասնագետների կարծիքների հրապարակումների ուսումնասիրումը,
- համապատասխան համացանցային տվյալների ուսումնասիրումը,
- տարբեր պատկան մարմինների արխիվներում երևույթի, արտակարգ իրավիճակի մասին փաստաթղթերի ուսումնասիրումը, դրանց պատճառների, հետևանքների վերլուծումը,



- զինված հակամարտությունների դեպքում կողմերի դիվանագիտական կամ այլ ներկայացուցչություններին դիմելու ձևերը, հնարավորությունները,
- հնարավորության դեպքում տեղեկատվություն ստանալու նպատակով դիմել կառավարական և ոչ կառավարական կառույցներին, որոնք տեղակայված են նախատեսվող աշխատանքի վայրերում, տարածաշրջաններում:

Կարևոր է լրագրողի երթուղին ու ժամանակացույցը նախապես մշակելը: Երթուղու մշակումը ենթադրում է աշխատանքի հետագա պլանավորում, աշխարհագրական և ավտոճանապարհային (երկաթգծային) քարտեզների հետ ծանոթացում, հնարավոր գիշերակացի վայրերի հստակեցում, կապի միջոցների ուսումնասիրում: Խորհուրդ է տրվում նաև խմբագրության հետ պայմանավորվել, թե որ օրը, որ ժամին մոտավորապես պետք է կապի դուրս գալ: Եթե այդ պայմանավորվածությունը խափանվի, ապա դա հնարավորություն կտա խմբագրությանը կազմակերպել լրագրողի որոնումը:

Երթուղին կազմելու ժամանակ անպայման հաշվի են առնվում այն կետերը, որոնք ուզում է այցելել լրագրողը, և նրանց միջև տեղաշարժվելու հնարավորությունները: Եթե երթուղին անցնում է ռազմական գործողությունների տարածքով, անհրաժեշտ է առաջնորդվել անվտանգության ապահովման կանոններով, կազմակերպված շարասյան, համընթաց պաշտպանված տրանսպորտի, ինչպես նաև զինվորական տրանսպորտով տեղաշարժման հնարավորություններով: Եթե խոսք է գնում դժվարանցանելի կամ վթարի, տեխնաձին աղետի ենթարկված տեղանքի մասին, անհրաժեշտ է նախատեսել ուղեկցողի ծառայություններից օգտվելու հնարավորությունը:

Առանձին պետք է մշակել այն իրավիճակը, որի դեպքում լրագրողն աշխատում է երկու հակամարտող ճամբարներում: Այդ դեպքում երթուղում պետք է նշված լինի անցման կետը, իսկ բուն անցումը մանրակրկիտ ու հստակորեն պետք է պայմանավորված, համաձայնեցված լինի երկու կողմերի հրամանատարների, պատասխանատուների, ինչպես նաև միջազգային կառույցների հետ:

Երթուղին համարվում է բավարար մշակված, եթե նախատեսված է օժանդակություն (այդ թվում՝ նյութական) ստանալու և պաշտոնական մարմինների

ու իշխանությունների, ինչպես նաև տեղի բնակչության մոտ թաքնվելու հնարավորություն:

Հատկապես կարևոր է հաշվարկել գործուղման վայրից արտակարգ տարհանման հնարավորությունը, եթե կյանքի համար իրական վտանգ է առաջանում: Փաստաթղթերի պատրաստումը ևս արտակարգ իրավիճակում լրագրողի աշխատանքի անվտանգության ապահովման կարևոր կողմերից մեկն է: Արտակարգ իրավիճակում գտնվող գոտում աշխատելու համար լրագրողի փաստաթղթերի պատրաստումը խմբագրային առաջադրանքի կատարման նախապատրաստման փուլն է: Այստեղ չկան մանրուքներ, և նշանակություն կարող է ունենալ ցանկացած գրառում կամ հրապարակում: Ներկայացնենք այն փաստաթղթերի ցանկը, որոնք պետք է ունենա լրագրողը արտակարգ իրավիճակում, հակամարտության գոտիներում աշխատելու ժամանակ[27]:

- անձնագիր (իր երկրի և (կամ) միջազգային, եթե լրագրողը աշխատելու է իր երկրի սահմաններից դուրս),
- խմբագրական վկայական, որտեղ հստակ նշված է խմբագրության անվանումն ու լրագրողի պաշտոնական դիրքը: Փաստաթղթում պետք է լինի լրագրողի լուսանկարը, փաստաթղթի գործածման ժամկետը չպետք է խախտվի, կատարված գրառումները պետք է լինեն հաստատված ՋԼՄ ղեկավարի կողմից և ընթեռնելի: Անհրաժեշտ է համոզվել, որ փաստաթղթում լրագրողի պաշտոնի մասին գրառումը համապատասխանում է գործուղման նպատակներին (օրինակ, իշխանությունների մոտ կարող է հարց առաջանալ՝ ինչո՞ւ է մշակույթի բաժնի պետը հայտնվել ռազմական գործողությունների գոտում), գործուղման պլան-առաջադրանքը պետք է կատարված լինի ՋԼՄ ձևաթղթի վրա (եթե գործուղումը արտասահմանյան է, ապա գտնվելու երկրի լեզվով): Առաջադրանքի պլանում պետք է հստակ, հնարավորինս մանրամասնորեն նշված լինեն այն խնդիրները, որոնք պետք է կատարի լրագրողը (ռեպորտաժների, հարցազրույցների, ակնարկների և այլն շարքի պատրաստում),

- հատուկ սահմանված կարգով տրված գործուղման հրամանը, որը ցանկալի է լինի նաև օտար լեզվով:
- Լրագրողներին խորհուրդ է տրվում այդ հիմնական ու պարտադիր փաստաթղթերից բացի ունենալ աջակցող փաստաթղթեր լրագրողի գործուղման մեկնելու տարածաշրջանում հարգանք վայելող մարդկանց (օրինակ, քաղաքական գործիչների, ճանաչված գործարարների, ազգային-մշակութային ինքնավարությունների ղեկավարների, հասարակական և մարդասիրական կազմակերպությունների ղեկավարների) կողմից տրված երաշխավորագրեր,
- հավատարմագրման վկայական (եթե տեղի է ունեցել հավատարմագրում),
- ստեղծագործական կազմակերպությունների (այդ թվում միջազգային) վկայականը, որին անդամակցում է լրագրողը,
- սեփական հրապարակումներով թերթերի և ամսագրերի կամ սեփական հրապարակումներից քաղվածքներ, որոնք ապացուցում են, որ լրագրողը հենց այն մարդն է, որը ներկայանում է,
- ներկայացվող ԶԼՄ-ի տարբերանշանով այցեքարտը:
- Նշված անհրաժեշտ և պարտադիր փաստաթղթերին զուգահեռ, պետք է նշել, որ կան փաստաթղթեր, որոնք նպատակահարմար չէ կից ունենալ, քանի որ դրանք կարող են վտանգել լրագրողի անվտանգությունը. ցանկացած լուսանկար, որի վրա լրագրողը պատկերված է զենքով, զինվորական համազգեստով,
- մանրակրկիտ քարտեզներ, որոնց վրա նշված են զինվորական կայազորների և ստորաբաժանումների տեղակայման վայրերը,
- ռազմական գործողությունների մասնակիցների ցուցակներ, հակամարտող կողմերի առաջնորդների, զորամիավորումների, զորամասերի, ստորաբաժանումների հրամանատարների, զորամասերի, զորքերի տեղակայման վայրերի լուսանկարներ, ԶԼՄ խմբագրության հետ կապի դուրս գալու ժամանակացույց:

Փաստաթղթերի փաթեթի նախապատրաստման ժամանակ, որոնք լրագրողը պետք է վերցնի իր հետ, անհրաժեշտ է գիտակցել, որ նրանցից յուրաքանչյուրը կարող է ենթարկվել զննման և ուսումնասիրության, փաստաթղթերը կարող են համեմատել, անհրաժեշտության դեպքում լրագրողին կարող են ուղղվել պարզաբանող և ստուգող հարցեր[8]:

Արտակարգ իրավիճակների պայմաններում կարևորվում է նաև լրագրողի անվտանգության ապահովումը, անհրաժեշտ գիտելիքների հաղորդումը, տեղեկատվության տրամադրումը: Ս. Ի. Օժեգովի հեղինակած «Ռուսաց լեզվի բացատրական բառարանում» «թեժ կետ» տերմինը բացատրվում է որպես «լարված կամ վտանգավոր իրավիճակի առաջացման տեղ»: Հասկանալի է, որ այդպիսի վայրում լրագրողը դժվար թե կարողանա ապահովագրել իրեն վտանգներից, ապահովել իր անվտանգությունը, և նրա կողմից մասնագիտական պարտքի կատարումն այսպես, թե այնպես կապված կլինի նրա կյանքի և առողջության սպառնալիքների հետ: Այդ թվում նաև այն դեպքում, երբ խոսք է գնում տարերային կամ տեխնաժին աղետի գոտում աշխատելու մասին:

Ճանապարհվելով թեժ կետ՝ լրագրողը պետք է ռիսկն ընդունի որպես իրողություն: Այդուհանդերձ, ՋԼՄ-ների ռազմական թղթակիցների ձեռք բերած փորձն ապացուցում է, որ որոշակի համալիր միջոցառումների կատարման դեպքում, երբ լրագրողը դրսևորում է իրավիճակին համապատասխան զգուշություն, վտանգավոր գործուղման ռիսկը կարելի է հասցնել ընդունելի նվազագույնի:

Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողներին սպառնացող հավանական վտանգներից խուսափելու համար անհրաժեշտ է կիրառել համալիր միջոցառումներ: Առաջին հերթին, անհրաժեշտ է դասակարգել լրագրողին սպառնացող վտանգները, որոնք կարելի է բաժանել մի քանի խմբերի.

- վտանգներ, որոնք կապված են տեղեկությունների հավաքագրման նպատակով ռազմական գործողությունների գոտում տեղաշարժվելու և այնտեղ անօրինական զինված կազմավորումների ղեկավարների հետ հանդիպման անհրաժեշտության հետ,
- տեղեկատվության հայթայթման բնույթի հետ կապված վտանգներ,

- լրագրողի վարքագծի հետ կապված վտանգներ,
- պատահական, անսպասելի վտանգներ:

Վտանգների այդ խմբերից յուրաքանչյուրի մասին լրագրողների համար նախատեսված առաջարկություններ կան ինչպես գրականության մեջ [9] [8], այնպես էլ լրագրողական հանրությունների առաջարկություններում: Ներկայացնենք լրագրողների համար էքստրեմալ լրագրության կենտրոնի մշակած էլեկտրոնային ձեռնարկում նշված խորհուրդները[134]:

- Հավատարիմ մնացեք ձեր ասածին: Եթե որևէ մեկին խոստացել եք չհիշատակել նյութում նրա անունը, պահեք ձեր խոստումը: Եթե պայմանավորվել եք մինչև հրապարակելը ցույց տալ հոդվածի տեքստը, մի թաքնվեք խոսքի ազատության հետևում, կատարեք ձեր խոստումը: Չկա ոչինչ, ինչը կարող է արդարացնել ձեր նյութում առկա բացարձակ և ակնհայտ սուտը: Փաստերի խեղաթյուրման, կեղծման համար լրագրողը կարող է հատուցել կյանքով:
- Մի շահարկեք հավաքած հակափաստարկները: Լրագրողի համար ամենաանհանգիստ ժամանակահատվածը տեղեկատվության հավաքագրման, նյութի պատրաստման և հրապարակման ժամանակահատվածն է: Այդ փուլում լրագրողը վտանգավոր տեղեկատվության կրող է նրանց համար, ում ձեռնտու չէ դրա հրապարակում: Մինչև հրապարակելը լրագրողի հետ կարող են «պայմանավորվել»: Եթե նույնիսկ լրագրողը շատ է ուզում «վաճառվել», չպետք է շտապի: Հարցը նույնիսկ էթիկայի նորմերը չեն, խնդիրը նրանում է, որ վաճառվող լրագրողի հետ սովորաբար հաշվի չեն նստում, նա դրան արժանի չէ:
- Եթե ձեզ պատանդ են վերցրել, մի դիմադրեք: Ձեր դիմադրությունը առևանգողների մոտ զայրույթ կառաջացնի, ու դուք կպատժվեք, նախքան կգիտակցեք ձեր փորձերի անիմաստությունը: Ավելի լավ է դուք լինեք ուշադիր և հիշեք այն մարդկանց, միջավայրը, ճանապարհը, որով ձեզ տանում են: Սակայն մի ցուցադրեք ձեր աչալրջությունը: Եթե դուք ճանաչել եք առևանգողներից որևէ մեկին, մի խոստովանեք, հակառակ դեպքում ձեզ

կզրկեն կյանքից: Առաջին իսկ հնարավորության դեպքում ձգտեք իմաց տալ ձեր մասին:

Այս խորհուրդները «պարզության» հետ մեկտեղ բավականին արդյունավետ են և օգնել են փրկել բազմաթիվ գրող և նկարահանող լրագրողների առողջությունն ու կյանքը: Պետք է հասկանալ, որ վտանգավոր գործուղման ժամանակ բացարձակ անվտանգություն չի կարող երաշխավորել ոչ ոք: Ոչ ոք չի կարող տալ նաև «թեժ կետերում» և, օրինակ, տարերային աղետների գոտում լրագրողի վարքագծի համապիտանի, ցանկացած դեպքի, իրավիճակի համար խորհուրդներ: Միանման դեպքեր ընդհանրապես չեն լինում, այդուհանդերձ, ավելորդ չէ լսել նման իրավիճակներում հայտնված, կյանքը վտանգած լրագրողների խորհուրդները: Այդ առումով հետաքրքրական են Յուրի Ռոմանովի «Ես պատերազմ եմ նկարահանում...» գրքից մի քանի հոգեբանական մոտեցումներ.

- Քաջությունը՝ հոյակապ արժեք է, եթե չի ուղեկցվում հիմարությամբ և անմտությամբ: Դու պետք է ոչ միայն նկարահանես սյուժեն, այլ նաև հասցնես այն «գրասենյակ»:

- Անտեղի ոհակի մի դիմիր և մի ստիպիր ուրիշներին քո պատճառով ոհակի ենթարկվել:

- Զենքն ու տեսախցիկն անհամատեղելի են: Երբեք, ոչ մի պարագայում մի զինվիր ռազմական գործողությունների գոտում: Զենք մի վերցրու նույնիսկ կատակով:

- Եղիր մեծահոգի. կիսվիր գործընկերներիդ հետ տեղեկատվությամբ, հացով և ջրով: Վաղը նրանք կպատասխանեն քեզ կրկնապատիկ չափով:

- Մոռացիր կանոնավոր և լիարժեք սնվելու մասին:

- Եթե հնարավորություն կա ընտրել ուղեկցողի, ընտրիր ոչ թե ամենաուժեղին կամ ամենաճկունին, այլ ամենահանգիստ ու հավասարակշռված անձին: Վերջինս ինքը ավելորդություն չի անի ու նույնը թույլ չի տա քեզ:

- Զսխալվես, պատասխանելով «Ո՞ւմ ես ներկայացնում» հարցին: Եթե հանդեսը կամ հեռուստաալիքը քաղաքականացված են և համակրում են

հակամարտող կողմերից մեկին, ապա սխալ պատասխանը կարող է մահացու վտանգավոր դառնալ:

- Մի ձևացիր: Մի հագիր նոր շորեր: Քեզ կարող են սպանել միայն քո լավ կոշիկներին տիրանալու համար:

- Իսելացի վախկոտ եղիր: Դու չես վախենում, դու ինչ-որ կերպ պաշտպանվում ես:

- Հեռու կանգնիր զորքի թվաքանակի, զինամթերքի քանակի և որակի ու այլ «լրտեսական» բաների մասին տեղեկություններից, եթե նույնիսկ քեզ դրանք առաջարկեն: Այդ ամենը ստացիր պաշտոնական ճանապարհով:

- Մութն ընկնելուն պես վերադարձիր «կայան»՝ հյուրանոցային համար, շտաբ, հոսպիտալի վրան, խրամատ, ինչպես կստացվի: Մութ ժամերին բոլոր տեղաշարժերը՝ միայն ուղեկցողի հետ, որին ճանաչում են և որը գիտի գաղտնագրերը:

Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողներին անհրաժեշտ է տրամադրել խորհրդատվություն նաև հազուստի ու հանդերձանքի հետ կապված: Հազուստ ընտրելիս անհրաժեշտ է առաջնորդվել մի քանի նկատառումներով: Առաջին հերթին կարևորվում է հազուստի հարմարավետությունը: Ցանկալի է, որպեսզի հազուստը լինի միաժամանակ և տաք, և քիչ ջրանցիկ, քանի որ նախապես հայտնի չէ, ինչ պայմաններում է ստիպված լինելու աշխատել ու գիշերել լրագրողը: Ոչ պակաս կարևոր հանգամանք է քաշը. ինչքան թեթև լինի հազուստը, այնքան լավ: Առավել հարմար են վերնաշապիկները: Խորհուրդ է տրվում կրել շատ գրպաններով հազուստ: Դրանք անհրաժեշտ են փաստաթղթերի, սարքավորումների և այլ անհրաժեշտ մանրուքների համար: Հազուստի գույնը ևս կարևոր է. այն պետք է տարբերվի զինվորական հազուստից, ինչպես նաև այն հազուստից, որը կրում են հակառակորդ կողմի ներկայացուցիչները: Ձեզ նայող դիպուկահարը կհասկանա, որ դուք քաղաքացիական անձ եք:

Որպես գլխարկ հարմար կլինի գործած փոքրիկ գլխարկը, որի գույնը նույնպես տարբերվում է խակիից՝ սև կամ մուգ կանաչ: Կոշիկները պետք է մաշված և հարմարավետ լինեն, սպորտային կոշիկները լավագույն տարբերակն է:

Ռազմական գործողությունների կամ աղետների բարդ պայմաններում ուսապարկից բացի ոչ մի պայուսակ չի կարող լավ ծառայություն մատուցել: Ավելի հարմարավետ է ուսապարկը կամ թեթև սպորտային պայուսակը, որն անհրաժեշտության դեպքում գիշերը կարելի է օգտագործել որպես բարձ:

Անհրաժեշտ է նաև ամենաօգտագործվող դեղերով դեղատուփ: Անպայման պետք է նախատեսել հակաբորբոքային և ջրի ախտահանման միջոցներ: Տարերային կամ տեխնաժին աղետի գոտի մեկնելու դեպքում դրանք պետք է շատ լինեն. շշավորված մաքուր ջուր դժվար է գտնելը:

Առաջին օրերին պետք է ունենալ օրապահիկ, պոլիէթիլենային տոպրակի մեջ փաթաթած լուցկի, մի քանի տուփ ծխախոտ, ոչ մեծ քանակի խմիչք՝ օղի կամ կոնյակ, արագ տաքանալու համար: Արտակարգ իրավիճակների գոտիներում վերոնշյալ իրերը դժվար է ձեռք բերել: Անպայման պետք է ունենալ էներգիայի աղբյուր՝ մարտկոցներ, որոնք, որպես կանոն, չեն վաճառվում նման պայմաններում:

Տեղաշարժման երթուղին ևս պետք է լավ ուսումնասիրել: Անձանոթ և վտանգավոր տարածքում առաջին քայլերն ամենադժվարն են: Պետք է պլանավորել անվտանգ երթուղով տեղ հասնել: Ապահով է լրագրողների հետ տեղաշարժվելը: Կարելի է նախապես զինվորականների հետ պայմանավորվել, որպեսզի անհրաժեշտության դեպքում նրանք օգնեն:

Տրամաբանական է ժամանման և հարմարվողականության համար օգտագործել տարածաշրջանում ներկայացված ոչ կառավարական կազմակերպությունների հեղինակությունն ու հնարավորությունները: Տեղաշարժման երթուղին հաշվարկվում է այնպես, որ լրագրողին գործուղած խմբագրությունը հնարավորություն ունենա պատկերացնել, թե որտեղ է գտնվում լրագրողը ներկա պահին: Բացի այդ, անհրաժեշտ է նախատեսել վտանգավոր գոտուց անհապաղ դուրս գալու պահեստային տարբերակը: Արդարացված կլինի, եթե այդ լրացուցիչ տարբերակների մասին ոչ ոք չիմանա մինչև գործուղման ավարտը:

Այստեղ մանրամասների մշակումն իրականացվում է առավել մանրակրկիտ: Կապի դուրս գալու ժամանակացույցը մշակվում է գործուղման ճանապարհվելուց առաջ, նախատեսվում են արտակարգ ելքի հնարավորությունները: Կապի և



պատրաստված հեռուստա և ռադիոնյութերի փոխանցման համար կարելի է և անհրաժեշտ է գործի դնել բոլոր հնարավոր ուղիները, այդ թվում՝ հեռախոսները, էլեկտրոնային փոստը, գործուղման գոտում պետական և ոչ կառավարական կազմակերպությունների ֆաքսը, անհրաժեշտության դեպքում օգնության կանչել գործընկերներին ու տեղի բնակիչներին:

Խմբագրության հետ շփման նպատակով կարելի է նախատեսել հատուկ «վերահսկող» բառեր, որոնց հեռախոսով հաղորդելը տազնապի նշան կազդարարեն: Դա արվում է այն դեպքի համար, երբ լրագրողը պատանդ է վերցված կամ ինչ-որ վտանգի է ենթարկված հակամարտող որևէ կողմից, երբ նա չի կարող պատմել իր դրության մասին բաց տեքստով:

Դիտարկենք արտերկրում արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողներին տրամադրվող խորհրդատվության առանձին դեպքեր: Անգլիական Բի-Բի-Սի (BBC) հեռուստաընկերության լրատվական հաղորդումների հեղինակների, ստեղծագործական խմբերի համար մշակվել է ուղեցույց, համաձայն որի, հաղորդման հեղինակները միշտ պետք է հիշեն, որ հեռուստատեսությամբ և ռադիոյով ահաբեկչական գործողությունների արդյունքում առաջացած արտակարգ իրավիճակների լուսաբանումը հանրության մոտ շատ ավելի մեծ հուզմունք է առաջացնում, քան դրանց նկարագիրը թերթերում[135]:

Պառճառն այն է, որ հեռուստատեսությունն ու ռադիոն իրականությանն ավելի մոտ են. թերթերը բռնության մասին պատմում են, իսկ հեռարձակումը՝ ցուցադրում է այն, առկա են տեսարաններ:

Հեռարձակումը պետք է մշտապես պահպանի հուսալի և պատեհաժամ տեղեկատվության պատասխանատվության և զրհերի վիճակի պատասխանատվության միջև նուրբ հավասարակշռությունը. այն չպետք է ուժեղացնի զրհերի համար վտանգը կամ հովանավորի ահաբեկիչներին: Հաղորդագրության գովազդային տեսանկյունը հնարավորինս նվազեցնելու համար, BBC-ն խուսափում է ահաբեկիչներին փառաբանելուց կամ նրանց գործողությունների մասին օրինական տպավորություն ստեղծելուց: Այստեղ ենթադրվում է կադրերի և տերմինների ընտրությունը: Խմբագրությունները

ամենուր, որքանով հնարավոր է, խուսափում են տերմինաբանություններ կիրառելուց, որոնց օգնությամբ ահաբեկչական խմբավորումները փորձում են իրենց կարգավիճակին օրինական բնույթ վերագրել: Անհրաժեշտ է հետևել, որպեսզի ահաբեկիչները, կամ նրանց հետ կապված մարդիկ դրական տեսանկյունից չներկայացվեն: Չափազանց կարևոր է չբացահայտել անվտանգության գաղտնի համակարգերի բնույթը[17, էջ 4]:

Ահաբեկչական հակումներով հասարակության մեջ մամուլի դերի վերաբերյալ սկզբունքային ճշմարտություն են վկայում Հյուսիսային Իռլանդիայի փորձը: Վտանգի աղբյուր հանդիսանում են ասեկոսները: Նման բարդ պայմաններում լսարանի վստահությանն արժանանալու համար հեռարձակող կազմակերպությունը պետք է ոչ միայն արագ արձագանքի իրադարձություններին, այլ նաև հավաստի տեղեկատվություն մատուցի:

Վստահության ստեղծման համար տարիներ են պետք, դա տևական գործընթաց է և այդպիսի համբավ ձեռք բերելու համար անհրաժեշտ է, որպեսզի հասարակության լայն շրջանակները վերաբերվեն կազմակերպությանը որպես անկախ, իշխանությունների վերահսկողությունից ազատ և այս կամ այն կուսակցության, կամ հասարակական խմբի նկատմամբ անկողմնակալ:

Հաղորդման վրա աշխատող յուրաքանչյուր անձ արտադրության ցանկացած փուլում կարող է խորհրդակցել իրավաբանական բաժնում: Հերթապահ իրավաբանի հետ հնարավոր է կապվել օրվա ցանկացած ժամի, խորհուրդ ստանալով նրանից հարցազրույցի բովանդակության, սցենարի ձևակերպման և այլ հարցերի իրավական կողմի շուրջ: Ներկայացնենք մեկ այլ օրինակ: ԱՄՆ-ում Սի-Էն-Դի (CND), Սի-Բի-Էս (CBS) հեռուստաընկերությունների աշխատակիցների համար մշակված կանոնակարգում հստակեցվում են նաև ահաբեկիչների մասին ռեպորտաժներ պատրաստելու կանոններ: Քանի որ փաստերն ու հանգամանքները յուրաքանչյուր դեպքում տարբեր են, ահաբեկիչների և պատանդների մասին տեսանյութերի վերաբերյալ մոտեցումների մեքենայաբար կատարման կոնկրետ կանոններ չկան: «CBS- նյուզը» հետևում է նորությունների հեռարձակման սովորական չափանիշներին, և եթե, ինչպես դա հաճախակի լինում է, այդպիսի

իրադարձությունները արժանի են լուսաբանման, ապա պետք է շարունակենք հաղորդել դրանց մասին, չնայած դրանց «բացասական ազդեցության» հավանականությանը: Նման իրադարձությունները թաքցնելու թերություններին են վերաբերվում, ի թիվս այլ երևույթների, հետևյալները՝

1. Անցանկալի շեշտադրումներ, որոնք ազդում են լրագրողի հանդեպ վստահության վրա («Ուրիշ ի՞նչ են թաքցնում մեզանից լրագրողները»)[7],

2. Սենսացիոն և կեղծ ասեկոսեների տարածման պատրվակը,

3. Նորությունների հաղորդման վերաբերյալ լրագրողի հայացքների խեղաթյուրումը օտար անձանց, կամ կազմակերպությունների նպատակների, սպասումների բավարարման համար:

Այսպես թե այնպես, նման ռեպորտաժները պետք է լինեն մտածված, զուսպ և բարեխիղճ: Ակնհայտ է, որ նման իրադարձությունը չպետք է իր ներկա բնույթից ավելի սենսացիոն բնույթ ստանա: Մենք պետք է հատուկ զգուշություն ցուցաբերենք այն հարցում, թե ինչպես ենք մոտենում ահաբեկչին կամ առևանգչին:

Նման փաստաթղթերում, ուղեցույց-ձեռնարկներում ներկայացվում են նաև կոնկրետ խորհուրդներ լրագրողներին, ովքեր աշխատում են արտակարգ իրավիճակներում.

1. Լուսաբանվող իրադարձության անբաժանելի բաղադրիչներ են ահաբեկչի/առևանգչի պահանջները, և լրագրողը պետք է հաղորդի նման պահանջները: Սակայն ահաբեկչին/առևանգչին իր պահանջները ներկայացնելու չափազանց լայն հնարավորություններ հարկավոր չէ ընձեռել: Այսպես, եթե նման պահանջները հակիրճ չեն ձևակերպված և դրանք զերծ չեն հռետորությունից և քարոզչությունից, ապա ավելի լավ կլինի ձևափոխել դրանք, այլ ոչ թե հաղորդել անմիջապես ահաբեկչի/առևանգչի ձայնով կամ հեռարձակել դրանք հեռուստատեսությամբ:

2. Ահաբեկչի/առևանգչի մասին չարժե տեսանյութ հաղորդել ուղիղ եթերով, քանի որ մենք կարող ենք ծուղակում հայտնվել՝ ընձեռելով վերջինիս իր պահանջները արտահայտելու անկառավարելի հնարավորություն: Բացառություն են կազմում միայն ամենապարտադրողական հանգամանքները, և այս դեպքում

անհրաժեշտ է ստանալ «CBS-Նյուզի» Նախագահի թույլտվությունը, իսկ նախագահի բացակայության դեպքում՝ «CBS-Նյուզի» ավագ փոխնախագահի համաձայնությունը: (Սա չի սահմանափակում «CBS-Նյուզի» թղթակիցների անմիջապես դեպքի վայրից ուղիղ ռեպորտաժները, սակայն անհրաժեշտ է զգուշություն ցուցաբերել համատեքստն ու զսպվածությունը ապահովելու համար):

3.«Սի-բի-էս» ընկերության աշխատակիցները չպետք է մոռանան այն մասին, որ ահաբեկչի հետ աշխատող իշխանության մարմինների մոտ կարող է հեռախոսազանգի կարիք առաջանալ, այսպիսով նրանք պետք է փորձեն պարզել, թե երբ է դա հնարավոր, չի՞ կարող արդյոք մեր աշխատակիցների կողմից նմանատիպ կապի սարքավորումների օգտագործումը խոչնդոտել իշխանությունների կողմից կապի միջոցներով օգտվելուն:

4.«CBS-Նյուզի» պատասխանատու ներկայացուցիչները պետք է ջանքեր գործադրեն պատանդների հետ արտակարգ իրավիճակներում աշխատող փորձագետների հետ կապ հաստատելու համար, որպեսզի պարզեն, արդյոք վերջիններս ունեն որևէ նկատողություն հետևյալ խնդիրների վերաբերյալ. ինչպիսի՞ արտահայտություններից պետք է խուսափել, ինչպիսի՞ հարցերը կամ հաղորդագրությունները կարող են սրել իրավիճակը և այլն: Դեպքի վայրում իշխանությունների կողմից ցանկացած նմանատիպ հանձնարարական պետք է ուշադրությամբ դիտարկվի, և «CBS-Նյուզի» աշխատակիցները պետք է ընկալեն դրանք որպես ձեռնարկ (այլ ոչ թե որպես հրաման):

5. Անհրաժեշտ է հայտնել տեղի իշխանություններին «CBS»-ի այն աշխատակիցների անունները, որոնց հետ վերջիններս կարող են կապ հաստատել, եթե նոր հրահանգներ ունենան հաղորդելու, եթե ցանկանան զբաղվել այնպիսի նուրբ հարցերով, ինչպես օրինակ՝ լրագրողի կողմից ահաբեկչին զանգահարելը, կամ եթե այլ խնդիրներ առաջանան, որոնք կարող են խոչընդոտել իշխանություններին աշխատել ահաբեկչի հետ:

6. Այստեղ նաև տեղին են այնպիսի խորհրդատվություններ, որոնք վերաբերվում են մեր կողմից քաղաքացիական անկարգությունների լուսաբանմանը, հատկապես այնպիսիք, ինչպիսիք են՝ սադրող մոդայիկ խոսքերի կամ

արտահայտությունների օգտագործման անթույլատրելիությունը, ասեկոսենների տարածումը և այլն: Պատանդների մասին ռեպորտաժի ժամանակ թղթակիցները պետք է ենթարկվեն ոստիկանության բոլոր կարգադրություններին, սակայն անմիջապես պետք է զեկուցեն իրենց ղեկավարությանը լուրերը շահարկելուն կամ թաքցնելուն ուղղված ցանկացած հրահանգի մասին:

Նախքան զինված հակամարտության գոտի գործուղման մեկնելը, լրագրողը պետք է լրջորեն պատրաստվի: Առաջին հերթին, կարևորվում է նրանց հոգեբանական պատրաստության խնդրի լուծումը: Պետք է ինքն իրեն հաշվետվություն տա, որ «թեժ կետում» աշխատանքը կապված է մեծ դժվարությունների և վտանգների հետ, նույնիսկ, կյանքի համար ռիսկի հետ: Չնայած միջազգային մարդասիրական իրավունքի գոյությանը, որը զինված հակամարտությունների ժամանակ պաշտպանում է քաղաքացիական անձանց, այդ թվում նաև լրագրողներին, բազմաթիվ լրագրողներ զոհվել կամ հաշմանդամ են դարձել «թեժ կետերում», շատերը պատանդ են վերցվել կամ, տեսնելով պատերազմի սարսափները, խորը հոգեկան տրավմա ապրել [136]:

«Լրագրողների մոտ նույնպես լինում է «չեչենական» (կամ աֆղանական, տաջիկական) սինդրոմ», - գրում էր «Մոսկովսկիե նովոստի» թերթի թղթակից Վալերի Բատուկը: -Եվ լրագրողները, ինչպես և զինվորները, նույնպես գիշերները սարսափներ են տեսնում երազում: Պատերազմ տեսած լրագրողը այնտեղից որպես ուրիշ մարդ է վերադառնում: Այնտեղ արյուն է թափվում, իսկ այստեղ ես պատերազմից վերադառնալուց հետո չկարողացա գնալ համերգի...Բոլոր մտքերը պատերազմի մասին էին...Ու այդ վիճակը շատ բարդ էր հաղթահարել: Ես դեպք գիտեմ, երբ առաջին չեչենական պատերազմն անցած երիտասարդ ռուս լրագրողը այլևս չկարողացավ վերադառնալ լրագրություն: Ի վերջո, նա գնաց մեկուսարան» [40]:

Չնայած դժվարություններին և վտանգին՝ «թեժ կետերում» եղած շատ լրագրողներ նշում էին, որ պատերազմն իրենց համար թմրադեղի նման մի բան է դառել. նրանք ուզում էին վերադառնալ այնտեղ նորից ու նորից: Այդ իսկ պատճառով պետք է ամենայն լրջությամբ վերաբերվել Վալերի Բատուկի բառերին.

«Նախքան «թեժ կետ» մեկնելը, պետք է մի լավ մտածել. արդյոք ձեզ պե՛տք է գնալ այնտեղ»:

Եթե լրագրողը այնուամենայնիվ որոշել է գնալ «թեժ կետ», մեկնելուց առաջ ցանկալի կլինի կատարել հետևյալը. [137]

-Սովորել միջազգային մարդասիրական իրավունքի թեկուզ հիմնարար նորմերը:

-Ձգտել հիշել և ճշտել, արդյոք զինված հակամարտության շրջանում, ուր մեկնում է լրագրողը, չեն ապրում նրա (կամ նրա հարազատների ընկերների, ծանոթների, գործընկերների) ծանոթները: Եթե հաջողվի հայտնաբերել այդ մարդկանց, պետք է գրել նրանց բոլոր տվյալները և նախօրոք փորձել կապվել նրանց հետ, տեղեկացնել նախատեսած այցի մասին: Այդպիսի կապերը շատ օգտակար են լրագրողի համար, քանի որ այդ մարդիկ հանդես կգան «թեժ կետում» տեղի ունեցող իրադարձությունների մասին կարևոր տեղեկությունների աղբյուր, վստահելի ուղղորդիչ, նրանք կարող են խորհուրդ տալ, թե ում դիմել:

-Ուսումնասիրել այդ տարածաշրջանի բնակչության սովորություններն ու ավանդույթները, հոգեկերտվածքը, էթնոհոգեբանական բնութագիրը, հատկապես՝ մտածելակերպը (նրանց իմացությունը կարող է չափազանց օգնել աշխատանքում, իսկ չիմանալը, ընդհակառակը, կարող է վնասել):

-Ուսումնասիրել տեղանքի աշխարհագրությունը, իմանալ քաղաքների, ավանների, գետերի տեղերը, ճանապարհները: Պետք չէ, սակայն, վերցնել տեղանքի քարտեզը, որտեղ նշված են ռամավարական կետերը, շենք-շինությունները, որպեսզի լրտեսի տեղ չընդունեն, կարելի է միայն զբոսաշրջային քարտեզ: Այդ նույն պատճառով պետք չէ վերցնել հեռադիտակներ և այլ իրեր, որոնք ասոցացվում են լրտեսության հետ:

-Ուսումնասիրել տեղի բնակչության լեզուն, գոնե, ամենատարրական մակարդակով, օրինակ, որպեսզի ներկայանաք, հարցնեք ձեզ անհրաժեշտի մասին (օգնություն խնդրել, իմանալ երթուղին, կանչել պետին), և հասկանալ պատասխանները: Ծայրահեղ դեպքում, կարելի է վերցնել խոսակցական բառարան, զրուցարան, տեղեկատու, սովորելով որոշ արտահայտություններ: Սակայն,

ակնհայտ է, որ ինչքան լավ գիտի լրագրողը տվյալ ժողովրդի լեզուն, այնքան քիչ դժվարությունների կհանդիպի:

-Իմանալ, թե ինչ օրենքներ են գործում տվյալ տարածքում, ինչ ազատ տեղաշարժման սահմանափակումներ են հաստատված, լրագրողների հավատարմագրման կանոնները, ֆոտո- և տեսանկարահանումների կանոնները:

Ձեզ հետաքրքրող երկրի օրենքների, ապրող ժողովրդի, ազգի սովորույթների, ավանդույթների, աշխարհագրության մասին, ինչպես նաև զինված հակամարտության պատմության և արդի իրավիճակի վերաբերյալ տեղեկությունները դուք կարող եք ստանալ տարբեր աղբյուրներից: Օրինակ, համացանցից, գրքերից, ՋԼՄ-ների նյութերից, զինված հակամարտության գոտուց վերադարձած մարդկանց հետ շփումներից:

Կարելի է նաև դիմել համապատասխան երկրի դեսպանատանը և հյուպատոսությանը: Պարզ է, որ տարբեր աղբյուրներ ունեն պայմանավորվածության տարբեր աստիճան: Ավելի լավ է դրանք համալիր օգտագործել: Ինչքան շատ բան իմանա լրագրողը այն երկրի, տարածաշրջանի մասին, որտեղ ուղևորվում է, այնքան լավ իր համար (թե մասնագիտական գործունեության հաջողության տեսակետից, թե ուղղակի անվտանգության):

-Ապահովագրել սեփական կյանքը, առողջությունը, սեփականությունը:

«Ցանկալի է, որպեսզի խմբագրությունը ձեզ ապահովագրի երկու բանից: Առաջինը, վիրավորվելու կամ հիվանդանալու դեպքում ձեր տեղափոխումը, և երկրորդը՝ օպերատիվ միջոցառումների ֆինանսավորումը այն դեպքում, եթե ձեզ առևանգեն, կամ դուք կորեք: Շատ հաճախ իրավապահները կանգնում են երկրնտրանքի առջև. կարելի է վճարել տեղեկության համար, և նրանք գիտեն, ում, սակայն գումար չկա[8]:

Ոչ մի արևմտյան լրագրող չի մեկնի «թեժ կետ» առանց ապահովագրության: Ընդ որում, նման ապահովագրության գումարը սովորաբար կազմում է մի քանի տասնյակ դոլար: Որպես կանոն, լրագրողին ապահովագրում է խմբագրությունը: Ռուսաստանում զինված հակամարտության գոտի մեկնող լրագրողների

ապահովագրումը սովորական է դառել դեռ խոշոր, դաշնային ՋԼՄ-ներում, իսկ տարածաշրջաններում դեռ նոր է արմատավորվում:

-Ստանալ ձեր մեկնման վայրում տարածված հիվանդությունների դեմ պատվաստումներ:

-Իմանալ արյան խումբն ու կարգը: Խորհուրդ է տրվում գրել այդ տվյալները գրառումների տետրի առաջին էջում կամ թղթիկի վրա, որը դրվելու է անձնագրի մեջ:

-Մանրակրկիտ մշակել և խմբագրի հետ համաձայնեցնել երթուղին, խորհուրդ է տրվում նաև որոշել վերահսկիչ կետերը և խմբագրության հետ կապի դուրս գալու ժամանակը: (Դա կօգնի փնտրել լրագրողին, եթե ստեղծվի չնախատեսված իրավիճակ): Չի խանգարի մշակել պայմանական նշագրեր, որպեսզի այս կամ այն անվնաս արտահայտությունները ծառայեն որպես տագնապի նշան (իրավիճակները տարբեր են լինում, և ավելի լավ է վերաապահովագրվել, քան չապահովագրվել):

-Ճանապարհվելով «թեժ կետ» գործուղման, լրագրողը պետք է ստանա խիստ որոշակի առաջադրանք (օրինակ, գրել ակնարկ հերոս-սահմանապահի մասին, պայթեցրած կամուրջների վերականգնման մասին ռեպորտաժ կամ փախստականների ճամբարի մասին ակնարկ): Ինչքան կոնկրետ է առաջադրանքը, այնքան լավ: Եթե լրագրողը չգիտի, թե ինչ է ուզում իր գործուղումից, ապա գործուղումը զուր կդառնա, եթե նա ասում է մամլո ծառայության սպաներին, որ ուզում է «ինչ-որ հետաքրքիր բան որոնել», ապա նրան կարող են նույնիսկ ձերբակալել՝ որպես կասկածելի անձ:

-Նախօրոք, դեռ մինչև ճանապարհվելը, կապ հաստատել մամլո կենտրոնի հետ, որտեղ լրագրողը հավատարմագրված է (որպես տարբերակ. զորամասի հրամանատարության կամ բնակավայրի իշխանությունների հետ, ուր նա ուղևորվում է):

Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողներին անհրաժեշտ է տրամադրել տեղեկատվություն նաև այն մասին, թե առաջին անհրաժեշտության ինչ իրեր պետք է վերցնեն նրանք: Առաջին անհրաժեշտության իրեր են համարվում.



- Բժշկական տուփը՝ ամենաանհրաժեշտ դեղամիջոցներով (այն, իհարկե, քիչ է ունենալ. կարևոր է կարողանալ առաջին օգնությունը ցուցաբերել նախ ինքդ քեզ, ապա և ուրիշներին): Սակայն ներարկիչներ և թմրամիջոցներ պարունակող նյութեր չվերցնել. Դրանց պատճառով խուզարկման ժամանակ ձեզ կարող են կողոպտել կամ նույնիսկ սպանել:

-Փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են լրագրողին գործուղման վայրում աշխատելու համար: (Օրինակ, անձնագիր, վիզա, լրագրողական և գործուղման վկայականներ):

-Դրամական միջոցներ, ցանկալի է ոչ կանխիկ, իհարկե, եթե այդ երկրում հնարավոր է տեխնիկական առումով կանխիկացման գործընթացը: Առաջին հերթին խոսքը վերաբերվում է լրագրողի մեկնման վայրի ազգային արտարժույթին: Խորհուրդ է տրվում նաև ձեռքի տակ ունենալ որոշ քանակի «ամուր», ազատ փոխարկվող արտարժույթ (դոլար, եվրո):

-Ծխախոտը (միջին արժեքի): Դրանք պետք է վերցնել, եթե նույնիսկ ինքդ չես ծխում. բանակում ծխախոտը հավասար է ազատ փոխանակվող արտարժույթի: Օրինակ, լրագրողը ավելի մեծ շանսեր ունի անցնել հսկիչ-անցագրային կետով, եթե նրա մոտ կա ծխախոտ, որով նա կհյուրասիրի հսկիչ անցագրային կետում կանգնած զինվորին: (Ընդ որում, դա պետք է ընկալվի ոչ թե որպես կաշառք, այլ որ լրագրողն իրոք կիսվում է եղբայրական): Հարաբերություններ հաստատելու հարցում կարող են օգնել նաև կրակայրիչներն ու սովորական դեղամիջոցները. ասպիրին, անալգին, պարացետամոլ, ակտիվացված ածուխ և այլն,

-Սննդամթերքի և ջրի որոշակի պաշարը (Ինչը թույլ կտա դիմակայել մի քանի օր, եթե լրագրողը հայտնվի այնտեղ, որտեղ բացակայում է դաշտային խոհանոցը): Բնականաբար, մթերքը պետք է կոմպակտ և ոչ շուտ փչացող լինի (չորահաց, պահածոներ և այլն): Ընդ որում, առաջին հայացքից մանրուքները կարող են մեծ նշանակություն ունենալ: Օրինակ, պարզ է, որ ջուրը պետք է պահպանել հարմարավետ չկոտրվող տափաշշի մեջ, սակայն պետք չէ զինվորական տափաշշ վերցնել (լրագրողի ամբողջ «ունեցվածքը» պետք է լինի միանգամայն քաղաքացիական, որպեսզի կասկածանքներ չառաջանան):

Անպայման պետք է վերցնել սպիրտ (կամ օղի) և քաղցրավենիք (կոնֆետներ, շոկոլադ): Չինված հակամարտությունների գոտիներում քաղցրավենիքը, որպես կանոն, դեֆիցիտ է, և այն կարելի է օգտագործել ոչ միայն սեփական օգտագործման համար, այլ որպես մարդկանց հետ հարաբերություններ ստեղծելու միջոց: Սպիրտը (օղին) պատերազմի ժամանակ փողից թանկ է գնահատվում: Չեչնիայում, օրինակ, տեղի բնակիչը համաձայնվել է լրագրողին տեղափոխել մյուս բնակավայր, ծառայության դիմաց պահանջելով ոչ թե փող, այլ մի շիշ սպիրտ: «Ի՞նչ պետք է գնեմ ես այստեղ այդ թղթի կտորներով», - նկատել է նա: Միևնույն ժամանակ, որպես ծառայության դիմաց վճար սպիրտը (օղին) պետք է շատ զգույշ օգտագործել, քանի որ դա միշտ չէ նպատակահարմար: Հրամանատարը կարող է զայրանալ, որ ինչ-որ մեկը ուզում է արբացնել իր ենթականերին: Սպիրտը (օղին) հարմար է տեղափոխել հանքային ջրի պլաստիկ շշերով: Եթե նույնիսկ լրագրողը ընդհանրապես խմիչք չի օգտագործում, պատերազմի ժամանակ առանց «հարյուր գրամի» մեկ-մեկ անհնարին է. մշտական հոգեկան ճնշումից ու սթրեսից կարելի է գժվել:

Սպիրտը (օղին) կարելի է օգտագործել և որպես ախտահանիչ, և որպես «տաքացնող» միջոց: Սակայն խոսքը գնում է միայն «հարյուր գրամի» մասին, և ոչ ավելի: Զորքերի տեղակայման գոտում ոտքերի վրա ճոճվող, գինովցած լրագրողին այնքան էլ լավ չեն ընդունի: Եթե սպաները կերուխում են կազմակերպում և հրավիրում լրագրողին, հաճելի կլինի, եթե վերջինիս իր կողմից ինչ-որ բան «դնի» ընդհանուր սեղանին: Սակայն չափից շատ խմել պետք չէ:

-Հագուստի լրացուցիչ կոմպլեկտը (անպայման պետք է վերցնել տաք հագուստ): Հագուստը պետք է համապատասխանի չորս հիմնական պայմանների. լինել արտահայտված քաղաքացիական, գործնական և հարմարավետ, լինի ոչ թանկարժեք (թանկարժեք բաճկոնի կամ նորաձև զինվորական կոշիկների համար կարող են սպանել), ոչ վառ գույնի: Պատերազմում հագուստը արագ է կեղտոտվում և, հաշվի առնելով լողանալու հնարավորության բացակայությունը, անհրաժեշտ է ունենալ լրացուցիչ կոմպլեկտ:

-Գրպանի լապտերը (ամենահասարակ ու էժան), պահեստային մարտկոցներ և դրանց լամպերը:

-Տեղական լեզվով թարգմանած բեյջը (անհրաժեշտ է, որ այն լինի, սակայն անպայման չէ, որ միշտ կայրած լինի կրծքին):

Երկրորդ. իրեր, որոնց վերցնելու պարագայում պետք է մտածել

-1949 թ. Ժնևյան կոնվենցիաների և նրանց կից 1977 թ. Լրացուցիչ արձանագրությունների օրինակը:

- Զրահաբաճկոնը: Այդ իրի թերությունը կայանում է նրա զուտ քաղաքացիական ընկալման մեջ: Սակայն, այնուամենայնիվ, այն կարող է օգտակար լինել: Եթե խմբագրությունում չկա սեփական զրահաբաճկոն, այն կարելի է պարտքով վերցնել, օրինակ, իրավապահ մարմիններից, որոնց հետ լրագրողները հաճախ բարիդրացիական կապերի մեջ են լինում:

- Ռադիոընդունիչ (գտնվելով կոնկրետ տեղում, լրագրողը պետք է տեղեկություններ ստանա իր գոտում տեղի ունեցող զինված հակամարտության զարգացումների մասին: Դա նրան անհրաժեշտ է ինչպես մասնագիտական գործունեության, այնպես էլ որոշ դեպքերում սեփական անվտանգությունն ապահովելու համար):

-Արբանյակային հեռախոս: Դրա օգնությամբ, իհարկե, ավելի հեշտ է տեղեկատվություն փոխանցել: Ճիշտ է, դա թանկարժեք իր է (թանկարժեք իրերի առկայությունը լրացուցիչ վտանգ է ստեղծում), միևնույն ժամանակ, կարող է ասոցացվել լրտեսական գործունեության հետ: Սկզբունքորեն, բոլոր լրագրողները կարող են աշխատել նաև առանց արբանյակային հեռախոսի, տեղեկություններ հաղորդելու համար օգտվելով, օրինակ, ռազմական միջոցներով ու կապի խողովակներով (բանակային մամուլ-կենտրոնները ընձեռում են այդպիսի հնարավորություն): Տեղական քաղաքացիական իշխանությունները նույնպես կարող են օգնել լրագրողին այդ հարցում:

Տարբերակներից մեկը՝ խնդրել տեղական վարչակազմի ղեկավարից մի փաստաթուղթ, որով տեղական պաշտոնյաներին կպարտադրեր լրագրողին հնարավորություն տալ հաղորդել տեղեկատվությունը հեռախոսով, կամ համացանցի միջոցով: «Ուրալսկիյ ռաբոչիյ» թերթի թղթակից Վլադիմիր Ռուբցովը առաջին չեչենական արշավի ժամանակ գործուղման ընթացքում ուղղակի հավաքում էր

նյութերը և հետո, վերադառնալով խմբագրություն, նրանց հիման վրա պատրաստում ակնարկներ, թղթակցություններ: Սակայն այդ եղանակը հարմար չէ լրատվական գործակալությունների և այլ լրագրողների համար, որոնց աշխատանքում կարևոր է օպերատիվությունը:

-Սեփական թերթի մի քանի համարները (եթե գործուղվում է տպագիր մամուլի լրագրողը): Որպես կանոն, զինված հակամարտությունների գոտիներում «քաղաքացիական» թերթերի դեֆիցիտ է զգացվում: Բացի դրանից, եթե թերթը անաչառ ու պրոֆեսիոնալ ձևով է լուսաբանում իրադարձություններն, ապա այն կարող է լրագրողի համար լավ «այցեքարտի» դեր խաղալ:

- Սպորտային պայուսակը: Իրերն ավելի հարմար է տեղափոխել հենց դրանում. ձեռքերն ազատ են մնում նոթատետրի և ֆոտոխցիկի համար և այլն:

Ամփոփելով այս թեման, անհրաժեշտ է նշել, որ ինչքան մանրակրկիտ է լրագրողը պատրաստվում «թեժ կետ» ուղևորությանը, այնքան մեծ շանսեր ունի գործուղման ընթացքում արդյունավեր աշխատելու համար[136]:

«Պրեսս Էմբլեմ Կոմպայն» միջազգային ոչ պետական կազմակերպության տվյալների համաձայն, 2008 թվականին «Թեժ կետերում» մասնագիտական պարտականությունների կատարման ժամանակ 30 երկրներում զոհվել է ավելի քան 70 լրագրող: Իրաքում, Պակիստանում, Մեքսիկայում, Ֆիլիպիններում, Հնդկաստանում, Աֆղանստանում և բազմաթիվ այլ երկրներում հակամարտության լուսաբանումը վերջին լրագրողական առաջադրանքը դառավ ԶԼՄ-ների շատ աշխատակիցների համար: Այդ մահերի պատճառները շատ են, սկսած սուբյեկտիվ պատճառներից՝ լրագրողների ոչ պրոֆեսիոնալիզմը կամ անզգուշությունը, վերջացրած ավելի գլոբալներով՝ մարդու իրավունքների պաշտպանության ոչ պատշաճ ապահովումը, գործող միջազգային կանոններին չհետևելը և «թեժ կետերում» լրագրողի գործողությունները կարգավորող օրենսդրական ակտերի բացակայությունը:

Փորձագետները մեր ընտրած թեման ամենաարդիականն են համարում ժամանակակից լրագրության տեսության և պրակտիկայի մեջ: Հիմնականում դա պայմանավորված է նրա քիչ ուսումնասիրվածությամբ: Քիչ են այս թեմայի

վերաբերյալ տեսական և գիտական աշխատությունները, սակայն կան բազմաթիվ հրապարակումներ և անհատական լրագրողական պատմություններ:

Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողներին անհրաժեշտ է ծանոթացնել նաև համապատասխան իրավական նորմերին, օրենքներին, որոշումներին: Նախքան զինված հակամարտության գոտում խմբագրական առաջադրանք կատարելուն մեկնելը, նախապատրաստական առաջին փուլում լրագրողը պետք է ծանոթանա առկա օրենսդրական ակտերի և այլ փաստաթղթերի հետ, որոնք կարգավորում են նրա մասնագիտական գործունեությունը: Ճանապարհվելով «թեժ կետ» տեղեկությունների հետևից, յուրաքանչյուր խելամիտ մարդ, առավել ևս, պրոֆեսիոնալ, պետք է իր համար ճշտի իր իրավական կարգավիճակը: Այդ ինքնադիրքավորումից մեծապես կախված կլինի թե՛ առաքելության հաջողությունն ամբողջությամբ, թե՛ ընթացիկ ծախսերը՝ մասնավորապես»: Փաստաթղթերը շատ-շատ են: Մենք կդիտարկենք ամենատարածվածները:

Սկսենք «թեժ կետերի» թեմայի վերաբերյալ աշխարհում առկա առաջին փաստաթղթերից[136]:

«Առաջին անգամ լրագրողի վիճակը պատերազմում սահմանում է ստացել «Ցամաքային պատերազմի օրենքների և ավանդույթների մասին» 1907 թ. Հաագայի կոնվենցիայով, որի 13-րդ հոդվածի հավելվածում ասված էր. «Բանակն ուղեկցող անձինք, որոնք չեն մտնում նրա անձնակազմի մեջ՝ թերթերի թղթակիցներն ու լրագրողները, մատակարարները, այն դեպքերում, երբ հայտնվում են թշնամու ձեռքում, կամ վերջինս նպատակահարմար է գտնում ձերբակալել նրանց, օգտվում են ռազմագերիների իրավունքներից, եթե ունեն ուղեկցվող բանակի ռազմական ղեկավարության կողմից տրված վկայականը»[137]:

1929 թ. Ընդունվեց «Ռազմագերիների հետ վերաբերմունքի մասին» Ժնևյան կոնվենցիան, որում ասվում էր գրեթե նույնը. «Գերի ընկնելու դեպքում լրագրողներն ունեն ռազմագերիների հանդեպ վերաբերմունքի իրավունքը, չնայած, որ պահպանում են քաղաքացիական անձի կարգավիճակը: Ընդ որում, շեշտադրվում է,

որ նրանք անպայման պետք է ունենան վկայական, որը տրված է զինված ուժերի կողմից»:

«Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կոնվենցիան վերանայվեց, նրա նոր խմբագրությունը հրապարակվեց 1949 թվականին: Ռազմական լրագրողների մասով ոչ մի փոփոխություն չկար: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաշխարհային պատերազմի քառսի մեջ լրագրողները հաճախ կորցնում էին իրենց վկայականները և բանակի ուղեկցության որոշումները, վկայական ունենալու պայմանները մեղմվեցին. նոր խմբագրված կոնվենցիայում գրված է, որ անհրաժեշտ է ստանալ վկայական ու թույլտվություն:

Խոսքը նրա մասին է, որ լրագրողը պետք է ունենա ամբողջ երկրի հրամանատարության թույլտվությունը: Բացի այդ, թույլտվությունը նախատեսված է, որպեսզի ապացուցի նրա տիրոջ իրավունքը՝ իր նկատմամբ այս կամ այն նորմերի կիրառումը: Սակայն կոնվենցիայի ստորագրման պահին իրավունքը տարածվում էր միայն ձերբակալության պահի վրա: Հետագայում 70-ական թվականներին պատերազմում լրագրողների անվտանգության ապահովման հարցը բազմաթիվ անգամ քննարկվեց ՄԱԿ-ի Գլխավոր Գազաթնաժողովում: 1977 թվականի հունիսի 8-ին ընդունվեցին Ժնևյան կոնվենցիաների Լրացուցիչ արձանագրությունները: Լրացուցիչ արձանագրության գլուխներից մեկը («Գլուխ III. Լրագրողներ») վերաբերում է ռազմական լրագրողների կարգավիճակին: Այստեղ նորից հիշեցվում է, որ լրագրողները պատկանում են քաղաքացիական անձանց: Սակայն կան մի քանի հստակեցումներ. «Որպես այդպիսիք, իրենք՝ լրագրողները, օգտվում են սույն կոնվենցիային և Արձանագրությանը համապատասխան պաշտպանությամբ այն պայմանով, որ նրանք չեն կատարում գործողություններ, որոնք հակասում են իրենց քաղաքացիական անձանց կարգավիճակին և վնաս են հասցնում զինված ուժերում հավատարմագրված ռազմական լրագրողի իրավունքներին, III Կոնվենցիայի 4 հոդվածով նախատեսված կարգավիճակին (A.4)»: Այս կետը հիշեցնում են գործնականում բոլոր նրանք, ովքեր գրում են պատերազմի ժամանակ վարքագծի կանոնների մասին: Լրագրողներ քաղաքացիական անձինք են և օգտվում են պաշտպանությունից, քանի դեռ մնում են որպես քաղաքացիական անձինք[137]:

Վերադառնանք ժնկյան Կոնվենցիաների Լրացուցիչ արձանագրությունների III գլխին: Վերջին կետը նորից վերաբերում է լրագրողի անձը հաստատող վկայականին, սակայն, այժմ վկայականը պետք է տա ոչ թե «բանակի ռազմական իշխանությունը», այլ լրագրողի մշտական բնակության երկրի կառավարությունը, որի քաղաքացին է հանդիսանում լրագրողը, կամ որտեղ գտնվում է այն լրատվամիջոցը, որտեղ նա աշխատում է: Այսինքն, ֆորմալ կերպով լրագրողը այլևս կախված չէ բանակի հրամանատարությունից, որին ուղեկցում է: Վկայականը տալիս է կառավարությունը, և եթե այն կա, ապա զինվորականներից թույլտվություն ստանալու անհրաժեշտություն չկա:

Նշված արձանագրությունը ստորագրելուց հետո «թեժ կետի» լրագրողի կարգավիճակն՝ ըստ միջազգային մարդասիրական իրավունքի, մնում է անփոփոխ. լրագրողներն հավասարեցվում են քաղաքացիական բնակչությանը, օգտվելով նրա իրավունքներից, այդ թվում՝ պաշտպանության իրավունքից: Մինևույն ժամանակ, գերության դեպքում լրագրողը հավասարեցվում է ռազմագերիներին»[137]:

Այժմ դիտարկենք ռազմական լրագրության իրավական հիմքերը Ռուսաստանի Դաշնությունում:

Ռուսաստանյան իրավունքում ռազմական լրագրողների գործունեության կարգավորումը վերաբերում էր բացառապես գրաքննությանը: Նրանց գործունեությունը վերահսկող ռազմական գրաքննությունը ձևավորվել էր դեռ Ալեքսանդր I օրոք, 1810 թվականին:

«Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 29 հոդվածն ու Մարդու իրավունքների Համընդհանուր հռչակագրի 19 հոդվածը հռչակում են յուրաքանչյուր մարդու իրավունքը՝ որոնել, ստանալ, հաղորդել, տարածել տեղեկատվությունը ցանկացած օրինական ձևով: Ռուսաստանյան օրենսդրությունը արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողին մի շարք արտոնություններ է տալիս, որոնք կոչված են նրան հնարավորություն ապահովել այդպիսի պայմաններում իրականացնել իր մասնագիտական գործունեությունը»:

Ներկայիս «Ձանգվածային լրատվության միջոցների մասին» օրենքի համաձայն, «լրագրողն իրավունք ունի այցելել պաշտպանվող տարերային

աղետների, վթարների, զանգվածային անկարգությունների և քաղաքացիների զանգվածային կուտակումների վայրեր, ինչպես նաև այն վայրեր, որտեղ հայտարարված է արտակարգ դրություն, մասնակցել ցույցերի և հանրահավաքների»[137]:

«Ֆորմալ առումով «Արտակարգ դրության մասին» և «Անվտանգության մասին» օրենքների համատեքստում զանգվածային լրատվության ազատության սահմանափակումն արտահայտվում է արտակարգ դրության գոտում իրադարձությունների լուսաբանման լրատվության նախնական գրաքննությամբ, տպագիր արտադրանքի վրա ժամանակավոր կալանք դնելու իրավունքով. «Մամուլի և այլ ՋԼՄ-ների ազատության սահմանափակում՝ նախնական գրաքննություն ներդնելու միջոցով, նշելով դրա իրականացման պայմաններն ու ընթացակարգերը, ինչպես նաև տպագիր արտադրանքի, ռադիոհաղորդչի, տեխնիկական միջոցների, բազմացնող սարքերի ժամանակավոր առգրավում և կալանք, լրագրողների հավատարմագրման հատուկ կանոնակարգի հաստատում»:

Այժմ անդրադառնանք լրագրողի իրավական կարգավիճակին: Բորիս Պանտելեևը Ռուսաստանում առանձնացնում է երեք կարգավիճակ.

Առաջինը, ինչքան էլ տարօրինակ լինի, Ռուսաստանի Դաշնության հասարակ քաղաքացու կարգավիճակն է, որը ժամանակավորապես գտնվում է իր մշտական գրանցման վայրից դուրս, կապված իր աշխատանքի հետ, զբոսաշրջության նպատակներով կամ այլ պատճառներով: Հենց այդ խմբին է պետք դասել ստրինգերներին /ազատ լրագրող/, կամ լրագրողներին, որոնք գրանցված չեն որևէ ՋԼՄ հաստիքացուցակում: Այդ մարդիկ, փաստորեն, պայմանագրով կատարում են լրագրողի աշխատանք, սակայն միշտ չէ, որ կարող են փաստաթղթերով ապացուցել իրենց հատուկ կարգավիճակը: Հիմնական և միակ անձը հաստատող փաստաթուղթը՝ անձնագիրն է:

Երկրորդը՝ անկախ ՋԼՄ լրագրողի կարգավիճակն է, այսինքն, այնպիսի խմբագրության, որն ուղղակի կամ անուղղակի չի ենթարկվում պետական իշխանությանը, տվյալ դեպքում՝ Զինված Ուժերին և չի կատարում անցկացվող ռազմական ակցիայի տեղեկատվական ապահովման պատվերները: Այդ



իրավիճակում որպես կանոն, դժվար չէ փաստաթղթերով հաստատել կոնկրետ խմբագրությանը պատկանելիությունը, կամ լրագրողի հատուկ կարգավիճակը, սակայն, պետք է պատրաստ լինել, որ ձեր վկայականն ու մնացած փաստաթղթերը ուսումնասիրվելու են «մանրադիտակի ներքո»:

Երրորդը, այսպես կոչված «ռազմական թղթակցի», այսինքն, իշխանությունների հետ փոխկապակցված ԶԼՄ աշխատակցի կարգավիճակն է, որը «ճիշտ» է հասկանում տեղի ունեցողի էությունը և լիովին համաձայնեցնելով նրանց հետ իր տեղեկատվական և այլ կենսական գործառույթները: Այդ իսկ պատճառով, նրանց մոտ փաստաթղթերի և այլ ձևականությունների հետ խնդիրներ չեն առաջանում»:

Ամփոփելով, հարկ է նշել ընդհանուր պահերը, որոնք վերաբերվում են «թեժ կետում» լրագրողի աշխատանքին, որոնք մշակվել են անցյալում տարբեր արտասահմանյան և միջազգային իրավական և այլ փաստաթղթերում:

«Գտնվելով «թեժ կետերում», լրագրողներն ունեն քաղաքացիական անձանց կարգավիճակ մինչ այն պահը, քանի դեռ քաղաքացիական անձ են.

–«Թեժ կետում» լրագրողը ֆորմալ կերպով կախված է իրեն գործուղած լրատվամիջոցից, պետությունից, այլ ոչ թե բանակի հրամանատարությունից»:

Լրագրողների համար կարևորվում է նաև նախատեսվող աշխատանքի «թատերաբեմի» ուսումնասիրությունն ու երթուղու նախապատրաստումը: «Լրագրողը, որը պետք է կատարի իր մասնագիտական պարտականությունները վտանգավոր պայմաններում, պետք է ունենա առավելագույն տեղեկատվություն իր ուղևորվելու երկրի կամ տարածաշրջանի, կոնկրետ տարածքի մասին, պատկերացում ունենա տնտեսական, քաղաքական-աշխարհագրական դիրքի, բնակչության էթնոմշակութային և կրոնական առանձնահատկությունների, ինչպես նաև հակամարտության նախապատմության (եթե խոսքը վերաբերվում է ռազմական գործողություններին) կամ վթարի նախադրյալների մասին (տեխնածին կամ տարերային աղետի դեպքում):

Քանի որ նախօրոք հնարավոր չէ գուշակել, թե ինչ է սպասում լրագրողին տպագիր, հեռուստանյութերի կամ ռադիոնյութերի պատրաստման խնդիրները

լուծելու ժամանակ, ապա նախապատրաստումը պետք է լինի մանրակրկիտ ու բազմակողմանի:

Լ. Վ. Տրուփցինայի կարծիքով, բացի արտակարգ իրադարձությունից անմիջապես հետո սթրեսի հանդեպ սուր սրտառուչ արձագանքից, ապրումների հոգեբանական տրավմայի արդյունք կարող են հանդիսանալ տարբեր հոգեկան խանգարումները, որոնք պահպանվում են երկար ժամանակ, երբեմն, տարիներ ու տասնամյակներ: Դրանց են պատկանում նյարդային և դեպրեսիվ վիճակները, տարբեր ֆոբիաներ, հետտրավմատիկ սթրեսային և այլ հոգեկան խանգարումներ և այլն:

Գոյություն ունեն տարբեր գործոններ, որոնք կարող են բարդացնել կամ մեղմել իրադարձության վերապրման վնասը: (Կրկնենք, որ ոչ այնքան կարևոր է օբյեկտիվ իրավիճակը, որքան դրա սուբյեկտիվ ընկալումն ու մեկնաբանումը): Որպես կանոն, բացասական հետևանքները քիչ են այն դեպքերում, երբ իրադարձության ժամանակ մարդն ակտիվ էր, հնարավորություն ուներ կամ ստիպված էր իրականացնել ինչ-որ արդյունավետ գործողություններ: Տրավմայի ենթարկող իրադարձության ժամանակ պասիվությունը հաճախ ավելի լուրջ հետևանքներ է առաջացնում: Հավանաբար, հենց այդ պատճառով էլ փրկարարներն ավելի քիչ են տրավմայի ենթարկվում, քան փրկվողները: Մեկ այլ կարևոր գործոն՝ իրադարձության ժամանակ մտերիմ մարդկանց առկայությունը: Ավելի վատ վիճակում են հայտնվում մարդիկ, ովքեր միայնակ են վերապրել տեղի ունեցածը: Ավելի հեշտ են վերապրվում այն իրադարձությունները, որոնք տեղի են ունենում բնական պատճառներով, քան նրանք, որոնց մեղավորները՝ մարդիկ են (կամ մարդ համարվողները):

Արտակարգ իրավիճակի ժամանակ, կամ դրանից հետո, բավականին երկար ժամանակ անհրաժեշտ է սոցիալ-հոգեբանական աջակցության ցանկի առկայությունը: Շատ դեպքերում կարևոր է ոչ այնքան նյութական աջակցությունը, որքան այն միտքը, որ դու մենակ չես, որ ինչ-որ մեկը հասկանում և կարեկցում է քեզ, պատրաստ է օգնության հասնել, բարոյական աջակցություն ցուցաբերել: Միայնության զգացումը, մեկուսացվածությունը, մտերիմների

բացակայությունը կամ շրջապատի կողմից անտարբերությունն ու թշնամությունը սրում է հոգեբանական տրավմայի բոլոր բացասական հետևանքները:

Ինչպես և ցանկացած բարդ իրավիճակներում, հոգեբանական տրավմա ստանալուց հետո մարդուն անհրաժեշտ է ինչ-որ կերպ իմաստավորել այն, ինչ տեղի է ունեցել իր կյանքում: Շատ ավելի հեշտ է հաղթահարել ամենաձանր իրադարձությունների հետևանքները, եթե մարդ կարողանում է ինքն իր համար գտնել տեղի ունեցածի իմաստը:

Դրական գործոն է տուժածի համար իրադարձության ժամանակ և դրանից հետո իր զգացմունքների ու ապրումների մասին պատմելու հնարավորությունը: Հարկ է ընդգծել, որ թերապևտիկ է ոչ այնքան փաստերի, որքան սուբյեկտիվ մտքերի, զգացմունքների, ապրումների արտաբերումը: (Ոչ թե «Պատկերացրեք, ինչ սարսափելի է», այլ «Ես վախենում եմ, ես ցավ եմ զգում, սարսափում եմ»): Սոցիալական նորմերին ու սպասումներին («խիզախ մարդու», «իսկական տղամարդու», «խոնարհ աղջկա») համապատասխանելու ձգտումը հաճախ որոշակի տաբու է դնում շրջապատի հետ վերապրածի մասին կիսվելու հնարավորության վրա, ստիպում է մարդկանց մնալ դեմ առ դեմ կատարվածի հետ:

Արտակարգ իրադարձության մասին բազմաթիվ ընտանիքներ լրատվություն հասցնելով, ՋԼՄ-ները կարևոր դեր կարող են կատարել և կատարում են (ցավոք սրտի, այսօր ավելի շատ բացասական) այս կամ այն իրադարձությունների լուսաբանման ժամանակ:

Դիտարկենք մի քանիսը: Սկսենք լրագրողի ու տուժածի անմիջական շփումներից: Հաճախ տուժածներից տեղեկությունների հավաքագրման, հարցազրույցի ժամանակ լրագրողները ձգտում են ստանալ «ամենասարսափելի, ամենաձանր» պահերի նկարագիրը: Դա բերում է նրան, որ մարդը նորից «ընկղմվում է» նույն իրավիճակի մեջ, ստիպում է վերապրել այն սարսափն ու ցավը, հասցնելով գազաթնակետին ու թողնելով մեն-մենակ իր ապրումների հետ: Բնականաբար, լրագրողը հոգեբույժ չէ, սակայն ռեպորտաժը ավելի զգացմունքային, հագեցած, հետաքրքիր դարձնելու համար հաճախ նա հակասության մեջ է մտնում զրուցակցի մասին հոգատարության և հոգեբանական

բարեկեցության հետ: Այդպիսի գործողությունների մի վառ օրինակ. 1996 թ., ներխուժումից մեկ ամիս անց. Գրոզնիի դպրոցներից մեկում լրագրողները խնդրել են երեխաներին նկարել «ամենասարսափելին», հետո հավաքել են նկարներն ու հեռացել, իսկ երեխաները մնացել են դեմ առ դեմ իրենց ապրումների հետ:

Նման դեպքերում կարելի է խոսել լրագրողների գործողությունների արդյունքում մարդկանց «կրկնակի տրավմայի ենթարկելու» մասին:

ԶԼՄ-ների նման ազդեցության երկրորդ կողմը կապված է նրա հետ, թե ինչպես է ազդում տուժածների վրա նման իրադարձությունների մեկնաբանումը: Հաճախ շեշտը դրվում է տեղի ունեցածի, մտերիմ մարդկանց սպանվելու անիմաստության վրա, օգնության փորձերի բացակայության, շրջապատող մարդկանց անտարբերության, աջակցության բացակայության վրա և այլն, այսինքն, ԶԼՄ-ները էլ ավելի են սրում անօգնականության, անկարողության և անիմաստության զգացումը:

Գործնականում ԶԼՄ-ները հաճախ կիրառում են «տրավմաների հետևանքների վատթարացման եղանակները»: Բավական է հիշել, թե ինչպես էին ԶԼՄ-ները լուսաբանում «Կուրսկ» սուզանավի անկումը: Նույնիսկ այն ժամանակ, երբ անձնակազմի անդամների ճակատագիրը դեռ հայտնի չէր, անընդհատ շեշտը դրվում էր մարդկանց փրկության փորձերի իրականացման անբավարարության և անճշտության, նրանց զոհվելու անիմաստության վրա և այլն (մեկ-մեկ նույնիսկ թվում էր, որ լրագրողները իրենց դասում են սուզանավի փրկարարների շարքին): Հատկապես սարսափելի էր, երբ նրանք ձգտում էին հարցազրույց վերցնել ծովագնացների հարազատներից, որոնք գտնվում էին անորոշության ծանրագույն վիճակում: Ցավոք, այսօր ավելի քիչ են ցուցադրում կարեկցանքը, մարդկանց օգնելու, աջակցելու ցանկությունը, բոլոր ատյաններում խնդրի լուծման ձգտումը: Ավելի քիչ կարելի է հանդիպել ԶԼՄ-ներում լայն իմաստով տեղի ունեցածի դրական նշանակությունը: Բարձր արժանիքներով մարդկանց մահը կարող է դիտարկվել ոչ թե որպես անիմաստ զոհ, այլ որպես մասնագիտական հերոսություն կամ որպես ինչ-որ բան փոխելու հնարավորություն, ապագայում այլոց փրկություն և այլն:

(Հնարավոր է, լրատվության այդպիսի դրական ներկայացումն որոշ լրագրողների համար անհետաքրիիր և անճշմարտանման է թվում):

Երրորդ պահը ԶԼՄ-ների գործողություններում, որն ազդում է հոգեբանական տրավմաների վերապրման վրա՝ դա տեղի ունեցածի պատճառների և մեղավորների փնտրտուքի ուղղվածությունն է: Որոշ առումով դա փակուղային ուղղվածություն է դեպի անցյալ, որը հնարավոր չէ փոխել: Դրա համար «Ինչու է դա տեղի ունեցել» և «Ով է մեղավոր» հարցերը հաճախ ուժեղացնում են հուսահատության, մեղքի կամ ասելության զգացումը: Բայց չէ որ հենց այդ դիրքերից են դիտարկվում ազգամիջյան հակամարտություններն ու դրանց հետևանքները: Երկար կարելի է մտորել ինգուշ-օսեթական, վրաց-աբխազական կամ սերբ-բոսնիական հակամարտության մասին, ուժեղացնելով միմյանց հանդեպ թշնամությունը և հող պատրաստելով նոր հակամարտությունների համար: Անցյալի վրա ուղղվածությունը ստիպում է մարդկանց, որոնք վերապրել են արտակարգ իրավիճակը, կենտրոնացնել ուշադրությունը այն պահի վրա, թե «ինչ կլիներ, եթե...», այլ ոչ թե նրա վրա, թե ինչպես շարունակել ապրել, ինչպես հաղթահարել, ինչ դաս քաղել հետագայի համար, ինչպես անել, որ իրադարձությունը չկրկնվի, ինչպես վերացնել նրա հետևանքները և այլն: Ցավոք, ԶԼՄ-ներում երբեք չի արվում «ինչպես» շեշտադրումը, այսինքն, չկա և ապագայի ուղղվածությունը:

Որոշ դեպքերում ԶԼՄ-ներն իրենք կարող են հոգեբանական տրավմա առաջացնել: Առաջին հերթին դա վերաբերում է հեռուստատեսությանը: Հեռուստատեսությունը ամեն մի ընտանիքում «թողնում» է տրավմատիկ իրադարձությունները, որոնց շնորհիվ միլիոնավոր մարդիկ «սովորում» են արտակարգ իրադարձություններին, ընդ որում, մենք հնարավորություն ենք ստանում այդ իրադարձությունների ականատեսը (գրեթե մասնակիցները) դառնալ:

Երբեմն տրավմայի ենթարկող իրադարձությունների, հատկապես, մահացած կամ մահացող մարդկանց վառ ցուցադրումը ինքնըստինքյան կարող է հեռուստադիտողների մոտ տրավմատիկ ապրումներ առաջացնել, որոնք նման են իրական ականատեսների ապրումներին: Իսկ եթե որևէ սարսափելի իրադարձության մասին ռեպորտաժն ուղղորդվում է այն գիտակցմամբ, որ նման

բան կարող էր կատարվել դիտողի կամ նրա հարազատների հետ, ապա այդ հոգեբանական վիճակի հետևանքները մարդու համար կարող են շատ երկար տևել:

Սա հատկապես վերաբերվում է երեխաներին ու պատանիներին, քանի որ նրանք ունեն հարուստ երևակայություն: Ահաբեկչության կամ աղետի հետևանքների մասին կադրեր նայելուց հետո դպրոցահասակ երեխաների մոտ նկատվում են սարսափների, քնի խանգարման, վախի երևույթներ: Օրինակ, հինգ տարեկան աղջիկը լուրերի թողարկումը դիտելուց հետո վախենում էր տանը մենակ մնալ, վախից չէր հեռանում մորից, հաճախ էր լացում, արթնանում մղձավանջներից: 8 տարեկան տղան, դիտելով «թեժ կետում» գործողությունների մասին կադրերը, ճնշված սպասում էր, որ «դիմակները» (դիմակներով զինված մարդիկ) կգան ու բոլորին կսպանեն: Ընդ որում, այդպիսի խախտումներն երեխաների մոտ առաջանում են լրահոսը դիտելուց հետո: Հետաքրքիր է, որ նախադպրոցական և դպրոցական հասակի երեխաները տարբերում են ռեալ իրադարձությունների լրահոսը գեղարվեստական ֆիլմերից: Ըստ բազմաթիվ ուսուցիչների դժգոհությունների, Մոսկվայի ահաբեկչության հետևանքների ցուցադրումից հետո ի հայտ է եկել պատանեկան հասակում հետտրավմատիկ խանգարումներին բնորոշ ագրեսիայի բարձրացում:

Մեծերի մոտ հաճախ հանդիպում են ճնշվածություն, դեպրեսիա, վախեր: Հնարավոր է, Մոսկվայում տների պայթյուններից հետո որոշ մարդկանց, հատկապես կանանց մոտ խուճապային տրամադրություններ են առաջացել ոչ այնքան տեղի ունեցածից, որքան լրատվության ներկայացումից ու մեկնաբանումից: Հաճախ մեծահասակ հիվանդները բողոքում են ճնշվածությունից, վատ տրամադրությունից: Որոշ դեպքերում հիվանդներին արգելվում էր մի քանի օր հետևել լուրերի թողարկմանը, որպեսզի նրանք լավացում զգան: Իհարկե, այստեղ խոսք չի գնում լուրջ ախտանիշների մասին, սակայն նույնիսկ այդպիսի անցողիկ ազդեցությունը հուզական վիճակի վրա պետք է լուրջ մտածելու տեղիք տա: Նույնը կարելի է ասել ՀՀ Տավուշի մարզում ադրբեջանցիների կողմից հայկական բնակավայրերի վրա հարձակումների վերաբերյալ:

Անհրաժեշտ է խոսել նաև ՁԼՄ-ների մասնակցության ևս մեկ երևույթի մասին, որը հաճախ ուղղորդում է արտակարգ իրավիճակները, կապված տեղի ունեցածի մասին տեղեկատվության անորոշության ու անբավարարության հետ: Դա լուրերի տարածումն է:

Ցավոք, ուրիշներից առաջ ընկնելու ձգտումը, սենսացիոն նյութի ներկայացումը, կամ ուղղակի անբավարար պրոֆեսիոնալիզմը հանգեցնում են շատ ՁԼՄ-ներում չստուգված լրատվության ներկայացմանը: Տեղեկատվության և ստուգված տեղեկատվության մեջ շատ մեծ տարբերություն կա: Առանձին վկաների կարծիքների ապավինման միտումը, առանց վկայի հոգեբանության հաշվի առնելու, հանգեցնում է նրան, որ լրագրողները ավելորդ վստահություն են ցուցաբերում մարդկանց՝ արտակարգ իրավիճակներում ամեն ինչը հստակ ընկալելու և մեկնաբանելու ընդունակության հանդեպ: Դժվար է ասել, ինչի հետ է այդ կապված. հոգեբանությանը չտիրապետելու և անազնվության, թե ՁԼՄ-ները կարևոր դեր են խաղում լուրերի տարածման, հետևաբար՝ իրավիճակի սրման, անմեղներին մեղադրանք ներկայացնելու, տարբեր «սարսափների» ներկայացման գործում:

Ո՞րն է, ի վերջո, ՁԼՄ-ների նման ազդեցության հիմնական պատճառը: Մեր կարծիքով, հիմնական պատճառը նախևառաջ կայանում է նրանում, թե ինչ նպատակներ են դնում (կամ չեն դնում) իրենց առջև լրագրողները: Հաճախ թվում է, թե այս կամ այն նյութը պատրաստելուց լրագրողը ուզում է ստեղծել պայծառ, զգացմունքային հետաքրքիր ակնարկ, հոդված, ռեպորտաժ: Ուղղակի ցուցադրել ամենաահավորը, ցնցել մարդկանց և իր լրատվամիջոցի վրա հրավիրել առավելագույն ուշադրություն: Օրինակ, ես կարող եմ տեսնել մարդկանց դիակների պատկերների ցուցադրություն եթերում, զոհված զինվորների դիակների կադրեր՝ ամբողջ էկրանով, մոտիկից նկարահանած, նույնիսկ հոգեհանգստի արարողություն, ծնողների ողբ: Երբեմն ինքը՝ ցնցված լրագրողն ուզում է հաղորդել սեփական տպավորությունները և ցուցադրել բոլորին. «Տեսեք, թե ինչքան սարսափելի է»: Հենց այդ առաջին հայացքից հասկանալի նպատակներն էլ հասցնում են վերը նշված հետևանքներին: Միևնույն ժամանակ, լրագրողները, կարծես, քիչ են մտածում նրա մասին, թե կոնկրետ ինչ տպավորություն էին ուզում ստեղծել մարդկանց մոտ իրենց

հողվածներով կամ հաղորդմամբ, ընդ որում, և լայն լսարանի, և իրենց հերոսների շրջանակում: Չգիտես ինչու, շատ հազվադեպ է երևում մարդկանց օգնելու, իրավիճակը հաղթահարելու նպատակը, հաճախ մենք տեսնում ենք ցնցելու, զարմացնելու, վախեցնելու ցանկությունը և այլն: Գուցե այսօր, երբ ԶԼՄ-ները դարձել են գրեթե բոլոր մարդկանց կյանքի մի մասը, լրագրողի ցանկացած կոնկրետ աշխատանքի նպատակի հարցը այլևս չի կարելի անտեսել:

Այժմ դիտարկենք ռադիոյի միջոցով տեղեկատվահոգեբանական ազդեցության առավելությունները և թերությունները: Որպես առավելություններ համարվում են[45].

1. Ինտելեկտուալ և զգայական ազդեցության համատեղելիություն. ռադիոյին զգայական ազդեցության մեծ հնարավորություն է տալիս ձայնի տոնայնության, իմաստային դադարների, աղմուկի, երաժշտության և այլ միջոցների օգտագործումը:

2. Լսարանի հետ ուղիղ կապ հաստատելու հնարավորություն. ռադիոյի միջոցով տեղեկատվություն հաղորդողը և ստացողը գտնվում են ակուստիկ հաղորդակցման վիճակում, ինչը մտերմացնում է նրանց և առաջացնում է «մասնակցի էֆեկտ»:

3. Տեղեկատվության հաղորդման մեծ օպերատիվություն. ռադիոհաղորդում պատրաստելու համար պահանջվող ժամանակն ավելի փոքր է, քան տպագրության, ինտերնետի կամ հեռուստաթերի հեռարձակման համար անհրաժեշտ ժամանակը:

4. Զանգվածային լսարան գրավելու լայն հնարավորություններ. ռադիոն կարող է ներառել լսարանի բոլոր շերտերին՝ երիտասարդներ, երեխաներ, կանայք, ծերեր, զինվորներ և այլն:

5. Ռադիոհեռարձակումը կախված չէ օրվա ժամից կամ եղանակից. այն հնարավոր է իրականացնել երբ կարիք լինի՝ նույնիսկ թաքցնելով հեռարձակողի ինքնությունը և նպատակները: Ռադիոհեռարձակման կայանի տեղը կարելի է հայտնաբերել միայն համապատասխան տեխնիկայի միջոցով:

6. Տարբեր ժանրերի կիրառում՝ քարոզչական նպատակին հասնելու համար:

7. Ունկնդրելու հնարավորություն այլ գործով զբաղվելու ժամանակ. եթե թերթ կարդալիս կամ հեռուստացույց դիտելիս գրեթե հնարավոր չէ այլ գործով զբաղվել,



նադիո կարելի է լսել մեքենա վարելիս, քայլելիս (ականջակալներով), խոհանոցային և այլ աշխատանքների ժամանակ:

Որպես թերություններ դիտարկվում են.

1.Տեսապատկերի հաղորդման անհնարինությունը:

2.Եթե թերթի նյութը կարելի է պահել և կարդալ առավել հարմար վայրում և առավել հարմար ժամանակ, ռադիոն լսում են միայն մեկ անգամ (երբեմն նաև մի քանի, երբ նյութը վերահեռարձակվում է):

3.Ռադիոհաղորդագրությունն, ի տարբերություն տպագիր մամուլի հաղորդած տեղեկատվության, «ապրում» է այնքան, որքան տևում է ռադիոհաղորդումը:

Ռադիոյով տեսապատկերի հաղորդման անհնարինությունը, բացի թերություն լինելուց, ունի նաև առավելություն: Հետազոտություններն ապացուցել են, որ ռադիոհաղորդումներում տեսապատկերի բացակայությունն ակտիվացնում է լսողի պատկերացումը, ինչը հաղորդվող տեղեկատվությանը տալիս է լրացուցիչ հավաստիություն և զգացմունքայնություն:

Կանադացի սոցիոլոգ Մարշալ Մաքկլուենը ռադիոն անվանում է տեղեկատվության փոխանցման «տաք» միջոց, իսկ հեռուստատեսությունը՝ «սառը», որովհետև այն լսարանի համար պատկերացումների դաշտ չի թողնում: Նա նշում է, որ տպագրությունը խորացրել և զարգացրել է մարդկանց անհատականությունը, իսկ ռադիոն կատարել է հակառակը՝ վերադարձնելով մարդկանց ցեղային կյանքի սարդոստայն: «50-ականներից սկսած, երբ ռադիոն տարածվեց ամենուր, մեր պատանիները սկսեցին ցուցադրել ցեղային պահվածքի շատ նմանություններ, ցեղային կենսակերպին հատուկ վարքագծեր»[45, էջ 57]:

Դիտարկենք ռադիոյի միջոցով հոգեբանական ազդեցության դրսևորումները Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Լուսաբանման համար ընտրվել է Երկրորդ համաշխարհային պատերազմը, քանի որ ռադիոքարոզչության փորձը սկսեց ձևավորվել հենց այս շրջանում՝ պատերազմի ժամանակ, և շատ տեխնոլոգիաներ մինչև այժմ անփոխարինելի են մնացել: Երկրորդ համաշխարհայինի սկզբում ռադիոյի քարոզչական հնարավորությունները լավագույնս օգտագործեց Գերմանիան: 1940թ. Գերմանիայում պատրաստում էին

նադիոհաղորդումներ 30 լեզուներով: Իսկ այլ երկրների քարոզչական ազդեցությունը կանխելու համար 1939-ից Գերմանիայում արգելվում էր լսել այլ երկրների պատրաստած ռադիոհաղորդումները. դրանցից ստացած տեղեկատվության տարածման համար նույնիսկ մահապատիժ էր նախատեսված[118]: Հիտլերը ռադիոյին մեծ դեր էր տալիս նաև սեփական բնակչության վրա տեղեկատվահոգեբանական ազդեցություն իրականացնելու առումով: Նրա բոլոր ելույթները հեռարձակվում էին ռադիոյով՝ օգտագործելով ձայնային ազդեցության այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք ավելացնում էին ազդեցիկ զգացողությունները: Հիտլերի բոլոր ելույթներն ուղեկցվում էին Վազների օպերաներով, որոնք հզորության, մոտեցող ռազմական մեքենայի տպավորություն էին թողնում:

Գերմանիայում ռադիոքարոզչության ոլորտի ամենամեծ հաջողություններից էին 1940թ. Ֆրանսիայի օկուպացիային նախորդած գործողությունները, երբ այսպես կոչված «սև» ռադիոհեռարձակիչ կայանները (դրանք գործում էին ֆրանսիական ռադիոկայանների անվան տակ) տարածում էին խուճապ առաջացնող լուրեր և քննադատում էին ֆրանսիական կառավարության գործողությունները: Նմանատիպ ռադիոկայաններ սկսեցին գործել ռազմական գործողություններից երկու ամիս առաջ, և արդյունքը եղավ այն, որ բուն ռազմական հարձակման ժամանակ ֆրանսիական բանակի բարոյական ոգին այնքան ցածր էր, որ լուրջ դիմադրություն գրեթե չցուցաբերեց[58, էջ 351]:

Երկրորդ համաշխարհայինի սկզբին գերմանական զորքերն ունեին շարժական ռադիոկայաններ, որոնք հեռարձակում էին գերմաներեն լեզվով՝ սեփական զորքերի և ռուսերեն լեզվով (խորհրդային բանակի ճակատում)՝ հակառակորդի զորքերի և բնակչության համար[58, էջ 359]:

1938-ից բրիտանական Բի-Բի-Սի-ն սկսեց ընդլայնել գերմաներեն լեզվով հեռարձակումները: Բրիտանացիները սկզբում նաև խլացնում էին գերմանական ռադիոհաղորդումները, որոնք հեռարձակվում էին Անգլիայի տարածքում, իսկ հետագայում, երբ համոզվեցին դրա անարդյունավետության հարցում, դադարեցին խլացնել դրանք: ԻՍՍՏ-ից նույնպես հեռարձակվում էին գերմաներեն

հաղորդումներ. նույնիսկ Մոսկվայից ռադիոհեռարձակում էին իրականացնում գերմանացի հակաֆաշիստները: Մոսկվայի ռադիոկայանի լսարանը Գերմանիայում մեծացավ Ստալինգրադի ճակատամարտից հետո, երբ խորհրդային ռադիոն եթերում սկսեց հաղորդել գերմանացի գերիների անունները և հեռարձակել գերիների նամակները՝ ուղղված հարազատներին[58, էջ 375]:

Պատերազմի ժամանակ ռադիոյի դերը հսկայական էր նաև ներքին լսարանի վրա ազդելու հարցում: Խորհրդային հայտնի լրագրող Յուրի Գալպերինը գրում է. «Հայրենական պատերազմը ռադիոն դարձրեց հացի պես կարևոր: Երբ ավարտվեց պատերազմը, մարդիկ ոգևորությամբ սկսեցին վերականգնել երկիրը, և ռադիոն ամենաձայրամաս էր հասցնում բարի լուրերը՝ վերականգնվող քաղաքների, գյուղերի, գործարանների մասին: Ամեն առավոտ մարդիկ գործի գնալուց առաջ լսում էին «Վերջին լուրերը»[37, էջ 163]:

Մի քանի տասնամյակ անց մարդիկ սկսեցին նույն ոգևորությամբ լսել ամերիկյան և բրիտանական ռադիոեթերը: 1980թթ. սկսած՝ ԽՍՀՄ-ը ռադիոյի խլացման հնարավորությունների 70%-ն օգտագործում էր «Ազատ Եվրոպա», «Ազատություն» ռադիոկայանների խլացման համար, իսկ «Ամերիկայի ձայնին» հատկացվում էր 10%: 20%-ն էլ օգտագործվում էր այլ երկրների ռադիոեթերը խլացնելու համար[30, էջ 297]: Թե ինչո՞ւ էր խորհրդային մարդը նախընտրում արտասահմանյան ռադիոեթերը՝ առանձին ուսումնասիրության թեմա է:

ԱՄՆ-ում, 1960-ականներից սկսած, հեռուստաեթերի ուսումնասիրություններն ապացուցել են, որ հեռուստատեսությունը բոլոր դեպքերում ներկայացնում է կեղծ իրականություն[118]: Օրինակ, ուսումնասիրությունների շրջանում ԱՄՆ հեռուստաեթերում ագրեսիվ գործողությունների է դիմել ցուցադրվող կերպարների 50 տոկոսը, իսկ համաձայն Հետաքննությունների դաշնային բյուրոյի տվյալների՝ նույն ժամանակահատվածում ագրեսիվ քայլերի է դիմել ամերիկացիների միայն 1 տոկոսը: Մեդիա մեկնաբան Մ.Մաքլյուենի կարծիքով՝ հեռուստատեսությունն ազդում է՝ անկախ իր բովանդակությունից: «Հեռուստատեսության ազդեցությունը շատ դժվար է գիտակցել, որովհետև այն ազդել է մեր կյանքի բոլոր՝ անձնական, սոցիալական, քաղաքական ոլորտների վրա»[66, էջ 27]:

Հեռուստատեսությունը միավորում և մասնատում է ազգերին, աջակցում հեղափոխություններին և լռեցնում դրանք: Հեռուստաէկրանը դարձել է ընտանիքի միավորման կենտրոնը, ինչպես ժամանակին կրակն էր (օջախը): Էկրանի առջև միջին վիճակագրական մարդն ավելի շատ ժամանակ է անցկացնում, քան որևէ դարում անցկացրել է տաճարներում կամ պաշտամունքային այլ վայրերում: Հեռուստատեսությունն է դարձել մարդկանց գրույցի նյութ տվող հիմնական աղբյուրը, և այն իրադարձությունները դարձնում է կարևոր կամ ոչ կարևոր: Հեռուստատեսությունը թույլ է տալիս ընտրել՝ ազդեցությունն իրականացնել տեքստային/վերբալ, թե պատկերային ձևով: Տեքստային ձևն ուղղված է մասնագիտական և ինտելեկտուալ լսարանին, որը պահանջում է փաստեր, թվեր, հաշվարկներ, վիճակագրություն: Իսկ պատկերային ազդեցությունն ուղղված է հասարակ, ոչ մասնագիտական լսարանին, որոնց ավելի շատ անհրաժեշտ են հուզիչ տեսարաններ, դրամատիկ պատմություններ ու սենսացիաներ: Երկրորդ տարբերակն առավել ազդեցիկ է, քանի որ ազդեցությունը գործում է զգացմունքների վրա՝ ենթագիտակցական մակարդակում: Էլեկտրոնային հաղորդակցության միջոցներն ընդհանրապես և հեռուստատեսությունը՝ մասնավորապես, ժամանակակից հասարակությունում, բացի մանիպուլյացիայի հնարավորությունից, առաջացնում են նաև մի շարք խնդիրներ, օրինակ՝ տեխնոլոգիապես հագեցած մարդուն բնորոշ ձանձրույթը. «Չորս ժամ հեռուստացույց դիտող մարդն, ամենայն հավանականությամբ, ձանձրանում է, այսինքն՝ հեռուստացույցը ոչ այնքան «փրկում» է ձանձրույթից, որքան դառնում դրա արտահայտման միջոցը»: [118] Գերմանիայում 1996թ. արված ուսումնասիրությունները պարզել են, որ բնակչության 57%-ն անհանգստացած է միջանձնային հաղորդակցության վրա նորագույն տեխնոլոգիաների ունեցած ազդեցությունից, քանի որ դրանք աջակցում են միայնակությանը, որովհետև հեռուստացույցը կամ հեռախոսը փոխարինում են մարդկանց կենդանի շփումներին: [118]

Մեդիայի և հաղորդակցության տեսաբան Ջեյմս Հալլրանը, չնկատելով, կամ չցանկանալով նկատել բազմաթիվ վերլուծությունները և ապացույցները, մեդիայի և բռնության միջև փոխկապակցվածության մասին գրում է. «Դեռևս չկա բավարար

վկայություն, որը կհաստատեր ուղղագիծ, պատճառահետևանքային կապեր հեռուստապաստառին պատկերվածի և սոցիալական վարքի միջև՝ ոչ դրական, ոչ բացասական առումով»[118]: Նման փորձագետների կարծիքների վրա են հիմնվում հեռուստատեսությունների կոմերցիոնացման կողմնակիցների փաստարկները և պնդումները: 1990-ականների սկզբներին մի խումբ սոցիալական հոգեբաններ հեռուստահաղորդումների դիտումը տեղափոխեցին լաբորատորիա, ինչը նրանց թույլ տվեց հսկել բռնության քանակը հեռուստատեսությամբ: Փորձերին մասնակցող տարրական դասարանների երեխաներին բաժանեցին երկու խմբի. մի խմբին ցուցադրեցին դաժանություն պարունակող, մյուսին՝ առանց դաժանության հեռուստանյութեր: Այն երեխաները, ովքեր միայն մեկ դրվագ էին դիտել այն ժամանակների համար ԱՄՆ-ում հայտնի՝ «Անհաղթահարելի ռեյնջերներ» մանկական հաղորդաշարից (այստեղ կային բռնության դրվագներ), դիտումից հետո երկու ընթացքում ցուցադրեցին յոթ անգամ ավելի շատ ագրեսիվ պահվածք, քան այն երեխաները, ովքեր չէին դիտել այդ հաղորդումը[118]: «Էկրանային դաժանությունները կարող են սկզբում ենթագիտակցական, հետագայում՝ նաև գիտակցական մակարդակում էքստրեմիստական, ֆանատիկ, դաժան արարքների ձևավորողները լինել, որոնց հիմքը հանդիսանում է սոցիալական արդարության սեփական հասկացողությունը»[118]:

Քանի որ ընդօրինակումը ուսուցողական հիմնական ձևերից է, հեռուստատեսությունը դարձել է այս ոլորտի առաջատարներից մեկը, եթե ոչ՝ առաջատարը: Մարդկանց վրա ընդօրինակման միջոցով սովորեցնելու փորձեր է իրականացրել հոգեբան Ա.Բանդուրան: Գիտափորձերից մեկի ժամանակ նա երեխաներին տեսանյութ է ցուցադրել, որտեղ մեծահասակը մուրճով խփում է տիկնիկի գլխին: Երբ դրանից հետո երեխաներին տիկնիկների հետ խաղալու հնարավորություն են տվել, նրանք շատ առումներով նույնանման վարքագիծ են ցուցաբերել [118]: Դիտումն ու ընդօրինակումը ամենաարդյունավետ ուսուցման մեխանիզմներից են. այդ պատճառով արժե լուրջ մտածել, թե մեր փոքրիկներն ինչ համակարգչային խաղեր են խաղում, ինչ մուլտֆիլմեր և հաղորդումներ են դիտում:

3.2 «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» ծրագիրը (ձևավորող գիտափորձ)

«Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» մեր կողմից կազմված ծրագիրը նախատեսված է լրագրողների, լրագրություն մասնագիտությամբ ուսումնառողների համար: Մշակվել և կազմակերպել ենք հատուկ ուսուցողական պարապմունքներ, որոնց մասնակիցների թվաքանակը եղել է 127-ը: Պարապմունքների ընթացքում պարզաբանել ենք արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների բացահայտված անձնային գործոնների սուբյեկտիվ ընկալումները:

Մենք ենթադրել ենք, որ լրագրողների անձնային գործոնները, այդ թվում նաև մեր կողմից ուսումնասիրվածները, դիտվում են կոնկրետ չափաքանակով: Այսինքն՝ յուրաքանչյուր հատկություն կամ գործոն դիտվում է բևեռային իմաստով, ինչպես օրինակ՝ Ռ. Քեթթելի, Սպիլբերգեր-Խանինի մեթոդիկաներում:

Ստորև ներկայացնում ենք մեր կողմից մշակված ծրագիրը, թեմատիկ բովանդակությունը ժամաքանակով և վերջնարդյունքներով: Նշված ծրագրով կազմակերպված ուսուցողական պարապմունքներից հետո կազմակերպվել է նաև նույն ընտրակազմի ռեթեստավորում, որը կներկայացվի հաջորդ ենթագլխում:

**«Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» ԾՐԱԳԻՐ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Աղետները, պատերազմները, արտակարգ իրավիճակները հասարակության պատմությանն ուղեկցող անխուսափելի երևույթներ են, դրանք իրենց ծագումով, հաճախականությամբ և բնույթով տարատեսակ են և կարող են կործանարար հետևանքներ ունենալ ցանկացած հասարակարգի համար: Արտակարգ իրավիճակները ոչ միայն խաթարում են հասարակության բնականոն զարգացումը, այլև կարող են խորը հետք թողնել հասարակության առանձին շերտերի,

տարիքային բոլոր խմբերի և խմբավորումների, անհատների վրա՝ վտանգելով նրանց ֆիզիկական և հոգեկան առողջությունը: Այս իմաստով շատ կարևոր է արտակարգ իրավիճակներում հասարակության հետ անմիջական կապ ունեցող մասնագետների հոգեբանական պատրաստվածությունը:

Արտակարգ իրավիճակների հետևանքների վերացում հասկացությունը ՀՀ օրենքը մեկնաբանում է որպես արտակարգ իրավիճակներում փրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքների կատարում՝ մարդկանց կյանքի ու գործունեության բնականոն պայմաններ ապահովելու համար: Արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման հարցում պակաս կարևոր չէ ՋԼՄ-ների դերն ու գործունեությունը, քանի որ դրանք կարող են հսկայական վերականգնողական կամ հակառակ նշանակությունը ունենալ լայն զանգվածների վրա:

ՋԼՄ-ները և լրագրողական գործունեությունը սոցիալական կառավարման կարևորագույն գործոնի դեր են կատարում հատապես արտակարգ իրավիճակներում, մեծ ազդեցություն են ունենում ժամանակակից անհատի վրա, ինչը և պայմանավորում է ՋԼՄ-ների փոխհատուցող ռեսուրսների իմացության և հասկացման կարևորությունը: «Փոխհատուցող» ռեսուրսներ ասելով, նկատի է առնվում արտակարգ իրավիճակի պայմաններում հայտնված մարդկանց հոգեկան, մասնավորապես՝ հուզական և ֆիզիկական վիճակի վրա դրական ազդեցություն գործելու ՋԼՄ-ների հատկությունը:

Այսօր արտակարգ իրավիճակների մասին տեղեկատվությունը, որպես կանոն, գերակայում է այլ իրադարձությունների լուսաբանման նկատմամբ: Այդպիսի բնույթի տեղեկատվության գերակայությունը ձևավորում է զանգվածային գիտակցության հարմարման էֆեկտ աղետների, դրանց անխուսափելիության նկատմամբ: Այդ ամենի արդյունքում հասարակության մոտ արտակարգ իրավիճակներում չի գործում անվտանգ վարքի ադեկվատ ընկալումը:

Այսպիսով, ակնհայտ է այն հակասությունը, որն առկա է զանգվածային գիտակցության վրա ազդող սթրեսաձին գործոնների աճի և ՋԼՄ-ների փոխհատուցողական ազդեցության նվազման միջև: Արտակարգ իրավիճակի

իրական մակարդակի և տեղեկատվական դաշտում դրա լուսաբանման բնույթի միջև հավասարակշիռ հարաբերակցության բացակայությունը հանգեցնում է նրան, որ մարդիկ հայտնվում են կրկնակի հոգեբանական ճնշման տակ՝ անմիջական տվյալ իրավիճակի և լրատվամիջոցներում դրա լուսաբանման:

ԶԼՄ-ներն, ըստ էության, հանդիսանալով հասարակության սոցիալական կարգավորիչ, չեն նպաստում արտակարգ իրավիճակում հասարակության սոցիալ-հոգեբանական կայունությանը և չեն իրականացնում իրենց առաջնային խնդիրներից մեկը՝ զանգվածային գիտակցության հոգեշտկում: Մարդն արտաքին միջավայրում անընդհատ ստիպված է հարմարվել այդ միջավայրի առաջադրած պայմաններին: Հաճախ միջավայրն ու բնությունը մարդու համար ստեղծում են այնպիսի արտակարգ իրավիճակներ, որոնք մարդը միայնակ ի վիճակի չէ հաղթահարել: Հետազոտման է ենթակա լրագրողների հոգեբանական վիճակը բուն արտակարգ իրավիճակում և դեպքի վայրից լուրը հաղորդելիս: Գաղտնիք չէ, որ ինչ հոգեվիճակում լրագրողը հայտնեց լուրը, կրկնապատիկ ազդեցիկ է լինում հեռուստատեկրանի առջև նստած քաղաքացիների համար, և լրագրողն իր վարքագծով կարող է կամ խուճապ առաջացնել՝ դրանից բխող բացասական հետևանքներով, կամ հանգստության, ապահովության զգացում սփռել: Սա բավականին բարդ իրավիճակ է, երբ լրագրողը մի կողմից պետք է ճշմարիտ տեղեկատվություն հաղորդի, միևնույն ժամանակ կարողանալով կառավարել իր զգացմունքները, հույզերը՝ չառաջացնել խուճապ: Այսօրվա հրամայականն է գիտականորեն հիմնավորել արտակարգ իրավիճակներում տեղեկատվությունը լուսաբանող լրագրողի հոգեբանական պատրաստվածության անհրաժեշտությունը, քանի որ 1988 թվականից հետո պաշտոնապես հաստատվել է, որ Հայաստանը սթրեսաձին գոտի է, իսկ 25-ամյա պատմություն ունեցող հանրապետության համար վերոնշյալ խոշոր աղետները բավարար հիմք են տալիս այդ պնդման համար: Հետևաբար, լրագրողները հոգեբանորեն մշտապես պետք է պատրաստ լինեն աշխատել արտակարգ իրավիճակներում: Իսկ դրա համար անհրաժեշտ է ունենալ բավարար հոգեբանական պատրաստվածություն՝ նախ, տեղեկատվություն հաղորդելիս հասարակության մեջ խուճապ չառաջացնելու նկատառումով, ապա



նաև սեփական անձը չվնասելու համար, քանի որ, որպես կանոն, արտակարգ իրավիճակներ լուսաբանելուց հետո լրագրողները ընկնում են երկարատև ընկճախտի մեջ:

Մեր հասարակության մեջ ոչ բավարար ուշադրություն է հատկացված արտակարգ իրավիճակներում ՋԼՄ-ների գործունեության դերին ու նշանակությանը: Լրագրության վերաբերյալ գրականության մեջ այն առկա է այլ խնդիրների և ուղղությունների համատեքստում, որտեղ շեշտը դրվում է տեղեկատվության մատուցման էթիկական կողմի վրա, հոգեբանության, որտեղ փորձում են պարզել տեղեկատվական ազդեցության չափը բնակչության հոգեկան վիճակի վրա: Բայց կոնկրետ լրագրողի վրա թողած հոգեբանական ազդեցության, և նրա միջոցով հանրությանը հաղորդած հոգեբանական ազդեցության հիմնախնդիրը մանրամասնորեն ուսումնասիրված չէ: Բացի այդ, ոչ բավարար հետազոտության են ենթարկվել տեղեկատվության որակական և քանակական չափորոշիչները, դրա սոցիալ-հոգեբանական և քաղաքական ուղղվածությունը, այսինքն՝ արտակարգ իրավիճակի պայմաններում տեղեկատվության կառավարման յուրահատկությունը: Հոգեբանական պատրաստվածությունը շատ կարևոր է նախ լրագրողների առողջության և ներդաշնակ հոգեկան վիճակի պահպանման համար, քանի որ երբեմն ողբերգական իրավիճակներում աշխատելիս նրանք ունենում են հոգեբանական աջակցության կարիք:

Դասընթացի նպատակն է մասնակիցներին (լրագրողներ, լրագրություն մասնագիտությամբ ուսումնառողներ և ոլորտի այլ մասնագետներ) սոցիալ-հոգեբանական տեսական և գիտագործնական գիտելիքների հաղորդումը, լրագրողի անձի և նրանց գործունեության լսարանի վրա խմբային սոցիալ-հոգեբանական երևույթների բացասական ազդեցությունների նվազեցմանն ուղղված կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Դասընթացի խնդիրներն են.

- հաղորդել մասնակիցներին գիտելիքներ արտակարգ իրավիճակներում անձի հարմարման առանձնահատկությունների, սոցիալական մեծ խմբերի՝ մասնավորապես ամբոխի, նրա տեսակների մասին,

- հաղորդել գիտելիքներ սոցիալ-հոգեբանական երևույթների՝ խուճապի, ապատեղեկատվության և անձի վարքի օրինաչափությունների մասին,
- ձևավորել հույզերը կառավարելու համար անհրաժեշտ կարողություններ,
- զինել արտակարգ իրավիճակներում, ռազմական և ահաբեկչական գործողությունների գոտում, ամբոխի կազմում լրագրողական գործունեություն իրականացնելիս անձի անվտանգության պահպանման համար անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով և իրականացնել խորհրդատվություն:

Դասընթացի ուսումնական նյութի բովանդակության ընտրության և կազմակերպման սկզբունքներն են.

- գիտականության,
- մշակութաօրհարմարության,
- ամբողջականության,
- հաջորդականության և համակարգվածության:

Մասնակիցների ուսուցման ձևերն ու մեթոդները. ինտերակտիվ դասախոսություններ, գործնական պարապմունքներ, դերային մասնագիտական խաղեր, բաց դասեր, զեկույցների պատրաստում:

#### ԹԵՄԱՏԻԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր ժամաքանակը՝ 60 ժամ, որից դասախոսություն՝ 20 ժամ, գործնական պարապմունք՝ 12 ժամ, ինքնուրույն ուս. ծանրաբեռ.՝ 28 ժամ:

#### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 1. Անձի սոցիալ-հոգեբանական ադապտացիան և դեզադապտացիան արտակարգ իրավիճակներում

Ադապտացիայի հիմնահարցը ներբիհեյվորիստական, ինտերակցիոնիստական և հոգեվերլուծական աշխատություններում (<Այզենկի,

Լ.Ն.Ֆիլիպսի, Հ.Հարտմանի, Ա.Ֆրեյդի մոտեցումները):Սոցիալ-հոգեբանական հարմարվածության չափանիշները: Սոցիալ-հոգեբանական ադապտացիայի տարատեսակները:Սոցիալականացում և ադապտացիա: Ադապտացիայի հիմնախնդրի կառուցվածքային-ֆունկցիոնալ մոտեցումները:

Ճգնաժամերի առաջացման և զարգացման հոգեբանական մեխանիզմները, տազնապ, վախ, սթրես, ֆրուստացիա, աֆեկտ, կոնֆլիկտ, ճգնաժամ: Տազնապայնության վիճակ հասկացության բնութագիրը: Անձնային և իրադրային տազնապայնություն: Վախի առաջացման պայմանները: Վախի ուսումնասիրությունները Ե. Իզարդի աշխատություններում: Ֆորբան որպես վախի յուրահատուկ տեսակ: Սթրեսի հիմնադրույթը Հ.Սելլեի ուսմունքում: Ընդհանուր հարմարվողական համախտանիշ: Հոմեոսթազի տեսությունը որպես սթրեսի ուսմունքի տեսամեթոդաբանական հիմք: Կարճատև, հուզական երանգավորմամբ, իմպուլսիվ վարքային հակազդումներով և տևական սթրեսներ: Սթրեսի զարգացման փուլերը: Հետտրավմային սթրեսային խանգարումների առաջացման պայմանները և զարգացման դինամիկան: Ֆրուստրացիայի սահմանումը: Ֆրուստրացիոն վարքի տեսակները, շարժողական գրգռվածություն, ապատիա, ստերեոտիպիա, ագրեսիա և դեստրուկցիա, ռեգրեսիա: Ֆրուստրացիայի կառուցողական և ապակառուցողական ներգործության ձևերը: Աֆեկտի հոգեբանական նշանակությունը և առաջացման պատճառները: Աֆեկտի ախտորոշիչ նշանները: Ֆիզիոլոգիական և ախտաբանական աֆեկտի տարբերությունները: Աֆեկտիվ գրգռվածության դինամիկան: Հոգետրավմային, աֆեկտաժին իրավիճակների նշանները: Գաղափար անոմալ աֆեկտի մասին: Կուտակված (կումուլյատիվ) աֆեկտ: Կոնֆլիկտ հասկացության հոգեբանական բովանդակությունը: Կոնֆլիկտի մեկնաբանության հակասականությունը հոգեբանության մեջ: Կոնֆլիկտի ըմբռնման կոգնիտիվ, բիոեյվոլորիստական և հոգեդինամիկական մոտեցումները: ճգնաժամերի տեսության մեթոդաբանական հիմքերը (էվոլյուցիայի և ադապտացիայի տեսությունները, մարդկային ձեռքբերումների մոտիվացիայի և տարիքային շրջաբաժանումների տեսությունները): Ճգնաժամերի հանգեցնող իրադարձությունները: Ճգնաժամերի զարգացման փուլերը Զ. Կապլանի

աշխատություններում: Ճգնաժամերը նշանակալից հուզական հարաբերությունների ոլորտում:

Պաշտպանական մեխանիզմների հիմնադրույթը էգո-հոգեբանության ներկայացուցիչների աշխատություններում: Պաշտպանական մեխանիզմների հիմնական տեսակները, արտամղում և ճնշում, ռացիոնալիզացիա, ինտելեկտուալիզացիա, ռեգրեսիա, հակադարձ ռեակցիայի ձևավորում, պրոյեկցիա, պրոյեկտիվ իդենտիֆիկացիա, հոգեբանական նույնացում, ինտրոյեկցիա (ներդրում), սուբլիմացիա: Անձնավորության ինքնագիտակցությունը և ադապտացիան: Ինքնագիտակցության կառուցվածքը: Իրադրային «Ես» պատկերները և նրանց հարմարվողական գործառույթները: «Ես» հիմնադրույթի ակտիվացումը և հարմարվողական վարքի կարգավորումը:

ԹԵՄԱ 2. Անձի վրա արտակարգ իրավիճակների բացասական հետևանքների կանխարգելման և հաղթահարման հոգեբանական ուղիները

Արտակարգ իրավիճակներում հոգեծին (փսիխոզեն) հակազդումների կանխարգելման գիտատեսական հիմքերը: Գաղափար փսիխոզեն հակազդումների մասին, դրանց հոգեբանական դրսևորումները արտակարգ իրավիճակներում: Կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը մինչսթրեսային իրավիճակներում: Մասնագիտական այրման համախտանիշի կանխարգելման հոգեբանական մեթոդները: Հոգեկան տրավմայի հետևանքով ձևավորված ասոցիալ, դեստրուկտիվ (ապակառուցողական) և սուիցիդալ վարքի կանխարգելման ուղիները: Ճգնաժամային խորհրդատվության տեսությունն ու պրակտիկան: Արտակարգ իրավիճակներում տուժած երեխաների հետ հոգեբանական աշխատանքի իրակացման յուրահատկությունները:

Անձի կողմից տրավմատիկ փորձի հաղթահարման ռազմավարությունը: Հաղթահարման ռազմավարության կոնցեպտուալ (հայեցակետային) սխեման: Հաղթահարման ռազմավարության հիմնական ձևերը, վերածնավորման ռազմավարություն, ինքնապահպանմանը նպաստող հնարքները կենսական դժվարությունների և դժբախտությունների ժամանակ: Մասնավոր իրադրային հաղթահարում: Հաղթահարման նախադրյալները, ռազմավարությունը և

տակտիկան: Հասարակական աջակցությունը որպես հաղթահարման յուրահատուկ միջոց: Ինքնուրույն և մասնագիտական աջակցության միջոցով իրականացվող հաղթահարում: Գիտակցական և անգիտակցական հաղթահարում: Տրավմատիկ փորձի իմաստավորումը: Վարքագծային նմուշների փոփոխությունը: Սահմանային լարվածության վիճակները և անձնային աճի հնարավորությունները: Ճգնաժամային և տրավմատիկ իրադարձությունների հաղթահարման անձնային և իրադրային գործոնները: Հետտրավմային սթրեսների զարգացման դինամիկան և թերապիայի հնարավորությունները:

Հոգեկան նորմայի և ախտաբանականի հիմնահարցը հոգեբանության մեջ: Հոգեկան շեղումներ և խանգարումներ: Սահմանային վիճակներ: Հետտրավմային սթրեսային խանգարումները (ՀՏՄԽ) ամերիկյան պաշտոնական ախտորոշիչ ստանդարտում: ՀՏՄԽ-ի ուսումնասիրության բազմագործոն տեսությունը: Բարդ զուգորդային ցանցի տեսությունը: ՀՏՄԽ-ի խմբային թերապիան: Փսիխոդրաման ՀՏՄԽ-ի ժամանակ: ՀՏՄԽ-ի թերապիայի հոգեդինամիկական մոտեցումները: Ասաջոլիի հոգեսինթեզի համակարգը: Էքզիստենցիալ, կոգնիտիվ և վարքային թերապիա: Գեշտալտ թերապիա, սուգեստիվ (ներշնչանքի) մեթոդներ: Տագնապի հաղթահարման տեխնիկա: Դեսենսիբիլացիայի և տրավմատիկ ապրումների վերամշակումը աչքերի շարժումների միջոցով: Աուտոտրենինգ: Տրավմատիկ փորձով անձանց հետ աշխատելու հոգեբանական դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները:

### ԹԵՄԱ 3. Սոցիալական մեծ խմբերի հոգեբանություն

Մեծ խմբերի արտաքին հատկանիշները, զարգացում, սոցիալական նորմերի ընդհանրություն, սեփական դերային կառուցվածք: Դասակարգերը որպես սոցիալական խմբի տեսակներ: Դասակարգերի սոցիալ-հոգեբանական հատկանիշները: Հասարակական զարգացման փուլերը, մինչարդյունաբերական (մինչինդուստրիալ), արդյունաբերական (ինդուստրիալ) և հետարդյունաբերական (պոստինդուստրիալ) հասարակություն: Սոցիալական խմբերի քաղաքական, տնտեսական, սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական կողմերը: Կենսակայունության գործակից: Հասարակական շարժման տեսակները, դրանց

սոցիալ-հոգեբանական հատկանիշները, կազմակերպվածության բացակայություն, անդամների միջև թույլ փոխներգործություն, անանունություն (գաղտնիություն): Ռեֆորմատորական (բարենորոգչական) և հեղափոխական շարժումներ: Ազգային-մշակութային միություն, մասնագիտական միություն, մշակութային դաստիարակչական միություն, հիմնադրամներ, օպերատիվ փոխներգործության նպատակով ստեղծված միությունների հոգեբանական վերլուծությունը:

ԹԵՄԱ 4. Զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների առանձնահատկությունները

Սոցիալ-հոգեբանական երևույթների դասակարգումը: Հասարակական կարծիք, հասարակական պատկերացումներ, զանգվածային տրամադրություններ և հասարակական ավանդույթներ: Հասարակական կարծիքի գործառույթները (ֆունկցիաները), վարքի կարգավորման ֆունկցիա, փաստերի և իրադարձությունների գնահատման արտացոլման ֆունկցիա: Տարածվածությունը՝ որպես հասարակական կարծիքի զարգացման բնորոշ առանձնահատկություն: Զանգվածային տրամադրությունների դինամիզմի (շարժունության) դրսևորումները: Գաղափար հասարակական դիրքորոշումների մասին:

ԹԵՄԱ 5. Էթնիկական (ազգային) խմբերի սոցիալ-հոգեբանական էությունը

Էթնիկական հոգեբանության առարկան, էթնիկական հոգեբանության միջառարկայական բնույթը: Էթնոհոգեբանական գաղափարների զարգացումը Եվրոպայում և ԱՄՆ-ում էթնոհոգեբանական ուսումնասիրությունների հիմնական ուղղությունները (ռեյաստիվիզմ, աբսոլյուտիզմ, ունիվերսալիզմ): Գաղափար ազգային բնավորության և ազգային հոգեբանության վերաբերյալ: Էթնիկական ինքնագիտակցություն և էթնիկական նույնականություն հասկացությունների հարաբերակցությունը: Էթնիկական նույնականության կառուցվածքի հոգեբանական բնութագիրը: Էթնիկական նույնականության բաղադրամասերը, պահանջմունքադրդապատճառային, կոգնիտիվ, աֆեկտիվ և վարքագծային բաղադրամասեր: Ազգայինը և համամարդկայինը մշակույթում: Սոցիալականացման էթնոմշակութային առանձնահատկությունները: Սոցիալական վարքի կարգավորման էթնիկական յուրատիպությունը: Էթնիկական ստերեոտիպեր:

ԹԵՄԱ 6. Ամբոխի սոցիալ-հոգեբանական բնութագիրը, տեսակները, անձի վարքի առանձնահատկությունները ամբոխում

Գաղափար ամբոխի մասին, ամբոխի տեսակները: Ամբոխի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, խմբային ներշնչվողականության և ընկալման հուզականության բարձրացում, սեփական արարքների համար պատասխանատվության ճնշում, գաղտնիության և անպատժելիության ուժի գիտակցում: Ամբոխի զարգացման մեխանիզմները: Խոսքը՝ որպես ամբոխի անդամների կողմից հոգեբանական ներգործության հիմնական ձև: Հասարակ, արտահայտչական (էքսպրեսիվ), պայմանական (կոնվենցիոնալ) և գործող ամբոխներ: Խուճապի դրսևորումները, զանգվածային փախուստ և խուճապային տրամադրություններ: Խուճապի առաջացման և զարգացման դինամիկան: Ամբոխի մասնակիցների դերային կառուցվածքը: Խմբային էքսցեսների (անկարգությունների) զարգացման փուլերը, իրադրության բարդացում, հակաիրավական գործողությունների առիթի առաջացում և դրանց իրագործում, հետէքսցեսային իրադրություն:

ԹԵՄԱ 7. Սոցիալական լարվածության և կոնֆլիկտների հոգեբանություն

Սոցիալական լարվածության հասկացության ըմբռնման հիմնական մոտեցումները: Սոցիալական լարվածության մակարդակները: Սոցիալական լարվածության առաջացումը ֆիզիոլոգիական, հոգեֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական դեզադապտացիայի պայմաններում: Սոցիալական լարվածության երկակի բնույթը: Սոցիալական լարվածության դեստրուկտիվ (ապակառուցողական) և կառուցողական դերերը: Սոցիալական լարվածության պատճառականության հիերարխիան: Բարձր սոցիալական լարվածության աղբյուրների դասակարգումը: Սոցիալական լարվածության դինամիկան և զարգացման մեխանիզմը: Խուճապը արտակարգ իրավիճակներում և նրա դերը սոցիալական լարվածության առաջացման գործում: Սոցիալական լարվածության առաջացումը վթարների հակազդման ժամանակ, հակազդման տեսակները: Սոցիալական լարվածության սոցիալ-տնտեսական պատճառները: Սթրեսի հաղթահարման անհատական առանձնահատկությունները: Կոնֆլիկտների կառուցվածքը: Կոնֆլիկտի

ուսումնասիրության հիմնական ուղղությունները արտասահմանում, սոցիալ-դարվինիզմ, հոգեվերլուծություն, գեշտալտհոգեբանություն, ինտերակցիոնիզմ, մաթեմատիկական մոդելավորում և այլն: Կոնֆլիկտի հիմնական հատկությունները: Կոնֆլիկտային իրավիճակների տեսակները: Կոնֆլիկտի կառուցողական, ապակառուցողական և ախտորոշիչ ֆունկցիաները: Կոնֆլիկտի դինամիկայի փուլերը. մինչև կոնֆլիկտային իրադրություն, կոնֆլիկտային փոխներգործություն և կոնֆլիկտի հարթում: Կոնֆլիկտների հարթման հոգեբանական ուղիները: Բանակցությունները որպես կոնֆլիկտի հաղթահարման միջոց:

Սոցիալական լարվածության հաղթահարման տեխնիկան: Սոցիալական լարվածության հաղթահարման գործընթացի մակարդակները. միկրո և մակրո մակարդակներ: Սոցիալական մտահասությունը որպես սոցիալական լարվածության հաղթահարման միջոց: Ֆրուստրացիայի վիճակում անձի և հասարակության ապակառուցողական վարքագծային դրսևորումները, ագրեսիա, ռեպրեսիա (ճնշում), էսկապիզմ (պրոբլեմից խուսափում), ռեգրեսիա, ռացիոնալիզացիա, սուբլիմացիա, պրոյեկցիա, աուտիզմ (ներանձնացում): Ապակառուցողական վարքի հաղթահարմանն ուղղված թերապևտիկ համակարգերը: Ձեռնարկությունների հակավթարային կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման պայմանները:

ԹԵՄԱ 8. Խմբային սոցիալ-հոգեբանական երևույթներ՝ խուճապ, ապատեղեկատվություն ու սոցիալական վարքի դրսևորումները

Խուճապ: Զանգվածային սարսափ որևէ իրական կամ երևակայական վտանգի առաջ: Իրավիճակի անորոշություն, տեղեկատվության պակաս, համապատասխան պաշտպանական, հարմարվողական գործողությունների կատարման համար անպատրաստություն: Անմիտ կամ վտանգավոր գործողությունների խմբային կատարում, սոցիալական նորմերի ու պարտականությունների անտեսում: Ծուղակն ընկնելու հավանականության մեծացում, վայրագությունների կատարում կամ փախուստ, անհատների մոտ նոր գծերի դրսևորվում՝ անկախ անհատական մտածողության գործընթացից: Ապատեղեկատվության տարածում: Տեղեկատվության կրճատում, համահարթեցում, սխեմատիզացում: Տեղեկատվության սրում և բևեռացում, պարզեցում,



ստեղծակալության համապատասխանեցում ստեղծված սոցիալական իրադրությանը:

ԹԵՄԱ 9. Հույզերի կառավարման հոգեբանական մեխանիզմները

Հույզերի և զգացմունքների գերակշռությունը: Ապանձնայնացում, հույզերի ու բնազդային մղումների, ներշնչվողականության ուժեղացում: Հույզերը որպես վարքի հիմնական դրդապատճառներ: Հուզական վարակ և հուզականության ուժեղացում: Աֆեկտ: Բանականության, մտածողության թուլացում: Անդեմություն, պատասխանատվության թուլացում: Հույզերի կառավարման տեխնիկաներ: Ինքնակառավարման մեթոդներ, վարժություններ: Հուզականության, սթրեսների թուլացման վարժություններ, տեխնիկաներ:

ԹԵՄԱ 10. Խորհրդատվություն արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողներին

Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների հոգեբանական կողմը: Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անվտանգության պահպանման ուղիները: Զանգվածային լրատվական միջոցներն ու հոգեբանական վնասվածքը՝ տրավման: Վարքագծի կանոններ: Հագուստի և հանդերձանքի հետ կապված խորհուրդներ, անվտանգության պահպանման կանոններ: Նախատեսվող աշխատանքի բեմահարթակի ուսումնասիրությունն ու երթուղու նախապատրաստումը: Արտակարգ իրավիճակների գոտիներում մասնագիտական խնդիրների լուծմանը լրագրողի հոգեբանական նախապատրաստությունը: Թեժ կետերում աշխատելու համար լրագրողին անահրաժեշտ կենցաղային իրերը:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ՝

կիմանան՝

- արտակարգ իրավիճակներում անձի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի և դեզադապտացիայի առանձնահատկությունները,
- անձի վրա արտակարգ իրավիճակների բացասական հետևանքների կանխարգելման և հաղթահարման հոգեբանական ուղիները,

- սոցիալական մեծ խմբերի, ամբոխի հոգեբանական բնութագիրը, տեսակները,
- ամբոխում գործունեություն իրականացնող լրագրողի անվտանգության կանոնները,

#### Կկարողանան՝

- արդյունավետ կիրառել լրագրողի անձի վրա արտակարգ իրավիճակների բացասական հետևանքների կանխարգելման և հաղթահարման հոգեբանական մեթոդներ, միջոցներ,
- իրականացնել լրագրողական գործունեություն՝ հիմքում ունենալով սոցիալ-հոգեբանական զանգվածային երևույթների առանձնահատկությունների մասին գիտելիքները,
- լրագրողական գործունեություն իրականացնելիս գնահատել ամբոխում իրենց սպառնացող հնարավոր վտանգները, ռիսկերը և ձեռնարկել դրանցից խուսափելու միջոցներ,

#### Կտիրապետեն՝

- խմբային սոցիալ-հոգեբանական երևույթների՝ խուճապի, ապատեղեկատվության բացասական հետևանքներից խուսափելու կամ լրագրողի անձի վրա դրանց բացասական հետևանքների հաղթահարման մեթոդներին, միջոցներին,
- հույզերի կառավարման հոգեբանական տեխնիկաներին, մեթոդներին,
- արտակարգ իրավիճակների պայմաններում, ռազմական և ահաբեկչական գործողությունների գոտում լրագրողական գործունեություն իրականացնելիս լրագրողի անձի անվտանգության պահպանման կանոններին, համապատասխան սոցիալական վարքի հմտություններին:

## ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

N	ԹԵՄԱ (ԲԱԺԻՆ)	ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒ ԹՅՈՒՆ	ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒ ԹՅՈՒՆ	ԴԱՍԱԽՈՍՈՒ ԹՅՈՒՆ	ԳՈՐԾՆԱԿ ԱՆ ՊԱՐԱՊՄ ՈՒՆՔ
1.	Անձի սոցիալ-հոգեբանական ադապտացիան և դեզադապտացիան արտակարգ իրավիճակներում	4	2	2	
2	Անձի վրա արտակարգ իրավիճակների բացասական հետևանքների կանխարգելման և հաղթահարման հոգեբանական ուղիները	8	4	2	2
3	Սոցիալական մեծ խմբերի հոգեբանություն	4	2	2	
4	Սոցիալ-հոգեբանական զանգվածային երևույթների առանձնահատկությունները	8	4	2	2
5	Էթնիկական (ազգային) խմբերի սոցիալ-հոգեբանական էությունը	4	2	2	
6	Ամբոխի սոցիալ-հոգեբանական բնութագիրը, տեսակները, անձի վարքի առանձնահատկությունները ամբոխում	4	2	2	
7	Սոցիալական լարվածության և կոնֆլիկտների հոգեբանություն	4	2	2	
8	Խմբային սոցիալ-հոգեբանական երևույթներ՝ խուճապ, ապատեղեկատվության ու սոցիալական վարքի դրսևորումները	8	4	2	2
9	Հույզերի կառավարման հոգեբանական մեխանիզմները	8	4	2	2
10	Խորհրդատվություն արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողներին	8	2	2	4
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>60</b>	<b>20</b>	<b>20</b>	<b>12</b>

## **ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

1. համացանցին միացված համակարգիչ,
2. համակարգչային պրոյեկտոր,
3. գրիչ, թուղթ, գունավոր թուղթ, գունավոր մատիտներ,
4. պատճենահանված թեստային մեթոդիկա/ներ,
5. ֆլիպչարտ, մարքեր,
6. տեսաֆիլմեր, DVD տեսաձայնագրիչ:

## **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

### **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐ ԵՎ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ**

1. Մկրտումյան Մ. Պ., Արտակարգ պայմաններում անձի հոգեբանական վերականգնման տեխնիկան, Ե., ԵՊՀ, 1997:
2. Մկրտումյան Ս. Պ., Արտակարգ պայմաններում մարդկանց կենսագործունեության և հոգեկան առողջության պահպանման առանձնահատկությունները, Ե., ԵՊՀ, 1999:
3. Մկրտումյան Մ. Պ., Արտակարգ իրավիճակների հոգեբանության կանխարգելման և վերականգնողական հիմնախնդիրները, Ե., 2008:
4. Նալչաջյան Ա.Ա., Սոցիալական հոգեբանություն: -Ե., Զանգակ-97, 2004. -432 էջ:
5. Андреева Г.М., Социальная психология, М., 1997.
6. Денис Б., Энциклопедия выживания и спасения, 1997..
7. Китаев-Смык Л. А., Психология чеченской войны. М, 2002.
8. Кричевский Р.Л., Дубровская Е.М. Психология малой группы, М., 1991.
9. Малкина-Пых И. Г., Экстремальные ситуации. М. ЭКСМО, 2006.
10. Майерс Д., Социальная психология, -Санкт Петербург, Питер, 1997.
11. Ситников А.П. Современные прикладные психотехнологии: процесс и язык коммуникации, М., 1992.
12. Социальная психология / Под ред. А.Л.Журавлева, М.: PerSe, 2002

13. Тарабрина П. В., Практикум по психологии посттравматического стресса, СПб. Питер, 2001.
14. Цуканова Е. В. Психологические механизмы поведения и деятельности в экстремальных условиях. VI. РСПУ, 1991.
15. Черепанова Е. М., Саморегуляция и самопомощь при работе в экстремальных условиях. М., 1995.

### **3.3 Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության ռեթեստավորման արդյունքները (ստուգիչ գիտափորձ)**

Ստուգիչ գիտափորձի նպատակն է՝ պարզել արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների բացահայտված անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության դրսևորումների մակարդակը «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» ծրագրով նախատեսված թրենինգային վարժություններից հետո: Այդ նպատակով կազմակերպվել է ռեթեստավորման գործընթաց այն փորձարկվողների հետ, որոնք անցել են պարապմունքներ: Ռեթեստավորման ենք ենթարկել մեր կողմից կիրառված մեթոդներով և մեթոդիկաներով՝ ցանկանալով պարզել որոշ անձնային գործոնների նպատակային փոփոխության առկայությունը մեր համակազմի մոտ:

Ստուգիչ գիտափորձի ընթացքը: Ռեթեստավորման նպատակով ընտրվել են նույն խմբերը:

Ստորև ներկայացնենք ռեթեստավորման արդյունքներն ըստ Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկա»-ի՝ առավել ուշադրություն դարձնելով որոշ գործոնների փոփոխություններին: Ռեթեստավորման գործընթացում առավելապես հետևել ենք և վերլուծական մասում անդրադարձել ենք հենց այդ գործոններին: Աշխատանքի մատչելիության և պարզության համար պահպանել ենք աղյուսակի ներկայացման ձևը՝ հեշտ և համարժեք համեմատություններ կատարելու համար (տես աղյուսակ 15):

Արտահայտվածություն	N	Գործոններ	Արձանագրող փուլի արդյունքներ	Ռեթեստավորման փուլի արդյունքներ	Գործոններ
ա) Թույլ արտահայտվածության գործոններ	1.	L	7.28%	9.08%	դյուրահավատություն
	2.	Q4	10.72%	11.74%	թուլացվածություն անցում լարվածության դաշտ՝ չնչին տարբերութ.
	3.	Q2	10.88%	11.34%	զիջողականություն չնչին տարբերութ. անցում դեպի անզիջողականություն
բ) Միջին արտահայտվածության գործոններ	4.	N	11.52%	13.28%	ուղղամտությունից անցում դիվանագիտության
	5.	E	13.08%	11.52%	գերակշռությունից անցում զիջողականության
	6.	Q1	13.28%	11.32%	ռադիկալիզմից անցում կոնսերվատիզմի
	7.	O	13.2%	16.24%	տագնապայնությունից անցում ինքնավստահության
	8.	C	13.52%	15.56%	հուզական անկայունություն հուզական կայունություն
	9.	M	13.92%	16.47%	զարգացած երևակայությունից անցում գործնականության
	10.	I	15.04%	13.08%	զգայունակություն
	11.	G	15.36%	16.47%	նորմատիվություն
	12.	H	15.44%	17.74%	խիզախություն
գ) Ընդգծված արտահայտվածության գործոններ	13.	Q3	17.28%	18.30%	բարձր ինքնահսկողություն
	14.	A	17.92%	18.48%	շփվողականություն
	15.	F	19.52%	20.12%	արտահայտչականություն
	16.	B	6.24%	7.05%	ինտելեկտ
	17.	MD	39.76%	41.24%	ինքնագնահատականի աղեկվատություն

Ռեթեստավորման արդյունքում գրանցված տվյալներ՝%(Ռ.Քեթթել)

Աղյուսակ 15-ում գետեղված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ գործոնների քանակական ցուցանիշները, որոնք արտահայտվում են որոշակի օրինաչափություններով, փոփոխության են ենթարկվել, այսինքն՝ ընդգծված արտահայտվածության ցուցանիշները քանակապես բարձրացել են, փոփոխվել և տատանվել են նաև միջին արտահայտվածությամբ գործոնները, իսկ թույլ արտահայտված ցուցանիշները աճել են, որոշ ցուցանիշներ բարձրացել են միջին ցուցանիշների արդյունքներից: Հիշյալ տվյալները առանձնացնում ենք որպես ռեթեստավորման արդյունք, քանի որ այդ փոփոխությունները դրսևորվել են ոչ պատահական ցուցանիշներով, այլ որոշակի օրինաչափություններով: Դրանով հանդերձ՝ ինտելեկտի ցուցանիշների մեջ տեղաշարժը քիչ է, ինչն երևում է նաև աղյուսակի տվյալներից: Այս իմաստով, անցնելով մյուս մեթոդիկաներին, կրկին փորձել ենք ցույց տալ, նկատվող փոփոխությունների օրինաչափ դրսևորումները և արտահայտչաձևերը: Ա. Բասսի և Ա. Դարկի ագրեսիայի տիպի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկայի ռեթեստավորման արդյունքներից երևում է, որ համանման երևույթ նկատվում է նաև ստորև բերվող աղյուսակի տվյալներում(տես՝ աղյուսակ 16):

Աղյուսակ 16

Գ ո Ր Ծ Ո Ն Ն Ե Ր		Նախնական տվյալներ	ռեթեստավորման տվյալներ
<b>ա) Թույլ արտահայտված գործոններ</b>	Նեգատիվիզմ	35.2%	15.8%
	Վիրավորվածություն	35.2%	16.6%
	Անուղղակի ագրեսիա	39.6%	27.2
	Կասկածամտություն	42%	32.2%
<b>բ) Միջին արտահայտվածության գործոններ</b>	Ֆիզիկական ագրեսիա	45%	20.7%
	Նյարդայնություն	48.4%	34.16%
<b>գ) Ընդգծված արտահայտվածության գործոններ</b>	Մեղքի զգացում	66.6%	44.32%
	Խոսքային ագրեսիա	68%	32.6%

Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա» (ռեթեստավորում)



Ներկայացնենք նաև Սպիլբերգեր-Խանինի ինքնագնահատականի ախտորոշման մեթոդիկայի ռեթեստավորման տվյալները(տես՝ աղյուսակ17):

Աղյուսակ 17

Արդյունքներ	Ռեակտիվ տագնապայնություն	Անձնային տագնապայնություն
Արդյունքների միջինացված տվյալներ(%)	73.2%	86.8%
Ռեթեստավորման միջինացված տվյալներ(%)	60.2%	71.4%

*Ռեթեստավորման արդյունքում գրանցված տվյալներ՝%( Սպիլբերգեր-Խանին)*

Գիտափորձի արդյունքները ռեթեստավորում անցած ընտրազանգվածի տվյալները նորից բաժանել ենք արտահայտվածության երեք մասերի՝ ըստ ցուցանիշների, ինչպես արձանագրող փուլում՝ թույլ, միջին և ընդգծված արտահայտվածության, որը հնարավորություն է տվել մեզ համադրելու նույն աստիճանի վերաբերող տվյալները:

Գիտափորձի արդյունքների ռեթեստավորման ժամանակ Թեյլորի «Տագնապախոռովության չափման մեթոդիկան» չի կիրառվել:

Ստորև ներկայացնում ենք վերոշարադրյալ մեթոդիկաներով անցկացված հարցումների միջինացված տոկոսներով արտահայտված ցուցանիշները մեկ աղյուսակով՝ թույլ, միջին և ընդգծված արտահատվածությամբ (տես՝ աղյուսակ18):


	Ռ.Քեթթելի 'Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան' (16- PF)		Ա.Բասսի և Ա.Դարկի 'Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա'		Ինքնագնահատման ախտորոշ- ման Չ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի մեթոդիկա	
Ա ցածր արտահայտվածություն	L Դյուրահավ.	9.08%	Նեգատիվ.	15.8%	0	
	Q4 թուլացված	11.74%	Վիրավորվ.	16.6%		
	Q2 զիջողակ.	11.34%	Անուղղակի ագրեսիա	27.2%		
			Կասկած.	32.2%		
Բ միջին արտահայտվածություն	N ուղղամտույթ.	13.28%	Ֆիզիկական ագրեսիա	20.7%	ռեակտիվ տազնաալայնություն	86.8%
	E •երակշռույթ.	11.52%				
	Q1 ռադիկալիզմ	11.32%				
	O Տազնապայն.	16.24%	Նյարդայնու- թյուն	34.16%		
	C հուզական անկայուն.	15.56%				
	M զարգացող երևակայութ.	16.47%				
	I զգայնություն	13.08%				
	G նորմատիվ .	16.47%				
	H խիզախութ.	17.74%				
Գ ընդգծված արտահայտվածությու ն	Q3 բարձր ինքնավերա հսկող.	18.30%	Խոսքային ագրեսիա	32.6%	Անձնային տազնաալայնություն	71.4%
	A շփվողակ.	18.48%	Մեղքի զգացում	44.32%		
	F արտահայտչ.	20.12%				
	B ինտելեկտ	7.05%				
	MD ինքնագնահ.	41.24%				

Ռեթեստավորման արդյունքում գրանցված միջինացված փոփոխությունների ընդհանրացված պատկեր (%)

Ռեթեստավորման արդյունքում ստացված մեթոդիկաների տվյալները նույնպես խմբավորել ենք թույլ, միջին, բարձր կամ ընդգծված արտահայտվածությամբ և ներկայացնում ենք մեկ ընդհանուր գծապատկերով(տես՝ գծապատկեր 4, 5,6):

Այսպիսով, ամփոփելով ռեթեստավորման արդյունքները՝ եկանք այն եզրահանգման, որ որոշ գործոններ դրսևորվել են նոր օրինաչափություններով, այսինքն, բարձր արտահայտվածությամբ որոշ գործոններ քանակապես նվազել են, իսկ որոշները՝ աճել, որով էլ արձանագրել ենք արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության ռեթեստավորման արդյունքները:


Գծապատկեր4.



**Ա - ցածր արտահայտվածություն**

**Գ - բարձր արտահայտվածություն**


**Բ - միջին արտահայտվածություն**



**Ա - ցածր արտահայտվածություն**

**Գ - բարձր արտահայտվածություն**

**Բ - միջին արտահայտվածություն**



## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության գիտատեսական վերլուծությունների և փորձարարական հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ ընդհանրացումները.

1. Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության խնդիրը քննարկվում է տարբեր իրավիճակներում, առանձնացվում են կենսագործունեության տարբեր բնագավառներում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր արտակարգ իրավիճակների առանձնահատկությունները և այն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, որոնք նշանակալիորեն ազդում են լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության դրսևորման և հետագա զարգացումների վրա: Այդուհանդերձ, արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունները և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության հիմնահարցը դեռևս ունի ուսումնասիրման անհրաժեշտություն, քանի որ Հայաստանի Հանրապետության լրագրողական դաշտում հիշյալ գործունեության համակարգն առաջադրում է հոգեբանական տարաբնույթ պահանջներ, որոնք իրենց հերթին ծնում են որոշակի հոգեբանական դժվարություններ, հակասություններ արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների փոխհարաբերություններում, տեղեկույթի տրամադրման և սոցիալ-հարմարման գործընթացում: Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածությունը կապված է անձնային գործոնների և վարքային դրսևորումների հետ, որոնք ազդում են սուբյեկտի փոխազդեցության, սոցիալական վարքի և դրանց դրսևորումների վրա:

2. Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության, նրանց կողմից հասարակությանը տրվող տեղեկատվության ազդեցության, իրավիճակային

պայմանների և վարքի կարգավորման ընտրված ռազմավարության միջև կա որոշակի կախվածություն:

3. Խմբավորելով անձնային գործոններն ըստ ինտելեկտուալ, հուզական առանձնա հատկությունների, հաղորդակցական և միջանձնային փոխազդեցությունների առանձնահատկությունների՝ կարելի է փաստել, որ ամենաբարձր ցուցանիշն արտահայտվում է հուզական բաղադրիչների դրսևորման առկայությամբ, որոնք գերակա դեր են կատարում արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության և նրանց կողմից հասարակությանը տրվող տեղեկատվության ազդեցության գործընթացում: Գիտափորձից պարզվում է, որ ագրեսիայի դրսևորման ցուցանիշները (մասնավորապես՝ «խոսքային ագրեսիան», «մեղքի զգացումը», «նյարդայնությունը», «անձնային տազնապայնությունը», «ինքնագնահատական»-ի տատանվող սանդղակի ցուցանիշները) նույնպես բարդացնում են արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների գործունեությունը, դժվարացնում հասարակությանը տրվող ինֆորմացիայի հաղորդման գործընթացը՝ հանգեցնելով սուբյեկտների մոտ տազնապայնության աստիճանի փոփոխության:

4. Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ընդգծված արտահայտված «շփվողականությունը», «արտահայտչականությունը» և միջին արտահայտված դրսևորումներն անմիջականորեն կապվում են անձնային մի շարք գործոնների՝ ինչպես նաև «նյարդայնության» վառ արտահայտված ցուցանիշների հետ, որոնք առաջացնում են «խոսքային ագրեսիա» և բարձրացնում «մեղքի զգացողությունը»:

5. Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների ոչ համարժեք գնահատականը, սոցիալ-հոգեբանական պատրաստվածության անբավարար իմացությունը հանգեցնում են «նյարդայնության», «անձնային և ռեակտիվ տազնապայնության», «վերբալ և ոչ վերբալ ագրեսիայի»՝ բարձրացնելով «արտահայտչականության», «վերահսկողության» և «մեղքի զգացումի» անձնային գործոնների ցուցանիշները:

6. Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության ծրագրի իմացությունը հնարավորություն են տալիս ելքեր և ուղիներ գտնել: Ուսուցողական պարապմունքների կազմակերպումը և անձնային որոշ գործոնների արտահայտվածության բարձրացումը և որոշների նվազումն որոշակիորեն ազդում են լրագրողների անձնային «հարմարման», «համագործակցության», «փոխզիջման» որակների վրա: Մյուս կողմից, ընդհանուր առմամբ, գիտելիքի իմացությունը նվազեցնում է լրագրողների և հասարակության փոխհարաբերության, ավելորդ լարվածության ստեղծելու միտումները:

7. Ստուգիչ գիտափորձը կամ ռեթեստավորումը ցույց տվեց, որ հոգեախտորոշման գործընթացում բացահայտված որոշ գործոններ ենթակա են շտկման ծրագրով նախատեսված գիտելիքների յուրացման ուսուցման գործընթացքում, որով կարելի է այնքալ գիտական վարկածի, նպատակի, կիրառված հոգեբանական գործիքների հավաստիությունը արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության գործում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ահաբեկչության դեմ պայքարի ընթացքում մամուլի ազատության մասին Ալմաթինյան հռչակագիր: (Ընդունվել է ՋԼՄ վերաբերյալ III-րդ Կենտրոնական Ասիական Կոնֆերանսին (ք. Ալմաթի, 10-11 դեկտեմբերի, 2001թ.)
2. «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք, 22 մարտի 2005 թ. <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2282>
3. Ավանեսյան Հ.Մ., Աղուզումցյան Ռ.Վ., Ամիրյան Ս.Ս., Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդիրը: -Եր., ԵՊՀ հրատ., 2009. -164 էջ
4. Արզումանյան Ս.Զ., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ., Կիրառական հոգեբանության պրակտիկում: - Եր., Զանգակ-97, 2002. -392 էջ
5. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 1998թ.
6. Էքստրեմալ իրավիճակներ: Արագ արձագանքման ուժեր: Սթրես (Գիտական ժողովի հրատարակության հոդվածներ): -Եր., 2002. -34 էջ
7. Ինտերնյուսի «Ռադիո- և հեռուստատեսային հաղորդումների ստեղծման էթիկական չափանիշները» ձեռնարկից
8. Լրագրողները՝ թեժ կետերում: Մասնագիտական վարքագծի տեխնոլոգիա: Մ., 2000: Էքստրեմալ լրագրության գրադարան, <http://www.library.cjes.ru/>« \h
9. Александр Бальги-Галлуа - Защита журналистов и средств массовой информации во время вооруженного конфликта-Журнал Международный журнал Красного Креста Выпуск № 853-855 / 2004/
10. Մամուլի ազատության մասին ՀՀ օրենք, Գլուխ 4. Հեղված 6. 7.8.9. <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=312&Reading=0>
11. Մկրտումյան Մ.Պ., Բացասական հոգեվիճակների փոխակերպման առանձնահատկություններն անձի սոցիալ-հոգեբանական վարքագծում // Բանբեր ԵՊՀ, 2004, 3, էջ 188-193
12. Մկրտումյան Մ. Պ., Արտակարգ պայմաններում անձի հոգեբանական վերականգնման տեխնիկան, Ե., ԵՊՀ, 1996.- 112 էջ



13. Մկրտումյան Ս. Պ., Արտակարգ պայմաններում մարդկանց կենսագործունեության և հոգեկան առողջության պահպանման առանձնահատկությունները, -Եր., ԵՊՀ, 1996. -180 էջ
14. Մկրտումյան Մ. Պ., Արտակարգ իրավիճակների հոգեբանության կանխարգելման և վերականգնողական հիմնախնդիրները, -Եր., Ջանգակ-97, 2008.- 320 էջ
15. Մոդու Ա., Միջազգային մարդասիրական իրավունք ու լրագրողի գործունեությունը: -Մ., 1994
16. Նալչաջյան Ա.Ա., Սոցիալական հոգեբանություն: -Եր., Ջանգակ-97, 2004. -432 էջ
17. «Ռոսիյսկայա զագետա». 5 նոյեմբերի, 2004թ., էջ 4
18. Վարդանյան Կ.Ե., «Անձի հոգեբանական առանձնահատկությունների դերը սոցիցիդալ վարքի պատճառականության շղթայում», -Ե., Դավիթ Թագավոր, 2008թ., էջ 15
19. Ֆրոյդ Զ., Հոգեվերլուծության ներածություն, Երևան, 2002: Ջանգակ-97, **2002**.-472 էջ.
20. Абрамов В., Методика работы журналистов в особых условиях.- -М., 167 с.
21. Авдеев Ю.И. Терроризм как социально-политическое явление // Современный терроризм: состояние и перспективы / Под ред. Е.И.Степанова. М.: Эдиториал УРСС, 2000. 40 с.
22. Александровский Ю.А., Состояния психической дезадаптации и их компенсация.- М., Наука, 1989, 224 с.
23. Александровский Ю.А., Щукин Б.П., Психогенные расстройства во время и после стихийных бедствий и котостроф. // Невропатология и психотрия, 1991, Вып.5, С. 39-43
24. Амиров В.М., Журналистика экстремальных ситуаций (конспект лекций) / В. М. Амиров; Гос. федеральное образовательное учреждение, Урал. гос. ун-т им. А. М. Горького, Фак. журналистики, Каф. периодической печати. Екатеринбург, 2008, 51 с.
25. Андреева Г.М., Социальная психология, -М., 1997, 238 с.
26. Андрейко М.Ф., Шатайло Н.А., «Некоторые психологические особенности мотивации суицидального поведения //Медицинские исследования». -М., 2001, С. 108 - 109.
27. Арапова Г. Ю., Кузеванова С. И., Ледовских М. А., Пантелеев Б. Н., «Освещение журналистами экстремальных ситуаций» 2-е изд., испр. и доп. — Воронеж: Фирма «Элист», 2012, 160 с.
28. Аронсон Э.,«Общественное животное»,Санкт-Петербург,«Прайм-Еврознак»2006,108 с.

29. Аронсон Э., Пратканис Э.Р, «Эпоха пропаганды: Механизмы убеждения, повседневное использование и злоупотребление»,<http://lib.rus.ec/b/132715/read>
30. Беспалова А.Г., Коронилов Е.А., Короченский А.П., Луинский Ю.В., Станько А.И. «История мировой журналистики», «Старые русские», -Растов На-Дану, 2000, 297 с.
31. Богомолова Н.Н. Социальная психология печати, радио и телевидения.- М.: Изд-во МГУ, 1991.
32. Бухарин С.Н., В.В. Цыганов, «Методы и технологии информационных войн», Академический проект-2007, 233 с.
33. Бютнер, «Насилие в Фантазиях // Психология человеческой агрессивности». -М., 2001, С. 48, 40-53.
34. Вартанова Е. Л. Информационное общество и СМИ Финляндии в европейской перспективе. – М., 1999.
35. Вепринцев В.Б., А.В. Манойло, А.И. Петренко, Д.Б. Фролов, «Операции информационно-психологической войны», Краткий энциклопедический словарь-справочник. Москва, 2005, 61 с.
36. Власть: зеркало или служанка? Энциклопедия жизни современной российской журналистики: В 2 т. – М., 1998
37. Гальперин Ю., «В эфире слово». -Москва, «Искусство», 1977, 163 с.
38. Гассер Ганс-Петер, Защита журналистов в опасных командировках; Моду Ален. Международное гуманитарное право и деятельность журналистов. МККК, 1994
39. «Горячая точка»: справочник для журналистов. -М., 1995
40. Успокойтесь, если вас сразу не убили (Московские новости, 2-8 апреля) 2002
41. Гладковская Е. С., Журналистский дискурс терроризма (сравнительный анализ публикаций в качественной прессе России и США): дис. ... канд. филол. наук. Урал. гос. ун-т им. А. М. Горького. -Екатеринбург. 2006
42. Грищук В. К., Терроризм: проблема понятия //Сборник научных трудов „Актуальные проблемы государства и права», вып. N 8, 2000

43. Денис Б., Энциклопедия выживания и спасения, 1997
44. Дейтс Б., Жизнь после потери. -М., Фаир-Пресс, 1999
45. Евгеньев Т.В., «Технологии социальных манипуляций и методы противодействия им», «Питер», 2007, 57 с.
46. Журналистика и война. Исследовательская группа российско-американского информационного центра. 1998
47. Журналистское расследование: история метода и современная практика. /Под общ. ред. А.Д.Константинова. - СПб.: издательский дом «Нева»; издательство «ОЛМА-ПРЕСС», 2003
48. Заворотный С., Черняк И. Информация о войне и война за информацию.//Журналист. - 1991. №6
49. Засурский И. И., Масс-медиа второй республики. – М., 1999
50. Зелинский С.А., «Информационно-психологическое воздействие на массовое сознание», -Санкт-Петербург, 2008г. 145 с.
51. Землянова Л. М. Современная американская коммуникативистика. Теоретическая концепция, проблемы, прогнозы. – М., 1995
52. Как уцелеть в горячих точках.// Журналист.1992. №10
53. Калоева И. Э., Особенности освещения в СМИ вооруженных конфликтов: Чеченская республика: 1994-2004 гг. : Дис. ... канд. полит. наук. -СПб., 2004
54. Кара-Мурза С.Г., «Власть манипуляции», -М., «Академический проект», 2007, 348 с.
55. Китаев-Смык Л. А., Психология чеченской войны. М, 2002
56. Князев А., Журналистика конфликта. Учебное пособие. — Бишкек: Изд-во КРСУ, 2003.
57. Князев А.. Журналистика конфликта.Национальная безопасность. Информационный бюллетень № 38. М., 1997, –57 с.
58. Криско В., «Секреты психологической войны» (цели, задачи, методы, формы, опыт). -Минск, Харвест, 1999, 351 с.

59. Кричевский Р.Л., Дубровская Е.М. Психология малой группы, М., 1991.
60. Лазутина Г. В., Профессиональная этика журналиста. Учебное пособие, М., 1999, 195 с.
61. Лебедева Н. М. Введение в этническую и кросс-культурную психологию. – М., 1998
62. Лозовский Б. Н., Журналистика: техника безопасности. –Тюмень: Вектор Бук, 2004
63. Малкина-Пых И. Г., Экстремальные ситуации. М. ЭКСМО, 2006
64. Майерс Д., Социальная психология, -Санкт Петербург, Питер, 1997
65. Майерс Д., «Социальная психология», Москва, «Питер», 2009, 39 с.
66. Маклюэн М., «Понимание медиа: внешнее расширение человека».- М., «Гипербория», 2007, 27 с.
67. Маршал Маклюэн, «Понимание медиа: внешние расширение человека». Москва, «Гипербория», 2007, 25 с.
68. Матвеева Л.В., Аникеева Т.Я., Мочалова Ю.В., «Психология телевизионной коммуникации», -Москва, 2004, 59 с.
69. Мелков Г.М. Международное право в период вооруженных конфликтов. -М., 1988.
70. Методика „Дифференциальная Диагностика Депрессивных Состояний,, В. Жмуров, В. Зунг, адаптирована Т. Баклашовой
71. Муратов С.А., Телевизионное общение в кадре и за кадром, М., 2003, 193 с.
72. Налчаджян А., «Агрессивность человека», «Питер», 2007, 301 с.
73. Никитин А., Поварницын Б. Рекомендации журналистам, выезжающим в «горячие точки».-М.,
74. Орлова В.В., Книга-Глобальные телесети новостей на информационном рынке. -М., «РИП-холдинг», 2003, 168 с.
75. Основные положения Женевских конвенций и Дополнительных протоколов к ним. МККК. 1994.
76. Освещение журналистами экстремальных ситуаций / авт.-сост. Г.Ю. Арапова, С.И. Кузеванова, М.А. Ледовских, Б.Н.Пантелеев . – 2-ое изд., испр. и доп. - Воронеж:

- ООО Фирма «Элист», 2012. – 160 с. – (Справочная серия. Юристу и руководителю СМИ).
77. Панарин И.Н., «Информационная война, PR и мировая политика», Москва, Горячая линия-Телеком, 2006, 66 с.
  78. Пилягина Г.Я., «К вопросу о клинико-потогенетической типологии аутоагрессивного поведения»// Таврический журнал психиатрии, 2000, Т. 4 1, С. 22-24.
  79. Погорелый М. и Сафранчук И., Современная российская военная журналистика: опыт, проблемы, перспективы. – М.: Гендальф, 2002
  80. Попов В.Д., «Тайны информационной политики» (социокоммуникативный психоанализ информационных процессов). РАГС, -М., 2009, 58 с.
  81. Почепцов Г., «Психологические войны». «Рефл-бук», -Киев, 2002, 446 с.
  82. Проблемы медиапсихологии. – М.: РИП-Холдинг, 2002
  83. Проблемы медиапсихологии – 2. – М.: РИП-Холдинг, 2003
  84. Пронин Е. И., Пронина Е. Е. Архетипы тотальной войны в локальном конфликте // Государственная служба. – Декабрь 2001 – январь 2002. – № 4
  85. Пронина Е.Е., Психологические особенности творческой работы репортера. – М. : Пульс, 2001
  86. Пронина Е. Е., Психология журналистского творчества. – М., 2003
  87. Пронина Е. Е., Психологическая экспертиза рекламы. Теория и методика психологического анализа рекламы. – М., 2000
  88. Пронина Е. Е. Фрактальная логика Виктора Пелевина // Проблемы медиапсихологии / под. ред. Е. Е. Прониной – М.: РИП-Холдинг, 2003
  89. Психология экстремальных ситуаций (сост. Тарас А.Е., Сельченко К.В.). -Минск, Харвест, 2000
  90. Пуховский Н. Н. Психологические последствия чрезвычайных ситуаций. – М., 1999
  91. Пушкарев А. Г., Доморацкий В. А., Гордеева Е. Г. Посттравматическое стрессовое расстройство. Диагностика и лечение. – М., 2001

92. Рашкофф Д., Медиавирус. Как поп-культура тайно воздействует на ваше сознание. – М., 2003
93. Романов Ю., «Я снимаю войну...». Школа выживания. М., изд. «Права человека», 2001
94. Самохвалов В.П., «История души и эволюция помешательства». – Сургут, 1994, 286 с.
95. Ситников А.П., Современные прикладные психотехнологии: процесс и язык коммуникации, М., 1992
96. Смирнова Е., Журналист в горячей точке: составляющие профессионализма, 2009 / Библиотека центра экстремальной журналистики ([www.library.cjes.ru](http://www.library.cjes.ru))
97. Социальная психология / Под ред. А.Л.Журавлева, М.: PerSe, 2002
98. Справочник для журналистов, работающих в районах военных действий. М., «Права человека», 2002. 112 с.
99. Стихийные бедствия, техногенные и социальные катастрофы: история, классификация, преодоление последствий//Материалы Всероссийской научно-практической конференции. Изд-во Гуманитарного ун-та, 2005
100. Стратегии преодоления стрессовых ситуаций (SACS)-Русскоязычная версия Н. Водопьяновой, Е. Старченковой Водопьянова Н. Е. Психодиагностика стресса. — СПб.: Питер, 2009
101. Тарабрина П. В., Практикум по психологии посттравматического стресса, СПб. Питер, 2001
102. Техника юридической безопасности для журналистов: сборник материалов практических обучающих семинаров для работников СМИ и будущих журналистов (под ред. А.Симонова. - М., 2000)
103. Федеральный закон «О борьбе с терроризмом» N 130-ФЗ. Текст согласно электронному Банку правовых актов Государственной думы Федерального собрания Российской Федерации: <http://wbase.duma.gov.ru/ntc/fz.asp>
104. Хорни К., Невротическая личность нашего времени. -М., 1992, 12 с.

105. Цуканова Е. В. Психологические механизмы поведения и деятельности в экстремальных условиях. VI. РСПУ, 1991
106. Чемякин Ю.В. Международное гуманитарное право и СМИ: Конспект лекций/Уральский государственный университет им.А.М.Горького. Факультет журналистики. - Екатеринбург, 2005
107. Черепанова Е.М., Психологический стресс: Помоги себе и ребенку. -М., Изд. центр «Академия», 1997
108. Черепанова Е. М., Саморегуляция и самопомощь при работе в экстремальных условиях. М., 1995
109. Boulding K., Ecodynamics: A New Theory of Social Evolution. London, 1978, p. 27
110. Eibl Eibesfeldt «Human Ethology», New-York, 1989y. p. 1108
111. Holstein- Beck M. Konflikty , Warshawa 1978, pg 25-28
112. Практическая психодиагностика. Методика и тесты/ Издательский дом <Бахрах> Самара. 1998
113. [http://lorimpv.do.am/publ/hrdehashijman\\_jhamanakavor\\_hrahang/artakarg\\_iravitwak/1-1-0-10](http://lorimpv.do.am/publ/hrdehashijman_jhamanakavor_hrahang/artakarg_iravitwak/1-1-0-10)
114. <http://www.emergency.am/res/dictionary/Bararan.pdf>
115. <http://wbase.duma.gov.ru/ntc/fz.asp>.
116. [http://www.nat.ru/main.php?nat\\_support.antiterror\\_doc](http://www.nat.ru/main.php?nat_support.antiterror_doc)
117. <http://www.cjes.ru/lib/text02.shtml>
118. [http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=4646](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=4646)
119. [http://www.bbc.com/russian/radio/2010/04/100418\\_cojo\\_trauma\\_advice.shtml](http://www.bbc.com/russian/radio/2010/04/100418_cojo_trauma_advice.shtml)
120. [http://www.e-reading.club/bookreader.php/60703/Freiid - Vvedenie v psihoanaliz.html](http://www.e-reading.club/bookreader.php/60703/Freiid_-_Vvedenie_v_psihoanaliz.html)
121. <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2282>
122. <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1890>
123. <http://www.parliament.am/legislation.php?ID=1556&sel=sho>
124. <http://psy-journo.livejournal.com/3302.html>

125. <http://www.intuit.ru/studies/courses/612/468/lecture/20783%2525252525253Fpage%2525252525253D1>
126. <http://www.psychology.ru/lomonosov/tesises/gu.htm>
127. <http://www.psychology.ru/lomonosov/tesises/gu.htm>
128. <http://www.journs.ru/founder.html>
129. <http://www.rubaltic.ru/blogpost/21082015-osetija>
130. [http://psj.ru/saver\\_national/detail.php?ID=65675](http://psj.ru/saver_national/detail.php?ID=65675)
131. [http://www.sports.ru/tribuna/blogs/total\\_lfc/600018.html](http://www.sports.ru/tribuna/blogs/total_lfc/600018.html)
132. <http://ru.what-character-are-you.com/d/ru/4449/0.html>
133. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=20575>
134. [www.library.cjes.ru/\h](http://www.library.cjes.ru/\h)
135. [http://www.ifj.org/fileadmin/images/Live\\_News\\_versions/Live\\_News\\_RU.pdf](http://www.ifj.org/fileadmin/images/Live_News_versions/Live_News_RU.pdf)
136. [http://www.mmdc.ru/publications/our\\_issue/our\\_books/book-4/](http://www.mmdc.ru/publications/our_issue/our_books/book-4/)
137. [http://www.ifj.org/fileadmin/images/Live\\_News\\_versions/Live\\_News\\_RU.pdf](http://www.ifj.org/fileadmin/images/Live_News_versions/Live_News_RU.pdf)
138. <http://www.peoples.ru/art/literature/prose/belletristika/aslamova/>
139. <http://armlur.am/227916/>
140. <http://www.aravot.am/2014/10/27/509895/>
141. <https://www.youtube.com/watch?v=j04JVNbBDRw>
142. <http://media.am/Attacks-against-journalists-during-Electric-Yerevan>



## ՀԱՎԵԼՎԱԾ

Հավելված 1.

Ղարաբաղյան պատերազմը լուսաբանած լրագրողների նոթերը, հուշերը շատ բան են բացահայտում լրագրողի մասնագիտության ամենավտանգավոր և հոգեբանական կողմերի մասին: Լրագրողներ, որոնք չեզոք են եղել՝ ոչ հայ, ոչ ադրբեջանցի, ուղղակի պատերազմի գոտում կատարել են իրենց մասնագիտական պարտքը՝ որպես մեկնաբաններ, ի՞նչ են զգացել, ինչպիսի՞ն է եղել պատերազմը դրսում և իրենց ներսում, ինչպիսին է եղել ներքին հոգեկան պատերազմը: Լսելով պատերազմի մասին, բայց չլինելով ռազմական գործողությունների կենտրոնում՝ ոչ մի լրագրող չի պատկերացնի ու չի մտածի, թե ինչպիսին է այն իրականում, նախքան այնտեղ ուղևորվելը, չի մտածի, որ գուցե դա իր վերջին ուղևորությունն է, որ ինքը ունի մի շարք բնավորության գծեր, որոնք դեռ իր համար անտեսանելի են: Չհաշված այս հանգամանքներին, լրագրողը պարտավոր է չկորցնել իրեն և մնալ սառնասիրտ:

Պատերազմական գործողությունների կիզակետում գտնվող լրագրողի համար շատ բան կախված է առաջին հերթին խառնվածքից, սեռից, տարիքից, մասնագիտական փորձից, լրագրողի տեսակից՝ էթիկ, թե լոգիկ: Հանրահայտ լրագրող Դարյա Ասլամովան իր մասնագիտական գործունեության ընթացքում բազմիցս է լուսաբանել պատերազմական գործողություններ, անգամ գերի է ընկել: Նկարագրելով Ղարաբաղյան պատերազմից դրվագներ, Դարյան ասում է. «Գերի ընկնելով ադրբեջանական զինվորների մոտ, ես փորձում էի բացատրել, որ ընդամենը ռուս լրագրող եմ, սակայն դա նրանց քիչ էր հետաքրքրում: Ես պատկերացնում էի մորս, թե ինչ կզգա նա, եթե ես մահանամ նման անիմաստ մահով, նման իրավիճակում, և նույնիսկ ոչ սեփական հողում: Իսկ ադրբեջանցի զինվորները ինձ ու Օլեգին՝ գործընկերոջս, ստիպում էին կրակել ու սպանել հայ գերիներին, հակառակ դեպքում, մեզ կսպանեին ու կնետեին հայկական սահման, իբր մեզ սպանել են հայերը: Իմ դատողությունները հումանիզմի մասին զուր էին, և մի՞թե նման իրավիճակում ինչ-որ մեկին ծանոթ կթվար այդ բառը՝ հումանիզմ»: [138] Լրագրողը կարող էր սպանել գերեվարված հայերին և փրկվել, սակայն նա դա

չարեց, չարեց նաև իր գործընկերը՝ միանշանակ հրաժարվելով նման հանցագործությունից: Փոխարենը Դարյան ենթարկվեց սեռական բռնության ադրբեջանցի մի խումբ հրոսակների կողմից: Բարեբախտաբար, հայկական ջոկատներին հաջողվեց ազատագրել տարածքն ու փրկել լրագրողներին: Նմանատիպ արտակարգ իրավիճակներում մարդու մոտ առաջնային պլան է մղվում ամեն գնով ապրելու բնագոյը: Շատ հաճախ լրագրողները, չդիմանալով տանջանքներին, կամ պատերազմը իսկապես մաշկի վրա զգալով, թողնում են տարածքը և հեռանում: Շատերը կորցնելով իրենց և վախենալով սեփական կյանքի համար՝ կարող են դիմել անգամ դավաճանական քայլերի: Լրագրողները հայտնվում են արտակարգ իրավիճակներում, քանզի դա իրենց մասնագիտությունն է, մեկնաբանել իրավիճակները ու տեղեկացնել մարդկանց, իսկ գուցե նրանք ուղղակի փնտրում են արկածներ: Պատերազմի ընթացքում անընդհատ անհրաժեշտ է լինում տուժածների հետ շփվել, մասնագիտությունից ելնելով՝ պարզ է, որ թղթակցին անհրաժեշտ են վառ կերպարներ, հիշվող պատմություններ, բայց չի կարելի սեփական վարկանիշը կառուցել ուրիշի դժբախտության հաշվին: Այստեղ պետք է աշխատի լրագրողի էթիկան: Արյունալի տեսարաններ ցուցադրելը չի խրախուսվում, լրագրողական էթիկայի նորմերով անթույլատրելի է մահացած մարդու կադրեր ցուցադրելը: Դրանք կարող են տեսնել տուժածի հարազատները և ծանր հոգեվիճակում հայտնվել: Մշտական լարվածությունը ռազմական լրագրողի համար կարող է հանգեցնել ուժեղ սթրեսի, որն ուղեկցվում է վախով, թե հնարավոր է չհասցնի անհրաժեշտ կադրը նկարել և կորցնի պահը: Մշտական ուշադրությունը լավ է, բայց հոգեբանական առումով շատ ծանր է դիմանալ լարվածությանը. լրագրողը կարող է կորցնել սեփական ինքնատիրապետումը: Պատերազմական դաշտում աշխատանքը կրկնակի ծանր է, մյուս կողմից՝ աշխատանք, նյութ միշտ կա, և երբ հետաքրքիր նյութ է ստացվում՝ հավելյալ ներքին խթան և բավականություն են ստանում հենց գործընթացից: Աշխատանքով տարվելը ինչ-որ տեղ փոքրացնում է սթրեսը և գործն ամբողջացնելուն, վերջնարդյունքին հասնելու ճգնումը օգնում հնարավորինս հեշտորեն հաղթահարել սթրեսը:

Լավ նյութ, էքսկլյուզիվ, բացառիկ կադրեր. ահա այն երբեմն վտանգավոր խայծը, որ կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների: HTB հեռուստաընկերության, «Ռուսսիա 24»-ի, այժմ «Ռուսաստանն այսօր» ինֆորմացիոն գործակալության հեռուստալրագրող, և «Սպուտնիկ Արմենիա» մեդիահոլդինգի ղեկավար հեռուստալրագրող Դմիտրի Պիսարենկոյին կարելի է համարել ռազմական լրագրող: Նա իր մասնագիտական գործունեության ընթացքում բազմաթիվ հակամարտություններ է լուսաբանել: Դիման ծնվել, մեծացել, դպրոց է հաճախել, բարձրագույն կրթություն ստացել Երևանում, և չլինելով ազգությամբ հայ՝ իր հայրենիքը համարում է Հայաստանը: 1992 թվականին, երբ Ղարաբաղյան պատերազմն ամբողջությամբ իր իրավունքների մեջ էր, Պիսարենկոն 21 տարեկան էր և առաջին անգամ պատերազմ էր լուսաբանում: «Մենք անում էինք այնպիսի բաներ, որ հիմա սարսափով եմ հիշում, մենք՝ օպերատոր Արթուր Ապրեսովի հետ, ուղղակի մասնակցում էինք ռազմական գործողություններին: Այդ ժամանակ չես զգում վտանգ, չես վախենում կյանքիդ համար, միակ նպատակդ առաջ գնալն ու հողդ ազատագրողներին նկարելն է»: Դմիտրի Պիսարենկոն բազմաթիվ անգամներ է ականատես եղել զինծառայողների զոհվելուն: «Սարսափելի դեպքեր էին, երբ բառ չունես ասելու, կադրերը քո փոխարեն խոսում են», - պատմում է Դիման: 1997 թվականի մայիսի 9-ն էր՝ մեր երկրի համար եռատոն: Այդ օրը, որպես կանոն, սահմանամերձ գոտիներում լարվածությունը սրվում է: Եվ Դիման, «հանգիստ պայմաններ» նախընտրող լրագրողների նման չմնաց Երևանում՝ տոնելու այդ օրը, և ոչ անգամ Ստեփանակերտում, այլ իր օպերատորի՝ Հովհաննես Հակոբյանի հետ(HTB), գնաց Մարտունու հատվածի դիրքեր՝ առաջին գիծ, լուսաբանելու շփման գծում իրենց մարտական հերթապահությունն իրականացնող, ԼՂՀ անվտանգությունն ապահովող զինվորների տոնական օրը: Այդ օրը, սակայն, նրա համար տոնական ավարտ չունեցավ: Իր և օպերատորի աչքի առաջ զինվոր զոհվեց թշնամու գնդակից: Այս ռեպորտաժը ցնցեց ինչպես Հայաստանի, այնպես էլ ռուս հեռուստադիտողին: Հաջորդ սարսափելի միջադեպը, որի մասին Դիման պատմեց մեզ, տեղի է ունեցել 1997 թվականի

սեպտեմբերի 1 ին՝ ԼՂՀ նախագահի ընտրության օրը: Թշնամին նաև այդ օրերին է ակտիվանում: Նորից մի խումբ լրագրողներ, այդ թվում Դմիտրի Պիսարենկոն և օպերատորը, ուղեկցում են դեպի սահմանամերձ առաջին գիծ ընտրական հանձնաժողովի այն անդամին, որը շրջիկ քվեատուփը տանում է սահմանում ծառայություն իրականացնող զինվորականներին՝ նրանց ընտրելու իրավունքը իրացնելու: Լրագրողական խմբում նաև կին լրագրողներ են լինում, որոնք ևս խրամատներում նկարահանումներ են իրականացնում: Հակառակորդը նկատելով շարժ սահմանագոտում, սկսում է ակտիվ կրակահերթ արձակել, որին բնականաբար հայկական կողմը պատասխանում է: Մեր զինված ուժերի սպաներից մեկը, նաև հաշվի առնելով հավանաբար կին լրագրողների ներկայությունը, սկսում է ցուցադրական կրակոցներ արձակել, որի արդյունքում որոշ ժամանակ հակառակորդը լռում է: Եվ երբ արդեն զգոնությունը կորցրած սպան գլուխը բարձրացնում է, հնչում է ճակատագրական կրակոցը. դիպուկահարը մահացու վնասվածք է հասցնում սպային: Զինվորները նրան պատգարակի վրա արագ փորձում են հասցնել բուժկետ, երբ երկու լրագրող որոշում են այդ խառնաշփոթի ֆոնին սթենդափ նկարահանել: Ու քանի որ սարսափելի հուզված են, չեն կարողանում միտքը հստակ շարադրել, և խնդրում են պատգարակով մահամերձ վիրավորին բուժկետ վազացնող զինվորներին մի քանի րոպե սպասել, որ իրենք նկարեն սթենդափը: Պիսարենկոն թույլ չի տալիս զինվորներին լսել իր գործընկերների հորդորները, հասկանալով, որ յուրաքանչյուր վայրկյանը կարող է ճակատագրական լինել գլխից մահացու վնասվածք ստացած սպայի համար, որի միայն սիրտն էր այդ պահին աշխատում: Փաստորեն, Դմիտրի Պիսարենկոյի աչքի առաջ զոհվում էր հերթական զինվորականը, և Դիմայի մոտ առաջանում է վախի իրական զգացողություն, որ գուցե սա ճակատագրի նախագգուշացում է. «Իսկ եթե հաջորդը ես լինեմ», - պատմում է Դիման: 1997 թվականից մինչև 2000-ը Դիման ձեռնպահ է մնում թե՛ գոտիներ մեկնելուց, ռազմական գործողություններ լուսաբանելուց: Եվ երբ հերթական անգամ գերմանական նկարահանող խմբի է ուղեկցում ռազմական գործողությունների գոտի, ստիպված վերադառնում է այն գործին, որին կոչված է ու նորից ընկնում հորձանուտի մեջ: 2001-2006 թվականներին

Դմիտրի Պիսարենկոն լուսաբանել է Հյուսիսային Կովկասում, Չեչնիայում կատարվող իրադարձությունները, իսկ 2008 –ին՝ ռուս-վրացական պատերազմը: «Մի բան է, երբ դու 21 տարեկան ես, քո հայրենիքում ես ու այն պաշտպանում ես թշնամուց, և բոլորովին այլ բան, երբ 30 տարեկան ես և ուրիշի պատերազմ ես լուսաբանում: Առաջին դեպքում՝ ռոմանտիկ տարիքում ես, քեզ չի հետաքրքրում ոչինչ, վստահ ես, որ քեզ հետ ոչինչ չի պատահի, գործում ես բնագդաբար: Երբ արդեն 30 անց ես, ամեն քայլի դիմելուց առաջ մտածում ես ընտանիքիդ՝ երեխայիդ, կնոջդ, ծնողիդ մասին, և ավելի զգուշավոր ես դառնում»: Եվ ևս մեկ բան նկատել է Դմիտրի Պիսարենկոն. երբ հարձակվում ես՝ շատ ավելի հեշտ է հաղթահարել վախի, անհարմարության զգացումը: Եվ հակառակը, երբ խրամատում ես, քեզ սարսափելի անպաշտպան ես զգում, երբ գլխավերևումդ լսում ես գնդակների, արկերի սուլոցն ու ականների պայթյունները, և ամեն վայրկյան հասկանում ես, որ կարող ես հաջորդ պահին դու հայտնվել անկանոն կրակահերթի տակ կամ դառնալ պայթող ականի զոհ: Եվ այն հողը, որ դու պաշտպանում ես, կամ լուսաբանում դրա պաշտպանությունը, կարող է դառնալ քո վերջին հանգրվանը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. «Երեկ առավոտյան՝ ժամը 10:00-ի սահմաններում, ՀՀ պաշտպանության նախարարությունը պաշտոնապես հայտարարեց, որ սեպտեմբերի 7-ին՝ երեկոյան ժամը 01:15-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի ավտոհավաքակայանի շինության ետնամասում, ծնոտի շրջանում մահացու հրազենային մարմնական վիրավորումով հայտնաբերվել է պահակախմբում որպես ժամապահ ընդգրկված ժամկետային զինծառայող, շարքային Սամվել Հարությունյանը: [139]

armkur.am-ի թղթակիցը շտապել էր զինվորի տուն, որպեսզի հասկանար, թե ինչն է եղել զինվորի մահվան պատճառը: Նշենք, որ ըստ շրջանառվող լուրերի՝ Սամվել Հարությունյանն ինքնասպան էր եղել: «Երբ մեր լրագրողը ծեծել էր զոհված զինվորի բնակարանի դուռը, հարևանուհիներից մեկը հետաքրքրվել էր, թե ինչ է պատահել: Լրագրողը հայտնվել էր անասելի ծանր դրության մեջ, քանի որ ստիպված էր եղել դուռը բացած զինվորի հարազատներին ասել իրենց որդու հետ կատարվածի մասին: Ու պատկերացնել կարելի է, թե շքամուտքում ինչ ճշոցներ են լսվել: Սամվելի մայրը՝ տիկին Լիլյան, ուշագնաց եղավ... Ժամը 14:00 սահմաններում նոր ՊՆ-ից բարեհաճեցին ներկայանալ զինվորի տուն՝ կատարվածի մասին հայտնելու: Նրանք գլուխները կախել էին և չէին կարողանում պատասխանել ծնողների հարցադրումներին: Ու այդպես էլ անհասկանալի մնաց, թե ինչու էր ՊՆ-ն ծնողներից գաղտնի պահում կամ հապաղում հայտնել զինվորի մահվան լուրը»: Այս հրապարակումը վկայում է այն մասին, որ լրագրողը ոչ միայն չի պահպանել էթիկայի տարրական նորմերը, այլև հոգեբանորեն պատրաստ չի եղել նման իրավիճակում գործելու: Ընդհանրապես, մեր բարձրագույն ուսումնական հաստատություններում գուցեև մասնագիտական գիտելիքներ փոխանցում են ուսանողներին, բայց նմանատիպ իրավիճակներից ելք, ճիշտ հոգեբանական մոտեցում մահացածի կամ զոհվածի հարազատին, ընդհանրապես արտակարգ իրավիճակում հայտնված մարդու հանդեպ՝ չեն սովորեցնում:

Լրագրողների համար սարսափելի փորձություն էր 1999 թվականի հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունը, երբ իրադարձությունների կենտրոնում անկախ իրենց կամքից հայտնվել էին լրագրողներ: Հիմնական մասի համար բնականաբար այս արտակարգ իրավիճակը անհամատեղելի էր մասնագիտական գործունեության հետ, և նրանց գլխում միայն մեկ բան էր, ինչպես փրկել սեփական կյանքը: Սակայն որոշ պրոֆեսիոնալներ կարողացան հավաքել իրենց ուժերը և կատարել նաև իրենց մասնագիտական պարտքը: Երկու օրինակի վրա հիմնավորեմ ասվածը. երբ Ա1+ հեռուստաընկերության օպերատոր Արթուր Ղազարյանը, որը կյանքում առաջին անգամ էր ԱԺ-ի շենքում նկարահանում կատարում, կրակոցներից հետո պառկել էր հատակին, ընդ որում ծայրահեղ ծանր, կյանքի հետ անհամատեղելի վնասվածքներ ստացած Անդրանիկ Մանուկյանի անմիջապես կողքին, նա կորցրել էր ինքնատիրապետումը, և ուղղակի չէր մտածել, որ կարելի է միացնել տեսախցիկը և թեկուզ ձայնագրել իրադարձությունների ընթացքը: Մի բան, որ արել էր «Առավոտ» օրաթերթի լրագրող Աննա Իսրայելյանը: Նրա պրոֆեսիոնալիզմը հաղթել էր վախին. նա պառկած վիճակում իրեն չէր կորցրել և միացրել էր ձայնագրիչն ու ձայնագրել ԱԺ-ի դահլիճում կատարվող ամեն ինչ՝ առանց մտածելու, որ ահաբեկիչ-մարդասպանները կարող են նկատել և դա իր համար կարող էր ունենալ անդառնալի հետևանքներ: Ի դեպ, ոչ միայն իր համար... այդ քայլով նա կարող էր աֆեկտի տակ գտնվող ահաբեկիչներին դրդեր լրագրողների զանգվածային սպանությունների: Բարեբախտաբար, ահաբեկիչները չէին հետևում Աննայի գործողություններին: Հետո, իհարկե, այդ ձայնագրությունը ոչ միայն իրեն պետք եկավ՝ նյութ պատրաստելիս, այլև նախաքննական մարմնին: Դեպքերից մեկ օր անց Աննան հրապարակեց իր վերձանած նյութը և այն վերահրատարակեց 15 տարի հետո: Նախաբանում Աննան պատմում է. «15 տարի առաջ մինչև 17.05-ը խորհրդարանում այնքան հանդարտ էր, որ լրագրողներով իրար հարցնում էինք, թե ինչ ենք ի վերջո լուսաբանելու՝ նյութ չկա: Ժամեր անց վերադառնալով խորհրդարանից՝ մինչև լուսադեմ փորձում էի վերձանել կատարվածի ձայնագրությունը: Բազմիցս տեսել եմ՝ դեպքին ներկա

եղած լրագրողները դեռ երկար ժամանակ անգամ որևէ բարձր ձայնից էին վեր թռչում, ցնցվում: Իսկ այդ օրը հարկադրված էի նորից ու նորից լսել կրակոցների ձայները և ճիչերը... Այդպես է գրվել հոդվածս»: [140] Աննա Իսրայելյանը հրապարակել է նաև ձայնագրությունը, որտեղ հայհոյանքները չեն խլացրել, հաշվի առնելով այն խորհուրդը, որ այդ ժամանակ նրան տվել է լրագրող Վադիմ Ռեչկալովը: «Նա ստիպեց մեկ առ մեկ իր համար թարգմանել հայհոյանքները, և հարցեր էլ էր տալիս, թե ասենք, մեղմ ասած՝ «անբարոյականի զավակ» ասածը շա՛տ վիրավորական է մեր լեզվով: Վադիմ Ռեչկալովն ասում էր՝ մարդիկ Նաիրի Հունանյանին տեսան արդեն հանգիստ վիճակում, երբ հարցազրույց էր տալիս, շարադրում իր գաղափարները, սակայն շատ կարևոր է նրան ներկայացնել այնպես, ինչպես էր, երբ ներխուժեց դահլիճ»:

Աննան և բոլոր լրագրողները, որ հոկտեմբերի 27 -ին ԱԺ-ի դահլիճում են եղել, անձամբ զգացել են մահվան շունչն իրենց դեմքին: Ի դեպ, այն օպերատորը, որի մասին վերևում նշեցի՝ Արթուր Ղազարյանը, դեպքերից կարճ ժամանակ անց մահացավ: Հանկարծահաս վտանգի վախից նրա մոտ առաջացել էր անբուժելի հիվանդություն, որի դեմ նա չկարողացավ պայքարել: Այսինքն, նրա մասնագիտությունը մահվան պատճառ դարձավ: «Ա1+» հեռուստաընկերությունն այդ օրը աշխատում էր հատուկ ` համարյա թե non-stop ռեժիմով: Ներկայացվում էր իրավիճակը ինչպես ԱԺ-ին հարող Բաղրամյան և Դեմիրճյան փողոցներում, այնպես էլ հիվանդանոցներում, ուր տեղափոխվում էին վիրավորները: «Ա1+»-ի երիտասարդ լրագրողներս, թեև ունեինք մասնագիտական կրթություն, բայց հոգեբանորեն պատրաստ չէինք իրադարձությունների նման զարգացման, և արտակարգ իրավիճակ էր ոչ միայն երկրի, այլև յուրաքանչյուրիս կյանքում: Այնուամենայնիվ, կարողացանք տեքստերում հնարավորինս քողարկել մեր էմոցիաները, զգացմունքները. այստեղ մեզ մատնում էին մեր աչքերը, վախից, հուզմունքից ու լարվածությունից լայնացած բիբերը, եթերում թրթռացող, դողացող ձայնը: Այսինքն, եթե առաջին հայացքից, տեղեկատվություն տալով դու ապահովում ես քաղաքացու տեղեկացված լինելու իրավունքը, նա ունենում է առաջին ձեռքից ինֆորմացիա, ապա հաջորդ պահին ակամայից նրան փոխանցվում ես քո ներվը, նյարդը,



որը թաքցնել այդպես էլ մեզ չհաջողվեց: Անդրադառնանք նաև այդ օրը ոչ միայն ԱԺ դահլիճում, այլև հարակից իրադարձությունները լուսաբանելիս առաջացած այլ վտանգների:

Տրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանին ծանրագույն, կյանքի հետ գրեթե անհամատեղելի վնասվածքներով տեղափոխել էին Պոռչյան փողոցի վրա գտնվող 3-րդ հիվանդանոց. առաջին անհրաժեշտ բուժօգնությունից և իրավիճակը գնահատելուց հետո որոշում կայացվեց նրան տեղափոխել ավելի մասնագիտացված և ժամանակակից բուժտեխնիկայով հագեցած վերակենդանացման բաժանմունք ունեցող հիվանդանոց: Եվ շտապօգնության մեքենայով նրան տարան: Մինչ ես հարցազրույց էի անում պրոֆեսոր և նրան հետազոտած բժիշկ Պավել Պետրոսի Անանիկյանի հետ, Մանուկյանին ուղեկցող բժիշկը զանգով պրոֆեսորին տեղեկացրեց, որ հիվանդի մոտ սրտի կանգ է արձանագրվել: Բնականաբար ես, որպես լրագրող, որն այդ պահին հիվանդանոցում պարզում էր վիրավորվածների վիճակը, անմիաջապես ուղիղ եթերում հայտնեցի՝ «Անդրանիկ Մանուկյանը համարյա մահացավ»: «Համարյա» բառն այս դեպքում որքան անհեթեթ էր, նույնքան էլ պաշտպանական նշանակություն ուներ ինձ համար, քանի որ ես իմ աչքով չէի տեսել, բայց և քաջ գիտակցում էի, որ չի լինում համարյա մահացած, ինչպես չի լինում մի քիչ հղի: Այնուամենայնիվ, այս լուրը լսում են Մանուկյանի հարազատները, և երբ էրեբունի հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքի բժիշկներին հաջողվում է կարգավորել Մանուկյանի սրտի աշխատանքը և նրան միացվում է արհեստական շնչառության ապարատը, իմ գործընկերներից մեկը, որն արդեն այդ հիվանդանոցում էր, ենթարկվում է հարձակման նրա հարազատների կողմից, որոնք բառի բուն իմաստով իրենց ամբողջ հուզմունքն ու լարվածությունը թափում են լրագրողի վրա՝ ասելով, թե «դուք ձեր եթերում հայտնեցիք, որ Անդրանիկ Մանուկյանը մահացել է»: Այսինքն, օպերատիվություն ապահովելու համար թույլ տրված սխալը վտանգեց գործընկերոջս կյանքը: Բայց այս ամենի մասին ոչ ոք և երբեք մեզ չի սովորեցրել: Սրանք հմտություններ են, որ ցավոք մեզանում ձեռք են բերվում դեպքի, նկարահանումների վայրերում՝ վտանգավոր պայմաններում, ոչ թե անվտանգ լսարաններում:

Մարտի 1-ի իրադարձությունները լուսաբանած լրագրողները սարսափելի փորձության ենթարկվեցին, երբ Երևան քաղաքի կենտրոնում, թվում է, թե ոչ պատերազմական գոտում իրենց մասնագիտական պարտքը կատարում էին ուղղակի գնդակների սուլոցների ներքո, երբ հարևանությամբ պայթում էին նռնակներ, իսկ ասֆալտի արյունը երևում էր միայն օպերատորի տեսախցիկի լույսի ներքո: Սա մի մղձավանջ էր, որտեղ շատ դժվար էր կողմնորոշվել տեղեկատվության տրամադրման առումով. անհասկանալի էր՝ նույն պահին լուր տա՞լ, որ կան զոհեր, ինչը մի ռեակցիայի դեպքում կարող էր հրապարակ բերել շատ ավելի մարդ՝ հանգեցնելով ավելի մեծ կորուստների, թե՞ չտալ, կրկին տարբեր ռեակցիաների պարագայում մարդիկ չգիտակցելով վերահաս վտանգը, կարող էին ավելի ու ավելի շատանալ հրապարակում: Այս իրավիճակն, իհարկե, տևեց մեկ օր, հաջորդ օրը՝ մարտի 2 ից հայտարարվեց արտակարգ դրություն: Այս ժամանակահատվածը թույլ տվեց, որպեսզի լրագրողներն ավելի սթափ և սառը դատողությամբ պատրաստեն բոլոր այն նյութերը, որոնք հասցրել էին նկարահանել մինչև արտակարգ դրության հայտարարելը: Ահա այստեղ էլ առաջանում է մի իրավիճակ, երբ լրագրողի վստահություն ներշնչելը դառնում է լավ նյութ ձեռք բերելու միակ գրավականը: Մասնավորապես, մարտի 1-ի դեպքերից հետո «Ա1+» հեռուստաընկերությունը պատրաստեց մի տեսաֆիլմ, որտեղ հիմնականում օգտագործվել են սիրողական կադրեր, որոնք նկարահանել են Մաշտոցի պողոտայի, Պարոնյանի և Լեոյի բնակիչներն՝ իրենց բնակարաններից: Եվ ուղղակի պետք էր համոզել այդ մարդկանց՝ տրամադրել իրենց նյութերը, պայմանով, որ չեն հրապարակի նյութի ստացման աղբյուրը: [141] Այսինքն, անհրաժեշտ էր հոգեբանական պատրաստվածություն, շոկ ապրած մարդկանց տուն գնալ և արտակարգ դրության պայմաններում, այսինքն, տոտալ վախի մթնոլորտում նման գործունեություն իրականացնել: Այդ օրերին, բնականաբար, ընդհանրապես խիստ զգացվեց հոգեբանի հմտություններ ունենալու անհրաժեշտություն, երբ հարցազրույց ես վերցնում մարտի 1 -ի զոհերի հարազատների, կամ ասենք ծանր վիրավորված քաղաքացիների հետ:

Ներկայացնենք նաև Հայաստանում լրագրողների նկատմամբ բռնության դեպքեր:

Դեպք 1. 2003 թվականի նախագահի ընտրություններ. Էրեբունի համայնքի մշակույթի տանը տեղակայված ընտրական N տեղամասում «Ա1+» հեռուստաընկերության լրագրող Դ.Մ.-ն կատարում է իր մասնագիտական պարտականությունները՝ նկարահանում է քվեարկության ընթացքը: Եվ ականա ականատես է դառնում, թե ինչպես մի ընտրող քվեաթերթիկների մի ամբողջ տրցակ լցնում է քվեատուփը, իսկ ընտրական հանձնաժողովի անդամները ոչ միայն չեն խոչընդոտում, այլև նպաստում են օրենքի խախտմանը: Նկարահանող լրագրողը, բնականաբար, արձանագրում է ընտրախախտումը: Արդյունքում հանձնաժողովի նախագահի՝ նկարահանումները դադարեցնելու հորդորներին չենթարկվելու համար, լրագրողի նկատմամբ կիրառում է բռնություն անձամբ հանձնաժողովի նախագահը, որը հարվածում և փորձում է լրագրողի ձեռքից խլել տեսախցիկը: Իհարկե, ծեծ, որպես այդպիսին, լրագրողի նկատմամբ չկիրառվեց, բայց նա մի քանի հարված ստացավ ձեռքերին, ապա թևերն ոլորելով դուրս հրավիրվեց տեղամասից՝ իբր հանձնաժողովի աշխատանքները խոչընդոտելու և ընտրական գործընթացը վարկաբեկելու փորձի համար: /Սեփական դիտարկում/:

Դեպք 2. 2004 թվականի ապրիլի 12-ի լույս 13 –ի գիշերը Բաղրամյան պողոտան կրկին մարդաշատ էր: Ընդդիմությունը փորձել էր բողոքի երթով «Ազատության» հրապարակից բարձրանալ նախագահական նստավայր՝ Բաղրամյան 26, սակայն ոստիկանությունը փշալարաբերով փակել էր ճանապարհը, և ընդդիմությունը որոշել էր անորոշ ժամկետով մնալ պողոտայում, մինչև կկատարվի ներկայացված պահանջը: Իսկ պահանջը հետևյալն էր. կատարել ՍԴ որոշումը. նախագահական ընտրությունների արդյունքների հանդեպ անվստահությունը մեղմելու նպատակով ՍԴ-ն որոշել էր առաջարկել ՀՀ կառավարությանը մեկ տարվա ընթացքում իրականացնել վստահության հանրաքվե, որը սակայն այդպես էլ չիրականացվեց: Ապրիլի 12-ի գիշերը ոստիկանությունը որոշեց վերականգնել պողոտայի երթևեկությունը՝ ուժ կիրառելով խաղաղ ցուցարարների նկատմամբ: Ոստիկանությունը օպերացիա իրականացրեց նաև ընդդիմադիր երեք

կուսակցությունների գրասենյակներում, որի արդյունքում տուժեցին ինչպես գրասենյակների աշխատակիցներն ու շարքային կուսակցականներն, այնպես էլ գույքն ու համակարգիչները, որոնք առգրավվեցին, անգամ ընդդիմադիր գործիչների՝ գրասենյակների առջև կայանված ավտոմեքենաները տարվեցին տուգանային հրապարակ: Այդ օրը տուժեցին նաև լրագրողներ: Ապրիլի 13-ին ընդդիմադիր ուժերի հանրահավաքից հետո ոստիկանությունը ծեծեց առնվազն երեք լրագրողի ու ոչնչացրեց կամ առգրավեց նրանց տեսախցիկները: Լրագրողները նշում են, որ իրենք ներկայացել են ոստիկանությանը որպես մասնագիտական պարտականություններ կատարող լրագրողներ:

«Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Հ.Գ. Ենթարկվեց դաժան բռնության, նրա մեջքի վրա երկար ժամանակ պահպանվում էին մահակի հարվածներից մնացած կապտուկները: Նրան ճանաչում էին բռնություն իրականացրած մարդիկ և նա ոչ թե պատահական, այլ թիրախային բռնության ենթարկվեց: Արդեն նկարահանած կադրերը ոչնչացնելու համար բռնության ենթարկվեց ռուսական Առաջին հեռուստաալիքի օպերատոր, ազգությամբ հայ Լ.Գ-ն: Նրա վերնաշապիկն ամբողջությամբ արյան մեջ էր: Հարվածներ էին հասել նաև նրա գլխին և դեմքին Սեփական դիտարկում/:

Դեպք 3. 2003 թվականի ապրիլի 9-ին նախագահի երդմնակալության օրը կրկին բախում տեղի ունեցավ ոստիկանության և ցուցարարների միջև: «Ա1+» հեռուստաընկերության լրագրողը, տեսնելով, որ ոստիկանի ծանր մահակն իջնում է զոհված ազատամատիկի սևազգեստ տարեց մոր մեջքին, ինքն իր մարմնով պաշտպանեց կնոջը՝ արդյունքում վնասվելով և ստանալով մահակի բավականին ծանր հարված: Այսինքն, սա կարելի է համարել պատահական վնասվածք, որ ևս մասնագիտական ռիսկերի մեջ է մտնում (Սեփական դիտարկում):

2015 թվականի հունիսի 23-ի դեպքերը մեր կողմից ևս քննարկման առարկա են:

Հունիսի 23-ի առավոտյան Երևանի Բաղրամյան պողոտայում էլեկտրաէներգիայի թանկացման դեմ նստացույցի մասնակիցներին ցրելիս ոստիկանները ծեծի ենթարկեցին լրագրողներին, կոտրելով նրանց աշխատանքային գործիքները, առգրավելով սարքերը և

հիշողության քարտերը: Կան լրագրողներ, որոնց սարքավորումների գտնվելու վայրը մինչև այժմ հայտնի չէ: Ոստիկանության օպերացիայի հետևանքով ֆիզիկական բռնության ենթարկվեց 13 լրագրող ու օպերատոր, խոչընդոտվեց տարբեր ՁԼՄ-ների մոտ 15 ներկայացուցչի օրինական մասնագիտական գործունեությունը:

Ներկայացնենք նաև մի քանի տուժած լրագրողի պատմածները. [142]

Դավիթ Դավթյան. «Արմենիա» հեռուստաընկերության լրագրող- Երբ հիմնական ցուցարարների մասին բռնեցին, հերթը հասավ մեզ: Նույնիսկ չնկատեցի էլ, թե ինչպես հարձակվեցին վրաս, որովհետև մի պահ ուղղակի հայացքս թեքեցի, ու միանգամից 4 հոգով հարձակվեցին, ընդ որում՝ ոչ միայն ոստիկանական, այլև քաղաքացիական հագուստով իրավապահներ: 5:30-6:00-ի սահմաններում, երբ ջրցան մեքենան գործի դրեցին, մարդկանց քշեցին դեպի Ֆրանսիայի հրապարակ, Բաղրամյան պողոտան ամբողջությամբ ազատեցին, ոստիկաններն ընկան մարդկանց հետևից: Մի մասին բերման ենթարկեցին: Մյուս մասը, որին չէր հաջողվել բռնել, հավաքվել էր Ազատության հրապարակում: Ես ու մեր օպերատոր Խաչատուր Եսայանը հետևեցինք նրանց: Մի քանի րոպե հետո ոստիկանները հավաքվեցին ամբողջ կազմով և սկսեցին հարձակվել ցուցարարների վրա: Ես ու օպերատորը, ինչպես նաև մյուս լարտվամիջոցների գործընկերներս. կողքից կանգնած ֆիքսել ենք կադրերը, թե ինչ է տեղի ունենում, կատարել ենք մեր աշխատանքը: Չէի պատկերացնում, որ ոստիկանները կարող էին նման կերպ վարվել, որովհետև իսկապես անհամատեղելի էր այն, ինչ լսում ենք բարեփոխումների մասին, ու այն, ինչ տեղի ունեցավ ինձ հետ: Հատուկ ուզում եմ շեշտել, որ հաշվի չառան, որ լրագրող եմ: Երբ բեյջս ցույց տվեցի, ոստիկանները պոկեցին այն ու ինձ բերման ենթարկեցին: Ինձ ու օպերատորին սկզբում տարան ոստիկանության Կենտրոնի բաժին, այնտեղից արդեն տարբեր ուղղություններով, ինձ՝ Մալաթիայի, իրեն՝ Էջմիածնի բաժանմունք: Դաստակիս հատվածում կապտուկ ունեմ և այտուց, օպերատորն էլ է հարվածներ ստացել, ձեռքին վերք կա:

Կարապետ Սահակյան. «ՊԱՆՖոտո» -ի ֆոտոլրագրող-Երբ արդեն ավարտում էի նկարելը՝ Թումանյանի արձանի մոտ, մեկը ձախ կողմից ձեռքը գցեց, որ ֆոտոխցիկը

քաշի: Ես փախցրեցի, մեկ էլ՝ մյուս կողմից քաշեցին: Քաղաքացիական հագուստով իրավապահներ էին: Ֆոտոապարատս գրկեցի պինդ, նստեցի գետնին: Մի քանի հոգի քաշում էին, խփում էին, բարեբախտաբար, վնասվածքներ չեղան: Ապարատս ձեռքիցս խլեցին, խփեցին գետնին ու գետնին խփելով տարան: Հետո վիդեոյի մեջ տեսա, որ իրենցից մեկը դրեց թևի տակ ու գնաց: Դրանից հետո դիմակավորներն ինձ տարան ոստիկանության Կենտրոնի բաժին, այնտեղից՝ Էջմիածին, տվյալներս վերցրին ու բաց թողեցին:

Անի Հովհաննիսյան. «Հետք» -ի լրագրող-5:30-ի սահմաններում քաղաքացիական հագուստով անձինք սկսեցին ջարդել մարդկանց աջ ու ձախ կողմերից: Իսկ դիմացից ջրցան մեքենան սկսեց ջուր շփել: Մարդկանց քշեցին դեպի Ազատության հրապարակ: Ազատության հրապարակում սկսեցին ծեծել, հայիոյել ու բերման ենթարկել: Շատ դաժան էին վարվում: Լրագրողների նկատմամբ վերաբերմունքը ոչնչով չէր տարբերվում ցուցարարների հանդեպ վերաբերմունքից: Հրաման էր իջեցված՝ կապ չունի ով, ինչ, բոլորին հավաքել: Կար լրագրող, ով բեյջը ցույց էր տվել, որ լրագրող է, վերցրել ճղել էին ու բռնությամբ բերման էին ենթարկել: Ես երկու ընկերներիս հետ Ազատության հրապարակի մոտ էի, նկարում էի ամբողջ ծեծ-ջարդը, հայիոյանքները: Հեռվից քաղաքացիական հագուստով մի անձ վազելով եկավ մեր հետևից, բռնեց ու ընկերներիցս մեկին սկեց քաշքել, որպեսի հարվածի: Տեղեկություն չունեմ՝ ապարատս որտեղ է և ինչ վիճակում է: Ես միջամտեցի, ասացի՝ լրագրող եմ, բեյջս ցույց տվեցի, ասաց՝ ուրեմն երեքիդ էլ բերման կենթարկեմ: Ու բերման ենթարկեցին: Ինձ մատով չեն կպել, միայն հրել են, երբ միջամտել եմ, որ ընկերոջս չծեծեն:

Գևորգ Ղազարյան. անկախ ֆոտոլրագրող- Օպերայի և Մաշտոցի անկյունում տեսա, որ ոստիկանները մի ակտիվիստ աղջկա շրջանակի մեջ էին վերցրել ու վիրավորական բառեր էին ասում, հայիոյում էին: Մոտեցա, խնդրեցի, որ չհայիոյեն, գրկեցի աղջկան, որովհետև շատ վատ էր զգում, լաց էր լինում: Ոստիկաններից մեկը բավական բռնի ձևով մոտեցավ, ասաց՝ ,էս երկուսին բերման ենթարկեք: Մեզ մի 10 հոգի

որտեղից պատահի բռնեցին ու տարան: Ընթացքում խփում էին, քաշքշելով ամեն ինչ վերցնում էին, այդ թվում՝ ֆոտոապարատս: Չգիտեմ էլ՝ ով է վերցրել, ու որտեղ է:

Նիկոլայ Թորոսյան. Panarmenian.net-ի լրագրող-Մեկը մյուսին ասում էր՝ շիթով խփի, որ տեղ չմնա: Մի քանի րոպե խփելուց հետո մեկ այլ ոստիկան հայտնվեց, որը, ինչպես հասկացա, մեկ այլ ջոկատից էր: Ինձ այդ ոստիկանների մոտից հեռացրեց, օգնեց բարձրանամ ու գնամ, նստեմ նստարանին: Նայեց բեյջիս, հասկացավ, որ լրագրող եմ ու ներողություն խնդրեց ինձանից, ասաց՝ «Էսպես չպիտի լինի, ներողություն եմ խղնրում ամեն ինչի համար»: Դրանից հետո ինձ թողեցին, գնացին: Երբ Օպերայի մոտ սկսեցին ցուցարարներին հավաքել, բերման ենթարկել, իմ հետևից էլ ընկան: Որոշ ժամանակ վազվզելուց, փախչելուց հետո Հյուսիսային պողոտայի հատվածում նստեցի նստարանին, որ մի քանի րոպե շունչ քաշեմ, որովհետև շնչակտուր էի լինում: Այդ պահին ինձ մոտեցան 2 ոստիկաններ, ասացին՝ շարժվի: Ասացի՝ լավ չեմ զգում, շնչակտուր եմ լինում, երկու րոպեից վեր կկենամ, կգնամ: Սկզբում ձեռքը դրեցին շնչափողիս, հետո բարձրացրին ու բրդելով տարան՝ ընթացքում հայիոյելով: Չհասած Տերյանի խաչմերուկ՝ տապալեցին գետնին ու սկսեցին ծեծել՝ ոտքերով և վահանով հարվածելով:

Փայլակ Ֆահրադյան. «Գալա» հեռուստաընկերության լրագրող

Ինձ ծեծում էին հրեշտակները, որոնց հետ ես ընկերական զրուցում էի ամբողջ գիշեր... ինձ ծեծում էր կարմիր բերատավորը, ինձ ծեծում էր քաղաքացիական հագուստով ոստիկանը... չգիտեմ էլ ինչ ասեմ, շատ բան կոտրվեց մեջս համակարգի նկատմամբ:

Հակոբ Կարապետյան. lur.am-Երբ Ազատության հրապարակից ցուցարարներին հավաքեցին տարան, և մնացին միայն ոստիկաններն ու լրագրողները, որոնք տեսա- կամ լուսանկարահանում էին, ֆիքսեցի՝ ինչպես գեներալ Լևոն Երանոսյանը հայիոյանքների ուղեկցությամբ կոտրեց օպերատորներից մեկի տեսախցիկը: Եվ երբ նա հրաման տվեց՝ «բռնեք սրանց», հասկացա, որ անիմաստ է այդտեղ մնալը, փախա դեպի Թումանյան-Հյուսիսային պողոտա հատվածը: Հրապարակից դուրս գալիս հանդիպեցի Panarmenian.net-ի թղթակից Նիկոլայ Թորոսյանին: Մի քանի ոստիկաններ՝ մայրի գլխավորությամբ, վազելով մոտեցան մեզ և հրամայեցին ինձ հետևել իրենց: Խնդրեցի



ներկայանալ և ասել, թե ինչի համար են ուզում ինձ տանել: Ոչ մի բացատրություն չտվեցին, ձեռքերիցս բռնեցին: Տեսել էի, որ գործընկերներիս ծեծում են, հասկացա, որ հրամանները չկատարելու դեպքում ինձ էլ են ծեծելու, այդ պատճառով հետևեցի նրանց: Ոստիկաններն այդ պահին Նիկոլայի վրա ուշադրություն չդարձրին, ենթադրում եմ, որովհետև նրա ձեռքին տեսախցիկ չկար: Նիկոլայն ասաց՝ «տեսախցիկդ տուր ինձ», փորձեց գոնե դա փրկել: Նրան ասացի՝ փախի: Երբ ինձ տանում էին, հետ նայեցի, տեսա, որ այդ ոստիկանների խմբից մի քանիսը հարձակվեցին Նիկոլայի վրա և սկսեցին նրան հարվածներ հասցնել: Ճանապարհին տեսախցիկից հանեցի հիշողության քարտը, դրեցի գրպանս: Ինձ տարան Ազատության հրապարակ, որտեղ ոստիկանության զորքերը մի քանի տողանով շարվել էին, այլ ոստիկանների հետ կանգնած էին նաև Հունան Պողոսյանն ու Լևոն Երանոսյանը: Հունան Պողոսյանն ինձ ասաց՝ «ես որ քեզ ասում էի»: սկզբում չհասկացա ինչի մասին է խոսքը: Հետո ենթադրեցի, որ այդ օրն ավելի վաղ ունեցած զրույցի մասին է խոսում: Հունիսի 23-ի օպերացիայից առաջ, երբ հայտնվեցին քաղաքացիական հագուստով ոստիկանները, Պողոսյանին հարցրի՝ «Ո՞րն է պատճառը, որ ոստիկանները համազգեստով չեն, միգուցե ոստիկանությունը համազգեստների դեֆիցիտ ունի»: Նա ասաց՝ «Դուք միշտ խոսում եք ոստիկանների լիազորությունների գերազանցելու մասին, բայց դուք այս պահին գերազանցում եք ձեր լիազորությունները»: Հունան Պողոսյանը հրամայեց ձեռքիցս վերցնել տեսախցիկը: Երբ տեսախցիկի մեջ քարտ չգտան, սկսեցին խուզարկել: Պողոսյանը հրամայեց հիշողության քարտը վերցնել, իսկ տեսախցիկը վերադարձնել: Հիշողության քարտի մասին էլ ասաց՝ «կգաս բաժնից կվերցնես մաքուր չիպը»: Երբ հիշողության քարտը վերցնող ոստիկանին հարցրի, թե որտեղից կարող եմ հետ ստանալ քարտը, նա շատ կոպիտ տոնով ասաց՝ «ի՞նչ չիպ, ապեր, շա՞ն ես անում»: Ինձ համար արդեն պարզ էր նրանց մարտավարությունը: Մի քանի անգամ զանգեցի ոստիկանության հասարակայնության հետ կապերի բաժին, որևէ պատասխան չստացա հիշողության քարտիս վերաբերյալ: Հետո դիմեցի ոստիկանության կենտրոնի բաժանմունք, հաղորդում տվեցի հանցագործության մասին իմ լրագրողական գործունեությունը խոչընդոտելու առթիվ: Հունիսի 23-ի երեկոյան, երբ Հունան Պողոսյանը

լրագրողների հետ հանդիպմանը փոխանցեց, որ Վովա Գասպարյանը ցավում է լրագրողների նկատմամբ ոչ համաչափ գործողությունների համար և խոսեց փոխհատուցման մասին, հարցրի՝ «Իսկ իմ հիշողության քարտը, որը ձեր հրամանով վերցրել են, որտեղի՞ց կարող եմ հետ ստանալ», ասաց՝ «Հարգելիս, դուք սխալվում եք, ես որևէ մեկին ձեր չիպը վերցնելու հրաման չեմ տվել»: Նա հերքեց ամեն ինչ: Իսկ հիշողության քարտս մինչև հիմա էլ չեն վերադարձրել:

Սիսակ Գաբրիելյան. «Ազատություն» ռադիոկայան-Բաղրամյան պողոտայում ոստիկանությունը մի քանի անգամ բարձրախոսով հայտարարեց՝ «Հարգելի լրագրողներ, ազատեք տարածքը, ոստիկանությունն անցնում է հատուկ գործողության», մեզ առաջարկեցին բարձրանալ մայթ: Բայց դա հնարավոր էլ չէր, որովհետև այնտեղ կանգնած էին քաղաքացիական հագուստով ոստիկանները: Իրենց թվացել էր՝ քաղաքացիական հագուստով ոստիկանները գործ չեն ունենա անելու, որովհետև հենց ջրցանը միացնեն, բոլորը կցրվեն: Երբ տեսան, որ մարդիկ ոչ մի տեղ չեն գնում, քաղաքացիական հագուստով ոստիկանները սկսեցին ցրել մարդկանց: Այդ ընթացքում մեկը եկավ, մեր ուղիղ եթերի լարը պոկեց: Եվ հետևիցս քաղաքացիական հագուստով տարբեր մարդիկ պարբերաբար հարվածում էին: Երբ մտանք Ազատության հրապարակ, տեսա՝ 3-4 հոգով մեր օպերատոր Գարիկին տանում են: Մոտեցա, ասացի՝ «ինչ եք անում, իմ օպերատորն է»: Մեկը եկավ, թևս ոլորեց, ասաց՝ «հլը տենամ որտեղից ես», վզիցս կախված բեյջը վերցրեց, նայեց, պոկեց ու դեն նետեց, ասաց՝ «գնա ստեղից, էլ լրագրող չես»: Հարվածեց ու ջարդեց տեսախցիկի առջևի մասը: Երբ կոացա, որ հավաքեմ, ոտքով հարվածելու ընթացքում խփեց նաև ձեռքիս: Ես խառնված վազեցի մեր մյուս լրագրող Արթուր Պապյանի մոտ, որ ասեմ Գարիկին տարան, մեկ էլ տեսնեմ մեկը Արթուրի հեռախոսը խփեց գետնին: Արթուրն ասաց՝ «ախպեր ինչի՞ ես անում»: Նա, թե «ես քեզ ինչ ախպեր» ու հայիոյեց: Արթուրը կոացավ, որ հեռախոսը վերցնի, նա նորից քացով խփեց:

Նմանատիպ իրավիճակներում տարրական հարցազրույց անելն էլ պահանջում է մասնագիտական հմտություններ, զգոնություն, հավասարակշռություն: Պետք է ցուցաբերել հոգատարություն և հարգանք, ստեղծել անկեղծ շփում: Անհրաժեշտ է

անկեղծ, խորհին ցավակցություն և ապրումակցում նման մարդկանց հանդեպ: Լրագրողը մշտապես անցանկալի հյուր է այնտեղ, որտեղ խախտվում է օրենքը, որտեղ կատարվում է հանցագործություն, որտեղ ոտնահարվում է արդարությունը: Լրագրողները համարվում են հասարակության սանիտարները, որոնք իրենց գործունեությամբ աղտից փորձում են մաքրել երկիրն ու հասարակությունը: Ցավոք, այսօր շատ լրագրողներ պատրաստ չեն ոչ միայն կյանքը զոհել հանուն ճշմարտության, հանուն արդար գործի, այլև դիմակայել ամենափոքր դժվարություններին: Այդպիսի պահերին մարդը գտնվում է հուզական շոկային իրավիճակում և չպետք է մոռանալ, որ նա կարող է ոչ միայն չհիշել դեպքերի իսկությունը, այլ նաև մոռանալ, որ հարցազրույց է տվել, ինչը կարող է հետագայում խնդիրների հանգեցնել: Այս ամենից խուսափելու համար պետք է գործել հմտորեն: Հարցերը տալու ընթացքում պետք է շատ ուշադիր և նրբանկատ լինել, խուսափել ավելորդ բառերից, բառեր որոնք կարող են շոկային վիճակում գտնվող մարդուն ավելի վատ վիճակի հասցնել: Անհրաժեշտ է կարողանալ պահպանել հանգստություն և ինքնավստահություն: Շատ կարևոր է ժամանակին կարողանալ դադարեցնել հարցազրույցը, եթե դրանից դիմացինի վիճակը վատթարանում է:

Մարդիկ, ովքեր մասնագիտությունից ելնելով մշտապես շփվում են դժբախտություն, կարուստ, ցավ ապրած մարդկանց հետ, վաղ, թե ուշ կարող են ունենալ հոգեբանական խնդիրներ, որոնք կազդեն ոչ միայն հուզական վիճակի վրա, այլ նաև մասնագիտական կյանքի: Նրանց թվում են նաև լրագրողները: Չկա որևէ հստակ միջոց, եղանակ, որին տիրապետելով լրագրողը կարող է խուսափել այս ամենից: Պարզապես պետք է կարողանալ արտակարգ իրավիճակներին նայել սթափ, գիտակցված, հիշելով, որ դա լրագրողի առօրյա աշխատանքն է:

«Վայրկյանի մեկ հարյուրերորդական մասը» կարճամետրաժ ֆիլմը լրագրությունը բացում է բավականին հետաքրքիր հոգեբանական տեսանկյունից: Ֆիլմը Կոսովոյում ռազմական գործողությունների մասին է, երբ ֆոտոլրագրողի խցիկը հանկարծ որսում է փոշու, կրակոցների, սուլող արկերի ներքո, խնձորները գրկած տուն վազող դեռահաս աղջնակի: Նրան որսում է ոչ միայն ֆոտոլրագրողը, այլև զինված գրոհայինը: Լուսանկարիչը, որ երիտասարդ աղջիկ է, լուսանկարչական ապարատը ձեռքին սպասում է հետագա զարգացմանը, իսկ երեխան կարկամած, աղերսող հայացքով փրկություն է խնդրում իրեն վտանգի մեջ տեսած լուսանկարչից: Հաջորդ կադրում ռեժիսորը ցույց է տալիս արդեն սպանված երեխային պատկերող լուսանկարը: Այս լուսանկարը շահում է միջազգային ամենամյա մրցույթում՝ «Տարվա լավագույն լուսանկար» նոմինացիայում: Լուսանկարիչը հուզմունքից չի կարողանում վերցնել մրցանակը: Այս խնդրում կա հագեբանական երկու մոտեցում, մարդկային, որի պարագայում կին լուսանկարիչը կարող էր գործի դնելով իր կանացի հմայքից սկսած մինչև լուսաբանելով սպառնալու տարբերակը, փրկեր փոքրիկի կյանքը, և երկրորդ, մասնագիտական, որի պարագայում լուսանկարիչը վարվել է ճիշտ այնպես, ինչպես պետք է վարվեր: Առաջին պարագայում, օգնելով փոքրիկին, գուցե նա կփրկեր մեկ առանձին վերցրած երեխայի կյանք: Երկրորդ դեպքում, այդ լուսանկարով, որը ողողեց համաշխարհային բոլոր հայտնի ամսագրերի և թերթերի առաջին էջերը, նա աշխարհի ուշադրությունը սևեռեց Կոսովոյի խնդրի վրա՝ դրանով իսկ փրկելով հարյուր հազարավոր նման երեխաների կյանքեր: Այս ամենից բացի, կա ևս մեկ գործոն՝ լրագրողի անվտանգությունը: Իսկ եթե նա փորձեր օգնել երեխային և զոհվեին երկուսն էլ:

Մելս Ներսիսյանը, որը խորհրդային տարիներին աշխատում էր հեռուստապետկոմի արտասահմանյան հաղորդումների խմբագրությունում՝ որպես օպերատոր, 1988 թվականի երկրաշարժի ժամանակ մյուս օպերատորների հետ աղետի գոտում տեսանկարահանում էր ողբերգությունն անմիջապես աղետից րոպեներ անց. Մեսրոպ Մովսեսյանը՝ նույն խմբագրության ռեժիսորը, պատմում է՝ թե ինչպես էր Ներսիսյանը, արտասուքը զսպելով, նկարում փլատակների տակից որդու դին հանած, հոգեխանգարմունքի մեջ որդու դիակի շուրջ պարող գյումրեցուն: Այս կադրերը նկարահանելուց հետո Մելս Ներսիսյանը անջատում է տեսախցիկն ու կորցնում գիտակցությունը:

Այս ամենը թույլ են տալիս անել մի եզրակացություն, որ լրագրությունը արտակարգ իրավիճակներում, դա լրագրության մի առանձին ճյուղ է, որը պահանջում է հատուկ գիտելիքներ, հմտություններ, մեթոդների հատուկ ընտրություն՝ տվյալների հավաքման համար, դրանց մշակման, վերլուծության, և ռիսկը նվազագույնի հասցնելու ունակություն, որը կծագի, երբ աշխատում է վտանգավոր գոտիներում:

Եվ այս առումով խիստ կարևոր է հոգեբանական պատրաստվածությունը, ամեն լրագրող, մասնագիտական դաշտ մտնելուց առաջ, պետք է իմանա իրեն սպասվող հոգեբանական խնդիրների մասին, իսկ բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է համապատասխան պատրաստվածություն ապահովեն նրանց համար, որպեսզի վաղը հոգեկան անհավասարակշիռ վիճակում լրագրողը ուղիղ եթերից խուճապ չտարածի հասարակության մեջ:

Մեկ այլ դեպքի անդրադառնանք, որը կարող էր դառնալ միջազգային սկանդալի պատճառ: 2013-ի հուլիսի 14-ին Ռուսաստանի Պողոսկ քաղաքի մերձակայքում տեղի ունեցավ ողբերգական ավտովթար, որի հեղինակ Հրաչյա Հարությունյանը նույն պահին ձերբակալվեց: Թեև սարսափելի ավտովթարը 18 մարդու կյանք էր խլել, սակայն կարելի էր այն ներկայացնել իբրև դժբախտ պատահար՝ հարգելով նախևառաջ անմեղության կանխավարկածը, և հաշվի առնելով ազգամիջյան հնարավոր լարվածության ստեղծումը՝ լրագրողը կարող էր իրեն ավելի զուսպ դրսևորել: Ռուսական առաջին ալիքի լրագրող Օլգա Սկաբեևայի պատրաստած ռեպորտաժի պատճառով Հայաստանում եղբայր ժողովրդի հանդեպ ցավակցական և կարեկցանքի դրսևորումների փոխարեն զայրույթի և ցասման միջոցառումներ տեղի ունեցան, ընդհուպ ՌԴ դեսպանատան մոտ՝ ՌԴ նախագահի ծաղրանկարներով և վիրավորական պաստառներով: Սա, բնականաբար կարող էր վերաճել միջպետական սկանդալի, եթե ժամանակին և դիվանագիտական խողովակներով ռուս լրագրողի անթույլատրելի սխալը չուղղվեր:

Այսքան վտանգավոր և պատասխանատու է լրագրողի աշխատանքը: Այն ենթադրում է նաև նյարդերի գերլարում, իսկ թույլ նյարդային համակարգ ունեցողների պարագայում կարող է ուղղակի խիստ բացասական ազդեցություն ունենալ լրագրողի առողջության վրա: